ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

10



ԵՐԵՎԱՆ 2009

9(47.925)
Հ-28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ

4264

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
A COLLECTION OF SCENTIFIC ARTICLES
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

10

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
47

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
47

ԵՐԵՎԱՆ 2009

ՀՏԴ 06: 941 (479. 25)
ԳՄԴ 63. 3 (2Հ)
Հ 282

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյան (նախագահ)
պ.գ.թ., դոցենտ Կ. Հ. Խաչատրյան
պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան
պ.գ.թ. Ա. Վ. Մաղալյան, Հ. Կ. Սուքիասյան

Հ 282 ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ /Գիտական հոդվածների ժողովածու/. - Եր.: Պատմ. ինստ., 2009, - 310 էջ:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» խորագրով գիտական հոդվածների ժողովածուի 10-րդ հատորում զետեղված աշխատություններն աղբյուրագիտական լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց հին, միջնադարյան, նոր և նորագույն պատմության մի շարք հիմնահարցերի վրա:

Հոդվածները զեկուցվել են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 30-րդ հոբելյանական նստաշրջանում:

Ժողովածուն նախատեսված է մասնագետ-պատմաբանների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-99941-73-27-3

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԱԼԻՍ ԴՈՒՄԻԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԻԵՐՈԳԼԻՓ ԵՎ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX Դ. ՖՐԱՆՍԻԱՑԻ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՄԲ

XIX դարի ֆրանսիական արևելագիտության մեջ մեծ տեղ է տրվել Հայոց հին պատմության ուսումնասիրությանը: Այդ ընդրում Ֆրանսիացի նշանավոր արևելագետ և հայագետ Մարի Բրոսեն կարևորել է եգիպտական, ասուրական և քաղդեական (այսինքն՝ բաբելոնյան) հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունների տեղեկությունները: Նրա ուսումնասիրության ոլորտում են եղել այդ արձանագրությունների վերծանման հիման վրա՝ Առաջավոր Ասիայի երկրների պատմության հարցերի հետազոտությանը նվիրված Ժ.-Ֆր.Շամպոլիոնի, Ժ. Օպերտի, Մ. Օպերտի, Մ. Ռաուլինսոնի, Ֆր. Լենորմանի և այլոց աշխատությունները, որոնցում արծարծվել են նաև Հայոց հին պատմության որոշ հարցեր:

Մ. Բրոսեն չէր բացառում, որ այդ աշխատություններն արտացոլելով հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունների վերծանման սկզբնական փուլի արդյունքները, կարող էին հաճախ անհասկանալի բացեր ունենալ: Միևնույն ժամանակ գիտնականը կարևորում էր թե՛ պատմական որոշ անունների հիշատակությունը[1], և թե՛ բիբլիական պատմության և հույն պատմիչների հիշատակած փաստերի համաժամանակությունը:

[1] Մ. Բրոսեն միևչև իր ժամանակները անծանոթ մնացած աշխարհագրական և արքայական որոշ անուններ ուշագրավ է համարել, նշելով, որ դրանք կարող են ապագա բացահայտումների հիմք լինել (**M. Brosset**, Sur l'histoire ancienne de

Մ. Բրոսեն գրել է. «Մ.թ.ա. XVII դարում՝ XVIII հարստության ժամանակաշրջանում, եգիպտական հիերոգլիֆ արձանագրություններում Միջագետքի հյուսիսում հիշատակվող երկիրը կոչվում էր Ռեմենե (Remene), իսկ ազգը, որն ապրում է այնտեղ՝ Ռեմեններն (Remenen)»: Ըստ Մ. Բրոսեի՝ այն պետք է Արմենիայի և արմեննների եգիպտական անվանաձևը լիներ (nom égiptien de l'Arménie et des Arméniens), քանի որ Արմենիա (Armenia) դասական անվանաձևի ծագումը շատ վաղ ժամանակներից է գալիս: Համաձայն Թութմոս III-ի[2] կառնակի տաճարի պատին փորագրված արքայական տարեգրության, վերջինիս զորքերը հասել էին մինչև Բաբելոն և Արմենիա, իսկ նրա թագավորության վերջին տարիներին՝ Միջագետքից հյուսիս գտնվող լեռներ կատարած արշավանքի ժամանակ արմեննները (les Remenen ou Arméniens) հիշատակված են որպես հարկ վճարողներ[3]:

Ֆ. Լենորմանը հիշատակել է Հայաստանը նաև Ռամզես II-ի (մ.թ.ա. 1279–1213) դեմ ծագած ապստամբության մասնակից երկրների շարքում, նշելով, որ Նեղոսի ափերի հուշարձանները վկայում են Ռամզես II-ի հաղթանակների, ինչպես նաև նրա դեմ դուրս եկած Վերին Նեղոսի ազգաբնակչության ապստամբությունների մասին: Ապստամբներին էին միացել Արմենիան, Ասորեստանը, Միջագետքը, քաղդեյան՝ Բաբելոնը, Արամեն (Araméе)[4]:

l'Arménie, d'après les textes hiéroglyphiques et cunéiformes. - Bulletin de l'Académie Impériale des sciences de St-Pétersbourg, 1871, t. seizième, p. 333):

[2] Եգիպտական XVIII հարստության 6-րդ փարավոն Թութմոս III-ի գահակալության տարիները նշվում է մ.թ.ա. XVI դ. վերջի – XV դ. կեսերի միջև (История древнего востока, ч. II, Москва, 1988, с. 238):

[3] **M. Brosset,** Op. cit., p. 335. **Fr. Lenormant,** Manuel de l'histoire de l'Orient, Paris, 1869, t. I, p. 374, 379, 385. **Fr. Tournebize,** Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, p. 15, 16.

[4] **Fr. Lenormant,** Op. cit., p. 409.

Մ. Բրոսեն կարևորել է սեպագիր արձանագրություններին նվիրված Մ. Օպերտի ուսումնասիրություններում Հայաստանի հիշատակությունն Արմինա (Armina) և Ուբաստու (Uraustu) անուններով[5]: Համաձայն Մ. Օպերտի, Arminiya-ն ազգագրական (ethnographique) բնույթի ածական է, իսկ Armaniya բնթերցվածքը այլ բան չի կարող լինել, քան Armina, որն Արմենիա, Armenia-ի դասական անվանաձևն է[6]:

Ժ. Օպերտը նշել է. «Նինվեի արձանագրություններում Urarta-ն բառացի արտահայտում է Արարատ անունը, որը բիբլիական տեքստերում նշանակում է Հայաստան»[7]: Հատկանշական է, որ Ֆ. Կավենյակը Ուրարտուի թագավորությունը հիշատակել է որպես հայկական թագավորություն (le royaume arménien d'Ourartou (Ararat))[8]:

Մ. Բրոսեն հետևել է Ֆ. Լենորմանի ընդունած ժամանակագրական կարգին, ըստ որի մ.թ.ա. 930 թ. հուլիսի 2-ին գահ բարձրացած Թիգլաթպալասարը բազմաթիվ արշավանքներ է կատարել դեպի Հայաստանի լեռները (dans les montagnes de l'Arménie)[9]:

[5] Ակնհայտ է, որ հեղինակը օգտագործել է Բեհիսթունյան սեպագիր եռալեզու (հին պարսկերեն, էլամերեն և բաբելոնյան՝ ուշ աքքադերենով) արձանագրությունում հիշատակված Հայաստանի անվանաձևերը (Armina/Arminiya=Uraštu) (**P. Lecoq,** Les inscriptions de la Perse achéménide, Gallimard, 1997, p. 139, 246): Մ. Բրոսեն անդրադարձել է Բեհիսթունի արձանագրությանը, որում Վշտասպի որդի Դարեհը պատմում է իր դեմ ապստամբած երկրների, ինչպես նաև Հայաստանը իրեն ենթարկելու մասին (**M. Brosset,** Op. cit., p. 339).

[6] **M. Oppert,** Journal Asiatique, Mémoire sur les inscriptions des Achéménides, t. XIV, 1849, p. 547.

[7] **J. Oppert,** Expédition scientifique en Mésopotamie, Paris, 1863, t. I, p. 18. **H. Layard,** Discoveries in the ruins of Ninveh and Babylon, London, 1853, p. 403.

[8] **E. Cavaignac,** Histoire générale de l'antiquité, Paris, 1946, p. 155.

[9] **Fr. Lenormant,** Manuel de l'histoire de l'Orient, Paris, 1869, t. II, p. 66, 67.

Ըստ Ֆր. Տուրնեբիզի[10]*, Թիգլաթպալասար II-ի*[11] *արշավանքների մասին են վկայում Էլասար* (Elassar)[12] *պալատի սեպագիր արձանագրությունները, որոնց համաձայն նա նվաճել էր Նաիրին, որը հին Հայաստանի հարավային մի մասի ասուրական անվանումն էր* (nom assyrien d'une partie de l'ancienne Arménie méridionale) *և գտնվում էր Մասիուսի*[13] *երկու լանջերի՝ Վերին Տիգրիսի և Եփրատի միջին հոսանքի մասում*[14]*:*

Ըստ Ժ. Օպերտի, Սարդանապալ III-ի Կալախի կամ Նիմրուդի (Calakh ou Nimroud)[15] *մի մեծ արձանագրությունում ասվում է, որ մ.թ.ա. 920 թ., լուր առանալով, որ հայ* Ամիկան (Amika, l'Arménien)[16] *հրաժարվել էր իրեն հարկ վճարել, նա արշավում է Զամուա*[17] *երկրի Ամիկայի մայրաքաղաք՝ Զամրի* (Zamri)[18]*:*

[10] Ըստ Ֆր. Տուրնեբիզի, ասուրական աղբյուրներում *Արմենիային* առնչվող ամենավաղ հիշատակությունը վերաբերում է մ.թ.ա. 1300 թ. Սալմանասար I-ի ժամանակաշրջանին (**Fr. Tournebize,** Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, p. 16): Արդի ընդունված ժամանակագրությամբ Սալմանասար I-ի գահակալության տարիներն են մոտ մ.թ.ա. 1274–1245 թթ. (+/-10) (История Древнего Востока, ч. II, с. 100):

[11] Համաձայն ներկայիս ընդունված ժամանակագրության՝ Թիգլաթպալասար II-ը գահակալել է մ.թ.ա. 967–935/32 թթ., http://www.babylon.com/definition/Tiglath-Pileser_II/English.

[12] Լարսա, բիբլիական Էլասսար՝ հարավային Բաբելոնիայում:

[13] The Geography of **Strabo,** with an English translation by H. L. Jones, Cambr., Mass., London, in eight volumes, vol. V, 1954, XI. 12.4.

[14] **Fr. Tournebize,** Op. cit., p. 16, 17.

[15] Նինվեից հարավ, Տիգրիսի ափին գտնվող արդի Նիմրուդ քաղաքի տեղում հնում հիմնված քաղաքը կոչվել է Կալհու (**A. Kuhrt,** The Ancient Near East, vol. II, London and New York, t.I, 1997, p. 362):

[16] **J. Oppert,** Op. cit., p. 318. Հատկանշական է, որ Ժ. Օպերտը *Նիմրուդի* (Նեմրութ) այս արձանագրությունը վերծանելիս Ամիկային հիշատակել է *հայ Ամիկա* անվանածևով, մինչդեռ Դ. Լուկենբիլը իր կողմից վերծանված տեքստերում *հայ* էթնիկական անվան փոխարեն ընթերցել է. «Ամեկա և Առաշտուա» "... Ameka and Arashtua had discontinued the tribute... (Annals of the kings of Assyria, vol. 1, London, 1902, p. 311, col. II, 50; **D. Luckenbill,** Ancient Records of Assyria and Babylonia, Chicago, 1926, p. 151).

[17] Այն հիշատակվում է ասորեստանյան թագավոր Սարգոն II-ի՝ Վանի թագավորություն կատարած ներխուժման ժամանակ (մ. թ. ա. 714 թ.), երբ, ի թիվս

Ժ. Օպերտը նշել է. «Սարդանապալ III-ը իր մի արձանագրությունում պարծենում էր, որ 30-րդ արշավանքի ժամանակ պավթիլ էր հայ Ուդակիից Վանը»[19]*:*

Սարդանապալ (որին Մովսես Խորենացին Պարույր Սկայորդու ժամանակակիցց է նշել) անունը Աշուրբանիպալ (մ.թ.ա. 668–635/27 թթ.) անվան բիբլիական անվանաձևն է[20]*: Իսկ մ.թ.ա. X դարի 20-ական թթ. նոր-ասորեստանյան կայսրությունում գահակալում էր Թիգլաթպալասար II-ի որդին՝ Աշուր-դան II-ը (մ.թ.ա. 934–912 թթ.)*[21]*:*

Ֆ. Լենորմանը նշում է, որ մ.թ.ա. 877 թ. Սալմանասար IV-ը[22] *27-րդ արշավանքի ժամանակ իրեն էր հպատակեցրել ամբողջ*[23] *Հայաստանը և թալանի ենթարկել Վանը:*

հարևան երկրամասերի, նա գրավել էր Զամուան (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ, հ. Ա, Ե., 1971, էջ 325): Զամուան տեղադրվում է Փոքր Զաբի վերին հոսանքից հյուսիս դեպի Ուրմիա ընկած տարածքում (АВИИУ(Ассиро-вавилонские источники по истории Урарту)–Вестник древней истории, 1951, N 2, с. 289).

[18] **J. Oppert,** Op. cit., p. 318, 319.

[19] **M. Brosset,** Op. cit., p. 337. **J. Oppert,** Op. cit., p. 339, 342, 356.

[20] **Movsec Xorenaci,** История Армении, перев. с древнеарм., введение и прим. Г. Саркисяна, Е., 1990, с. 36, 224, прим. 73.

[21] **A. Kuhrt,** The Ancient Near East, vol. II, London and New York, 1997, p. 479.

[22] Ըստ պատմագիտության մեջ ընդունված ժամանակագրության՝ Սալմանասար IV-ը գահակալել է (մ.թ.ա. 782–773 թթ.), իսկ մ.թ.ա. 877 թ. Աշուրնասիրպալ II-ի (մ.թ.ա. 883–859) (**A. Kuhrt,** Op. cit., vol. II, p. 479) 6-րդ տարին էր:

[23] Ֆ. Լենորմանն այս մասին գրում է. «Սալմանասար IV-ի 27-րդ արշավանքը դեպի Հայաստան մեծ պատերազմն էր, որն ավարտվեց այս երկրի տարբեր մասերի հպատակեցմամբ, որոնք դեռևս դիմադրում էին ասուրական միապետին: 31-րդ արշավանքի ժամանակ թագավորը նորից ուղարկում է իր գլխավոր զորահրամանատարին Հայաստան, որը թալանի է ենթարկում 50 քաղաքներ, այդ թվում Վանը» (Man. de l'hist. de l'Orient, t. II, p. 72): Այսպիսի մոտեցումից հետևում է, որ Սալմանասարին չէր հաջողվել Հայաստանն ամբողջությամբ հպատակեցնել, քանի որ տեղացիների կողմից կար դիմադրություն, որն էլ հավանաբար նրա 31-րդ արշավանքի պատճառը եղավ մ.թ.ա. 873 թ.: Ըստ Ֆր. Տուրնեբիզի, հաճախ նվաճված այս երկրամասերը երբեք ամբողջությամբ չեն ենթակայեցվել (**Fr. Tournebize,** Op. cit., p. 17):

Ըստ Մ. Բրոսեի, մ.թ.ա. 741 թ. «Հայ Սարդուրը (Arménien Sardur) Մատիելի[24] (Matiel) հետ միասին դեմ է դուրս գալիս Թիգլաթպալասար IV-ին: Կումուխի քաղաքի շրջանում ասուրական թագավորը գրավեց չատ քաղաքներ և հիմնադրեց Հայաստանում Ասուրբազա քաղաքը»[25]: Այստեղ խոսքը Սարդուր II-ի մասին է, որի ժամանակակիցն էր Թիգլաթպալասար III–ը (մ.թ.ա. 744–727)[26]:

Արևմուտքում Սարդուր II-ի ստեղծած կոալիցիան միացյալ ուժերով հարձակման անցավ Ասորեստանի դեմ, սակայն Արպադում (Հյուսիսային Ասորիք) տեղի ունեցած ճակատամարտում (մ.թ.ա. 743 թ.)՝ Վանի թագավորության և նրա դաշնակիցների զորքերը ծանր պարտություն կրեցին: Անհամար կորուստներ տալով՝ իր կյանքը փրկելու համար Սարդուր II-ը ստիպված էր փախուստի դիմել[27]:

Համաձայն Ֆ. Լենորմանի՝ Ասորեստանի կործանումը բաբելոնացի արքայի և նրա հետ միավորված «մար Արբակի» (իմա՝ Վարբակ– Ա.Դ.) կողմից, տեղի էր ունեցել մ. թ. ա. 789 թ. «Սարդանապալի» կամ «Ասուրլիխուսի» (Assourlikhous) ժամանակ[28]: Մ. Բրոսեն հիշատակել է Ասուրբանիպալին, ով հունական աղբյուրներում Սարդանապալ անունով է հիշատակվում: Նա նշել է, որ Սարդանապալ մարտնչողը տարբերվում է այն մյուս նույնանուն արքայից, ում օրոք մ.թ.ա. 789 թ. կործանվեց Նինվեի կայսրությունը[29]: Նինվեի կործանման մասին տեղեկությունը, ինչպես և արքայական ցանկը, ավելի վաղ է թվագրվել, քան ընդունված է պատմագիտության մեջ, որի համաձայն՝ Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի կործանումը Բաբելոնի և Մարաստանի կողմից տեղի էր ունեցել մ.թ.ա. 612 թ.[30], իսկ Ասորեստանը վերջնականապես կործանվել էր 605 թ.: Ֆ. Լենորմանի հիշատակած Արբակը (Վարբակ)՝ Մեդիայի (Մարաստանի) թագավոր Կիաքսարն է, իսկ Բաբելոնի թագավորը՝ Նաբոպալասարը (626–605):

Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկում, Կիաքսարը հանդես է գալիս Վարբակես անունով, իսկ Ասորեստանի թագավորը Պատմահոր կողմից Սարդանապալ անունով է հիշատակվել: Ըստ Մովսես Խորենացու՝ Ասորեստանի անկման ժամանակաշրջանում Հայաստանում կառավարում էր Պարույր «որդի Սկայորդւոյ», որը մասնակցել էր Ասորեստանի կործանմանը: Պատմահայրը գրել է. «Թողլով ոչ կարևորագոյն ի բանից՝ ասասցուք որ ինչ հարկաւորն է: Վերջին սոցա, որք առ Ասորեստանեայց թագաւորութեամբն և որք ի Շամիրամայ և կամ թէ ի Նինոսէ՝ զմերս ասեմ Պարոյր առ Սարդանապալլաս, որ ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ գտանի Վարբակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ»: Մարաց թագավոր Վարբակ-Կիաքսարը. «զքաջն մեր նախարարս յանգուզանէ զՊարոյր թագավորութեան չուք և ձև նմա խոստանալով»[31]:

Մ. Բրոսեն Սկայորդուն հիշատակում է Հայոց թագավորների շարքում՝ նկատի ունենալով Մովսես Խորենացու հաղորդումները նրա մասին: Նախ՝ Պատմահայրը նրան որպես «մեր քաջ նախնի» հիշատակել է Ասորեստանից Հայաստան փախած թագավորասպան արքայորդիների կապակցությամբ: Պատմահայրը գրել է, որ Սենեքերիմին (Սինաքերիբ) «սպանեալ որդւոց նորա Ադրամելեքայ և Սանասարայ՝ եկին փախստական առ մեզ: Յորոց զմիոյն յարևմտից աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նո-

[24] Բիթ-Ագուսիի թագավորը՝ Հյուսիսային Ասորիքում (Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. I, էջ 315):
[25] **M. Brosset,** Op. cit., p. 338; **J. Oppert,** Op. cit., t. I, p. 337.
[26] **A. Kuhrt,** Op. cit., p. 479, 556.
[27] Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ, հ. I, էջ 317:
[28] **Fr. Lenormant,** Op. cit., p. 77–80.
[29] **M. Brosset,** Op. cit., p. 339.

[30] История древнего востока, М., 1979, с. 166.
[31] Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 64–68:

րին Ասորեստանի բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին, այսինքն է զՍանասարն...»[32]:

Մ. Բրոսեն անդրադարձել է Թովմա Արծրունու կողմից Նինվեի Սինախերիբ (Սեննեքերիմ) արքայի հիշատակությանը[33], *որը թագավորել է մ.թ.ա. 704–681 թթ.: Սեննեքերիմը սպանվել էր մ.թ.ա. 681 թ. Նեսրաք աստծո տաճարում իր որդիների՝ Ադրամելեքի և Սարասարի կողմից:*

Հին կտակարանի Թագաւորութեանց Դ գրքում պատմվում է, թե ինչպես Ասորեստանի Սեննեքերիմ թագավորին Նինվեում սպանեցին նրա որդիները՝ Ադրամելեքը և Սարասարը (Շարեցեր), ապա փախան «յերկիրին Արարատայ. եւ թագաւորեաց Ասրդան որդի նորա»[34]: *Ադրամելեքը Արարատ-Նինիլին է՝ «Սինախերիբի որդիներից մեկը: Իսկ ի դեմս Շարեցերի (Սարասար) ենթադրվում է զորապետ, մ.թ.ա. 681 էպոնիմ, Նաբուշարուսուրը: Պարսկաստանն կրելով թագավոր զարձած Ասարխադդոնից (մ.թ.ա.680–669 թթ.) մարդասպանները փախչում են Շուպրիա»*[35]:

Մ. Բրոսեն, Մովսես Խորենացուն, իրավացիորեն համարելով V դարի հեղինակ[36], *նշում է, որ հին հայոց պատմության մասին մեր ունեցած սկզբնաղբյուրը Պատմահոր հաղորդած տեղեկություններն են: Ըստ գիտնականի, արձանագրություններում հանդիպող հայ՝ Ամիկա (Amika), Սարդուր (Sarda), Ուդակի (Oudaki), Ուրզահա (Urzaha) թագավորների անուննները Պատմահոր երկում չեն հիշատակված, մինչդեռ մի շարք ասուրա-քաղդեական թագավորների անուններ առկա են Թովմա Արծրունու մոտ*[37], *որոնք «համընկնում են Մ. Լենորմանի կողմից նշված փաստերին»*[38]:

Մ. Բրոսեն նշում է, որ համաձայն Խորսաբադի արձանագրության՝ «Սարգոնն արշավել է Հայաստան և իրեն ենթարկել Վանի տիրակալ Իրանզուին (Iranzou): *Վերջինիս որդին էր Ազան, որի դեմ է ապստամբում հայ Ուրզահան* (Urzaha): *Ուլլուսունը* (Ulloussoun)՝ *Ազայի եղբայրն ու հետևորդը, իրեն է ենթարկում Ուրզահային, բայց Սարգոնը հաղթում է վերջինիս և Ասորեստանին միացնում Հայաստանի քաղաքները»*[39]:

Ֆ. Լենորմանը գրել է, որ Ուրզահան կամ Ուրտսան (Urtsa), *որին Մովսես Խորենացին հիշատակել է Հրաչեա անունով՝ Պարույրի որդին էր, իսկ Ուրտսան Հայաստանի թագավորն էր* (Urtsa, roi d'Arménie), *որի վասալների թվին էր պատկանում Վանի Ուլլուսունը* (Ulloussoun de Van)[40]:

Ըստ Ֆ. Լենորմանի՝ Ուլլուսունը, որին գահ էին բարձրացրել եղբոր մահից հետո «...հաշտվում է Ռուսայի հետ և նրան տալիս քաներկու ամրոցներ իրենց կայազորներով»[41]:

Հայտնի է, որ Ազան, ինչպես նաև նրա եղբայր Ուլլուսունն, ոչ թե Վանի, այլ Ուրմիա լճից հարավ ընկած Սարգոնի դրածո Մանայի տիրակալներն էին[42]: *Ֆ. Լենորմանի կողմից Պարույրի որպես Հրաչեայի հետ Ռուսա I-ի (մ.թ.ա. 735–713 թթ.) նույնացումը, թերևս վերաբերում է Ռուսա III-ին (մ.թ.ա. 629–601 թթ.):*

---

[32] **Մովսես Խորենացի**, էջ 70:
[33] **M. Brosset**, Op. cit., p. 338.
[34] **«Թագաւորութեանց Դ.»**, գլ. ԺԹ, 36–37:
[35] Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. I, էջ 427:
[36] M. Brosset, Deux historiens arméniens: Kiracos de Gantzac, Histoire d'Arménie, Oukhtanès d'Ourha, Histoire en trois parties, St.-Pétersbourg, 1870, p. 3.

[37] Թովմա Արծրունու հաղորդումները Ասորեստանի թագավորների («սկսած «Բելից և Նինոսից») մասին (**Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց**, Ս.Պետերբուրգ, 1887, 34–36), համադրելով պատմագիտության տվյալների հետ, համապատասխանում են Թիգլաթ-պալասար III-ին (մ.թ.ա. 745–727 թթ.), Սալմանասար V-ին (մ.թ.ա. 727–722 թթ.) (История древнего востока, с.155 – 156) և այլոց:
[38] **M. Brosset**, Op. cit. , p. 338.
[39] **Ibid.**
[40] **Fr. Lenormant**, Op. cit., p. 367.
[41] Ibid., p. 91.
[42] Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ, հ. I, էջ 324-325:

Հետաքրքիր է Հովսեպոս Փլավիոսի հետևյալ հաղորդումը (մ. թ. I դ. երկրորդ կես). «Հայաստանը (Հաստատեց) Ուրոսը»[43]*:*

Հատկանշական է, որ Մ. Բրոսեի կողմից հիշատակված XIX դ. վերոհիշյալ արևելագետներն ասուրական արձանագրությունները վերծանելիս Ուրարտուի արքաներին հիշատակել են հայոց արքա էթնիկ անվամբ (Amika l'Arménien, Oudaki l'Arménien, Arménien Sardur, Ursa[44], roi d'Arménie): *Ֆր. Տուրնեբիզը նույնպես նրանց հիշատակելով որպես հայոց արքաներ՝ Ուրարտուն դործածել է Ուրարտի (Արարատ)* [Ourarti (Ararat)][45] *անվանաձևով:*

Այսպիսով, XIX դարի ֆրանսիական արևելագետների աշխատություններում՝ սեպագիր արձանագրությունների վերծանման համաձայն, Արմենիա երկրանվան և հայ էթնիկ անվան ընթերցումը, Հայոց հին պատմության սկզբնաղբյուրային հիմքի վրա դիտարկումը կարևոր ներդրում էր Արարատյան թագավորության պատմության ուսումնասիրության դործում:

[43] **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասիոս,** թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի. – Հին հունական աղբյուրներ, Բ, Ե., 1985, էջ 56: Ս. Կրկյաշարյանն այս անունների կապակցությամբ նշել է «Մի ձեռագրում Ուրոսի փոխարեն կարդում ենք Օտրոս, իսկ մեկ այլ ձեռագրում՝ Ուլոս» (Նույն տեղում, էջ 102, ծան.129):

[44] **J. Oppert,** Op. cit., p. 354.

[45] **Fr. Tournebize,** Op. cit., p. 17. *Ուրարտու* երկրամասի անունը *Ուրարտի* կամ *Արարատ* (Ourarti ou Ararat) անվանաձևով է հիշատակվում Ժ.-Ա. Գատեյրիասի «*Հայաստանը և հայերը*» աշխատությունում: Նա նշել է. «...Մ.թ.ա. 1130 թ.՝ ասուրական առաջին դինաստիայի օրոք, երբ ասորեստանցիներն առաջին անգամ նվաճեցին Նաիրի երկիրը՝ Տիգրիսի և Եփրատի ակունքների շրջանը, որոշ (հայկական՝ les tribus arméniens de l'Ourarti) ցեղեր բավականին հզորացել էին կամ միավորվել դաշնություններում (ou se groupèrent en confédération)»: **J.-A. Gatteyrias,** L'Arménie et les Arméniens, Paris, 1882, p. 14, 15.

АЛИС ДУМИКЯН
ИИ НАН РА

СВИДЕТЕЛЬСТВА ИЕРОГЛИФИЧЕСКИХ И КЛИНОПИСНЫХ НАДПИСЕЙ О ДРЕВНЕЙ АРМЕНИИ В ОСВЕЩЕНИИ ФРАНЦУЗСКИХ ВОСТОКОВЕДОВ

РЕЗЮМЕ

Во французском востоковедении XIX в. большое внимание уделялось изучению истории древней Армении.

Выдающийся французский востоковед и арменовед XIX века Мари Броссе особое значение придавал иероглифическим и клинописным надписям древнего Востока в изучении источников по древней истории Армении. М. Броссе широко пользовался трудами Ж. Оперта, М. Оперта, М. Раулинсона, Ф. Ленормана и др., в которых затрагиваются вопросы истории стран Передней Азии, в том числе и древней Армении.

Французские исследователи считали важным упоминание названия *Армения* и этнического имени *армяне* в расшифрованных ими клинописных надписях. При расшифровке ассирийских надписей, царей Урарту называли этническим именем *Армянский царь* (Amika l'Arménien, Oudaki l'Arménien, Arménien Sardur, Ursa, roi d'Armenie). Фр. Турнебиз, также упоминая их как армянских царей, приводит название *Урарту* в форме *Арарат* [Ourarti (Ararat)].

Исследования французских востоковедов XIX в. проблем древней истории Армении, на основе расшифрованных ими клинописных текстов, является важным вкладом в деле изучения истории Араратского царства.

ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՊՈՄՊԵՈՍԻ ԱՐՇԱՎԱՆՔՆ ԱՂՎԱՆՔ

Մ.թ.ա. II դարից սկսած Հռոմը միջազգային ասպարեզում հանդես եկավ որպես գլխավոր ռազմական ուժ՝ ավելի ու ավելի մեծ ազդեցություն գործելով Արևելյան պետությունների ճակատագրերի վրա: Իսկ Պարթևական թագավորությունը Միհրդատ Բ Արշակունու ժամանակ (մ.թ.ա. 123–88) նվաճել էր Միջագետքը, Ատրպատականը՝ դառնալով հարևան պետությունների վտանգավոր ախոյանը: Մ.թ.ա 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում պարտության մատնելով Սելևկյաններին, Հռոմը սկսեց խառնվել արևելյան պետությունների գործերին: Մեկը մյուսի հետևից հռոմեական պրովինցիաներ դարձան Մակեդոնիան, Պերգամոնի թագավորությունը, Հռոմի ազդեցության ոլորտում էին գտնվում Կապադովկիան, Բյութանիան:

Այս պայմաններում, մ.թ.ա. 95 թ. հայկական գահին բազմած, Տիգրան Բ Արտաշեսյանն իր կառավարման սկզբում ամենայն պարզությամբ Հռոմին և պարթևաց արքային ցույց տվեց, որ Մեծ Հայքը Առաջավոր Ասիայում ունի իր սեփական շահերը[1]:

Մի քանի տարվա ընթացքում հարևան պետությունները ներառնվեցին Մեծ Հայքի ազդեցության ոլորտում: Հռոմը չէր կարող հաշտվել ստեղծված վիճակի հետ, քանի որ դաշնակիցների՝ Պոնտոսի և Մեծ Հայքի հզորությունը սպառնալի չափերի էր հասել: Այդ տարիներին ընթացող Միհրդատյան երրորդ պատերազմի ժամանակ՝ մ.թ.ա. 71 թ. Կաբիրայի ճակատամարտում հռոմեացիներին հաջողվում է հաղթել Միհրդատ VI Եվպատորին և ժամանակավորապես նվաճել Պոնտական թագավորությունը:

[1] Սանասերյան Ռ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Ե., 1987, էջ 31:

Հռոմը չէր կարող թույլ տալ, որ Փոքրասիական իր գաղութների Բիկունքում և Միջերկրական ծովի ափին վերջնականապես կազմակերպվի ու ամրանա աշխարհակալ և հզոր Հայաստանը: Վերջինս մշտական սպառնալիք էր լինելու նրա տիրապետության համար Արևելքում: Ուստի Հռոմը ծրագրում է նվաճել նաև Մեծ Հայքը: Մ.թ.ա. 69 թ. գարնանը Հռոմեական զորավար Լուկուլլոսը, առանց պատերազմ հայտարարելու Մեծ Հայքին և հակառակ հռոմեական ձերակուլի ցանկության, անձնական նախաձեռնությամբ ու պատասխանատվությամբ, սկսեց հայկական արշավանքը՝ սկզբնական նպատակ ունենալով զրավել Տիգրանակերտը և արքայից արքային ստիպել կնքել հաշտության պայմանագիրը, այլ խոսքով՝ նվաճել Հայաստանը:

Սկսած հայ-հռոմեական պատերազմում հայկական բանակը համալրելու համար Տիգրան Բ-ը հավաքում է Մեծ Հայքից վասալական կախման մեջ գտնվող պետությունների ռազմական ուժերը: Ներառված լինելով Մեծ Հայքի քաղաքական ոլորտում՝ ադվանները և իբերները ևս չէին կարող հեռու մնալ ծավալվող իրադարձություններից և մ.թ.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ի Տիգրանակերտի ճակատամարտում առաջին անգամ բախվեցին հռոմեացիների հետ: Ինչպես հաղորդում է Պլուտարքոսը. «...Բարեմասցիների հետ: Ինչպես հաղորդում է Պլուտարքոսը. «...Բարեյական ծովից եկավ արաբների անթիվ-անհամար ամբոխը, իսկ Կասպից ծովից ալբանացիների ու նրանց հարևան իբերների բազմությունը»[2]: Ուսումնասիրողները տարբեր կարծիքների են Տիգրանակերտի ճակատամարտում ադվանների կարգավիճակի վերաբերյալ: Միանշանակ իրավացի են այն ուսումնասիրողները[3], ովքեր գտնում են, որ ադվանները կատարում էին իրենց

[2] Плутарх, Сравнительные жизнеописания, Лукулл, т. I, М., 1961, XXVI.

[3] Աղոնց Ն., Հայաստանը Հուստինոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 455, 456: Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ.1, Ե., 1966, էջ 309: **Ասատուրյան Ս.**, Քաղաքական վերաբերությունները ընդ մեջ Հայաստանի և Հռովմա 190-են ն. Ք., մինչև 428 հ. ք., Վենետիկ, 1912, էջ 40: **Սվազյան Հ.**, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից VII դ. ներառյալ), Ե., 2006, էջ 121: **Մանանդյան**

վասալական պարտավորությունները և թագավորական բանակում էին գտնվում Տիգրանին ստորադրված վասալական թագավորները և իշխանները, այլ ոչ թե ճակատամարտի դաշտ էին եկել անշահախնդիր. «ընդհանուր թշնամուն դիմագրավելու անհրաժեշտությունից մղված»[4]:

Մ.թ.ա. 68 թ. Արածանի ճակատամարտում պարտություն կրած Լուկուլոսին սենատը հեռացրեց Արևելքում հռոմեական լեգեոնների հրամանատարի պաշտոնից՝ փոխարինը նշանակելով ճանաչում ստացած Գնեոս Պոմպեոսին: Այդ քայլով Հռոմը նպատակ ուներ ոչ միայն նվաճելու Պոնտական թագավորությանը, այլև Հռոմի գերիշխանությունը հաստատել ամբողջ տարածաշրջանում: Մրագրի առաջին մասը իրականանում է՝ Պոմպեոսը կարողանում է հաղթել Հռոմին չուրջ քառորդ դար անհանգստություն պատճառած Պոնտական թագավորությունը: Իսկ Արտաշատում մ.թ.ա. 66 թ. կնքված պայմանագրով Տիգրան Բ հրաժարվում է Հայաստանից դուրս կատարած նվաճումներից: Պոմպեոսը տիրացավ արքայից-արքայի թողած ժառանգությանը, այլ խոսքով նախկինում ենթակա երկրներին՝ մասնավորապես Սիրիային, Իբերիային և Աղվանքին: Պոմպեոսը մտադիր էր չարունակել արշավանքը դեպի Կողքիս, սակայն մոտալուտ ձմռան պայմաններում արշավանքը ժամանակավորապես հետաձգեց և մ.թ.ա 66–65 թթ. ձմեռը, ինչպես հաղորդում է Դիոն Կոսսիոսը. «(Պոմպեոսը – Ա. Վ.) զորքը երեք մասի բաժանելով ձմեռեց Անահատական երկրում և Կյուռնոս (Կուր) գետի մոտ»[5]:

Զորամասերը տեղավորված էին իրարից բավականաչափ հեռու և գտնվում էին Պոմպեոսի ու նրա օգնականներ Լուկիոս Փլակկուսի և Մեսելլոս Կելերի հրամանատարության ներքո:

Հռոմեական զորավարի ձմեռվա կայանների հարցի չուրջ պատմագիտության մեջ կան տարաձայնություններ: Ուսումնասիրողների մի մասի կարծիքով կայանները գտնվել են Եփրատի վերին հոսանքի ու Կուր գետի ակունքների միջև[6]: Իսկ մյուս մասը գտնում է, որ հռոմեական լեգեոները կայանել են Ախալցխայի ու Ախալքալաքի միջև ընկած շրջանում՝ «Պետինգերյան քարտեզի (Խոսպիա) կայարանի ու Կուր գետի մոտակայքում»[7]: Կ. Տրևերը բանակատեղին համարում է Խաղխաղը կամ Գուգարքը[8]: Նշված կարծիքներից ընդունելի է այն տեսակետը, որի համաձայն Պոմպեոսը մ.թ.ա. 66–65 թթ. ձմռանը կայանել էր Մինդնչաուրի շրջանում, որն աշխարհագրորեն էլ ընկած էր Մեծ Հայքի, Վիրքի ու Աղվանքի չփման կետում[9]:

Հռոմեական զորավարը գարնանը նախապատրաստվում էր արշավանքի դեպի Կողքիս: Պոմպեոսի ձմռան կայանատեղին վախեցրեց Աղվանքի թագավոր Օրոյսեսին, թե հռոմեացիները կներխուժեն Աղվանք, ուստի թագավորը որոշեց կանխել դա և հարձակվել հռոմեացիների վրա, քանի դեռ վերջիններս անհոգություն էին ցուցաբերել՝ չստեղծելով բանակատեղի և զբաղված էին Սատուռնալիայի տոնակատարությամբ. «Օրոյսեսը՝ Կյուռնոսից վերև բնակվող ալբանների թագավորը, ցանկանալով մի կողմից չնորհ անել Տիգրան կրտսերին, որը իրեն բարեկամ էր, մյուս կողմից հատկապես վախենալով, որ հռոմեացիները կներխուժեն Ալբանիա, և կարծելով, որ անկասկած հաջողության կհասնի, եթե ձմեռ ժամանակ անսպասելի հարձակվի նրանց վրա, քանի դեռ նրանք չեն կենտրոնացել մեկ միասնական զորակայանում, արշավեց նրանց վրա Սատուռնալիս տոնի ժամանակ»[10]: Պատմիչի այս վկայությունից երևում է, որ Մեծ Հայքի

Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, էջ 507: **Меликишвили Г.**, К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 323.

[4] **Тревер К.**, Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э. – VII в. н. э., М-Л, 1959, с. 90.

[5] **Դիոն Կասսիոս**, Հռոմեական պատմություն, թարգմ. բնութագրից, առաջաբանը և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Ե., 1976, XXXVI, 48, 1, 53, 5:

[6] **Моммзен Т.**, История Рима, т. III, М., 1941, с. 106. **Меликишвили Г.**, указ. соч., с. 326.

[7] Սանահյան Հ., նշվ. աշխ., էջ 587:

[8] **Тревер К.**, указ. соч., с. 93.

[9] Սվազյան Հ., նշվ. աշխ., էջ 124:

[10] **Դիոն Կասսիոս**, XXXV, 54, 1–2:

և Աղվանքի միջև սահմանը եղել է Կուր գետը, քանի որ նրանից հյուսիս՝ «Կյուռնոսից վերև» գտնվում էր Օրոյսեսի թագավորությունը: Հռոմեացիների հետ այս բախումով Աղվանքը հանդես է գալիս որպես ինքնուրույն քաղաքականություն վարող պետություն՝ թագավորի գլխավորությամբ:

Աղվանների 40 հազարանոց բանակի հարձակումը անակնկալի է բերում հռոմեացիներին: Օրոյսեսի նպատակն էր թույլ չտալ հռոմեացիներին ներխուժել Աղվանք, նաև ազատել Տիգրան կրտսերին: Դրա ուղղակի վկայությունն է, որ Օրոյսեսը շարժվում էր այն զորամասի վրա, որտեղ չղթայակապ պահված էր արքայից արքայի դավաճան որդին՝ Ասիայի երեք վեհապետներին կապող օղակը[11]:

Եթե ճակատամարտի սկիզբը բարենպաստ էր աղվանների համար, ապա հետագա ժամերին իրադարձությունները դասավորվեցին ոչ նրանց օգտին: Ուշքի գալով առաջին անհաջողությունից՝ Պոմպեոսը շարժվում է Մեսելլոս Կելերի զորախմբին օգնության. «Պոմպեոսը տեղեկանալով մյուսների դեմ բարբարոսների ձեռնարկած փորձի մասին, անակնկալ եկավ իր դեմ արշավողներին ընդառաջ և հաղթելով նրանց, իսկույն, ինչպես կար, շտապեց Օրոյսեսի դեմ: Եվ նրան չհանդիպեց, քանի որ (սա) ետ մղվելով Կելերի կողմից և տեղեկանալով մյուսների ձախորդությունների մասին, փախուստի էր դիմել, սակայն (Պոմպեոսը) ալբաններից չատերին ձեռք գցելով Կյուռնոսի գետանցի մոտ, կործանեց»[12]: Ճակատամարտն ավարտվեց Օրոյսեսի բանակի ծանր պարտությամբ: Անսպասելի ու վտանգավոր այս հարձակումից հետո հռոմեական լեգեոնները մնացին Կուր գետի մոտ մինչև մ.թ.ա 65 թ. գարունը:

Ճակատամարտից հետո Օրոյսեսի և Պոմպեոսի միջև կնքվում է հաշտության պայմանագիր՝ Աղվանք չմտնելու պայ-

[11] Տիգրան կրտսերը Տիգրան Մեծի որդին էր, Միհրդատ Եվպատորի թոռը և պարթևների թագավոր Հրահատ III-ի փեսան:
[12] **Դիոն Կասսիոս**, XXXVI, 54, 3–4:

մանով[13], որն էլ հենց թագավորի նպատակն էր: Պոմպեոսը չշարունակից արշավանքը դեպի Աղվանք, ոչ թե «մեծագործությունից» դրդված, ինչպես ներկայացնում է Պլուտարքոսը[14], այլ հաշվի առնելով ճմեռվա դժվարությունները և աղվանների ռազմական ուժը: Պլուտարքոսը նշում է, որ աղվանները «սկզբում համաձայնվել էին թույլ տալ Պոմպեոսին անցնելու իրենց երկրի միջով»[15], սակայն դա իրականությանը չի համապատասխանում, քանի որ Տիտոս Լիվիոսը նշում է հակառակը. «Նա (Պոմպեոսը – Ա. Վ.) պայքարում հաղթեց իրեն բաց չթողնող իբերներին ու աղվաններին»[16]: Ինչպես իրավացիորեն նկատել է Հ. Ավագյանը՝ Պոմպեոսը բուն Աղվանքով անցնելու կարիք էլ չուներ, քանի որ նրա վերջնական նպատակը Կողքիս հասնելն էր[17]:

Գարնան բացվելու հետ վերսկսելով արշավանքը՝ հռոմեական զորավարը հարձակվում է իբերների վրա, պարտության մատնում նրանց, ապա շարժվում դեպի Կողքիս՝ Բոսպոր ներխուժելու համար, ուր ապաստանել էր Միհրդատ Եվպատորը: Սակայն, զգալով արշավանքի դժվարությունները, հռոմեական բանակը վերադառնում է դեպի Հայաստան՝ Աղվանք ներխուժելու համար: Ինչպես հատուկ է հռոմեացիներին, նրանք խախտեցին աղվանների հետ կնքած պայմանագիրը և ներխուժեցին Կովկասյան Ալբանիայի տարածք: Հայաստանից դեպի Աղվանք Պոմպեոսը գնացել է Պատինդերյան քարտեզի Արտաշատ-Արմաստիկա-Լագո շրջանային հին ուղիով[18]: Պոմպեոսի այս արշավանքն Աղվանք փաստորեն դաշնադրության կոպիտ խախտում էր: Պլուտարքոսը փորձելով արդարացնել հռոմեացիների

[13] Նույն տեղում, 4–5:
[14] **Плутарх**, Помпей, XXXIV.
[15] Նույն տեղում, XXXIV:
[16] Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, собрал и издал с русским переводом В. Латышев. т. II, СПБ, 1904, с. 50–51.
[17] **Ավագյան Հ.**, նշվ. աշխ., էջ 126:
[18] **Մանանդյան Հ.**, նշվ. աշխ., էջ 590:

արարքը՝ ներկայացրել է այն որպես աղվանների խռովություն[19]: Իրականում, Կովկասյան Ալբանիայում ոչ մի ապստամբություն էլ տեղի չի ունեցել՝ Պոմպեոսը փորձել է շրջանցիկ ճանապարհ ընտրելով, (Կողքիս-Մեծ Հայք-Աղվանք), աղվաններին անակնկալի բերել, որոնք հանգստացել էին մ.թ.ա 66–65 թթ ձմռանը ձեռք բերված հաշտության պայմանագրով՝ բավարարվելով ցցապատնեշներով փակել Կուրի գետանցը: Անցնելով Կուր գետը ու հայտնվելով Աղվանքում՝ հռոմեացիները մոտենում են Կամբյուսես-Կանբեճան գետին: Աղվանները առաջին դիմադրությունը ցույց են տվել Ալազան (Աբանոս) գետի ձախ ափին: Ճակատամարտում Պոմպեոսին հաջողվում է հաղթանակ տանել հակառակորդի նկատմամբ, որոնց առաջնորդում էր թագավորի եղբայր Կոզիսը[20]: Ի հակադրություն Պլուտարքոսի, որը նշում է, թե ճակատամարտում աղվանական բանակը բաղկացած էր 60 հազար հետևակից և 12 հազար հեծելազորից և ունեցել է թվային գերակշռություն[21], Դիոն Կասսիոսը վկայում է, որ աղվանները ճակատամարտի դաշտում թվային գերակշռությամբ պիղծում էին հակառակորդին[22]:

Աղվանքի տարածքում հռոմեացիները սկսեցին ավերը և թալանը՝ խորանալով երկրում: Մ.թ.ա 65 թ. ամռանը Ալազանգեոտի ափին տեղի ունեցավ վճռական ճակատամարտ Օրոյսես թագավորի և Պոմպեոսի միջև: Ճակատամարտից առաջ Պոմպեոսը դիմեց խորամանկության՝ հետևակ զորքին թաքցնելով հեծելազորի թիկունքում: Աղվաններն ընկան հռոմեացիների սարքած թակարդը: Հռոմեական հեծելազորին օգնության եկած հետևակը վճռեց ճակատամարտի ելքը: Աղվանական բանակը սկսեց անկանոն նահանջը, որն ավելի կործանարար եղավ նրա համար, չէն փրկվում նաև նրանք, ովքեր փախել և թաքնվել էին ան-

[19] **Плутарх**, Помпей. XXXV.
[20] Նույն տեղում, XXXVII, 4, 1:
[21] **Плутарх**, Помпей. XXXV.
[22] **Դիոն Կասսիոս**, XXXVII, 4, 1:

տառներում՝ հռոմեացիները հրդեհեցին դրանք և կոտորեցին այնտեղ ապաստան գտածներին[23]: Աղվանական բանակի պարտությունը լիակատար էր: Սա Պոմպեոսի և աղվանների միջև մղված երրորդ ճակատամարտն էր: Սակայն Օրոյսեսին այս անգամ էլ հաջողվում է հաշտության պայմանագիր կնքել Պոմպեոսի հետ: Դրա համար թագավորը ժամանում է հռոմեական ճամբար և կնքվում է պայմանագիր, որի համաձայն Աղվանքը հռչակվում է Հռոմի «բարեկամ ու դաշնակից»[24]: Սակայն չի կարելի համաձայնել ուսումնասիրողների այն պնդումների հետ, թե «բարեկամ և դաշնակից» նշանակում է, որ Աղվանքը, Մեծ Հայքը և Վիրքը վասալական կախման մեջ ընկավ Հռոմից: Դա առանձնապես երևում է Մեծ Հայքի օրինակից: Առանձնահատուկ ուշադրություն է գրավում այն ակնառու հանգամանքը, որ մ.թ.ա 66 թ. Արտաշատի պայմանագիրը չէր շոշափում հայկական բանակի ո՛չ զինաթափման, ո՛չ կրճատման, ո՛չ ցրման հարցը ի տարբերություն Հռոմի կնքած մյուս պայմանագրերի[25]: Ճիշտ է, մենք լիովին տեղեկություն չունենք Աղվանքի հետ կնքված պայմանագրի կետերի վերաբերյալ, սակայն կարծում ենք, որ այն նման էր լինելու մ.թ.ա 66 թ. Արտաշատի պայմանագրին:

Պարտավորությունների չրջանակը Մեծ Հայքի, Աղվանքի և Վիրքի ու Հռոմի միջև կայանում էր միայն փոխադարձ ռազմական օգնությամբ: Այսպես, երբ մ.թ.ա 64 թ. աշնանը Կորդուքի տարածքում սկսվեցին հայ-պարթևական պատերազմական գործողությունները, Պոմպեոսի հրամանով լեգեոնները՝ Ափրիա-

[23] Известия древних писателей..., т. II, с. 531.
[24] Նույն տեղում, էջ 258:
[25] Մ.թ.ա. 197 թ. Մակեդոնիայի հետ և մ.թ.ա. 188 թ. Սելևկյան պետության հետ կնքած պայմանագրերով Սակեդոնիային թույլատրվում էր ունենալ 5 հազ. բանակ (40 հազ. փոխարեն), իսկ Սելևկյան պետությունը պարտավորվում էր Հռոմին հանձնել ողջ ռազմանավատորմը և ոչնչացնել մարտական փղերը (տե՛ս Ն. Մաշկին, Հին Հռոմի պատմություն, Ե., 1951, էջ 265–270):

նոսի հրամանատարությամբ քշեցին պարթևներին Կորդուքից և այն հանձնեցին հայոց արքայից արքային[26]:

Մ.թ.ա I դ. երկրորդ կեսին թագավորները երեք երկրներում գահ էին բարձրանում՝ չհարցնելով հռոմեական սենատի կարծիքը: Եթե Աղվանքը, Մեծ Հայքը և Վիրքը Հռոմի հանդեպ ունեին վասալական պարտավորություններ, ապա պետք է վճարեին որոշակի հարկ, սակայն պատմիչների մոտ այդպիսի տեղեկություն գոյություն չունի:

Մ.թ.ա 61 թ. Պոմպեոսը վերադառնում է Հռոմ, որտեղ սենատը նրան թույլատրում է անցկացնել հաղթական շքահանդես: Հաղթահանդեսում չէր ներկայացվում այդ երկրներից ոչ մի թագավոր: Աղվանքը այդ շքահանդեսում ներկայացվել էր միայն «երկու առաջնորդներով» ու պատանդներով[27], որը ևս մեկ անգամ հաստատում է այն տեսակետը, որ Աղվանքը և նրա հարևանները վասալական պարտավորություն չունեին Հռոմի հանդեպ:

Պոմպեոսի վերադառնալուց հետո՝ օգտվելով Հռոմում ստեղծված քաղաքական խառը իրադարձություններից, Աղվանքը հարում էր հայ-պարթևական դաշնագրությանը՝ մասնակցելով դեպի Միջագետք կատարվող արշավանքներին[28]:

Այսպիսով, Պոմպեոսի գործադրած բոլոր ջանքերը Աղվանքում հաստատել հռոմեական տիրապետություն անցնում են ապարդյուն: Նրա հեռանալուց հետո երկիրը կրկին ձեռք է բերում անկախություն:

[26] **Դիոն Կասսիոս**, XXXVIII, 3–4:
[27] **Тревер К.**, указ. соч., с. 109–110.
[28] **Մովսես Խորենացի**, Պատմութիին Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Ս. Աբեղեանի եւ Ս. Յարութիինեանի, Ե., 1991, գլ. Բ., ԻԲ, էջ 137:

ПОХОД ПОМПЕЯ НА АЛУАНК

РЕЗЮМЕ

После поражения Лукулла Римский сенат освободил его от должности главнокомандующего Восточных войск и назначил Гнея Помпея. Прибыв на Восток в 66 г. до н.э. и покорив Великую Армению, римский полководец направился на Алуанк. В 66/65 гг. до н.э. в трех битвах Помпей разбив алуанское войско, заставил царя Оройса заключить с ним договор, по которому тот стал “другом и союзником Рима”. Долгое время господствовало мнение, что это понятие означало зависимость стран Закавказья от Рима. Однако анализ Арташатского договора, заключенного Тиграном Великим и Помпеем в 66 г. до н.э. показывает, что обязанности сторон не выходили за рамки взаимной военной помощи. Этот факт, кроме указанных в статье других примеров, наглядно доказывает и то обстоятельство, что в 61 г. до н.э., когда Помпей праздновал свой триумф, ни один из царей Великой Армении, Вирка и Алуанка не были представлены.

ԿԱՐԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ (V ԴԱՐԻ II ԿԵՍ – VIII ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Արևելյան քրիստոնեության պատմության մեջ ամենավիճահարույցը եղել, և կարելի է ասել, դեռ մնում է Քաղկեդոնի IV տիեզերական ժողովը (451 թ.): Ժողովի ընդունած որոշումների հետևանքով ընդհանրական քրիստոնեական եկեղեցին տրոհվեց երկու խոշոր հատվածների՝ միաբնակ և երկաբնակ: Քաղկեդոնից հետո սկսվում են դարեր շարունակ տևող անվերջանալի վեճերն ու տարաձայնությունները՝ Քրիստոսի մարդեղության գաղափարին վերաբերող: Եվ այստեղ բնորոշ է հիշել ասորի մատենադիր Զաքարիա Միտիլենացու խոսքերը սուրբ ժողովի մասին, թե այն «ցնցեց ողջ աշխարհը և դումարեց չարիք չարիքի վրա և լցրեց աշխարհը երկպառակությամբ»[1]:

Քաղկեդոնից հետո բազմաթիվ ապարդյուն փորձեր կատարվեցին՝ կամրջելու առաջացած վիհը, նորից միավորելու տիեզերական եկեղեցին:

Ամենից առաջ պետք է նշել, որ հետքաղկեդոնական ժամանակաշրջանում անկարելի է չընդունել հակաքաղկեդոնիկ հատվածի մեծացող հզորությունն ու շարունակ աճող գերակշռությունը՝ երկաբնակ հատվածի նկատմամբ: 451 թ. հետո հակաքաղկեդոնականները գրեթե մի ամբողջ սերունդ, ժամանակակից բառերով, հաղթանակող կուսակցություն էին եկեղեցու ներսում:

Անշուշտ, եկեղեցու կարգուկանոնը կայսրության կայունության նեցուկն էր, և սա է պատճառը, որ Քաղկեդոնից հետո ընդհուպ մինչև VIII դ. սկիզբ բյուզանդական բոլոր կայսրերն

[1] **F. Hamilton, E. Brooks,** The Syriac Chronicle known as that of Zachariah of Mitylene, London, 1899, bk. III, ch. I, p. 41.

առանց բացառության ներգրավվում են քաղկեդոնական պրոբլեմի մեջ: Քաղկեդոնի վերաբերյալ բանավեճը պարտադիր մի մաս էր կազմում Բյուզանդիայի եկեղեցական քաղաքականության:

Պառակտված ընդհանրական եկեղեցին միավորելու առաջին փորձը նշանավոր «Հենոտիկոնն» էր[2]՝ հրապարակված Զենոն կայսեր (476–491) կողմից: Իր էությամբ այն Քաղկեդոնի հեղինակությանը մեծապես դիպչող ակտ էր: Հենոտիկոնի տողերի արանքում կարելի էր վստահաբար գիտակցել, որ ուղղափառ լինելու կամ ճանաչվելու համար՝ Քաղկեդոնի դավանությունն անհրաժեշտ չէր այլևս, թեև պետք է նշել, որ ուղղակիորեն ժողովը չմերժվեց[3]:

Հենոտիկոնը պատճառ հանդիսացավ Հռոմի և Կ. Պոլսի միջև 484–518 թթ. տևող խզման: Հռոմի Ցելիքս II պապն ընդդիմացավ հրովարտակին ոչ թե նրա համար, որ նրանում արտահայտված քրիստոնեությունն այլադավան էր, այլ որովհետև այն իր ամբողջ բովանդակությամբ արհամարհում էր Քաղկեդոնի ժողովը:

Անաստասիոս կայսեր (491–518) իշխանության ժամանակաշրջանի հատկապես առաջին հատվածում հարաբերական մի հանդստություն էր տիրում: Կայսրը, լինելով հանդարտ էության տեր մի անձնավորություն, ձգտում էր արևելյան եկեղեցիները պահել փոխադարձ հանդուրժողական մթնոլորտի մեջ: Սակայն, իր քաղաքականությամբ նա ևս չէր կարող անտարբեր լինել հակաքաղկեդոնականների անհամեմատ գերակշիռ զանգվածի նկատմամբ: 512 թ. նոյեմբերի 4-ի կիրակի օրը կայսրը կարգադրում է ս. Երրորդությունը պատարագում երգել «որ խաչեցար վասն մեր» հավելմամբ: Կայսերական այս կարգադրու-

[2] «Գիր միաւորութեան», Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 271:
[3] Քաղկեդոնի ժողովին վերաբերող հավելումն առկա է «Հենոտիկոնի» միայն հունարեն բնագրում: Վերջինիս թարգմանությունը տե՛ս Գիրք թղթոց, երկրորդ հրատարակություն, Երուսաղեմ, 1994, էջ 117:

թյունն իր տեսակի մեջ աննախընթաց երևույթ էր: Այս որոշումն առաջացնում է կատաղի խռովություններ, որոնք անգամ երերուն են դարձնում կայսրի հետագա գահակալման հավանականությունը:

Իր էությամբ քաղկեդոնական եկեղեցու վարդապետությանը մեծապես հակադրվող այս արտահայտությունը կարելի է իրավամբ համարել սիպիկ միաբնակությանը բնորոշ: Երկաբնակների մտածողությամբ «Սուրբ Աստուածը» վերաբերում էր ս. Երրորդությանը, իսկ միաբնակները նրան հավելելով, «որ խաչեցար»-ը, ըստ նրանց, վերականգնում էին հին հերետիկոսների մոլորությունը, որովհետև դրանով ժխտում էին աստվածային երեք անձնավորությունների տարբերությունը, այլ կերպ՝ «խաչում» էին Աստծուն, ինչպես իրենց ժամանակ հրեաներն են վարվել: Ահա թե ինչու կ. Պոլսում մեծ թիվ կազմող քաղկեդոնիկներն ընդդիմանում են այս հավելմանը:

Բյուզանդական կայսրության քաղաքականությունը եկեղեցական ոլորտում հիմնովին փոխվում է Հուստինոս I-ի (518–527) գահակալության շրջանում՝ նշանավորվելով հակամիաբնակ շարժմամբ: Միաբնակ բազմաթիվ եպիսկոպոսներ, զրկվելով իրենց եպիսկոպոսական իրավունքներից, աքսորվում են: Կայսրն անգամ ենթադրել չէր կարող, թե Հօգուտ Քաղկեդոնի արված իր ճեռնարկումներն ինչպիսի նոր ճգնաժամ և ցնցողային պառակտումներ կառաջացնեին:

Աքսորված եպիսկոպոսների թվում էին Անտիոքի պատրիարք Սևերոսը և Հալիկառնասի եպիսկոպոս Հուլիանոսը: Հանգրվանելով Ալեքսանդրիայում, նրանց միջև մի վեճ է սկսվում, որը վերաբերում էր Հարությունից առաջ Քրիստոսի բնության ապականացու, թե անապական լինելուն: Հուլիանոս Հալիկառնասցին պաշտպանում էր անապականության դրույթը, իսկ Սևերոս Անտիոքացին, ընդհակառակն՝ պնդում էր, թե Քրիստոսի մարմինն ապականացու էր: Հուլիանականները հետագայում որոշ ծայրահեղ հետևորդների պատճառով կոչվեցին երևու-

թականներ (Ֆանտասիաստներ), իսկ սևերյանները՝ ապականացու պաշտողներ (Ֆթհարտոլատրեր):

Կես դար անց արդեն ողջ Ասորիքն ու Միջագետքը ծփում էին դավանական խռովությունների մեջ՝ ճևավորվելով ասորական սևերյան ու հակոբիկ եկեղեցիները:

Տարանջատ քրիստոնեական եկեղեցին միավորելու երկարօրյա կայուն փորձը պատկանում է Հուստինիանոս Մեծին (527–565): Ինչպես Շ. Դիլն է նշում, վերջինիս քաղաքականությունն առաջնորդվում էր տիրապետող երկու գաղափարներով՝ կայսրության գաղափարը և քրիստոնեության գաղափարը[4]: Հուստինիանոսը կառավարում էր բռնակալորեն՝ միջամտելով եկեղեցու բոլոր գործերին: Հատկանշական է, որ հենց նույն ժամանակներում կ. Պոլսի Մենաս պատրիարքը (536–552) գրում էր. «Սուրբ եկեղեցում ոչինչ չպիտի արվի կայսեր կարծիքին և հրամաններին հակառակ»[5]: Կայսրը գտնում էր, թե ոչինչ առավել հաճո չի լինի Աստծուն, քան բոլոր քրիստոնյաների միավորումը միևնույն մաքուր հավատով, այլ կերպ՝ քրիստոնեական եկեղեցու միավորումը:

Հուստինիանոս Մեծը կատարելապես գիտակցում էր այն դժվարությունները, որ զգացվում էին միաբնակներից: Եթե քաղկեդոնիկները գերակշիռ թիվ էին կազմում սոսկ մայրաքաղաքում, ապա բյուզանդական ողջ պրովինցիաները միաբնակհակաքաղկեդոնիկների գաղափարական ազդեցության ներքո էին: Անհրաժեշտ էր ճանապարհներ փնտրել՝ հաշտեցնելու միաբնակներին քաղկեդոնականության հետ: Եվ կայսրին հաջողվեց գտնել մի իրական խոչընդոտ՝ իր մտայնությամբ. եկեղեցու պատմության մեջ մտած այսպես կոչված «Երեք գլուխների» պրոբլեմը: Երեք գլուխները՝ աստվածաբանության Ան-

[4] Շ. Դիլ, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի, Ե., 2005, էջ 31:

[5] J. Mansi, Sacrorum conciliorum nova et amplissima Collectio, vol. 11, G.-Austria, 1960, pp. 526, 530.

տիեզքյան դպրոցին պատկանող երեք ամենակարևոր անձինք էին՝ Թեոդորոս Մոպսուեստացին, Թեոդորետոս Կյուրոսցին և Իբաս Եդեսացին: Թե ինչու նրանք, որովհետև հենց նրանց անվան ներքո էին վահանով պատսպարվել III և IV տիեզերական ժողովների կողմից բանադրված նեստորականները: Վերջիններիս միաբնակները նույնացնում էին քաղկեդոնականների հետ:

«Երեք գլուխները» դատապարտվեցին եկեղեցու կողմից 553 թ. Կ. Պոլսի V տիեզերական ժողովում: Ի դեպ, Հռոմը ընդդիմացավ նաև այս բանադրանքին, որովհետև նրանով անտեսվում էին Քաղկեդոնի ժողովի որոշումները:

Սակայն, ժամանակը ցույց տվեց, որ այս ձեռնարկումն էլ չունեցավ այն գործուն ազդեցությունը, որ կցանկանար կայսրը: Ավելին, կես դար անց, արդեն VII դ. սկզբին կայսրության նահանգներում, օրինակ, հակաքաղկեդոնականների դերակշռությունը քաղկեդոնիկների նկատմամբ մոտավորապես նույնն էր 1/20 հարաբերությամբ[6]: Սա արդեն աղետ էր:

Հորիզոնում հայտնված Հերակլիոս Մեծ կայսրը մտորում է վերջապես իրականացնել այն, ինչ շատ կայսրեր փորձել էին ապարդյուն. արևելաքրիստոնեական բոլոր հերձվածները միավորել բյուզանդական քաղկեդոնական եկեղեցուն: Սակայն հարկավոր էր հրաժարվել նախկին կաղապարային ու ձևական ձեռնարկումներից: Հերակլիոսը գիտակցում էր, որ անհրաժեշտ է ոչ թե դավանական շոկումներ անել, որոնք կաղերսվեին քաղկեդոնական բանաձևին, այլ փոխել մոտեցման ճանապարհը, մի նոր դավանություն առաջարկել՝ ավելի ներառուն և ճկուն, որը կհամախմբեր բոլոր քրիստոնյաներին: Եվ Քաղկեդոնից հետո առաջին անգամ կայսերական իրավունքի մակարդակով, հավատացյալներին առաջարկվում է մի նոր դավանություն՝ միակամությունը, և կամ միաներգործությունը, որն օգտագործվում էր բանավեճի ավելի վաղ շրջանում: Թե Հերակլիոսը որքան հետևում էր աստվածաբանական նմանօրինակ հարցերից, վկայում է Թեոփանեսը[7]: Հավատո խոստովանության նոր բանաձևի իրական հեղինակը Կ. Պոլսի պատրիարք Սերգիոսն էր (610–638): Եվ հետաքրքրականն այն է, որ վերջինս, անչափ խորաթափանց եկեղեցական մի գործիչ, միակամությունն առաջ էր քաշում ոչ թե որպես նորահայտ մի դավանություն՝ ինչի համար նրա կռվանները հիմք չէին ունենա, այլ ձգտում էր հիմնվել եկեղեցու պատկառելի Հայրերի վրա, մասնավորապես՝ Կյուրեղ Ալեքսանդրացու, որը միեղերական եկեղեցու խոշորագույն հեղինակություններից մեկն է առհասարակ:

Արդեն VII դարի 30-ական թթ. I սկզբին մի ներգործության վարդապետության շուրջ են համախմբվում արևելքի խոշորագույն երեք պատրիարքությունները՝ Կ. Պոլսի, Անտիոքի և Ալեքսանդրիայի, իսկ 639 թ. հակամիակամական պատրիարք Սոփրոնիոսի մահից հետո՝ նաև Երուսաղեմի աթոռը:

Պատմությունը պահպանել է բազմաթիվ վկաներ միաբնակների նկատմամբ Հերակլիոս Մեծի հանդուրժողականության մասին: Կայսրը չէր վարանում անգամ եկեղեցում հաղորդվել միաբնակների հետ[8]: Առաջադրված նոր բանաձևից շատ ավելի գոհ էին միաբնակները և իրոք, նոր բանաձևն ավելի հարիր էր մի բնություն քարոզողներին[9]:

639 թ. սկզբին հրապարակված «Էկթեսիս»[10] կոչված կայսերական հրամանագրով հռչակվեց մի կամքի վարդապետություն: Հռոմի արձագանքը նույնն էր, ինչպես 482 թ. և 553 թ.:

---

[6] **C.-J. Hefele.** Histoire des conciles d'apres les documents originaux. T. 4, Paris, 1870, p. 12.

[7] Թեոփանես Խոստովանող, Ժամանակագրություն, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ, Հ. **Բարթիկյանի** – Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13, Բյուզանդական աղբյուրներ, 4, Ե., 1983, էջ 39:

[8] Ժամանակագրութիւն Տեառն Միխայելի Ասորւոց Պատրիարքի, Երուսաղէմ, 1871, էջ 298–299:

[9] Թեոփանես, էջ 40:

[10] «Էկթեսիսի» (հավատո շարադրության) տեքստն ամբողջությամբ առկա է 649 թ. Լաթերանի ժողովի 3-րդ արձանագրության մեջ, **J. Mansi,** Sacrorum conciliorum.... vol. 10, p. 991.

Հռոմի պապերը չարունակ ընդդիմանում էին բյուզանդական կայսրերի և Կ. Պոլսի պատրիարքների՝ դավանութեանը վերաբերող բոլոր այն «կամայական» նորարարութիւններին, որոնք այս կամ այն կերպ դիպչում էին Քաղկեդոնի ժողովի հեղինակութեանը: Մյուս կողմից Հռոմի աթոռը ձգտում էր այդ կերպ թույլ չտալ եկեղեցական նվիրապետութեան մեջ Կ. Պոլսի պատրիարքութեան կշռի բարձրացմանը: Ընդամին, 641 թ. սկզբին Հռոմում Հովհաննես IV պապը (640–642 թթ.) եկեղեցական մի ժողով գումարելով՝ բանաղրում է միակամութեան վարդապետութիւնը: Արևելքի և Արևմուտքի միջև առաջացած նոր անջրպետը փաստացի տևում է մինչև 679 թ.:

Բյուզանդիայի եկեղեցական քաղաքականութիւնը նոր երանգ է ստանում Կոստանդին IV կայսեր (668–685) օրոք: Իր քաղաքականութեամբ զգուշավոր այս կայսրը հրաժարվում է հարցի լուծումը որոնել քաղաքական պարտադրանքի ոլորաններում, ինչպես որ իր նախորդը՝ Կոստաս II (642–668) էր իրագործում: Խնդրի լուծումը Կոստանդին IV-ը դրեց եկեղեցական իրավունքի հարթութեան վրա. եկեղեցու միութիւնը՝ միմիայն եկեղեցու միջոցով, այն է՝ տիեզերական ժողովի գումարմամբ: Նման որոշում կայացնելու մեջ, ըստ ժամանակակիցների բնութագրման, մեծ դեր խաղաց ավելի քան չորս տասնամյակ չարունակվող բյուզանդական պարտութիւններն ու նահանջը նախ արաբներից, ապա և բուլղարներից: Կոստանդին IV-ը, աստվածավախ մի անձնավորութիւն, գտնում էր, թե Բյուզանդիայի երկարատև պարտութիւնները կատարվում են աստծո կամոք, և թե հարկավոր է վերջապես միավորել տարաձայնութիւններից խլրտացող եկեղեցին:

Գրեթե մի ամբողջ տարի տևած Տրուլլոսի ժողովը (680–681) դատապարտեց միակամութիւնը, մի վարդապետութիւն, որը շուրջ կես դար տրոհել էր արևելյան քրիստոնեութիւնը Քրիստոսի կամքի վարդապետութեան հարցում: Հաստատվեց Քրիստոսի երկու կամքի մասին վարդապետութիւնը:

Ակներև էր, որ միակամութեան վրա կանգ առնելն արդեն իմաստ չուներ. գրեթե ողջ Արևելքը նվաճված էր արաբների կողմից և միաբնակութեան հոծ զանգվածներն արդեն գտնվում էին արաբական տիրապետութեան ներքո: VII դ. կեսերին արևելյան խոշորագույն պատրիարքութիւնները՝ Ալեքսանդրիան, Երուսաղեմը և Անտիոքը ընկան արաբների ձեռքը: Կ. Պոլսի պատրիարքը փաստորեն Բյուզանդական կայսրութեան միակ պատրիարքն էր և հավակնում էր գրավել նույնպիսի դիրք, ինչպիսին պապն էր Արևմուտքում:

Ամբողջացնելու համար միակամութեան վերաբերյալ վերը ասվածը՝ նշենք, որ հիշյալ դավանութիւնը վերակենդանացնելու մի նոր փորձ կատարվեց արդեն VIII դ. սկզբին, հայազգի կայսր Փիլիպպիկոս-Վարդանի (711–713) կողմից: Նրա կայսրության հենց առաջին տարում՝ 711 թ., գումարվում է ժամանակակիցների կողմից «մոլեգին» կոչված ժողովը, կարգալույծ է արվում երկակամ պատրիարք Կյուրոսը: Նոր պատրիարք Հովհաննես IV (712–715) ժողովին մասնակցած բոլոր եպիսկոպոսների հետ բանադրում է միակամականների դեմ գումարված VI տիեզերական ժողովն ու երկակամութիւնը:

Հռոմի հետ ընդհարման նոր սպառնալիք է առաջանում: Ի վերջո, Անաստասիոս II կայսրը (713–715) վերջ է տալիս բոլոր «հերձվածողական», այն է՝ միաբնակական ու միակամական որոշումներին՝ արդեն վիճակահանությամբ հաստատելով VI տիեզերական ժողովի որոշումները:

Ահա այս էր Քաղկեդոնի ժողովից հետո անջատ-անջատ քրիստոնեական եկեղեցու պատկերը V դ. II կեսից – VIII դ. սկիզբը: Պատկերն ավելի ամփոփ և ամբողջական դարձնելու համար անդրադառնանք նաև Հայոց եկեղեցուն: Նախաքաղկեդոնական շրջանում տիեզերական եկեղեցու անբաժանելի մի մասն էր նաև Հայոց Առաքելական եկեղեցին իր վարդապետութեամբ, դավանութեամբ, նվիրապետութեամբ, օրբարար խորհուրդներով:

Հայոց եկեղեցու կողմից Քաղկեդոնի ժողովի որոշումները մերժելուց հետո (554 թ.) Բյուզանդական եկեղեցին չի դադարում գործուն ճիգերը՝ Հայոց եկեղեցին միավորելու քաղկեդոնական եկեղեցուն: Դրա առաջին և կարևոր պատճառն առաջին հերթին այն կչիռն ու հեղինակությունն էր, որ վաղ միջնադարում ուներ Հայոց եկեղեցին: Այդ փորձերն ողողել էին ողջ VI –VII դդ:

Ի դեպ, միակամության վարդապետությունը, որպես միաբնակներին քաղկեդոնական եկեղեցուն միավորելու փորձ, առաջին անգամ հաջողությամբ քարոզվում է Կիպրոսի Հայության շրջանում 626 թ.[11]: Միավորման այս փորձի հաջողությունը փոքր չափագծով, ընդամենը մի կղզու շրջանակում, խրախուսում է Հերակլիոս Մեծին հետագայում ավելի լայնորեն կիրառել նոր բանաձևը: Հենց միակամության հիմքի վրա է իրագործվում նաև 633 թ. հայ-բյուզանդական եկեղեցական միությունը Կարինի ժողովում: Սակայն, պետք է նշել, որ իրենց հակաքաղկեդոնականության մեջ չափազանց հետևողական հայոց եպիսկոպոսներն ու վարդապետները, նաև հավատացող ժողովուրդն անկարող էին գնահատել միակամության վարդապետական նորությունը, այն, որ իր դավանաբանությամբ այն մեծ չափով զիջում էր կատարում միաբնակներին: Ընդհանրապես վաղ միջնադարում, ցանկացած կարգի զիջում հայոց նախնավանդ վարդապետությունից դիտվում էր որպես քաղկեդոնականության կրկնություն, հատկապես այս դեպքում, երբ մի կամքի վարդապետությունը կրկին ներառում էր «երկու բնություն» հասկացությունը, ինչպես որ IV տիեզերական ժողովն էր սահմանել:

Բյուզանդիայի եկեղեցական քաղաքականության գլխավոր խնդիրը Հայաստանում եկեղեցիների միության հարցն էր, որն իրական հող կստեղծեր նաև Հայաստանն արդեն քաղաքական նպատակ ենթարկելու կայսրության: Այս սպառնալիքը դիտակցում էր նաև Հայոց եկեղեցին, որն ինքնուրույն թագավորության բացակայության պայմաններում հավաքական այն ուժն էր, որն իր շուրջն էր միավորել ողջ ժողովրդին: Իսկ եկեղեցու ազգային դիմագիծն անաղարտ կարող էր մնալ միայն հավատարիմ մնալով իր նախնավանդ վարդապետությանը՝ զերծ օտարամուտ ներգործությունից:

[11] Այս մասին տե՛ս Մելիքյան Կ., Քաղաքական-եկեղեցական իրադրությունը Բյուզանդիայում VII դարի առաջին կեսին. հայ և բյուզանդական եկեղեցիների միության փորձը, «Պատմա-բանասիրական հանդես», 2006, N 3, էջ 149–150:

КАРИНЕ МЕЛИКЯН
ИИ НАН РА

ПОПЫТКИ ОБЪЕДИНЕНИЯ ХРИСТИАНСКОЙ ЦЕРКВИ (ВТОРАЯ ПОЛОВИНА V – НАЧАЛО VIII ВВ.)

РЕЗЮМЕ

После Халкидонского собора (451 г.) со стороны византийских императоров осуществлялись многочисленные попытки вновь объединить вселенскую церковь. Первая попытка была совершена в 482 г. в виде имперского эдикта "Энотикон". Вторую серьезную попытку совершил Юстиниан I.

В начале VII в. император Геракл намеревался объединить всех монофизитов с византийской церковью благодаря живой формуле: монотелизм. В середине VII в. император Костас II старался подчинить церковь государству. Верования имели своеобразный смысл политического принуждения и подчинения. Уже в конце VII в. Византийская церковь отказалась от монотелизма. Юстиниан II намеревался вновь примирить монофизитские церкви с византийской на основе Халкидонского собора.

В средние века церковная доктрина имела политическое значение, с этой точки зрения очень важна история сношений армянской и византийской церквей.

ԼԻԱՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՎԱՐԴ ՍԿԼԵՐՈՍԻ ԵՎ ՎԱՐԴ ՓՈԿԱՍԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴԱՎԻԹ ԿՈՒՐԱՊԱՂԱՏԸ

X դարի վերջին երեսնամյակում Բյուզանդական գահի համար պայքարն առավել սուր բնույթ ստացավ՝ կապված Վասիլ Բ (976–1025 թթ.) կայսեր գահակալման հետ: Այդ պայքարը վերածվեց ապստամբության, որը գլխավորում էր մագիստրոս Վարդաս (Վարդ) Սկլերոսը: Ապստամբությունը տևեց չորս տարի՝ 976–979 թթ.: Ըստ բյուզանդական պատմիչ Սկիլիցեսի. «Վարդաս Սկլերոսը թագավորության վրա աչք ուներ և մշտապես ապստամբելու ցանկություն»[1]: Այդ ժամանակ բյուզանդական զինված բոլոր ուժերը գտնվում էին նրա ձեռքում, քանզի վերջինս նշանակված էր համայն Արևելքի ստրատելատ՝ սպարապետ[2]:

Սկլերոսների ընտանիքը հայկական ծագում ուներ: «Սկլերոս» բառը հունարենից բառացի թարգմանությամբ նշանակում է «կարծր», «դաժան»[3]: Հայկական աղբյուրներում Վարդ Սկլերոսի անունը տարբեր կերպ է ներկայացվում: Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը նրան անվանում է Սիկլառոս. «Վարդ, որ ըստ աւելաճայնութեան Սիկլառոս կոչիւր»[4]: Նույն ձևով է նշում նաև Արիստակես Լաստիվերտցին. «ապստամբեաց Վարդ, որ կոչի Սիկլառոս»[5]: Սակայն, Մատթեոս Ուռհայեցին փոքր ինչ այլ կերպ է կոչում. «ապստամբեցաւ ոմն իշխան անօրէն ի վերայ Վասլի Հռոմոյ թագաւորին, որում ասէին Սկելառոս»[6]:

Վարդ Սկլերոսը, վերցնելով թագավորության նշանակները, 976 թ. իրեն միացած բյուզանդական զորքերի կողմից կայսր հռչակվեց: Սկիլիցեսը նշում է. «առաջինը նրան կայսր ներբողեցին հայերը»[7]: Փաստորեն, ինչպես երևում է, Սկլերոսի բանակում եղել են նաև հայեր, որոնք նույնպես դժգոհ էին Վասիլ Բ կայսրից: Թերևս ավելի հավանական է այն, որ Վարդ Սկլերոսը որոշ խոստումներ է տվել հայերին, որի համար էլ, ըստ երևույթին, նրանք միացել են Սկլերոսին: Քանզի նման քաղաքականություն բյուզանդացիները բազմիցս են կիրառել թե՛ հայերի, թե՛ յուրայինների նկատմամբ՝ փորձելով խոստումներով իրենց կողմը գրավել նրանց[8]:

Ասողիկը ևս Վարդ Սկլերոսին թագավոր է կոչում, այն էլ ոչ մեկ անգամ[9], սակայն, մեծ մասամբ պատմիչների մոտ նա բացասաբար է ներկայացված, ինչպես Լաստիվերտցին է ասում. «Եւ ապա դէհետ նորա զնոյն ախտ ախտացաւ նորին անուանակիցն Փոկաս, և տիրեաց ամենայն արևելից»[10]:

Այս ամենով հանդերձ, Սկլերոսը համարվում է «հզօր եւ անպարտելի զինուորական մը, խիզախ եւ իմաստուն ապարատիսը արեւելեան դուռերուն, որ կը վայելէր անվերապահ սէրը եւ պաշտամունքը բանակին եւ մեծ մարդ կը նկատուէր բովանդակ կայսրութեան մէջ»[11]: Այսքանն էլ բավական է, որպեսզի պատկերացում կազմենք Վարդ Սկլերոսի մասին, ով վտանգ էր ներկայացնում Վասիլ Բ կայսեր համար:

---

[1] **Յովհաննես Սկիլիցես,** Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ, թարգ. բնագրից Հ. Բարթիկյանի, Ե., 1979, (այսուհետև՝ Յովհաննես Սկիլիցես), էջ 55:
[2] Նույն տեղում, տե՛ս նաև ծանոթ. 64, էջ 284:
[3] **Каждан А.,** Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв., Е., 1975, с. 75.
[4] **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, (այսուհետև՝ Ասողիկ), գլուխ ԺԴ, էջ 190:
[5] **Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ,** Ե., 1963, (այսուհետև՝ Արիստակես Լաստիվերտցի), գլուխ Գ, էջ 33:

[6] **Մատթէոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 56:
[7] **Յովհաննես Սկիլիցես,** էջ 56:
[8] **Յովհաննես Սկիլիցես,** էջ 63, Ասողիկ, գլուխ ԺԵ, էջ 192:
[9] Ասողիկ, գլուխ ԺԵ, ԺԴ, էջ 194, 201:
[10] **Արիստակես Լաստիվերտցի,** էջ 33:
[11] **Ճանաշեան Մ.,** Դաւիթ Կիւրապաղատ, Վենետիկ, 1972, էջ 20–21:

Վարդ Սկլերոսին միացան նաև Տարոնի իշխան Աշոտի որդիները՝ Գրիգորը և Բագարատը. «Իսկ Վարդայ գինեալ ընդդէմ նորա [Վասիլի] ի պատերազմ, յորում քաջապէս մարտուցեալ զօրն Հայոց, որպէս որդիք իշխանին Տարօնոյ, Գրիգոր և Բագարատ»[12]: Արիստակես Լաստիվերտցին, թեև չի նշում հայերի միացումը Վարդ Սկլերոսի բանակին, սակայն գրում է. «Սիկլատոս տարաւ զՀոռոմս՝ համարեա թէ զբնաւ զամէնն գհետ իւր»[13]:

Երկու կողմերի միջև գինված բախումների ընթացքում, երբ Սկլերոսի ուժերը պարտություն էին կրում, բյուզանդացիները նախ իրենց ձեռքն ընկած հայերին էին անխնա սրի քաշում, քանզի վերջիններս առաջինն էին հարել ապստամբներին[14]: Ապստամբության հետևանքով կայսրությունը հայտնվել էր ճգնաժամային վիճակում, ինչի մասին Ասողիկը շատ պատկերավոր գրում է. «Եւ գրեթէ ընդ բոլոր աշխարհն Յունաց տարածեցաւ պատերազմն, մինչ գի գեօղ ընդ գեօղ և քաղաք ընդ քաղաք մարտնչէր, և ամենայն ուրեք արեանց հեղմունք լինէին: Եւ սով սաստիկ յընդհանուր աշխարհս տարածանէր»[15]: Այս նկարագրությունը թեև փոքր ինչ չափազանցված է, բայց ցույց է տալիս, թէ որքան ցնցումներ է կրել կայսրությունն այդ ընթացքում:

Նման իրավիճակում կայսրն ու նրա համախոհները ստիպված էին գիմելու որոշակի միջոցների, քանզի, Սկլերոսն արդեն մոտենում էր մայրաքաղաքին՝ դա 978 թ. սկիզբն էր[16]: Վասիլ Բ-ն որոշեց Վարդ Սկլերոսի դեմ դուրս բերել նրա վաղեմի հակառակորդ Վարդ Փոկասին: Վերջինիս աքսորից հետ կանչելով՝ «նրան երդումներով ապահովեց, մեծ հարստություն տվեց, պատվեց մագիստրոսի պատվաստիճանով և սխոլերի դոմեստի-

[12] Ասողիկ, գլուխ ԺԴ, էջ 191:
[13] Արիստակես Լաստիվերտցի, նույն տեղում:
[14] Հովհաննես Սկիլիցես, էջ 61:
[15] Ասողիկ, գլուխ ԺԴ, էջ 191–192:
[16] Հովհաննես Սկիլիցես, էջ 63:

կոս նշանակեց»[17]: Արաբ հեղինակ Յահյա Անտիոքացին ևս վկայում է, որ Վասիլ կայսրը Փոկասին նշանակեց դոմեստիկ պատասխանատուն (սխոլերի դոմեստիկոս) և ուղարկեց Սկլերոսի դեմ[18]:

Վարդ Փոկասի գործողությունները սկզբնական շրջանում անհաջող էին ընթանում: 978 թ. ամռանը նրա բանակը երկու անգամ պարտություն կրեց[19]: Այդ անհաջողություններից հետո, ինչպես վկայում է Սկիլիցեսը. «Փոկասը բարձրացավ Իբերիա՝ Տայք և, գալով Իբերիայի արխոնտ Դավիթի մոտ, նրանից օգնական զորք խնդրեց»[20]: Խոսքը վերաբերում է Տայքի կուրապաղատ Ատրներսեհ Գ-ի որդի Դավիթ Կուրապաղատին, որին նաև կոչում էին «Մեծ»[21]:

Սկիլիցեսից տեղեկանում ենք, նաև որ Դավիթը պատրաստակամորեն ընդառաջել է Փոկասին, «քանզի վերջինս նրա հետ լավ հարաբերությունների մեջ էր, և Փոկասը, այնտեղից մեծ զորք առնելով, շարժվեց Սկլերոսի դեմ»[22]:

Սակայն, հայկական աղբյուրներում Դավիթ Կուրապաղատի մասնակցությունն այս գինված ընդհարումներին բոլորովին այլ կերպ է ներկայացված: Լաստիվերտցին հայտնում է, որ կայսրն անձամբ է դիմել Կուրապաղատին և նրանից օգնություն ստացել. «մինչ գի թագաւորին խնդրել զօր յօգնականութիւն ի վրաց կիւրապաղատէն: Որովք հարեալ զբռնակալն՝ փախստական հանեն յաշխարհէն»[23]: Պատմիչը ոչինչ չի նշում Վարդ Փոկասի մասին: Իսկ Ասողիկը հիշում է հետևյալը. «Վասիլ թագաւորն Յունաց զԹոռնիկ զօրավարն, որ էր յազգէն Վրաց,

[17] Նույն տեղում:
[18] **Розен Василий,** Император Василий Болгаробойца. Извлечения из Летописи Яхъи Антиохийского. Приложение к XLIV-му тому "Записок" Императорской Академии наук, N 1, СПб., 1883, с. 3.
[19] **Юзбашян К.,** Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988, с. 135.
[20] Հովհաննես Սկիլիցես, էջ 64:
[21] Ադոնց Ն., Դավիթ Կյուրոպաղատ, «ՊԲՀ», 2002, N 3, էջ 14:
[22] Հովհաննես Սկիլիցես, էջ 65:
[23] Արիստակես Լաստիվերտցի, էջ 33:

աբեղա ի սուրբ լերինն՝ հանեալ առաքէ առ կիւրապաղատան Տայոց Դաւիթ. որպեզի զօր առաքեսցէ յօգնականութիւն նմա»[24]: Ապա ավելացնում է. «Եւ կիւրապաղատին Դաւիթի գումարեալ զզօրսն Վրաց, և զիշխանաց իշխանն զՋոջիկ տայ գկնի Թոռնկայ՝ պատերազմել ընդ Վարդայ բռնակալին: Որք սկսեալ ի Տայոց աշխարհէն՝ քանդեալ աւերեցին զամենայն աշխարհն Յունաց, որ ընդ ձեռամբ բռնակալին էր»[25]: Փաստորեն, ըստ Ասողիկի, Վասիլ կայսրը՝ որպես միջնորդ, Դավիթ Կուրապաղատի մոտ է ուղարկել Թոռնիկ աբեղային[26]: Նա ևս ոչինչ չի նշում Փոկասի մասին:

Մատթեոս Ուռհայեցին, անդրադառնալով այդ դեպքերին, գրում է. «Սկեւռաոս զօրաժողով արարեալ բազմութեամբ անիրաւաց և անօրինաց և սրով անցուցանէր զաշխարհն Հոռոմոց և բազում զօրօք գայր հասանէր և մտանէր յաշխարհն Հայոց, և արար անթիւ կոտորած օտարացեալն յԱստուծոյ: Եւ յայնժամ զօրքն Հայոց հասանէին ի վերայ նորա [Սկլերոսի] և յաղթահարեցին անօրէն իշխանին այն մեծաւ յաղթութեամբ, և կոտրածով փախստական արարին զնա»[27]: Ուռհայեցու հաղորդածից պարզ է դառնում, որ Վարդ Սկլերոսը հասել է հայկական տարածքներ, և Հայոց զորք ասելով, պատմիչը նկատի է ունեցել Տայոց զորքին, քանի որ հայկական գրչագրերում «Տայոց» բառը երբեմն գրվել է «Հայոց» ձևով[28]: Այսինքն, ըստ Ուռհայեցու, հայկական ուժերը կամ Տայոց զորքը դուրս է եկել Սկլերոսի դեմ՝ սեփական տարածքները պաշտպանելու, այլ ոչ թե՝ բյուզանդական կայսեր օգնելու համար:

[24] Ասողիկ, գլուխ ԺԵ, էջ 192:
[25] Նույն տեղում:
[26] Թոռնիկի մասին տե՛ս **Степаненко В.**, Чортванели, Торники и Тарониты в Византии (к вопросу о существовании т. н. Тайкской ветви Торникянов), Античная древность и средние века, Екатеринбург, **1999**, с. 130.
[27] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 34:
[28] **Յովհաննես Սկիլիցես**, ծանոթ. 274, էջ 309:

Սակայն, Ասողիկը ևս մեկ կարևոր վկայություն է անում, թե ի՞նչ պայմանով է Դավիթ Կուրապաղատը Վասիլին օգնական զորք տվել. «...խոստանայ տալ նմա զԽաղտոյատիճ Կղէսուրաւն, զՋորմայրի և զԿարին, զԲասեան և զՍևուկ բերդակ, որ է Մարդաղի, զՀարք և Ապահունիս»[29]: Կ. Յուզբաշյանը նշում է, որ, հավանաբար, այդ պայմանները Կուրապաղատին ավելի վաղ են առաջարկված եղել, իսկ Թոռնիկը կոչված էր միջնորդի դեր կատարելու համար կամ, հնարավոր է նաև, երաշխավոր էր[30]: Խաղտոյատիճի մասին Լաստիվերտցին գրում է հետևյալը. «վասն զի յառաջ ժամանակաւ կալեալ էր զայն [Խաղտոյատիճ] Դավիթ Կուրապաղատի, բայց ոչ իբրև զիւր հայրենի ժառանգութիւն, այլ պարգեւք էին այսոքիկ ի թագաւորէն վասն նորա միամիտ հնազանդութեանն: Եւ զի խոստացեալ էր՝ գյետ իւր վախճանին զիւր գաւառն տալ ի թագաւորն, նոքա զայն չաձկին՝ դմտաւ, այլ առատամիտ ի պարգեւսն լինէին՝ որ չէր իւրեանց»[31]:

Փաստորեն, Դավիթ Կուրապաղատն այդ ապստամբության արդյունքում ընդարձակել էր իր իշխանության սահմանները: Ն. Ադոնցը գտնում է, որ Բյուզանդիան չէր կարող այդ տարածքները տալ Տայոց Կուրապաղատին, քանի որ ո՛չ Հարքը, ո՛չ էլ Ապահունիքը կայսրությանը չէին պատկանում, Խաղտոյատիճն ու Զորմայրին Դավիթի վասալ Թոռնիկի սերուցքներն էին, իսկ Կարինն ու Բասենը՝ Կուրապաղատինը[32]: Այսինքն, Ասողիկի հաղորդած տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը: Ն. Ադոնցի հետ չի համաձայնվում Կ. Յուզբաշյանը: Վերջինս, հիմնվելով Լաստիվերտցու հաղորդած տեղեկության վրա, գտնում է, որ այդ տարածքները տրվել էին Դավիթ Կուրապաղատին ցմահ, այսինքն՝ նրա մահից հետո վերադարձ-

[29] Ասողիկ, գլուխ ԺԵ, էջ 192:
[30] **Юзбашян К.**, указ. соч., с. 136.
[31] **Արիստակես Լաստիվերտցի**, էջ 35:
[32] **Adontz N.**, E'tudes Arme'no- Byzantines, Lisbonne, 1965, p. 304–309.

վելու էին Բյուզանդիային[33]: Ասողիկը, որ մանրամասն թվարկել էր հանձնված տարածքները, սակայն, ոչինչ չի գրել, որ կայսրն այդ տարածքները տվել էր Կուրապաղատին ցմահ: Այս պարագայում անհասկանալի է, թե ինչու՞ Դավիթ Կուրապաղատը պետք է համաձայնվեր օգնել կայսրին, եթե այդ պարգևները տրված էին որոշակի ժամկետով, որը շատ հեշտությամբ կարող էր արագացվել, ինչը և տեղի ունեցավ հետագայում:

Կուրապաղատի՝ կայսրությանը ցուցաբերած օգնության մասին վկայում են թե՛ հայ, թե՛ բյուզանդացի պատմիչները: Այսպես, Սկիլիցեսը նշում է, որ Փոկասն, այնտեղից (Տայքից) մեծ զորք վերցնելով, չարժվեց Սկլերոսի դեմ[34]: Ասողիկն էլ ավելացնում է. «Նույնպես և հանեալ թագաւորին ի բանտէ զՎարդ, որ և Փոկաս կոչիւր, զոր արկեալ էր Կիւր ժանայ ի կղզի՝ և տայ ի ձեռս զամենայն արևմտեայ զօրն Յունաց և հանդերձ Վրաց զօրուն առաքէ ի վերայ բռնակալին Վարդայ երկուս բանակս և զանդիտեալ բռնակալին Վարդայ՝ փախստեայ լինէր»[35]:

Այս տվյալներից երևում է, որ Վարդ Սկլերոսին պարտության մատնող բանակներից մեկը Կուրապաղատինն էր: Դա ցույց է տալիս վերջինիս ունեցած դերը՝ կայսրությունը սասանող ապստամբությունը ճնշելու գործում: 979 թ. Վարդ Սկլերոսի ապստամբությունը ճնշվեց, և վերջինս ապաստան գտավ Բաբելոնում[36]: Իսկ Ասողիկն և Ուռհայեցին նշում են «Բազդատ»[37]:

Կայսրությունում դրությունը փոխվեց տաս տարի անց: Այս անգամ Վասիլ Բի դեմ ապստամբեց Վարդ Փոկասը, քանզի վերջինս և իր կողմնակիցները դժգոհ էին կայսեր վարած քաղաքականությունից, ուստի 987 թ. օգոստոսի 15-ին Փոկասին

[33] Юзбашян К., указ. соч., с. 137.
[34] Յովհաննես Սկիլիցես, էջ 65:
[35] Ասողիկ, գլուխ ԺԵ, էջ 193:
[36] Յովհաննես Սկիլիցես, էջ 63:
[37] Ասողիկ, գլուխ ԺԵ, էջ 193, Մատթեոս Ուռհայեցի, էջ 34:

կայսր հռչակեցին՝ «թագ կապելով և տալով կայսրության մյուս նշանակները»[38]:

Վարդ Փոկասի ապստամբության մասին նշում են նաև հայ պատմիչները՝ Ասողիկը, Լաստիվերտցին, Ուռհայեցին: Վերջինս Փոկասին անվանում է «Մօրավարդ». «Իսկ յաւուրս ժամանակաց տօմարիս Հայոց ի յամի ՆԼԵ (986) ապստամբեաց ամն իշխան ի վերայ թագաւորին Վասլի, իշխանն Հոռոմոց Մօրավարդ և արար աւերակս զմեծ մասն Հոռոմոց աշխարհին. և չրջեալ երթայր ընդ երկիր սրով և դերութեամբ»[39]: Լաստիվերտցու մոտ հանդիպում ենք այն վկայությանը, որ Վարդ Սկլերոսից հետո նույն «ախտ ախտացաւ» նրա անվանակից Փոկասը, այսինքն՝ ապստամբություն բարձրացրեց և տիրեց ողջ Արևելքին[40]: Առավել մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ասողիկը. «Եւ Վարդն, որ և Փոկաս՝ ի ՆԼԵ (986) թուականին թագաւոր բռնակալ եղեալ՝ ճակատս տալով ընդ թագաւորական քաղաքին Կոստանդնուպոլսի հանդերձ ամենայն Յունաց և վրաց զօրուն ամս երկու»[41]: «Վրաց զորք» ասելով, պատմիչը, հավանաբար, նկատի ունի Տայոց զորքը, ինչի մասին յուում են Ուռհայեցին և Լաստիվերտցին: Տայոց զորքի մասին է գրում նաև բյուզանդացի հեղինակ Միքայել Պսելլոսը, ըստ որի, «Փոկասը, «իբերական» զորք հավաքելուց հետո, ապստամբություն բարձրացրեց»[42], իսկ «իբերական» զորք ասելով՝ հասկանում ենք Տայոց զորքերին:

Հավանաբար Վարդ Փոկասին են միացել նաև Կուրապաղատի զորքերը, սակայն, այդ մասին ոչինչ չի նշում Սկիլիցեսը: Ըստ նրա, Վարդ Փոկասն ապստամբություն բարձրացրեց և իրեն կայսր հռչակեց 987 թ. օգոստոսի 15-ին, և հիշում է նաև

[38] Յովհաննես Սկիլիցես, էջ 69:
[39] Մատթեոս Ուռհայեցի, էջ 39:
[40] Արիստակես Լաստիվերտցի, էջ 33–34:
[41] Ասողիկ, գլուխ ԻԵ, էջ 248:
[42] Psellos M., Chronographie ou Histoire d'un sie'cle de Byzance (976–1077), t. I, Paris, 1967, p. 7–10.

ապստամբության պատճառները[43], ինչն էլ հաստատում է, որ ապստամբությունը սկսվել է 987 թ.: Իսկ Ասողիկն ու Ուռհայեցին նշում են 986 թվականը: Պարզվում է, որ Վարդ Փոկասի կայսր հռչակվելուց քիչ առաջ, «լուր հասավ, որ Ասորիքից Սկլերոսն է գալիս»: Դա 987 թ. սկիզբն էր ըստ Սկիլիցեսի[44]: Իսկ Ասողիկը գրում է. «Եւ յայսմ ամի, որ էր ՆԼԵ (986) թուականն Հայոց թագաւորն Վարդ եկեալ ի Բաղդատայ ի Մելտենի մտանէ. ...Եւ ամենայն զօրք աշխարհին առ հասարակ ի հնազանդութիւն գային: Եւ դարձեալ առաջի խռովութիւնն չարժեցաւ յաշխարհին Յունաց»[45]: Փոկասն այդ ժամանակ դեռևս Վասիլ Բ-ի դեմ ապստամբություն չէր բարձրացրել: Ասողիկի և Ցահյա Անտիոքացու տվյալներով, Վասիլ կայսրը, իմանալով Վարդ Սկլերոսի վերադարձի մասին, նրա դեմ ուղարկեց հենց Վարդ Փոկասին. «Իսկ Վարդ, որ և Փոկաս,– գրում է հայ պատմիչը,– հրամանաւ Վասլի գայ ընդդէմ նորա ի պատերազմ ամենայն զօրօքն Յունաց և Վրաց»[46]: Ցահյան առավել հանգամանորեն է նշում: Ըստ նրա. «Վասիլ կայսրը ստիպված եղավ Հիջրայի 376 թ. Ջուլ-Հիջա ամսին (987 թ. ապրիլի 3 – մայիսի 2) վերադարձնել Վարդ Փոկասին դոմեստիկոսի աստիճանն և կարգադրել նրան չարժվելու Սկլերոսի դեմ»[47]: Այսինքն, Ասողիկի և Պսելլոսի նշած վրաց կամ իբերական զորքերը Փոկասին էին միացել՝ ընդդեմ Վարդ Սկլերոսի, և հենց վերջինս էր ապստամբություն բարձրացնողը:

Սակայն, դեպքերն այլ կերպ ընթացան: Վարդ Փոկասն ու Վարդ Սկլերոսը, համաձայնության գալով, վճռեցին միմյանց միջև բաժանել կայսրության արևելյան և արևմտյան մասերը, եթե կարողանան միացյալ ուժերով հաղթել կայսրին: Այդ համագործակցության մասին գրում են հայ և բյուզանդացի

[43] Յովհաննես Սկիլիցես, էջ 69:
[44] Նույն տեղում, էջ 71:
[45] Ասողիկ, գլուխ ԻԴ, էջ 246–247:
[46] Նույն տեղում:
[47] **Розен Василий,** с. 22–23.

պատմիչները[48]: Բայց Փոկասը, դիմելով խորամանկության, Վարդ Սկլերոսին իր մոտ կանչելուց հետո ձերբակալում է և «հրամայէ տանել ի բերդն Ժեռաւս»[49]: Ցահյան ավելացնում է, որ այդ պայմանավորվածությունից հետո, «նույն տարվա (987 թ.) սեպտեմբերի 14-ին Վարդ Փոկասը, ապստամբություն բարձրացնելով, իրեն կայսր հռչակեց»[50]: Փաստորեն, Փոկասն ապստամբություն բարձրացրեց Վարդ Սկլերոսին ասպարեզից հեռացնելուց հետո միայն: Ստացվում է, որ տայոց կամ իբերական զորքերը Փոկասին միացել էին, ոչ թե նրա ապստամբություն բարձրացնելու պատճառով, այլ մինչև 987 թ. ամառը, ավելի կոնկրետ՝ մինչև Վարդ Սկլերոսի ձերբակալումը, 986 թ.: Ուստի ձևավորված այն կարծիքը, որի համաձայն Դավիթ Կուրապաղատը միացել է Վարդ Փոկասին՝ վերջինիս ապստամբության ժամանակ[51], իրական չի թվում, քանզի բյուզանդացի և հայ պատմիչներից ոչ ոք չի նշում, որ Կուրապաղատը միացել էր Փոկասին՝ ընդդեմ Վասիլի, իսկ նրա բանակին միացած հայոց կամ իբերական զորքերի մասին Ասողիկի մոտ նշված է հետևյալը. «Իսկ Փոկասու-Վարդայ արձակեալ յինքենէ զզօրսն Վրաց՝ և ինքն ամենայն զօրօքն Յունաց խաղայ յեզր ծովուն»[52], այսինքն՝ շարժվեց դեպի Կոստանդնուպոլիս՝ առանց «վրացական» զորքերի: Ըստ Սկիլիցեսի՝ դա 988 թ. սկզբին էր[53]:

Ցահյա Անտիոքացու մոտ հանդիպում ենք մի տեղեկության և.ա. «Վարդ Փոկասն իր որդի Նիկեփոր Մովիլին վրաց թագավոր Դավթի՝ «Տայք քաղաքի» տիրակալի մոտ ուղարկեց՝ Տարոնացու դեմ օգնություն առանալու համար, քանզի, երբ

[48] Յովհաննես Սկիլիցես, էջ 71, **Розен Василий,** с. 22, Ասողիկ, գլ. ԻԴ, էջ 247:
[49] Ասողիկ, նույն տեղում:
[50] **Розен Василий,** там же.
[51] Բարթիկյան Հ., Հայաստանի նվաճումը Բյուզանդական կայսրության կողմից, «ՊԲՀ», 1970, N 2, էջ 86, **Юзбашян К.,** указ. соч., с. 137, Դանիելյան Է., Վասիլ Բ-ի - 1000 թ. արևելյան արշավանքի նպատակը և երթուղին, «Լրաբեր հաս. գիտ.», 1973, N 10, էջ 62, Ճանաշեան Մ., նշվ. աշխ., էջ 23:
[52] Ասողիկ, գլուխ ԻՉ, էջ 249:
[53] Յովհաննես Սկիլիցես, էջ 72:

ապստամբը մայրաքաղաքին մոտեցավ, Վասիլ Բ-ը ծովով Տրապիզոն ուղարկեց Տարոնացուն՝ Փոկասի թիկունքում զորք կազմակերպելու»[54]: Կ. Յուզբաշյանը նշում է, որ Տարոնացին մագիստրոս Գրիգոր Տարոնացին էր[55], որն իր եղբայր Բագարատի հետ միացել էր Վարդ Սկլերոսին ապստամբության ժամանակ: Սակայն, վերջինիս պարտությունից հետո Գրիգորը, ստանալով մագիստրոսի պատվաստիճան, միացավ կայսեր ուժերին[56]: Յահյան ավելացնում է. «Դավիթը ուղարկեց իր ծառաներից մեկին հազար ձիավորով: Նրա հետևից գնացին նաև «Բագարատի երկու պատրիկ որդիները՝ ալ-Խալիդիյատի տիրակալները» հազար ձիավորով, որոնք Տարոնացուն չարդ տվեցին»[57]: Կ. Յուզբաշյանը Բագարատի պատրիկ որդիներին համարում է «Թոռնիկի եղբորորդիները՝ Բագարատն ու Զորտվանելը»[58]: Զորտվանելի մասին հիշատակում է նաև Ասողիկը. «Այլ դեռ ևս մնացեալ էր յապստամբացն, որ ընդ Փոկասուն վարդայ՝ Զորտուանէլ Մաժիստռոսն եղբօրորդի Թոռնկայ աբեղայի, և յերկրորդումն սպան գնա ի դաշտին Բագառճոյ, ի Դերջան գաւառի, ի ՆԼԹ (990) թուականին»[59]:

Ասողիկը, սակայն, ոչինչ չի նշում, որ Փոկասը Դավիթ Կուրապաղատից օգնական զորք է խնդրել: Ուստի կարելի է եզրակացնել, որ Դավիթ Կուրապաղատը չի մասնակցել Վարդ Փոկասի ապստամբությանը, քանի որ ո՛չ բյուզանդական, ո՛չ էլ հայկական աղբյուրներում այդ մասին ոչինչ չի հիշատակվում: Յահյա Անտիոքացու տեղեկությունները վստահելի չեն պարզ պատճառով. նա Տայքն անվանում է քաղաք, իսկ Դավիթ Կուրապաղատին՝ «վրաց թագավոր», Տայք «քաղաքի տիրակալ»: Հետևաբար, անհիմն չէ կարծել, որ եթե անգամ, Փոկասն

[54] **Розен Василий,** с. 24.
[55] **Юзбашян К.,** указ. соч., с. 137.
[56] **Adontz N.,** E'tudes..., p. 232, **Каждан А.,** указ. соч., с.17.
[57] **Розен Василий,** с. 24.
[58] **Юзбашян К.,** указ. соч., с. 138.
[59] **Ասողիկ,** գլուխ ԻԲ, էջ 251:

օգնական զորք է խնդրել Դավթից, ապա վերջինս այն չի տրամադրել: Սխալված չենք լինի նաև, եթե հավելենք, որ Բագարատի որդիներն իրենց կամքով էին միացել Փոկասին, առանց Կուրապաղատի միջամտության:

Բացի այդ, 989 թ. ապրիլի 13-ին վարդ Փոկասը մահացավ Արիդոսի ճակատամարտի ժամանակ[60]: Յահյա Անտիոքացին ևս պրում է, որ Փոկասը սպանվեց և նշում ճիշտ ժամանակը. «Նիսան (ապրիլ) ամսի 13-ին (989 թ.)»[61]: Փաստորեն 989 թ. սկզբնեին Փոկասի ապստամբությունը ճնշվեց: Այդ պարագայում հարց է առաջանում, թե Դավիթ Կուրապաղատն ինչու՞ հետ չկանչեց Բագարատի որդիներին, եթե նրանց ինքն էր ուղարկել Փոկասին օգնելու, մինչև որ, ըստ Ասողիկի, Զորտվանելը սպանվեց 990 թ.[62]: Այդ փաստը հիմք է տալիս պնդելու, որ վերջինս դործում էր Կուրապաղատից անկախ:

Այսպիսով, վարդ Փոկասի ապստամբությունը ևս ճնշվեց: Սկիլիցեսը գրում է, որ կայսրը. «ներքին պատերազմներից և հոգսերից ազատված, մտածում էր, թե ինչպե՞ս պետք է կարգավոր իր գործերը մնացած տոպարխների հետ, որոնք, օգտվելով կայսեր ապստամբություններով զբաղված լինելու հանգամանքից, հռոմեական տիրապետություններին մեծ վնաս հասցրեցին»[63]: «Մնացած տոպարխների» մեջ կարելի է հասկանալ նաև Զորտվանելին, այլ ոչ թե Դավիթ Կուրապաղատին, քանզի Սկիլիցեսը ոչինչ չի ասում, թե կայսրը նրա հանդեպ ինչպես վարվեց Փոկասին հաղթելուց հետո: Սակայն, Յահյա Անտիոքացին այդ մասին գրում է. «Վասիլ կայսրը զայրացել էր վրաց թագավոր Դավթի, Տայքի տիրակալի դեմ, ինչպես նաև Բագարատի երկու որդիների՝ ալ-Խալիդիյատի տիրակալների, այն բանի համար, որ նրանք օգնում էին Փոկասին, դրա համար

[60] Հնարավոր է նրան թունավորել են, քանզի նրա մարմնի վրա ոչ մի վերք չկար: Տե՛ս, **Յովհաննես Սկիլիցես,** էջ 73:
[61] **Розен Василий,** с. 25.
[62] Ասողիկ, նույն տեղում:
[63] **Յովհաննես Սկիլիցես,** էջ 74:

նրանց դեմ զորք ուղարկեց Ջակրուս կոչվող մի պատրիկի գլխավորությամբ: Նա գնաց Բագարատի որդիների դեմ և սպանեց նրանցից ավագին, իսկ կրտսերին աքսորեց»[64]: Այս տեղեկությունը համապատասխանում է Ասողիկի վկայությանը[65], բայց, ի տարբերություն Ասողիկի, Ցահյան նշում է նաև Դավիթ Կուրապաղատի մասին. «Դավիթը, վրաց թագավորը, Վասիլ կայսրից ներողություն ու ողորմածություն աղերսեց՝ խոստանալով հնազանդություն ու հպատակություն, ասաց, որ իր տիրույթները՝ իր մահից հետո կմիացվեն [Վասիլի] պետությանը, քանզի ինքը զառամյալ ծերունի է և չունի ո՛չ որդի, ո՛չ այլ ժառանգներ և խնդրեց կայսրին թույլ տալ իրեն՝ ուղարկել իր բարձրաստիճան պաշտոնյաներին նրա արքունիք, որպեսզի կայսրը կարողանա նրանցից երդումներ ստանալ և նախապես ապահովել պարտավորություններ նրանց կողմից, որ կհանձնեն քաղաքը իրենց թագավորի մահից հետո»[66]:

Այն մասին, որ Դավիթն իր տարածքները կտակել է կայսրին, վկայում են նաև բյուզանդացի և հայ պատմիչները: Սակայն, նրանք ոչինչ չեն նշում, որ Դավիթ Կուրապաղատը այդ քայլին է դիմել, որպեսզի հայցի կայսեր ներողամտությունը՝ Վարդ Փոկասի ապստամբությանը մասնակցելու համար: Ասողիկը գրում է. «Բայց դի ոչ դոյր նորա որդի կամ եղբայր, որ ժառանգէր զաթոռ թագաւորութեան նորա՝ յանձն արարեալ էր զազատագունդ և զաշխարհ իւր թագաւորին Յունաց Վասլի»[67]: Սկիլիցեսը ևս գրում է, որ Դավիթ Կուրապաղատան իր տիրույթների ժառանգ նշանակել էր կայսրին, բայց չի նշում պատճառը[68]: Լաստիվերտցին, առանց որոշակի ժամանակը նշելու, գրում է. «Եւ դի [Դավիթ] խոստացեալ էր՝ յետ իւր վախճանին զիւր

[64] **Розен Василий,** с. 27.
[65] Ասողիկ, գլուխ ԻԷ, էջ 251:
[66] **Розен Василий,** там же.
[67] Ասողիկ, գլուխ ԽԳ, էջ 275:
[68] Յովհաննես Սկիլիցես, էջ 75:

պատառն տալ ի թագաւորն»[69]: Այդ մասին հիշատակում է նաև Վարդան պատմիչը. «կիւրապաղատան Դաւիթ անժառանգ գոլով. ի տայ անդարձագրով զհայրենիսն իւր՝ի Վասլն, զՈւխթիսն և զնամբուան, և զքաղաքն Ապահունեաց զՄանծկերտ, և զամենայն ինչս»[70]:

Այսպիսով, թեև Դավիթ Կուրապաղատն իսկապես իր տիրույթները կտակել էր կայսրին, սակայն, դա չի նշանակում, որ այդ կտակը կապված էր Փոկասի ապստամբության հետ, քանզի, եթե Դավիթը, Փոկասին օգնելու պատճառով, իր տիրույթները կտակեր կայսրին՝ իր մահից հետո, ապա կայսրը կարող էր արագացնել նրա մահը, հենց ապստամբությունը ճնշելուց հետո: Սակայն, Կուրապաղատը մահացել է ապստամբությունը ճնշելուց գրեթե տաս տարի անց՝ 1000 թ.: Ասողիկը գրում է. «Ես [Դավիթը] լցեալ աւուրբք, ծերացեալ ժամանակօք՝ վախճանեցաւ յաւուր մեծի փրկական Զատկին, ի Նէթ (1000) թուականին»[71]: Սկիլիցեսի մոտ ևս նշված է, որ Դավիթ Կուրապաղատը մահացել է 1000 թ. մարտի 31-ին, և կայսրը, լսելով նրա մահվան մասին, շտապեց տիրելու իր «ժառանգությանը»[72]: Իսկ որ նրան սպանել են, այդ մասին վկայում են Մատթեոս Ուռհայեցին և Արիստակես Լաստիվերտցին: Վերջինս նշում է. «յաւուր մեծի հինգշաբաթին զեղ մահու խառնեալ ի խորհուրդ պատարագին արբուցին նմա, և հեղձամահ արարեալ զերանելի անձն՝ բարձին ի կենացս, ձանձրացեալ կենօք նորա, վասն առաջիկայ խոստմանցն՝ որ ի թագաւորէն ակն ունէին»[73]: Այսինքն, Կուրապաղատին սպանողները խոստումներ են ստացել կայսեր կողմից: Նրա սպանության մասին առավել մանրամասն տեղեկություններ է պահպանել Ուռհայեցին: Վերջինս գրում է, որ Կուրապաղատին նախ թունավորել, ապա խեղդամահ է արել

[69] Արիստակես Լաստիվերտցի, էջ 35:
[70] Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 93:
[71] Ասողիկ, գլուխ ԽԳ, էջ 275:
[72] Յովհաննես Սկիլիցես, էջ 75:
[73] Արիստակես Լաստիվերտցի, էջ 23:

վրաց եպիսկոպոս Իլարիոնը, որին, կայսրը սպանել տվեց[74]: Փաստորեն, եթե Կուրապաղատը մահացել է 1000 թ., ապա, հավանաբար, նա դրանից քիչ առաջ է իր տիրույթները կտակել կայսրությանը, հակառակ դեպքում նա 990-ական թվականներից հետո չէր ընդարձակի իր տիրույթները՝ տիրելով՝ Մանազկերտին, Խլաթին, Արճեշին[75] և այլն: Կարո՞ղ էր արդյոք նա խորհել նոր նվաճումների մասին, եթե իր տիրույթների վախճանը կանխորոշված էր կամ պետք է հանձներ կայսրին: Ուստի հավանական է թվում, որ Կուրապաղատը իր տիրույթները կայսրին է կտակել 990-ական թվականների վերջերին, ինչը և ցույց է տալիս, որ դա ոչ մի կապ չունի Փոկասի ապստամբության հետ: Այս ամենը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Դավիթ Կուրապաղատը չի մասնակցել Վարդ Փոկասի ապստամբությանը:

Այսպիսով, Վարդ Սկլերոսի և Վարդ Փոկասի ապստամբությունների հետևանքով Դավիթ Կուրապաղատը, թեև ընդարձակեց իր տիրույթները, սակայն արագացրեց իր վախճանը:

[74] Սամթեոս Ուռհայեցի, էջ 37–38:
[75] Ադոնց Ն., Ճշվ. աշխ.,«ՊԲՀ», 2002, N 3, էջ 21:

ЛИАНА НАЗАРЯН
ИИ НАН РА

ВОССТАНИЯ ВАРДА СКЛИРА И ВАРДА ФОКА И ДАВИД КУРАПАЛАТ

РЕЗЮМЕ

В судьбах Давида Курапалата и Тайка большую роль сыграло восстание Варды Склира (976-979). Император Василий II решился вызвать давнего соперника Склира, Варду Фоку и направил его против узурпатора. Фока потерпел поражение и обратился за помощью к Давиду. Василий II обещал отдать Курапалату ряд территорий, если Давид вышлет вспомогательное войска. Это позволило разбить Склира в 979 г.. В результате Давид смог приобщить к своим владениям весьма значительные территории. В 987 г. Варда Фока, в свою очередь, провозгласил себя императором, но не нашел поддержки со стороны Курапалата. Василий II смог подавить мятеж 989 г.. После смерти Давида Курапалата (1000 г.), по его завещанию, свои владения он оставил императору Василию.

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՍՍԻ, ԼՈՌԻԻ ԵՎ ԱՆԻԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԹՎԱԳՐՄԱՆ ՇՈՒՐՋ

Լոռիի և Անիի եկեղեցական ժողովները Զաքարյան Հայաստանի XIII դարասկզբի պատմության կարևոր դրվագներից են: Այս ժողովների նշանակությունը մեծ է նաև ժամանակի հայ աշխարհիկ ու հոգևոր դասերի, ինչպես նաև Հայ առաքելական և Վրաց քաղկեդոնիկ եկեղեցիների փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրման առումով:

Խնդրո առարկա ժողովների վերաբերյալ գլխավոր սկզբնաղբյուրը, ինչպես նշում է Կիրակոս Գանձակեցին, եղել է Վանական վարդապետի պատմությունը. «Զբովանդակ իրս և զբան և զգործ այս ժողովոյ գրեաց մեծիմաստ և առատամիտ վարդապետն Վանական յիւրում պատմութեանն, զի ականատես էր նա իրացն եղելոց և ականջալուր»[1], որը, սակայն, մեզ չի հասել: Բարեբախտաբար, Վանականի աշակերտ Կիրակոս Գանձակեցին, օգտվելով ուսուցչի աշխատությունից, առատ տեղեկություններ է հաղորդում մեզ հետաքրքրող իրադարձությունների վերաբերյալ: Քանի որ Կիրակոս Գանձակեցին այդ ժողովների հրավիրման թվականները չի հաղորդում, ուստի պատմագիտական գրականության մեջ հանդիպում ենք ժողովների տարբեր թվագրումների: Մ. Օրմանյանը Հովհաննես Ջ Սաեցի կաթողիկոսի կողմից Զաքարեի առաջարկներին հավանություն տալը և Մինաս եպիսկոպոսի միջոցով Զաքարեին չարժական եկեղեցու համար վրան, սեղան և այլ նվերներ ուղարկելը, որին հաջորդել է Լոռիի ժողովը, թվագրում է 1208-ով, իսկ Անիի ժողովը՝ նույն տարվա դեկտեմբերի վերջով[2]: Կ. Մաթևոսյանի կարծիքով այսպիսի թվագրման համար Մ. Օրմանյանն ունի զորեղ կռվան՝ այն, որ Սսում 1207 թ. աթոռակալած Դավիթ կաթողիկոսը ևս Զաքարեին բարեփոխումներ կատարելու լիազորողներից էր, հետևաբար՝ ժողովները պետք է կայանային դրանից հետո[3]: Կ. Ղաֆադարյանը ևս հակված է Լոռիի ժողովը թվագրելու 1208-ով[4]:

Որոշ հեղինակներ էլ (Մ. Զամչյան[5], Ա. Միխիթարեանց[6], Ն. Մելիք-Թանգյան[7], Հ. Ոսկյան[8]) գտնում են, որ Լոռիի ժողովը գումարվել է 1205 թ., իսկ Անիինը՝ 1207 թ.: Հովհաննես Ձրնեցին ևս Լոռիի ժողովը թվագրում է 1205-ով, իսկ Անիինը՝ 1206-ով[9]: Լոռիի ժողովի վերոհիշյալ թվագրումներից քիչ տարբեր թվագրման ենք հանդիպում Բ. Ուլուբաբյանի մոտ: Նա գտնում է, որ Լոռիի ժողովը տեղի է ունեցել 1205 թ. կամ ամենաուշը՝ 1206 թ., բայց ոչ երբեք՝ 1208 թ.[10]: Նման թվագրման համար Բ. Ուլուբաբյանը հիմք է ընդունել Լոռիի ժողովից հետո Զաքարե ամիրսպասալարի կողմից Գրիգորես եպիսկոպոսի փոխարեն Սանահնի վանահայր Հովհաննես Խաչենցուն Հաղբատի առաջնորդ նշանակելը: Հովհաննես Խաչենցու՝ 1207 թ. Հաղբատի առաջնորդ լինելը վկայվում է մի ձեռագրի հիշատակարանում. «Գրեցաւ խոշորագիր գրով գիրքս, այս ձեռամբ նուաստ եւ ամենամեղ քահանայի Առաքելոյ, ի սուրբ եւ ի հռչակաւոր ուխտս [Հաղբատ], ընդ հովանեաւ Սրբոյ Նշանիս և

[1] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 178:

[2] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, էջմիածին, 2001, էջ 1843,1848:
[3] Սարհոսյան Կ., Անի, էջմիածին, 1997, էջ 327:
[4] Ղաֆադարյան Կ., Հաղբատ, Ե., 1963, էջ 30, հմմտ. նույնի՝ Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957, էջ 53:
[5] Զամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Ե., 1984, էջ 181:
[6] Միսիթարյանց Ա., Պատմութիւն ժողովոյ Հայաստանեայ եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874, էջ 120:
[7] Մելիք-Թանգյան Ն., Հայոց եկեղեցական իրավունք, գ. Ա, Շուշի, 1903, էջ 448:
[8] Ոսկյան Հ., Սատենագրական քննություններ, Վիեննա, 1926, էջ 135–136:
[9] Յովհաննես Դրիմեցի, Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Սուրբ Նշանին, Վիեննա, 1965, էջ 86:
[10] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Ե., 1975, էջ 255:

մաւրա լուսոյ Կաթողիկէի, յառաջնորդութեանն սուրբ հայրապետիս մերո տեառն Յոհաննիսի, ի թուիս Հայոց ՈՄԶ (1207)»[11]: Հավելենք, որ ձեռագրի՝ գրչության վայրը հիշատակող հատվածը ջնջված է: Սակայն սուրբ Նշան եկեղեցու հիշատակումն, ինչպես իրավացիորեն նկատել է Գ. Հովսեփյանը, վկայում, որ դա Հաղբատն է[12]: Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ Հովհաննես Խաչենցին Լոռիի ժողովին մասնակցել է որպես Սանահնի առաջնորդ. «Եւ էին ի ժամանակին յայնմիկ վարդապետք երեւելիք՝ Մխիթար, որ Գոշն կոչիւր..., Յովհաննէս, հայր Սանահնին, որ էր զկնի մահուան վարդապետին Գրիգորոյ, զոր Տուտայ որդին կոչէին»[13]: Հովհաննես Խաչենցուն, որպես Սանահնի առաջնորդ, վերջին անգամ հանդիպում ենք վանքի հյուրատան կառուցման վերաբերյալ նրա թողած 1205 թ. արձանագրությունում. «Ի թվականիս հայոց ՈՆԴ (1205), ի թագաւորութեանս Վրաց Թամարին, ի յամիրսպասալարութեանս Զաքարի եւ Իւանի եղբարց հարազատաց որդեաց մեծին Սարգսի, ես՝ հայր Յոհաննէս գաւառաւ Խաչինէցի, եկել բնակեցա ընդ հովանեւ սրբո Ածածնիս եւ չինեցի զհիւրատունս»[14]: Այն, որ վերջինս Սանահին է վերադառնում միայն 1205-ին, ինչպես իրավացիորեն նկատում է Բ. Ուլուբաբյանը, վկայում է Խաթարավանքի չինարարական արձանագրությունը. «Ի ՈՄԳ (1204) թուիս ես տէր Յովհաննէս չինեցի զեկեղեցիս...»[15]: Հովհաննեսի՝ Խաչենում գտնվելը վկայում է նաև Կիրակոս Գանձակեցին. «...եդ գնա (Հաղբատի Գրիգորես եպիսկոպոսին – Վ. Թ.) ի բանտի, և զՅովհաննէս կացոյց փոխանակ նորա եպիսկոպոս Հաղբատայ, ա՛յն,

[11] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 255, հմմտ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյանը, Ե., 1984, էջ 59, հմմտ. Հովսեփյան Գ., Յիշատակարան ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 735:
[12] Հովսեփյան Գ., Յիշատակարան ձեռագրաց, հ. Ա, էջ 735:
[13] Կիրակոս Գանձակեցի, էջ 171:
[14] Դաֆադարյան Կ., Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 183–184:
[15] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 254, հմմտ. Բարխուդարյանց Մ., Արցախ, Ե., 1996, էջ 125, հմմտ. Դիվան հայ վիմագրության, պր. V, կազմեց Ս. Բարխուդարյանը, Ե., 1982, էջ 121:

որ յառաջն եթող զաթոռն և գնաց Խաչէն...»[16]: Լոռիի ժողովի վերոնշյալ թվագրումներից քիչ տարբեր թվագրման հանդիպում ենք նաև Պ. Մուրադյանի մոտ: Վերջինս Լոռիի ժողովը թվագրում է 1204/05-ով, իսկ Անիինը՝ 1207 թ. սկզբով[17]: Անիի ժողովի 1207-ով թվագրելուն կողմ է նաև Կ. Մաթևոսյանը: Վերջինս գտնում է, որ Լոռիի և Անիի ժողովների միջև ընկած ժամանակահատվածը երկար չի տևել, քանզի Զաքարեն չահագրգռված է եղել Լոռիում կիսատ թողածը չուտ ավարտել[18]:

Կարծում ենք՝ Լոռիի և Անիի ժողովների ճիշտ թվագրման համար նախ և առաջ անհրաժեշտ է ճշտել Սսի ժողովի հրավիրման տարեթիվը: Ա. Մխիթարյանցը[19], Ն. Մելիք-Թանգյանը[20], հավանաբար՝ հետևելով Մ. Զամչյանին[21], այդ ժողովը թվագրում են 1204-ով: Հարկ է նշել, որ Մ. Զամչյանը որպես աղբյուր հիշատակում է Կիրակոս Գանձակեցու պատմությունը: Վերջինս ինչպես Լոռիի և Անիի, այնպես էլ Սսի ժողովների հրավիրման որևէ թվական չի նշում: Այս հարցում ուղղորդիչ հանգամանքն այն է, որ Սսի ժողովը ղեկավարել է Դավիթ Արքակաղնեցի կաթողիկոսը (1207–1211): Վերջինիս աթոռակալմամբ Լևոն Բ-ն հակադրվում էր Հռոմկլայում հաստատված Հովհաննես Զ Սեճյուն, որի հետ ուներ լուրջ տարաձայնություններ: Ուստի, տրամաբանական է խնդրո առարկա ժողովների թվագրումը սկսել Դավիթ Արքակաղնեցու աթոռակալումից, որի վերաբերյալ Հեթում Պատմիչը հիշատակում է հետևյալը. «ՈՆԶ (1207) թուականն Հայոց Լեւոն կալաւ զԱեւաստիոսն Հեռի որդւօքն, և զկոստանդ Խումարտիաչն, ձօլինն և զՊաղտինն: Եւ զտէր Յովհաննէս կաթողիկոսն ընկեցին յաթոռոյն և եդին զտէր Դաւիթն

[16] Կիրակոս Գանձակեցի, էջ 173–174:
[17] Մուրադյան Պ., Դաւանական հանդուրժողականութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գաղափարը ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանում, «Գանձասար», Դ, Ե., 1993, էջ 102:
[18] Մաթևոսյան Կ., նշվ. աշխ., էջ 327:
[19] Մխիթարյանց Ա., նշվ. աշխ., 118 էջ:
[20] Մելիք-Թանգյան Ն., նշվ. աշխ., էջ 448:
[21] Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Գ, էջ 180:

Արքակաղեցին»[22]: Սկի ժողովի՝ 1204 թ. հրավիրված լինելը հերքվում է նաև այլ փաստերով: Այսպես, Սմբատ սպարապետի հաղորդմամբ 1205 թ. Հովհաննես Ձ Սսեցին այցելում է Լևոն Բ-ին և տեղեկանում Անտիոքի դքսուհու վերաբերյալ արքայի դժգոհություններին. «Ի թուին 654 (=1205) գնաց Լեւոն թագաւորն ի վերայ Ապլասթին, և չկարաց առնուլ: ...Զայսու ժամանակաւ գնաց Տէր Յովհաննէս կաթուղիկոս առ թագաւորն Լեւոն. եւ լսեց վասն Անտաքացի թագուհւոյն զոր ունէր թագաւորն՝ բանս բամբասանաց»[23]: Դավիթ Արքակաղնեցու կարճատև աթոռակալման մասին վկայում է նաև ձեռագիր մեկ այլ հիշատակարան. «...ժամանեալ յառաքելական էր թուականն Հայոց ՈԿԱ (1212)[24], էր թագաւոր Հայոց Լեւոն Ռուբինեանց ի Կիլիկիայ...: Եւ յաստ ամի փոխեցաւ տէր Դաւիթ, որ կալաւ գկաթողիկոսութիւն սակաւ ամօք յԱրքակաղին»[25]: Հետաքրքրական է նաև այն, որ մեր ձեռքի տակ եղած աղբյուրներում մինչև 1207 թ., այսինքն՝ մինչև Դավթի աթոռակալման սկիզբը, Հայոց կաթողիկոս է հիշատակվում միայն Հովհաննես Ձ Սսեցին: Այսպես, 1207 թ. մի Ավետարանում կարդում ենք. «Եւ արդ գրեցաւ սա ի թվականիս մեր ՈՃԶ (1207) ի թագաւորութեան Հայոց Մեծի Լեւոնի... ի հայրապետութեան Յովհաննու Հայոց կաթողիկոսին»[26]: Դավիթն աթոռակալում է մինչև 1211 թ., որից հետո, ինչպես վկայում է Հեթում Պատմիչը, կրկին կաթողիկոսական աթոռը ստանձնում է Հովհաննես Ձ Սսեցին. «ՈԿ (1211) վախճանեցաւ տէր Դաւիթն և դարձեալ եղև կաթուղիկոս Հայոց տէր Յովհաննէսն»[27]:

Ուշագրավ է նաև այն, որ Կիրակոս Գանձակեցին թեև չի հիշատակում խնդրո առարկա ժողովների հրավիրման որևէ

[22] Սամր ժամանակագրություններ, հ. I, Ե., 1951, էջ 78, հմմտ. հ. II, Ե., 1956, էջ 62:
[23] Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 116:
[24] Պետք է լինի 1211 թ.:
[25] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 80:
[26] Նույն տեղում, էջ 60:
[27] Սամր ժամանակագրություններ, հ. I, էջ 78, հմմտ. հ. II, էջ 62:

Թվական, սակայն նրա շարադրանքից պարզ է դառնում, որ դրանց հրավիրման ժամանակ երկիրն ապրել է խաղաղ ժամանակահատված. «Յետ այսորիկ իբրև խաղաղացուցին զաշխարհս իշխանութեան իւրեանց յամենայն հինից, և բազմացան վանորայք, և պայծառացան պաշտամունք եկեղեցւոյ, այլ ինչ զմտաւ իշխանն Զաքարէ»[28]: Նման համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան Զաքարյանների ազատամարտի երկրորդ փուլում (1204–1220 թթ.)՝ Դավթի Արքակաղնեցու աթոռակալումից (1207 թ.) մինչև Զաքարեի մահը (1212 թ.), հանդիպում ենք երեք անգամ. առաջին շրջանն ընդգրկում է Արզեբիլի ավերումից (1207 թ. ապրիլ) մինչև Արճեշի գրավումը (16.VII.1208 – 5.VII.1209 թթ.), երկրորդը՝ Արճեշի գրավումից մինչև Խլաթի արշավանքը (1210 թ. երկրորդ կես), երրորդը՝ Խլաթի հաշտությունից մինչև Նախիջևանի աթաբեկության դեմ արշավանքը (1211 թ. առաջին կես)[29]: Կիրակոս Գանձակեցին խնդրո առարկա ժողովներին անդրադառնում է Խլաթի հաշտությունը հիշատակելուց հետո: Սակայն, դեպքերի շարադրման նման հաջորդականությանը հակասում է ինչպես Հովհաննես Խաչենցուն 1207 թ. Հաղբատի առաջնորդ հիշատակող ձեռագրի հիշատակարանը, այնպես էլ նույն վանքի խաչքարի մեկ այլ վկայությունը ևս. «Յառաջնորդութեան տէր Յովանիսի, և ի տերութեան Զաքարէի և Իւանէի՝ ես Յովսեփ- կանգնեցաք խաչս... որք երկրպագէք ի Քրիստոս, եւս առաւել գՀովանէս, ի թուիս ՈՃԸ (1209)»[30]: Արդեն նշեցինք, որ Հովհաննես Խաչենցին Հաղբատի առաջնորդ է նշանակվել Լոռիի ժողովից հետո: Ինչ վերաբերում է ժողովները Արճեշի գրավումից մինչև Խլաթի արշավանքը թվագրելուն, ապա այս դեպքում հակասող հանգամանքը Հովհաննես Խաչենցուն 1207 թ. Հաղբատի առաջնորդ վկայող վերոհիշյալ ձեռագիր հիշատա-

[28] Կիրակոս Գանձակեցի, էջ 166:
[29] Շահնազարյան Ա., Զաքարյանների ազատամարտի երկրորդ փուլը, «Լրաբեր հաս. գիտ.», 2005, թիվ 3, էջ 32, 38–39, 44:
[30] Ղաֆադարյան Կ., Հաղբատ, էջ 262, հմմտ. Յովհաննես Ղրիմեցի, նշվ. աշխ., էջ 82:

կարանն է: Մինչդեռ, ժողովները Արդեբիլի ավերումից մինչև Արճեշի դրավումն ընկած ժամանակահատվածով թվագրելը, կարծում ենք, առավել իրական է: Այսպես, հաշվի առնելով Կիրակոս Գանձակեցու վկայությունը՝ ժողովների հրավիրման ժամանակ երկրում առկա խաղաղության մասին, կարելի է եզրակացնել, որ Զաքարեն շարժական եկեղեցի ունենալու առաջարկությամբ հայ հոգևորականներին դիմել է Արդեբիլի ավերումից հետո: Այնուհետև, վերջիններիս խորհրդով Զաքարեն իր առաջարկությունների համար թույլատվություն ստանալու նպատակով դիմում է Հովհաննես կաթողիկոսին և Լևոն Բ-ին[31]: Այս դեպքում Սսի ժողովը, որտեղ քննվել է Զաքարեի դիմումը, պետք է տեղի ունեցած լինի 1207 թ. կեսերին: Կարծում ենք՝ նույն ժամանակահատվածով պետք է թվագրել նաև Հովհաննես Ձ Սսեցու՝ Զաքարեի դիմումին դրական պատասխանելը, այլ ոչ թե 1208-ով, ինչպես գտնում է Մ. Օրմանյանը[32]: Չնայած դրան՝ Մ. Օրմանյանը ճիշտ է այն հարցում, որ **ժողովները տեղի են ունեցել միևնույն տարում:** Այսպիսով, Զաքարեն, ստանալով Հովհաննես Ձ Սսեցու, քիչ անց նաև Սսի ժողովի՝ իր առաջարկներն արտոնող որոշումները, հրամայում է 1207 թ. (հավանաբար երկրորդ կեսին – Վ. Թ.) Լոռի քաղաքում հրավիրել եկեղեցական ժողով: Քանի որ ժողովը որևէ որոշում չի կայացնում, ուստի այն կրկին հրավիրելու անհրաժեշտություն է առաջանում: Ժողովն արդեն **տեղի է ունենում Անիում 1207 թ. վերջին կամ հաջորդ տարվա սկզբին,** քանզի, ինչպես հաղորդում է Կիրակոս Գանձակեցին. «Եւ էր աւուրքն ձմեռային, և տօն ծննդեան և յայտնութեան Յիսուսի Քրիստոսի մերձեալ»[33]: Այս դեպքում արդեն Հովհաննես Խաչենցու՝ 1207 թ. Հաղբատի առաջնորդ լինելու հանգամանքը համընկնում է վերոհիշյալ թվագրումներին:

[31] Կիրակոս Գանձակեցի, էջ 168:
[32] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, էջ 1841:
[33] Կիրակոս Գանձակեցի, էջ 175:

Ինդրո առարկա ժողովների թվագրման առումով հետաքրքրական է նաև Ստեփանոս եպիսկոպոսի վկայությունը. «Ի ՈԿԱ (1212) թվին... Զաքարէ և Իւանէ կամեցան միաբանել ընդ վրաց և ընդ Վիրս և ժողովք արարին ի Գետաւկն բազում հարանց և վարդապետաց, ընդ որս էին աշխարհալոյս և աստուածապսպնաց վարդապետքն՝ Գոչ Մխիթարն, Մոնօնիկն և Տուրքիկն: Եւ ոչ կարացին միաբանել, այլ հաստատուն մնացին Հայք յուղղափառ հաւատս, որ և խրոխտացեալ Զաքարէ վարդապետացն, նզովեցաւ ի նոցանէ. և գնաց յԱրտաւէտ և կոտորեաց: Եւ ի պալ ամն մեռաւ ի ճանապարհին և եղաւ ի Սանահինն ուխտ»[34]: Կարծում ենք՝ սխալ է Գետաւկի (Գետիկ)[35] ժողովը Լոռիի ժողովի հետ նույնացնելը, ինչը փորձել է անել Վ. Հակոբյանը[36]: Ա. Շահնազարյանի ճշգրտմամբ Ստեփանոս եպիսկոպոսը Նախուշյան աթաբեկության դեմ արշավանքը սխալ է թվագրել, քանի որ այն սկսվել է ոչ թե 1212 թ., այլ 1211 թ. աշնանը[37]: Այսպիսով, եթե Լոռիի ժողովը թվագրենք 1211-ով, ապա դրան հաջորդած Անիի ժողովը պետք է կայացած լիներ նույն թվականի դեկտեմբերի վերջին կամ հունվարի սկզբին՝ հաշվի առնելով Կիրակոս Գանձակեցու՝ Սուրբ ծննդյան տոնի (հունվարի 6) վերաբերյալ վերը հիշատակված վկայությունը: Մինչդեռ սա հնարավոր չէ այն պարզ պատճառով, որ 1211 թ. վերջին Զաքարեն պլխավորել է հայ-վրացական զորքերի արշավանքը Ելտկուզյան աթաբեկության[38], ուստի չէր կարող նախաձեռնել ժողովի գումարումը Անիում: Այս տեսակետն անուղղակի փաստում է նաև Կիրակոս Գանձակեցին՝ նշելով, որ Զաքարեն Անիի ժողովից հետո. «ո՛ըչափ եկաց՝ նոյնպէս վարեցաւ, որպէս կամէր, բայց եկեղեցիքն ամենայն առաջին վարեցան»[39]: Ավելին, հայկական և վրացական աղբյուրների վկայությամբ Զաքարեն մա-

[34] Սամր ժամանակագրություններ, հ. I, էջ 38:
[35] Նույն տեղում, էջ 54:
[36] Նույն տեղում:
[37] Շահնազարյան Ա., նշվ. աշխ., էջ 44:
[38] Նույն տեղում:
[39] Կիրակոս Գանձակեցի, էջ 177–178:

հացել է 1212 թ.՝ այս արշավանքից անմիջապես հետո[40]: Հետևաբար անհնար է, որ նա կարողանար Անիի ժողովից հետո շարունակել պնդել իր առաջարկները: Ճիշտ չէ նաև Վ. Հակոբյանի կողմից Լոռիի և Անիի եկեղեցական ժողովները վրաց XIII դ. Անանուն հեղինակի հաղորդած հայ-վրացական դավանաբանական վեճի հետ նույնացնելը[41]: Այս վեճի՝ խնդրո առարկա ժողովներից որևէ մեկի հետ նույնական չլինելը փաստվում է նրանով, որ ավյալ դեպքում վեճի մի կողմը հայ հոգևորականության ներկայացուցիչներն են, Վանի (Աղթամարի – Վ. Թ.) կաթողիկոսը[42] և Զաքարեն, իսկ մյուս կողմը՝ վրաց հոգևորականության ներկայացուցիչներն ու Հովհան (Իոանե) կաթողիկոսը[43]: Բացի այդ, եթե Լոռիի և Անիի ժողովների քննարկման գլխավոր առարկան բանակի շարժական եկեղեցի ունենալն էր, ապա այս վեճում քննվել է հայ առաքելական և վրաց քաղկեդոնիկ դավանանքների ճշմարտացիության հարցը: Գետիկի՝ առանձին ժողով լինելը փաստվում է նաև դրան Իվանեի մասնակցությամբ, որին չենք հանդիպում ոչ Լոռիի և ոչ էլ Անիի ժողովներում: Ենթադրելի է, որ պայմանավորված այս նոր արշավանքով, Զաքարեն կրկին բարձրացրել է բանակում շարժական եկեղեցի ունենալու հարցը և այդ նպատակով 1211 թ. այս անգամ արդեն Գետակում (Գետիկում) հրավիրել եկեղեցական նոր ժողով, որտեղ ևս, ըստ Ստեփանոս եպիսկոպոսի վկայության, հաջողության չի հասել[44]:

Այսպիսով, Սսի, Լոռիի ժողովները չէին կարող կայացած լինել համապատասխանաբար 1204, 1205/06 թթ.: Սսի և Լոռիի ժողովների հրավիրման թվական պետք է համարել 1207 թ., իսկ Անիի ժողովի համար՝ 1207 թ. վերջից 1208 թ. սկիզբն ընկած ժամանակահատվածը:

---

[40] Շահնազարյան Ա., նշվ. աշխ., էջ 43:
[41] Մաճր ժամանակագրություններ, հ. I, էջ 54:
[42] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Ե., 1936, էջ 31: Լ. Մելիքսեթ-Բեկի կարծիքով վեճին մասնակցած Վանի կաթողիկոսը Կիրակոս Գանձակեցու հիշատակած Դավիթ Աղթամարեցին է:
[43] Նույն տեղում, էջ 17:
[44] Մաճր ժամանակագրություններ, հ. I, էջ 38:

ВАГЕ ТОРОСЯН
ИИ НАН РА

К ДАТИРОВКЕ ЦЕРКОВНЫХ СОБОРОВ СИСА, ЛОРИ И АНИ

РЕЗЮМЕ

Церковные соборы Сиса, Лори и Ани являются важными событиями в истории Захаридской Армении. Об этих соборах сообщает армянский историограф XIII века Киракос Гандзакеци. Так как последний не отмечает даты этих соборов, в научно-исторической литературе встречаются разные подходы к датировке соборов. Некоторые авторы находят, что церковные соборы Сиса, Лори и Ани состоялись соответственно в 1204, 1205/06 и в 1207 годах. Однако всестороннее исследование данных источников доказывает, что соборы Сиса и Лори состоялись в 1207 г., а собор Ани в конце того же года или в начале 1208 г.

ՋՈՀՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Միջնադարյան Եվրոպայի քաղաքների զարգացումը, բնակչության աճին զուգընթաց, նոր որակ էր ձեռք բերում: Սոցիալ-տնտեսական բարդ գործընթացներից հեղափոխական նշանակություն ունեցան XIII դարում ավելի մեծ թափ ստացող արտադրական ճեռնարկությունների հիմնումը, ինչպես նաև ապրանքադրամական նոր բնույթի հարաբերությունները, մասնավորապես՝ բանկային համակարգի ձևավորումը: Միջնադարյան արտադրության հիմքը կազմող տեքստիլ ճեռնարկությունները հիմնականում կենտրոնացած էին նավահանգստային քաղաքներում, քանի որ դրանցում օգտագործվող հումքը, հատկապես բամբակը և մետաքսը ներմուծվում էին անդրծովյան երկրներից[1]: Տնտեսական և սոցիալական խմորումների արդյունքում՝ շատ քաղաքներ աստիճանաբար վերածվում էին ազդեցիկ կենտրոնների:

Խաչակրաց առաջին իսկ արշավանքից սկսած Վենետիկը, Ջենովան և Պիզան դեպի Արևելք ուղղվող տնտեսական արշավի գլխավոր դերակատարներն էին: Այս եռյակին XIII դ. վերջին միանում է նաև Արագոնի թագավորությունը՝ ի դեմս գլխավոր նավահանգիստ Բարսելոնի[2]:

Բաղդադի գրավումը (1258 թ.), ապա Խաչակրաց իշխանությունների (Աքքա, Տրիպոլի, Տյուրոս, Սիդոն, Բեյրութ) կործանումն (1289 թ. և 1291 թ.) արմատապես փոխեցին Եվրոպա-

[1] **Lopez R. S.**, Rivoluzione commerciale del Medioevo, Torino, 1975, pp. 80–81, 132.
[2] **Луццатто Дж.**, Экономическая история Италии. Античность и средние века, М., 1954, с. 243–245.

Ասիա բազմակողմանի շփումների ռազմավարության պատկերը: Աքքայի անկմանն անմիջապես հաջորդած պապության արգելքն Եգիպտոսի և Ասորիքի հետ ընթացող առևտրական կապերի վրա (1291–1344 թթ.)[3], ապա, դրա հետ մեկտեղ, Վենետիկի, Ջենովայի ու Պիզայի միջև գնալով սաստկացող հակամարտությունը, որն ուղղված էր Լևանտում[4] գերակա դիրք գրավելուն, հավելյալ առիթ էին հանդիսանում եվրոպական այլ քաղաքների համար՝ ակտիվացնելու իրենց մասնակցությունը միջազգային տնտեսական հարաբերություններում: Մովային երկու գերտերությունների՝ Վենետիկի ու Ջենովայի հանրապետությունների միջև պայքարը հաճախ վերաճում էր զինված բախումների, որոնց թատերաբեմն էր նաև կիլիկյան ծովափը[5]:

Հայոնի միջնադարագետ Դ. Աբուլաֆիան, առաջնորդվելով լևանտյան առևտրում ունեցած ազդեցությամբ, առանձնացնում է փոքր և միջին տնտեսական կենտրոնների մի խումբ, որոնցից առաջնահերթ հիշատակում է Ֆլորենցիան, Անկոնան, Պիսչենցան, Նարբոննան, Մարսելը, Մոնպելիեն, Նիմը, Մեսինան և այլն: Ջնայած, որ XIII – XIV դդ. Արևելք-Արևմուտք առևտրական հարաբերություններում այդ քաղաքների վաճառականների կողմից իրականացված տարեկան ներդրումները կազմում էին ամբողջ շրջանառության հազիվ 10 %-ը, սակայն

[3] **Ashtor E.**, Levant Trade in the Later Middle Ages, Princeton, N. J., 1983, p. 17.
[4] Լևանտ (թարգմ. Արևելք) աշխարհագրական տերմինը հաճախ տարածվել է Արևելյան Միջերկրածովի, Սև ծովի, հունական կղզիների և ծովափնյա մահմեդական շատ երկրների վրա (տե՛ս **Day J.**, The Levant Trade in the Middle Ages. "The Economic History of Byzantium: From the Seventh through the Fifteenth Century", Dumbarton Oaks Studies, Washington, 2002, p. 808).
[5] 1294 թ. մայիսի 28-ին Այասի ափերի մոտ տեղի ունեցած ծովամարտի արդյունքում, Վենետիկը ծանր պարտություն է կրում ջենովական նավատորմից: Իսկ 1298 թ. սեպտեմբերի 7-ի Կուրցոլեի ծովային խոշոր ճակատամարտում կրելով ևս մեկ պարտություն՝ Վենետիկը հարկադրված ընդունում է Ջենովայի գերակայությունը լևանտյան առևտրական հարաբերություններում (տե՛ս Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ., հ. I, Ե., 1951, էջ 86: Տե՛ս նաև՝ **Pistarino G.**, Economia e societa del Mediterraneo Genovese nel tempo degli orizzonti aperti, in: I signori del mare, Civico Istituto Colombiano, Genova, 1992, pp. 103–104).

հանդիսանում էին արևմտաեվրոպական չատ միապետերի ռազմաքաղաքական ծրագրերի գլխավոր ֆինանսավորողները[9]:

Միջնադարի բանկային այս հսկաներից հենց Բարդին ու Պերուցին էին ակտիվ հարաբերություններ հաստատել Կիլիկյան Հայաստանի հետ: 1335 թ. Բարդի ընկերությունը՝ հանձինս իր ներկայացուցիչ Ֆրանչեսկո Բալդուչի Պեգոլոտտիի, անմաքս առևտրի իրավունք ձեռք բերեց Լևոն Ե-ից (1320–1340), այն դեպքում, երբ նախկինում էլ վճարվում էր ընդամենը 2 %. «Ընկերութիւնն Պարտի (վաճառականաց) ազատ է. ոչ ինչ հատուցանէ ի բովանդակ թագաւորութեան Հայոց[10], ոչ ի մուտան և ոչ յելսն, առանց բանի և գրաւման»: Պերուցիի համար սահմանվել էր 2 % մաքսավճար՝ ապրանքների ներմուծման և արտահանման դեպքում[11]:

1322 թ. Այասի ավերումից հետո Հովհաննես XXII պապը պահվիրում է 30000 ոսկի ֆլորին փոխ առնել Բարդի ընկերությունից, որի մի մասը պետք է հատկացվեր հայկական գլխավոր ծովային դարբասի վերականգնման համար[12]:

Պեգոլոտտիի «Առևտրի արվեստը» աշխատությունը հիմնարար նշանակություն ունի միջնադարյան տնտեսության ուսումնասիրության համար, որտեղ նա, որպես ականատես, հանգամանորեն անդրադառնում է Այասում իրականացվող

[9] **Дживелегов А.**, Торговля на Западе в средние века, СПб., 1904, с. 162. Տե՛ս նաև՝ **Рутенбург В.**, Очерк из истории раннего капитализма в Италии: флорентийские компании XIV века, М., 1951, с. 51–92. **Лупаттo Дж.**, указ. соч., с. 286.

[10] Ինչպես Պեգոլոտտիի, այնպես էլ բազմաթիվ այլ սկզբնաղբյուրներում Կիլիկիայի Հայկական թագավորությունը հաճախ անվանվում է ուղղակի Հայաստան:

[11] Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 374-375: Տե՛ս նաև՝ **Francesco Balducci Pegolotti**, La Pratica della Mercatura, ed. Evans A., The Medieval Academy of America, Cambridge, Massachusetts, 1936, Kraus Reprint Co., New York, 1970, p. 60. **Langlois V.**, Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupeniéns, Venise, 1863, p. 195. **Heyd W.**, Histoire du commerce du Levant au moyen age, Amsterdam, 1967, t. II p. 86. **Микаелян Г.**, История Киликийского Армянского государства, Е., 1952, с. 390–391. **Рутенбург В.**, указ. соч., с. 108.

[12] Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 390:

առևտրի կառուցվածքային մանրամասներին: Չնայած որ տոմսկանացիները կիլիկյան նավահանգիստներում արտոնված դրամնտության թուլլտվություն ստացան միայն 1330-ականներին, սակայն նրանց ներկայության մասին հիշատակություններ կան դեռևս XIV դ. սկզբի (բանկերի հիմնադրման առաջին տարիներից) նոտարական փաստաթղթերում: Դրանցից մեկը հայտնում է, որ 1300 թ. կատալոնցի Ռոբերտո Ջինեստուսը Բարդի և Ֆլորենտական Յանուչիս Բարտոլլի ընկերությունների գործակալներին վարձակալության է տալիս իր «Սան Սալվադոր» նավը՝ Իտալիայի Ապուլիա երկրամասի Բարլետա և Մանֆրեդոնիա քաղաքներից Կիպրոս, Կիլիկյան Հայաստան և Ասորիք 2400 սալմա (salma, մոտ 583 տոննա) ցորեն տեղափոխելու համար[13]:

Միջնադարյան հայտնի քաղաքական գործիչ և հեղինակ Մարինո Սանուտո Տորսելլո Ավազը հայտնում է. «Առատագոյն ի պատուական բերս երկրին և հռչակեալ ի վաղուց՝ է բամբակն»: Իսկ Պեգոլոտտին ավելացնում է. «...զբամբակ Կիլիկիոյ յիա Ամանոսին ընտրելագոյն ասէ, քան զ Պաղեստինոյ, Կիպրոսի, Մալդայ, Սիկիլիոյ, Բուլիոյ և այլ կողմանց»[14]: Բոլորովին պատահական չէ, որ ֆլորենտացիներն Այասով բամբակ էին մատակարարում եվրոպական բազմաթիվ քաղաքներում գործող տեքստիլ ձեռնարկություններին[15]:

[13] **Otten-Froux C.**, Les relations èconomique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie d'après les actes notariés (1270–1320), "L'Arménie et Byzance", Sorbonne, 1996, pp.171–172. Սալման միջնադարում ցորենի և ընդհանրապես հացահատիկի առք ու վաճառքում ամենատարածված կշռի միավորներից էր, որի համեմատական չափը տրված է Պեգոլոտտիի աշխատության՝ Կիլիկյան Հայաստանին վերաբերող հատվածում: Այստեղ 100 ապուլական սալմային համարժեք է 188 հայկական մող (moggia, 1 մոդն ըստ Ղ. Ալիշանի՝ 129,407 լիտր) կոչվող կշռի միավորի (տե՛ս մող (moggia, 1 մոդն ըստ Ղ. Ալիշանի՝ 129,407 լիտր) կոչվող կշռի միավորի (տե՛ս **Francesco Balducci Pegolotti**, նշվ. աշխ., p. 63. Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 376, 377, 396):

[14] Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 14: Տե՛ս նաև՝ **Francesco Balducci Pegolotti**, նշվ. աշխ., p. 366.

[15] **Ashtor E.**, նշվ. աշխ., p. 43.

Կիլիկյան Հայաստանի և Սիցիլիայի պատմական առնչությունների մասին հիշատակություններ կան նույնիսկ Վանրածննդի դարաշրջանի հռչակավոր ներկայացուցիչ Բոկաչչոյի և իտալացի այլ հեղինակների հայտնի գործերում[16]: Միջերկրածովյան առևտրում Սիցիլիայի գլխավոր դերակատարը Մեսինա քաղաքն էր, որի վաճառականները մինչև XIV դ. Կիլիկիայում հանդես էին գալիս ոչ միայն միջնորդավորված, այլև իրենք էին ժամանում այնտեղ ինչպես սեփական, այնպես էլ վարձակալված նավերով: Հայկական նավահանգիստներում նրանց կնքած գործարքներում նշվում են բամբակ, մետաղե արտադրանքներ և այլ ապրանքներ[17]: XIII դ. երկրորդ կեսից սիցիլական քաղաքները Միջերկրածովում ցորենի առևտրի կարևոր կենտրոններից էին: Արևելք-Արևմուտք հացահատիկի շրջանառության առանցքներից մեկն անցնում էր Կիլիկիայով ու Կիպրոսով[18]: Լևոն Ե-ի և Սիցիլիայի թագավոր Ֆրեդերիկ I-ի դատեր ամուսնությունից (1330 թ.) մեկ տարի անց նրանց միջև կնքվում է առևտրական պայմանագիր: Այն իր մեջ ներառում էր իրավական կետեր, որոնք պետք է ապահովեին վաճառականների անվտանգությունը. «Ի պաւման՝ որ աւտար նաւ կամ աւտար գէմնի մարդ կամ ըռըզակ չառնուն հետ իւրեանցն որ-

[16] **Bais M.**, Il privilegio ai Siciliani di re Lewon IV (1331): una pagina delle relazioni tra gli Armeni e la Sicilia, Schede Medievali Rassegna dell'Officina di studi medievali, Palermo, 2005, pp. 5–7. Տե՛ս նաև՝ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 393:

[17] **Abulafia D.**, The Merchants of Messina: Levant Trade and Domestic Economy, in: Commerce and Conquest in the Mediterranean, 1100–1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, p. 209.

[18] **Abulafia D.**, Sul commercio del grano siciliano nel tardo duecento, in: Italy, Sicily and the Mediterranean, 1100–1400, Variorum Reprints, London, 1987, p. 13. Տե՛ս նաև՝ **Abulafia D.**, Southern Italy and the Florentine Economy, 1265–1370, in: Italy, Sicily and the Mediterranean, 1100–1400, Variorum Reprints, London, 1987, pp. 385–386. **Otten-Froux C.**, նշվ. աշխ., pp. 171–172.

պէս Սիցիլիան՝ խըրսեն. ու թէ գտնվի ով անէ այսպէս, նայ կորցնէ պիւր ազատութիւնն յաւիտեանս»[19]:

Պայմանագրի համաձայն՝ապրանքների ներմուծման և արտահանման համար վճարվելու էր 2 % մաքսատուրք: Պեգոլոտտին հայտնում է, որ 1335 թ. սիցիլացիներն արդեն ազատված էին մաքսատուրքից[20]: Այս արտոնագիրը բացառիկ է ոչ միայն հայ-սիցիլական կապերում, այլև, ընդհանրապես, Սիցիլիայի միջնադարյան առևտրի պատմության մեջ:

Անկոնա քաղաքը, լինելով Ադրիատիկ ծովի երկրորդ խոշոր նավահանգիստը Վենետիկից հետո,՝ սուր մրցակցության մեջ էր վերջինիս հետ: Արդյունքում՝ Ջենովայի և Անկոնայի միջև ձևավորվել էին ամուր դաշնակցային հարաբերություններ՝ ընդդեմ Վենետիկյան հանրապետության: Գործը հասավ նրան, որ Վենետիկի և Անկոնայի միջև 1264 թ. կնքված պայմանագրի համաձայն՝ վերջինիս արգելվեց առևտրական գործունեություն ծավալել Ադրիատիկ ծովից դուրս[21]:

Այնուամենայնիվ, Կիլիկիայում անկոնացիների ներկայության մասին կարելի է խոսել արդեն 1270-ականների սկզբներից: Սկզբնաղբյուրներում հիշատակվում են շատ անկոնացիներ, որոնց թվում կան վաճառականներ, խանութպահներ և այլն[22]: Նրանց գործունեության գլխավոր ոլորաններից էր Կիլիկյան Հայաստանով ու Կիպրոսով ընթացող ցորենի և բամբակի առևտուրը: Հաղթահարելով վենետիկյան արգելքը՝ անկոնացի վաճառականները հարավային և կենտրոնական Իտալիայի հացահատիկի ավելցուկ բերքն ուղղում էին Կիլիկիա, Կիպրոս և

[19] Լեւոն Ե եւ իր հրովարտակը, «Բազմավէպ», 1847, էջ 92: Տե՛ս նաև՝ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 364:

[20] **Francesco Balducci Pegolotti**, նշվ. աշխ., p. 60.

[21] **Ashtor E.**, նշվ. աշխ., p. 30. Տե՛ս նաև՝ **Abulafia D.**, The Anconitan Privileges in the Kingdom of Jerusalem and the Levant Trade of Ancona, in: Commerce and Conquest in the Mediterranean, 1100–1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, pp. 526, 546.

[22] **Balletto L.**, նշվ. աշխ., pp.51–55, 92–93, 322.

Ասորիք, որտեղ այն մեծ պահանջարկ ուներ: Առք ու վաճառքի պայմանագրերը հուշում են, որ XIII դ. վերջին և XIV դ. սկզբին իտալական Ապուլիա երկրամասից Կիպրոս և Կիլիկյան Հայաստան մեծաքանակ ցորեն է ներկրվել[23]: Կիպրոսում գործած Ջենովացի նոտար Լամբերտո դե Սամբուչետոյի՝ 1301 թ. կազմած գործարքներից մեկում նշվում է, որ լաթաքիացի Կոզմասն իր եղբայր Դամիանոյի հետ միասին անկոնացի գործակալների միջոցով, Կիլիկիա են ուղարկում 3800 Սպիտակ Բյուզանդի[24] ցորեն: Ապա ստացված գումարով նրանք պետք է բամբակ գնեին և ուղարկեին Վենետիկ, Անկոնա ու Ապուլիա:[25] Մուրհակներում հիշատակված ցորենի գներն անկայուն են: 1300 թ. հունվարի 31-ին կնքված գործարքում 100 սալմա ցորենի դիմաց նշվում է 9500 Հայկական նոր դրամ[26], սակայն նույն թվականի փետրվարի 23-ին կորսիկացի Սալվի Պավան Ճամագուստայից Կիլիկիա է ուղարկում նույնաքանակ ցորեն՝ 11500 Հայկական նոր դրամի արժեքով: Ըստ Ղ. Ալիշանի՝ 1299–1300 թթ. 27 Կիպրոսյան կամ այսպես կոչված ոսկե Սպիտակ Բյուզանդին համարժեք էր 100 նոր դրամ: Այս տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ 3800 Սպիտակ Բյուզանդով հնարավոր էր գնել ավելի քան 140 սալմա ցորեն (մոտ 34 տոննա)[27]:

[23] **Abulafia D.**, The Anconitan Privileges in the Kingdom of Jerusalem and the Levant Trade of Ancona, pp. 548, 556, 558.

[24] Սպիտակ կամ Կիպրոսյան Բյուզանդի (Byzanti Albi, Besant Blanc – 3.87 գր.) ավելի քան 1/5 մասը ոսկի էր (տե՛ս Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 382):

[25] **Otten-Froux C.**, նշվ. աշխ., p. 177.

[26] Հայկական նոր դրամը սկսել էր հատվել Լևոն Գ-ի (1270–1289) գահակալության շրջանում: Այն Կիլիկյան Հայաստանի առևտրական հարաբերություններում ամենաօգտագործվող դրամական միավորներից էր: Դրանք արծաթյա դրամներ էին՝ 2,9 գրամ կշռով: Հետագայում՝ XIV դ. առաջին քառորդում, արծաթի պարունակությունը նվազեցվել է, որի հետ, միաժամանակ, դրամն արժեզրկվել է (տե՛ս Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 385: Տե՛ս նաև՝ **Պտուկեան Զ.**, Կիլիկեան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963, էջ 58–59):

[27] Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 377, 383, 396: Տե՛ս նաև՝ **Francesco Balducci Pegolotti**, նշվ. աշխ., p. 60. **Otten-Froux C.**, նշվ. աշխ., pp. 171–172.

Մեկ այլ նշանավոր քաղաք Պիաչենցան, թեև բավական հեռու է Իտալիայի ծովափնյա շրջաններից, սակայն նրա առևտրական ընկերություններն ազդեցիկ գործունեություն էին ծավալել Արևելք-Արևմուտք առևտրատնտեսական կապերում: Կիլիկյան նավահանգիստներում պիաչենտական համայնքը մեծաթանակներից մեկն էր: Պետ Ռասինը հաստատում է, որ XIII դ. վերջին Այասում և Աքքայում հանդրվանած պիաչենտական կազմակերպված համայնքները միակն էին ամբողջ Լևանտում[28]: Պիաչենցայի Սկոտտի, Ուգո Բորինի, Դիանի, Տայո, ինչպես նաև Բագարոտյան ընկերությունների ներկայացուցիչների անունները սփռված են Այասում գրառված նոտարական թղթերում: Ինչպես Վենետիկն ու Ջենովան, Պիաչենցան ևս Կիլիկիայում ուներ սեփական ներկայացուցչություն, որն անվանվում էր «Ապարանք Պիաչենցեայց» (Logia Placentinorum): Օրինակ, հիշատակվում է ոմն Հովհան Բորդի, ով 1295 թ. Կիլիկիայում Պիաչենցայի հյուպատոսն էր[29]: Սկոտտին և Բորինին առևտրական կապ էին պաշտպանում Ճամագուստայի, Այասի ու Մարսելի միջև: 1301 թ. Լամբերտո դե Սամբուչետոյի մուրհակներից մեկը վկայում է, որ պիաչենտական խոշոր ընկերությունների գործակալներն Այասից ուղիղ Մարսել կամ Աիգես-Մորտես (քաղաք Ֆրանսիայի հարավում) են ուղարկում բամբակ, շաքար, բրազիլ փայտ (որդան փայտ), դարչին, կոճապղպեղ, խունկ, ինդիգո, բուրդ և նույնիսկ փղոսկր[30]: Գործարքներից մեկում նշվում է, որ պիաչենտացի Մանֆրեդո Նապակոն, Ուգո Բորինի ընկերության ներկայացուցիչ Գվիլելմո Վիչեդոմինուսից (նույնպես Պիաչենցայից) ստացել է 7 հակ ավինյոնյան մահուդ, 2 կոոր փարիզյան նշանաձողեր (biffa) և

[28] **Racine P.**, Les debuts des consulats italiens outre-mer, in: Etat et colonisation au Moyen Age et à la Renaissance, sous la direction de Michel Balard, Lyon, 1989, p. 273.

[29] **Langlois V.**, նշվ. աշխ., pp. 164–165. Տե՛ս նաև՝ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 363:

[30] **Heyd W.**, նշվ. աշխ., t. II, pp. 8, 713. Տե՛ս նաև՝ **Ashtor E.**, նշվ. աշխ., p. 39.

10 կտավյա զգեստ (Frassate, Fraxeti): Մեկ այլ պայմանագրում, նույն նապաստն կրկին գնում է մեծ քանակի մահուդ[31]: Բորինի ընկերությունը հիշատակված է բազմաթիվ այլ փաստաթղթերում, որոնցում այն գործարքներ է կնքում հարավ-եվրոպական այլ քաղաքների ներկայացուցիչների հետ: Մանրակրկիտ ներկայացուցչություն ուներ Բագարոտյան ընկերությունը, որը գործում էր ինչպես Բագարոտուս ընտանիքի անդամների, այնպես էլ այլ պիաչենտացիների միջոցով[32]:

Ըստ 1300 թ. մի հիշատակության՝ կիլիկյան Ալայա նավահանգստում հաստատվել էին վաճառականներ, որոնք ծագումով Իտալիայի Լոմբարդիա երկրամասից էին, և նրանք այնպիսի աշխույժ գործունեություն էին ծավալել, որ քաղաքը հաճախ անվանվել է Լոմբարդացիների բերդ (Castrum Lombardum, Castello Lombardo)[33]:

Իտալիայի պատմական մարզերից հիշատակելի է նաև Պիեմոնտը, որի կենտրոն Թուրինից ժամանած վաճառականները զգալի թիվ էին կազմում Այասում[34]: Հարկ է նշել նաև Վիչենցա, Պավիա, Բարլետա, Սիենա, Լիվորնո, Ռավեննա, Մանտուա, Ամալֆի, Կրեմոնա և տասնյակ այլ քաղաքների ներկայացուցիչներին, որոնց կարելի է հանդիպել Այասի միայն մի քանի տարվա նոտարական փաստաթղթերում[35]:

Արևելքի հետ տնտեսական հարաբերությունների բուռն աճին զուգընթաց աննախադեպ վերելք էին ապրում նաև հաբսվֆրանսիական քաղաքները: Պրովանսյան նավահանգիստներ Մարսելը, Մոնպելիեն և Նիմը ազդեցիկ դերակատարություն ու-

[31] **Balletto L.**, նշվ. աշխ., pp. 269, 272, 377, 378.
[32] Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 363: Տե՛ս նաև՝ **Balletto L.**, նշվ. աշխ., p. 288.
[33] Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 316:
[34] **Balard M.**, L'emigrazione monferrino-piemontese in Oriente (sec. XII–XIV), in: Atti del congress intarnazionale "Dai feudi Monferrine e dal Piemonte ai nuove oltre gli oceani", a cura di L. Balletto, Alessandria, 1993, p. 252.
[35] Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 359:

նեին Հայկական թագավորությունում: Կիլիկիայի հարավային հրվանդան Զեֆարիոնից (Զեփիւռիոն) հյուսիս-արևելք կա մի կղզյակ, որին, դեռևս միջնադարից, անվանել են Պրովենցալ (Isola Provenzale, Ile Provençale և այլն). «կայանս և նաւամատոյցս նզեալ առ պայազատութեամբ մերայոցս՝ վաճառականացն Մոնպէլիեի և այլոց Փռանկաց Բրովանս նահանգի նոցին»[36]:

Եթե 1270-ականներին պրովանսցիներն Այասում հազվադեպ են հիշատակվում, ապա 1290-ականներին հանդես են գալիս սեփական նավերով: Հայտնի է մի դեպք, երբ 1295 թ. Այասի ափերի մոտ վենետիկյան 4 գալեր (միջնադարյան նավի տեսակ), Մարկո Բազիլիոյի հրամանատարությամբ, գավթում և թալանում են մարսելցի վաճառական Պեդրո Կատրոլինգի «Բոնդիմիր» նավը: Նույն թվականի սեպտեմբերի 2-ին Կիլիկիայում, Պիաչենցայի հյուպատոսի ներկայությամբ, կազմվում է իրավական ակտ, որը պետք է լուծեր այս գործը: Թալանված ապրանքների թվում նշվում են բրդյա կտորեղեն, հայելիներ, փարիզյան գոտիներ, ափոցներ, ածելիներ, օճառ, կոռիկոսյան գորգեր և այլն[37]: 1279 թ. առք ու վաճառքի թղթերից մեկում նշվում է, որ պրովանսցի Գվիլելմո Ռայմոնդոն վաճառում է 442 Հայկական նոր դրամի և 1 Դենարի[38] կաղնու փայտանյութ (rovere)[39]:

1314 թ. Կիլիկիայի Օշին արքան (1308–1320) շնորհագիր է հանձնում Մոնպելիեի վաճառականներին, իսկ 1321 թ. Լևոն Ե-ն վերահաստատում է այն: Երկու պայմանագրերում էլ սահմանվում էր 2 % մաքսատուրք. «Մունբուլլերցի (Մոնպելիեի–Ջ. Գ.) վաճառականք, զոր կան ի մեր աշխարքս ի յԱյաս ու զոր ի յայս... ի յԱյասոյ բայժառունն, որ ի ծախելն և ի գնելն ի

[36] Նույն տեղում, էջ 325:
[37] **Langlois V.**, նշվ. աշխ., p. 164. Տե՛ս նաև՝ **Барсегов Ю.**, Борьба Киликийской Армении против пиратства в Средиземном море, «ՊԲՀ», 1970, N 3, էջ 79–80:
[38] Դենարը (Քարտեզ) 6,7 գրամ կշռով պղնձյա դրամ էր: Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 385. Տե՛ս նաև՝ **Պտուկեան Զ.**, նշվ. աշխ., էջ 58–59:
[39] **Balletto L.**, նշվ. աշխ., p. 291.

հարոյրն երկուք մէն տան»: Այս արտոնութիւնները ներառում էին նաև Մարսելի ու Նիմի վաճառականներին[40]: Հատկանշական է, որ Մոնպելիեի հյուպատոսը գործում էր միաժամանակ և՛ Կիլիկյան Հայաստանում, և՛ Կիպրոսում: Օրինակ, Պեդրուս դե Պոդիոն 1299 թ. Մոնպելիեի հյուպատոսն էր Կիպրոսում ու Կիլիկիայում[41]:

Պրովանսից արևմուտք՝ Ֆրանսիական Լանգեդոկ երկրամասում է գտնվում միջնադարում մեծ հռչակ վայելող նավահանգիստ Նարբոննան: Երբևէ չհանդիսանալով Արագոնի թագավորության մաս՝ այս քաղաքն իր վրա կրել է վերջինիս, ինչպես նաև Մայորկայի ազդեցությունը: Բազմաթիվ փաստեր վկայում են Կիլիկյան Հայաստանում Նարբոննացի վաճառականների աչխուժ գործունեության մասին: Ըստ Պեգոլոտտիի՝ նրանց համար 1324 թ. Կիպրոսում սահմանված էր 2 % մաքսատուրք, իսկ արդեն 1330-ականների համար նա նշում է, որ կատալոնցի և պրովանսցի վաճառականները Կիլիկիայում վճարում էին կրկին 2 %[42]: Հաշվի առնելով, որ կիպրական ու հայկական մաքսատուրքերը հիմնականում նույնական էին, կարելի է եզրակացնել, որ Նարբոննացիները Հայկական Կիլիկիայում նույնպես վճարում էին 2 %: Այս կարծիքը հաստատվում է նաև նշանավոր հայագետ Վ. Լանգլուայի կողմից[43]: Այսպես գործող Նարբոննացի վաճառականները ներգրավված էին կիպրական

[40] **Langlois V.**, նշվ. աշխ., pp. 178, 185.

[41] **Abulafia D.**, Narbonne, the Lands of the Crown of Aragon, and the Levant Trade 1187-1400, in: Commerce and Conquest in the Mediterranean, 1100-1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, p. 192. Տե՛ս նաև՝ **Otten-Froux C.**, նշվ. աշխ., p. 163. **Близнюк С.**, Торгово-экономические отношения Кипра с государствами Средиземноморья в 1192–1373 гг., "Византия. Средиземноморье. Славянский мир", М., 1991, с. 60.

[42] **Francesco Balducci Pegolotti**, նշվ. աշխ., p. 60, 84. Տե՛ս նաև՝ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 375: **Abulafia D.**, Narbonne, the Lands of the Crown of Aragon, and the Levant Trade 1187–1400, p. 189. Տե՛ս նաև՝ **Otten-Froux C.**, նշվ. աշխ., p. 162.

[43] **Langlois V.**, Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Armenie, Paris, 1860, p. 20.

նավահանգիստների և Եվրոպայի հետ ընթացող առևտրական կապերում[44]: Կիպրոսում Նարբոննայի հյուպատոս Բերնարդուս Ծարթան ակտիվ շփումների մեջ է եղել Կիլիկյան Հայաստանի հետ: Աղբյուրները հայտնում են, որ 1301 թ. վերջինս, իր վստահված անձ Բերնարդուս Ինարդուսի միջոցով, ստանում է 2797 Հայկական նոր դրամի պարտքը, իսկ պարտապանը ոչ այլ ոք էր, քան Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթում Բ-ը (1289–1305, բնդմիջումներով): Այս գումարը Հեթումի կողմից վճարվել է 754 Սպիտակ Բյուզանդի տեսքով: Նույն թվականի մեկ այլ փաստաթուղթ վկայում է, որ այս անգամ նարբոննացիները 600 դրամի պարտք ունեն Հայ միապետին: Ի դեպ, այսպիսի հիշատակությունները բավական շատ են: Այս-Կիպրոս-Հարավային Իրանսիա կապերում լանգեդոկցիների համար կարևոր նշանակություն ուներ բամբակի առևտուրը[45]:

Հայկական Կիլիկիայի միջազգային տնտեսական հարաբերություններում հիշատակվում են նաև Մալթան, Կորսիկան, Մայորկան, իսպանական Սևիլիա և Սարագոսա քաղաքները[46]: Այդ կապերում անմասն չեն նաև Հյուսիսային Եվրոպայի տնտեսական կենտրոնները Ֆլանդրիան և Անգլիան: Մասնավորապես, Այասում շրջանառվող զանազան չափերի ու կշիռների վերլուծության մեջ Պեգոլոտտին նշում է Բրյուգեն և Լոնդոնը: XIII դ. Բրյուգե ներմուծվող ապրանքների աչխարհագրական ծագումը նշելիս՝ Բյուզանդիայի, Ասորիքի և Եգիպտոսի կողքին հիշատակվում է նաև Կիլիկյան Հայաստանը[47]: Ղ. Ալիշանը հայտնում է. «Պարգևագիրք կամ Դաշանց թուղթք թագաւորաց մերոյ ընդ Ֆլամանս՝ չեն յայտնեալ, բայց հմուտ դիւանապետն Պրիւժայ Էմիլ Վանդէն Բուշեն (Emile Vanden Bussche), առան-

[44] **Balletto L.**, նշվ. աշխ., p. 27.

[45] **Ashtor E.**, նշվ. աշխ., p. 43. Տե՛ս նաև՝ **Abulafia D.**, Narbonne, the Lands of the Crown of Aragon, and the Levant Trade 1187–1400, pp. 192, 195.

[46] Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 359. Տե՛ս նաև՝ **Balletto L.**, նշվ. աշխ., p. 197.

[47] **Francesco Balducci Pegolotti**, նշվ. աշխ., p. 62. Տե՛ս նաև՝ **Heyd W.**, նշվ. աշխ., t. II, pp. 718–719. **Дживелегов А.**, указ. соч., с. 177.

ձին խնամով և ըստ խնդրոյ մերոյ՝ յուզեալ եգիտ յիշատակս երթևեկի և վաճառակցութեան երկոցուն ազգացս մեր և նոքայոյն ի ցուցակի միում նշանակին՝ զի շահաստանք յոր երթային նոքա՝ են Հայաստան, Կիպրոս և Երուսաղէմ: Յայլում փոռանկերէն ցուցակի ասի ընդունել Ցլամանաց ի Հայոց զբամբակ, զհամեմունս, պղպեղ, որդան փայտ և այլն»[48]:

Եվրոպական փոքր և միջին քաղաքների միջազգային առևտրատնտեսական կապերն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ելակետ ընդունել ոչ միայն պայմանագրերն ու արտոնությունները, այլև նրանց վաճառականության ներկայությունն այս կամ այն վայրում: Չնայած Կիլիկիայի հայ արքաների կողմից տրված բազմաթիվ չնորհագրերին՝ այս մոտեցումը նույնական է նաև Կիլիկյան Հայաստանի պարագայում: Հավելենք, որ կարևոր ապացույն սկզբնաղբյուր հանդիսացող առք ու վաճառքի մուրհակները ցույց են տալիս, որ Կիլիկիայի Հայկական թագավորությունում օտարերկրյա վաճառականության իրավական գործառույթները հիմնականում իրականացվում էին ջենովական, վենետիկյան և հազվադեպ պիսչենտական հյուպատոսությունների և նոտարների կողմից: Նրանց համար սահմանված տարանցիկ մաքսատուրքերը, անձի և գույքի ապահովության իրավական կետերն առկա էին հայկական կողմի չնորհած յուրաքանչյուր առևտրական պայմանագրում, որոնք բացառիկ էին ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ սևծովյան ավազանի երկրներում:

[48] Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 359:



Ընդարտեզ միջնադարյան Միջերկրածովի ու Սևծովի

ЗОГРАБ ГЕВОРКЯН
ИИ НАН РА

ОБ ИСТОРИИ ТОРГОВЫХ ОТНОШЕНИЙ ЭКОНОМИЧЕСКИХ ЦЕНТРОВ ЗАПАДНОЙ ЕВРОПЫ С КИЛИКИЙСКИМ АРМЯНСКИМ ГОСУДАРСТВОМ

РЕЗЮМЕ

Начиная с XIII в., с развитием качественно новых экономических и товаро-денежных отношений, в международной торговле все более важное значение приобретали средние и малые города Европы. Этому способствовали некоторые военно-политические перемены, в частности, падение Багдада и владений Крестоносцев на Востоке, а также соперничество между европейскими морскими супердержавами (Венеция, Генуя и Пиза, а в дальнейшем и Арагон).

Отметим, что исходной точкой для изучения международных торговых отношений этих городов являются не только привилегии и прочие договоры, а также присутствие их купечества в Средиземноморье. Этот подход идентичен и в случае с Киликийской Арменией. Уже со второй половины XIII века в айасских нотариальных документах можно найти имена купцов из десятка городов Европы.

ԴԱՎԻԹ ԹԻՆՈՑԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԿԻԼԻԿԻԱՑԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 1365 – 1373 ԹԹ.

1365 թ. վերջին իշխանների որոշմամբ հայոց թագավոր է բնարվում Կոստանդին Նղրեցի Հեթումյանը (ծնված 1326 թ.)[1]: Պահակալական պայքարում Կոստանդինի հաղթանակի գրավականներից մեկն էլ այն էր, որ Կիպրոսի թագավոր Պետրոսը՝ ով ևս հավակնում էր հայոց գահին, զբաղված էր մամլուքների դեմ կաղապչական հարձակումներ կազմակերպելով:

Կոստանդին III Նղրեցի Հեթումյանը՝ Կոստանդին II-ի հոր եղբայր Հեթում Ջամբուլայի որդին էր: Կոստանդինի հայրը՝ Հեթումը, ինչպես և իր հորեղբայր Բալդուինը Լևոն IV-ի օրոք արքունիքում բարձր պաշտոններ էին գրավել: Հեթումը չարունակել է պաշտոնավարել նաև իր եղբորորդի Կոստանդին II-ի ժամանակ: Հեթումի մասին ունեցած մեր վերջին տեղեկությունները թվագրվում են 1358 թ.: Հարկ է նշել, որ ուղիղ գծով Կոստանդին թագավորահոր թոռ Հեթում Նղրեցի Ախտուց տերը ունեցավ բուռն և իրադարձություններով հարուստ ավելի քան կեսդարյա քաղաքական կյանք: Կոստանդինը իր հորեղբորորդու՝ Կոստանդին II-ի թագավորության ժամանակ զբաղեցնում էր իշխանաց իշխանի բարձր պաշտոնը, որն, անշուշտ, նրան օգնած կլինի 1365 թ. գահակալական պայքարում հաղթող դուրս գալու համար, որպես ավագագույնը իշխանների մեջ:

Կոստանդին III-ի մասին, ցավոք, չափազանց սուղ տեղեկություններ են հասել մեզ: Նրա ընտրության վերաբերյալ Լևոն V-ի ժամանակագիր Դարդելը գրում է. «Այլ ոչ եթէ ընտրեցին զնա առ աղնվականութեանն՝ այլ առ փարթամութեան, զի էր

[1] Սաթևոսյան Ա., Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, N 4, էջ 193 (այսուհետ Սաթևոսյան Ա., նշվ. աշխ.):

ծագումն նորա ի ճորտից անտի Կիպրոսի»[2]: Այստեղից միայն կարելի է եզրակացնել, որ Կոստանդինը արտաքուստ բավականին ազդեցիկ էր, ուրիշ ոչինչ, քանզի Դարդելի կողմնակալությունը Կոստանդին II-ի և մանավանդ Կոստանդին III-ի նկատմամբ ակնհայտ է: Այն, որ Կոստանդին III-ը Հեթում Նղրեցու որդին էր[3], որևէ կասկած չի հարուցում:

Շարունակելով իր միտքը՝ Դարդելը Կոստանդին III-ի մասին հայտնում է, որ նա, չկարողանալով երկիրը անհավատների հարձակումներից զերծ պահել, իր ապահովության դիմաց Կիպրոսի արքա Պետրոսին խոստացավ հայոց գահը: Այդ պատճառով էլ, ըստ նրա, Պետրոսը թաքցնում է Լևոն Լուսինյանից հայոց գահի նկատմամբ պապի կողմից վերջինիս տրված իրավունքները[4]:

1365 թ. Կիպրոսի Պետրոս թագավորը, եվրոպական երկրներից իրական զինական օժանդակություն չստանալով, որոշեց միայնակ պայքարել մամլուքյան սուլթանության դեմ: Նրան օգնում էին միայն Հոռդոսի ասպետները: Բայց այդ պայքարը ավելի շուտ կրում էր հանդուգն ու արկածախնդիր հարձակումների բնույթ, որն ավարտվեց 1365 թ. Ալեքսանդրիայի գրավումով և կողոպուտով[5]: Այդ գրավումը ոչ միայն ժամանակավոր բնույթ էր կրում, այլև չրջակայքի քրիստոնյաների համար ծանր հետևանքներ ունեցավ. Պետրոսը չկարողացավ պահել Ալեքսանդրիան, իսկ մամլուքները իրենց կողոպտված նավահանգստի փոխարեն վրեժ լուծեցին չրջակա քրիստոնյաներից:

---

[2] **Դարդել Յովհաննէ**, Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 59 (այսուհետ Դարդել, նշվ. աշխ.):

[3] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. **Խաչիկյան**, Ե., 1950, էջ 477, (այսուհետ ԺԴ դարի հիշատակարաններ), **Ալիշան Ղ.**, Սիսուան եւ Լևոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 413:

[4] **Դարդել, նշվ. աշխ.**, գլ. խէ, էջ 59:

[5] Ս. Եվահիրճյանը պնդում է, որ Պետրոսը նույն թվականին հրկիզեց նաև Այասը, որը սակայն կասկածելի է: Տե՛ս **Եվահիրճյան Ս.**, Այաս նավահանգիստ-քաղաքը Կիլիկիայում, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, N 1, էջ 108, **Tournebize Fr.**, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, p. 702, (այսուհետ **Tournebize**, նշվ. աշխ.):

Ահա թե ինչ է գրում դեպքերին ականատես գրիչ Վարդան Ղրիմեցին. «Ի յայս տարի գերեց փոռանկն զԱղեքսանդր եւ յայս աշխարհս զինչ քրիստոնեայ կայր զամենն կալան եւ ի գիր հանին, եւ զինչ եպիսկոպոս եւ արեղայ եւ երէց կայր՝ զամէնն պնատանեցին, եւ զինչ եկեղեցի կայր՝ զամէնն փակեցին... բայսմիկ վասն դառն տանջանացն զարձան թուրք, եւ մեք յերուսաղէմս զատարոյս շատն ի զնատան ենք կացել, եւ բազում վիշտ եւ նեղութիւն վասն Քրիստոսի տեսաք, զոր ոչ կարեմ ընդ գրով պատմել»[6]: Այս տեղեկության մեջ տարեթվի անճշտություն կա: Ղրիմեցին Ալեքսանդրիայի գրավման թվական է նշում 1366 թ., սակայն Պետրոս I-ը նրան տիրացել էր 1365 թ. հոկտեմբերին:

Վարդան Ղրիմեցու չարագրանքից կարելի է եզրակացնել, որ մամլուքները քրիստոնյաների նկատմամբ հալածանքներ են սկսել 1366 թ., որոնք տարածվել են նաև Կիլիկիայի հայկական թագավորության վրա, ընդ որում նրանց հարձակումները սկսվել էին դեռ 1365 թ., որով էլ պետք է բացատրել կիլիկեցիների պանդխտային գաղթը: Այս առումով Գ. Մինասյանը վրիպել է՝ գաղթը կապելով 1366 թ. Պետրոս I-ի Այաս կատարած արշավանքների հետ, չփոթելով և՛ գաղթի թվականը, (1365 թ.) և՛ Այասի պաշարումը (1367 թ.)[7]:

1367 թ. Պետրոս I-ը, որը չէր հրաժարվել հայոց գահի նկատմամբ իր հավակնություններից, այս անգամ Հոռդոսի ասպետների օժանդակությամբ, 7000 զինվորով և 150 նավով կազմակերպեց արշավանք մամլուքյան հյուսիսային նահանգների՝ Մալաթիայա Կիլիկիայի, մասնավորապես Այասի վրա: Պետրոսը նախնական համաձայնություն ուներ Կոստանդին III-ի հետ հասնել ուժերով Այասին վերատիրելու համար[8]: Ընդ որում, նույն թվականին Պետրոսը արշավանք կազմակերպեց նաև դեպի Տրիպոլիս[9]: Ըստ այդ համաձայնության՝ հայկական զորքերը Պետրոսին պետք է հանդիպեին Այասի մոտ: Հայտնի չեն դաշ-

---

[6] ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 473:

[7] **Микаелян Г.**, История Киликийского Армянского государства, Е., 1952, с. 472.

[8] **Tournebize Fr.**, Histoire politique et religieuse de l'Arménie-Libraire Alphonse Picard et fils, p. 702.

[9] **Սաթևոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 197:

նակիցների հետագա ծրագրերը, սակայն Այասի վերագրավման համատեղ ծրագիրը վկայում է Պետրոս I-ի վարած քաղաքականության փոփոխության մասին: Մի կողմ թողնելով Պետրոսի հավակնությունները՝ պետք է նշել, որ նա իր այս քայլով հրաժարվում էր մինչ այդ վարած արկածախնդրական ռազմերթի մարտավարությունից: Ըստ երևույթին, նա հասկացել էր արևելյան Միջերկրածովում բնական դաշնակիցների իրական արժեքը, ի տարբերություն եվրոպական սին խոստումների: Իսկ Կիլիկիայի ծովեզերքում ամրապնդվելը կամ ծովերում դաշնակից ունենալը բավականին իրական կարող էր լինել, եթե հիշենք, որ Ջահան գետի ձախափնյակը մի քանի տասնամյակ առաջ էր կորսվել, իսկ Դաշտային Կիլիկիայի մնացյալ հատվածը՝ ընդամենը մի քանի տարի առաջ, ուր գերակշռում էին հայերը: Պետրոսին հաջողվեց 1367 թ. սեպտեմբերին գրավել Այասը, բացառությամբ միջնաբերդի, սակայն Կոստանդին III-ի զորքերը այդպես էլ չժամանեցին, ուստի Պետրոսը, չկարողանալով միայնակ դիմագրավել և գրավել միջնաբերդը, նահանջեց: Հետազոտողների մի մասը գտնում է, որ դա հետևանք էր Պետրոսի հավակնություններից Կոստանդինի զգուշության: Սակայն, այն կարող էր հետևանք լինել Կոստանդինի անկարողության, որն այդ ժամանակ զբաղված էր թագավորության տարածք ներխուժած հակառակորդի դեմ պայքարով: 1367 թ. ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ նույն՝ 1367 թ. մայիսին 12 հազարանոց զորքով Սսի վրա է հարձակվում Տարսոնի Մանչուկ ամիրան, որին Կոստանդին թագավորը, գունդստաբլ Բագուն Բագունենցը[10] և մարաջախտ Լիպարիտը[11] սկզբում կարողանում են դիմագրավել: Ցավոք, ձեռագիրն անավարտ է մնացել, որտեղից անհայտ է մնում արշավանքի ելքը: Սակայն կարելի է ենթադրել, որ եթե Տարսոնի ամիրան հասել էր Սսի մատույցներին, ապա թագավորության վիճակը բավականին ծանր պետք է եղած լիներ Այասում Պետրոսին օգնության հասնելու համար[12]: Այս ժամանակ է ամենայն հավանականությամբ Կոստանդինը կորցնում Ջահան և Սեյհան գետերի միջև ընկած նախալեռնային շրջանները:

Վ. Լանգլուան, Ռ. Քոլլենբերգն ու Տ. Բոասը կարծում են, որ 1368–1369 թթ. հայոց թագավորի տիտղոսը կրել է Պետրոս I-ը[13]: Ռ. Քոլլենբերգը չի նշում դրա աղբյուրները. նրա եզրահանգումը պետք է հիմնված լինի Դարդելի՝ Պետրոսի հայոց թագավոր դառնալու ձգտման[14], ինչպես նաև Ղ. Ալիշանի այն հաղորդման վրա, ըստ որի հայերը 1368 թ. Պետրոսին հրավիրում են թագավորելու, և վերջապես՝ Պետրոսին վերագրվող հայկական դրամների առկայությամբ[15]:

Պետրոսը, իրոք, կամենում էր դառնալ հայոց թագավոր: Դրա վկայություններն են Կոռիկոսին տիրելը, Այասի արշավանքը, Լևոն Լուսինյանի ազատության ահմանափակումը և վերջապես այն դրամների առկայությունը, որ Պետրոսը, անշուշտ, հատել էր ոչ Սսում, չնայած դրամի վրա նշված է. «Շինեալ ի քաղաքն Սիս»[16]:

1368 թ. հայ իշխանների սուվար հատվածը կարող էր Կոստանդինից ծածուկ համաձայնության եզրեր փնտրել Պետրոսի

[10] Այս գունդստաբլի տոհմն անհայտ է, և միայն 1330 թ. հիշատակվում է Բագունի հայր Լևոն Բագունենցը: Վերջինս հնարավոր է, որ եղած լինի Սմբատի որդի Լևոն գունդստաբլը: Տե՛ս Սմբատ Քաջկոնցի ավետարանը, «Հանդէս Ամսօրեայ», 1951, N 8–10, սյուն 465:

[11] Առաջին անգամ Լիպարիտը հիշատակվում է 1360 թ.: Տե՛ս ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 455: Ա. Գալստյանը իր հերթին 1347 թ. Լիպարիտին համարում է սպարապետ, որն անհավանական է, քանզի 1360 թ. Լիպարիտն ընդամենը իշխան էր, իսկ սպարապետը նրա հայր Թորոս Կապանցին էր: Գալստյան Ա., Կիլիկյան Հայկական թագավորության կործանման հարցի շուրջը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, N 9, էջ 59:

[12] Ըստ Քյուրքյանի՝ այս արշավանքի ընթացքում Զարմանդուխտի կողմից սպանվում են եգիպտական զորահրամանատարներ Ալին և Էմները: Քիւրքճեան Վ., Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, 1919, էջ 29:

[13] **Collenberg Rudt,** The Rupenides, Hethumides and Lusignans. The Structure of the Armeno-Cilician dynasties. Paris, 1964, Տախտակ VII, **Boase,** T.S.R.The Cilician Kingdom of Armenia. Edinburgh – London, 1978, p. 186, **Langlois V.,** Le Tresor des chartes d'Arménie ou Cartulaire de la Chancellerie royale des Roupeniens. Venise, 1863, p. 56.

[14] Դարդել, նշվ. աշխ., գլ. ԽԷ, էջ 59:

[15] **Bedukian,** Coinage of Cilician Armenia, New York, 1962, p. 21, **Langlois V.,** Numismatique L'Armenie, Paris, 1855, p. 49.

[16] Կ. Սիպիլյանը գտնում է, որ այդ դրամները հնարավոր է նույնիսկ կեղծ լինեն: Սիպիլեան Կ., Դասաւորութիւն Ռուբենեան դրամոց, Վիեննա, 1892, էջ 69:

հետ: Մանավանդ որ, չնայած 1367 թ. արշավանքի ձախողմանը, Պետրոսը հետ մղեց Կոռիկոսի վրա կատարված թուրքմենների արշավանքը և բանակցություններ սկսեց մամլուքյան սուլթանի հետ: 1368 թ. կրկնվեց Մանչուկ ամիրայի արշավանքը Սիս, որն էլ լրացուցիչ ազդակ կարող էր հանդիսանալ Կոստանդին III-ի հակառակորդների համար:

Պետրոսը 1368 թ. աշնանը Վենետիկում հանդիպեց հայ պատգամավորներին, ովքեր նամակներ էին բերել նաև Վենետիկի դոժին: Իմանալով հայ ավագանու ցանկությունը, որին, ըստ երևույթին, ուղղորդում էր Մարիամ թագուհին՝ Կոստանդին III-ի կինը[17], Պետրոսը շտապում է Կիպրոս, որտեղ էլ այդ ժամանակ կտրվում են «Պետրոս Հայոց թագաւոր» մակագրությամբ դրամները: Պարզ չէ, թե ինչպես էր Պետրոսը նախապատրաստվում տիրելու Հայոց գահին, քանզի 1369 թ. հունվարին նա դավադրաբար սպանվում է իր իսկ պալատականների ձեռքով:

Կոստանդին III-ի նկարագիրը շատ գծերով մեզ անհայտ է մնում, նախ՝ նրա մասին հիմնական աղբյուրը մինչ այժմ մնում է Դարդելի «Ժամանակագրությունը», որտեղ նա ներկայացվում է ամենամռայլ գույներով, և ուր հավաստի նյութը սակավ է: Դարդելը մեկ նշում է, որ նա ընդունեց Բաբելոնի (իմա՝ Կահիրեի) գերիշխանությունը, մեկ էլ՝ Պետրոսի գերիշխանությունը, և Կոստանդինը երկու դեպքում էլ, արքայական գանձերն առած, մտածում է միայն ապահով թաքստոց գտնելու մասին[18]: Դարդելի գեղարվեստական այս գեղումները շատ քիչ նյութ են տալիս իրական վիճակը պարզելու համար:

Այնուամենայնիվ, եղած փաստերն էլ բավարար կերպով վկայում են, որ Կոստանդինը կամային թուլլ հատկություններով օժտված գահակալ է եղել: Այդ կարծիքի օգտին է խոսում Մարիամ ավագ թագուհու՝ Կոստանդին II-ի այրու ակտիվ դիվանագիտական գործունեությունը Կոստանդին III-ի թագավորության տարիներին:

[17] Եվ լիովին անտրամաբանական է թվում Տեր-Ղազարյանի այն պնդումը, որ Կոստանդինը իր գահը ցանկանում էր հանձնել Պետրոսին: Տե՛ս Տէր-Ղազարեան Յ., Հայկական Կիլիկիա, Աւթիլիաս, 1966, էջ 291:
[18] Դարդել, նշվ. աշխ., գլ. խէ, ՕԲ, ՕԳ:

1368 թ. սկսած Մարիամ թագուհին հարաբերություններ է պահպանում Վենետիկի հանրապետության հետ[19]: 1371 թ. նա դեսպանություն է առաքում Նեապոլ, իր ազգական Ֆիլիպ Տարենտացու արքունիք՝ (Մարիամի մայրը նեապոլիտանական թագավորի դուստրն էր) օգնության խնդրանքով: Անշուշտ, այդ դեսպանությունը կատարվել է Կոստանդին III-ից ծածուկ: 1372 թ. Հռոմի պապ Գրիգոր XI-ը դիմում է Տուրենի իշխան Ֆիլիպին, որպեսզի նա Մարիամի հետ ամուսնացնի 1372 թ. կնոջը կորցրած եղբորը՝ Օթոն Բրունսվիքցուն: Թե ինչ նպատակ է ունեցել այդ պաշտոնը, դժվար չէ կռահել. Մարիամի ամուսնությանը պետք է հաջորդեր Կոստանդին III-ի գահազրկումը:

Այսպիսով, Կոստանդին III-ի իշխանության վերջին տարիներին հայկական ավագանու մի զգալի մասը (Մարիամ ավագ թագուհի, ապագա թագապահ խորհրդի անդամ պրն. Վասիլ, պրն. Բարդուղիմեոս) ստեղծված իրավիճակից ելք էր տեսնում Կոստանդինի փոխարինումը կա՛մ Պետրոսով, կա՛մ էլ եվրոպական մեկ այլ վեհապետով:

Ղ. Ալիշանի բերած տեղեկություններով այդ ժամանակաշրջանում չեն դադարում շրջակա ամիրայությունների՝ մամլուքյան կուսակալների արշավանքները: Այսպես՝ 1369 թ. Հալեպի կուսակալ Խոշթիմուրը ավերում է Սսի շրջակայքը, ապա պաշարում մայրաքաղաքը, սակայն այն գրավել չի կարողանում: Հնարավոր է, որ հայերը կարողացել են հետ մղել նրա զորաբանակը Սսից:

1369 թ. Տարսոնի ամիրա Շահաբ օղլի Մանչուկը կրկնում է իր արշավանքը[20], որը ձախողվել էր 1368 թ. Լիպարիտի ջանքերով: Հակառակորդը, որն ըստ Հովհաննես Թլկուրանցու, մոտավորապես վաթսուն հազարանոց զորաբանակով էր արշավանքի ելել, սկզբում պարտվում է, բայց հետո նրանց հաջողվում է հետ մղել հայերին, ներխուժել Սիս և ավերածություններ անել:

[19] Պահպանվել է 1368 թ. գրված Վենետիկի դոժի նամակը Մարիամ թագուհուն, որտեղ դոժը խոստանում էր օգնել հայոց թագավորությանը: Տե՛ս Ալիշան Ղ., Հայ-Վենետ, կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց ի ԺԳ եւ ԺԶ դարու, Վենետիկ, 1896, էջ 133:
[20] Մաթևոսյան Ա., նշվ. աշխ., էջ 192, 197:

Մինչ այդ, մարտում զոհվում են սպարապետ Լիպարիտը (հիշատակվում է որպես գունդստաբլ 1368 թ.)[21] և սիր Հովհաննը, որն ամենայն հավանականությամբ Լիպարիտի որդի Հովհաննեան է: Ընդ որում Կոստանդին III-ը, ըստ Թլկուրանցու, ինքն է դավաճանում Լիպարիտին[22]: Նախանձելով նրա փառքին՝ արքան միայնակ է թողնում Լիպարիտին, իր զորամասով լքելով ռազմադաշտը, որի հետևանքով էլ սպարապետը սպանվում է: Թագավորի այս վարմունքին կարելի է որոշակի բացատրություն գտնել:

Սմբատ Գունդստաբլի պատմության լուսանցքում հիշատակվում է 1311 թ. վրաց արքայազն Դավթի և Լևոն II-ի կրտսեր դստեր Ալիծի ամուսնությունը: Նորապսակներին իրրև ժառանգություն տրվում է Կապանի ամրոցը[23]: Նրանց զավակը կարող էր լիներ Թորոս Կապանցին՝ Վասիլի և Լիպարիտի հայրը, ինչը ժամանակագրական առումով համընկնում է: Բացի այդ, Լիպարիտի անունը ևս խոսում է այդ վարկածի օգտին, քանզի Կիլիկիայում մինչ այդ այդպիսի անձնանուն չի գործածվել: Այդ պարագայում միայն հասկանալի կլիներ Կոստանդինի զգուշությունը ժողովրդական զանգվածների մեջ մեծ հեղինակություն վայելող, հաջողակ զորավար, հայոց և վրաց թագավորների ծոռ Լիպարիտ զորավարից: Հետագայում Լիպարիտի եղբայր Վասիլը մասնակցում է Կոստանդին III-ի սպանության կազմակերպմանը:

Մանչուկը նույն թվականի դեկտեմբերին երկրորդ անգամ արշավում և ասպատակում է թագավորության մնացած տարածքները: Ըստ երևույթին, այս անգամ Կոստանդինը դիմադրության որևէ փորձ չի անում և ամրանում է Սսի միջնաբերդում, որն էլ հիմք է ծառայել Դարդելի համար, գրելու, թե Կոստանդինը ժողովրդին անհավատների հարձակումներից չէր պաշտպանում[24]: Սակայն մենք գիտենք, որ և՛ 1367 թ., և՛ 1368 թ., և՛ 1369 թ. Կոստանդին III-ը կազմակերպված դիմադրություն է ցույց տվել և նույնիսկ կարողացել է հետ մղել որոշ հարձակումներ, այնպես որ պետության կործանումը Կոստանդին III-ի լիակատար անգործության հետևանքով չի տեղի ունեցել, ինչպես փորձում է ներկայացնել Դարդելը:

Կոստանդին III-ը սպանվեց 1373 թ. ապրիլին, իշխանների ձեռքով, ըստ Դարդելի՝ այն ժամանակ, երբ նա «Դաշն կռեաց ընդ սուլթանին Բաբելոնի եւ խոստացաւ տալ ի ձեռն նորա պիտակաւորութիւն, զաշխարհն եւ զքրիստոնեայս համօրէն, միայն զի ապրեցուսցէ զանձն իւր եւ զամենայն ստացուածս»[25]:

Սպանությունը այլ դրդապատճառներ է ունեցել, եթե հաշվի առնենք, որ Դարդելը հենց այդ դեպքերի ժամանակակիցն է և կարիք ունի արդարացնելու Կոստանդին III-ի սպանությունը և Լևոն Լուզինյանի գահակալումը, ապա պարզ է դառնում այդ ամենի մոտացածին լինելը և հասարակության մեջ հեղաշրջման փորձի արդարացումը: Կոստանդին III-ի հեռացմամբ շահագրգռված էր հայոց ավագանին (որտեղ Վասիլ մարշախան ուներ նաև անձնական խնդիրներ), որը փորձում էր Կիլիկիայի առաջ ծառացած բարդ և կենսական քաղաքական հարցերը լուծել զահակալի փոփոխման միջոցով: Մեզ հայտնի չէ Կոստանդին III-ը ունեցե՞լ է զավակներ, թե՝ ոչ, սակայն ավյալ պարագայում, եթե անգամ նա արական սերունդ ունեցել էր ի վնաս նոր, միևնույն է գահաժառանգման հարցը լուծվել էր ի վնաս Նղրեցիների:

[21] Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 540:
[22] Յովհաննես Թլկուրանցի, Տաղեր, աշխ. Եմ.Պիվազյանի, Ե.,1960, էջ 272, Խաչատրյան Պ., Յովհաննես Թլկուրանցու «Տաղ քաջ Լիպարտին» պատմական ողբը, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, N 2, էջ 114–115:
[23] Մաթևոսյան Ա., նշվ. աշխ., էջ 198:

[24] Դարդել, նշվ. աշխ., գլ. ՃԲ, էջ 66:
[25] Նույն տեղում, գլ. ՃԳ, էջ 68: Ա. Սուքիասյանը, չնշելով աղբյուրը, գրում է, որ Կոստանդինը սպանվեց ժողովրդի կողմից, որը քիչ հավանական է: Սուքիասյան Ա., Կիլիկիայի պետության և իրավունքի պատմություն, Ե., 1978, էջ 90: Ս. Դադոյանը իր հերթին նշում է, որ Կոստանդինը սպանվեց միաբարների ձեռքով: Տես Dadoyan Seta, The Armenian Catholicosate from Cilicia to Antelias. The Armenian Catholicosate of Cilicia-Antelias-Lebanon, 2003, p. 47:

ДАВИД ТИНОЯН
ИИ НАН РА

КИЛИКИЙСКОЕ АРМЯНСКОЕ ЦАРСТВО В 1363–1373 ГГ.

РЕЗЮМЕ

В 1365 г. по всем законам престолонаследия на трон армянского царства вступает внучатый племянник Константина II Константин Нгреци Гетумян. Время его правления считается одним из наиболее тяжелых периодов в истории Киликийского государства. С одной стороны, не прекращались набеги со стороны соседних мусульманских государств, с другой—страну расшатывали внутренние проблемы, постоянные притязания на царский престол (к примеру, Левона Лузиньяна, царя Кипра Пётр I).

О Константине III до нас дошло мало сведений, а имеющиеся характеризуют его далеко не положительно. К примеру, обстоятельства, связанные со смертью армянского спарапета Липарита, которого царь Константин вероломно бросает на поле боя. Этот шаг царя вполне объясним, если учесть, что Липарит имел обоснованное право на престол, поскольку он был правнуком Левона II по материнской линии, а дедом его был грузинский царевич Давид.

В 1373 г. Константин III становится жертвой заговора, вполне вероятно — организованного родным братом Липарита, Василием Мараджахтом, имеющим большое влияние при дворе, и собственной женой Мариам.

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ

1375 թ. Կիլիկիայի հայոց թագավորության անկումից հետո, այնուհանդերձ, հայկական մի շարք լեռնային մանր իշխանությունների հաջողվեց պահպանել իրենց կիսանկախ գոյությունը:

Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև Հայաստանի 1555 թ. բաժանումից և 1639 թ. վերաբաժանումից հետո Հայաստանի՝ Թուրքիային անցած մասում՝ Արևմտյան Հայաստանում, հայկական նման մանր իշխանությունների հետքեր պահպանվել էին Զեյթունում, Սասունում, Շատախում, Մոկսում և Վիարրևքիրի փաշայության մեջ մտնող Իայանի լեռնակողմում: Իսկ Հայաստանի՝ Պարսկաստանին անցած մասում՝ Արևելյան Հայաստանում, նման ինքնավար իշխանություններ պահպանվել էին Սյունիքում և Արցախում: Վերջինիս մասին տակավին 1307 թ. Հեթում Պատմիչը գրել է, որ երբ թաթար-մոնղոլները «կալան զմեծն Ասիա ողջոյն, բաց ի թագաւորութենէն Ափխազաց՝ որ ի Վիրս, և բաց ի գաւառէ անտի թագաւորութեան Հայոց, որ ռամկօրէն կոչի Հալօյէն (Արցախ — Ա. Մ.): Այս երկու նահանգք զդէմ կալան Սարակինոսաց, և ոչ կամեցան բնաւ հպատակիլ նոցա»[1]: Սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է ակադ. Ա. Հովհաննիսյանը, «ներքին որևէ կապ չկար այդ հայ համայնքների միջև, բոլոր պարագաներում դրանք չէին դառնում ազգային անկախության հանգրվաններ»[2]: Այդ կիսանկախ իշխանություններից առավել հզորը Արցախի մելիքություններն էին, որոնց ինքնիշխան տիրակալները՝ մելիքները, մի քանի դար

[1] Հեթում Պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 24:
[2] Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 89:

շարունակ հանդիսացել են հայոց ազատագրական պայքարի դրոշակակիրներ: Ողջ միջնադարի ընթացքում իր աշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ Արցախը կարողացել էր դիմակայել օտար ներխուժողների ավերածություններին և հիմնականում պահպանել իր ոչ միայն քաղաքական ինքնուրույնությունը, այլև հայ ավատատիրական հասարակությանը բնորոշ սոցիալ-տնտեսական կառուցվածքը[3]:

Արաբերեն «մելիք» բառը նշանակում է իշխող, տիրակալ, թագավոր, իսկ նշանավոր լեզվաբան Հ. Աճառյանը սերված է համարում «mlk» «տիրել», «իշխել» ընդհանուր սեմական արմատից[4]: Միջնադարում այսպես են կոչվել Առաջավոր Ասիայի մուսուլմանական երկրների տիրակալները, իսկ ուշ միջնադարում՝ Արևելյան Հայաստանում իրանական տիրապետության շրջանում, մելիքներ էին կոչվում բնիկ ազնվականության մնացորդներից բարձրացած և իրենց տիրույթներում վարչական արտոնություն ունեցող ֆեոդալները: Մելիքներ էին կոչվում նաև գյուղերի, ավանների և քաղաքների թաղամասերի այն ավագները, որոնք պատասխանատու էին հարկերի գանձման համար:

Մելիքներից ոմանք իրենց հպատակությունն էին հայտնել նվաճողներին՝ նրանց հանդեպ կատարելով բոլոր պարտավորությունները: Սակայն, Սյունիքում և Արցախում մելիքները թեև ընդունել էին նվաճողների գերիշխանությունը, բայց ներքին կառավարման հարցերում, այսինքն՝ հարկահավաքման, դատավարության և այլն, ունեին գործելու լիակատար ինքնուրույնություն: Նրանք ունեին նաև զորք պահելու իրավունք:

Վերոնշյալ նահանգներում մելիքական իրավունքը, թեև հաստատվում էր շահի հրովարտակով, սակայն այն, ըստ էության, ուներ ժառանգական բնույթ: Այս հանգամանքը նպաստում էր մելիքական տների զորացմանը: «Սակայն աղբյուրները

[3] **Чобанян П.,** О некоторых вопросах истории Арцаха (XIII – XIX вв.), «ՊԲՀ», 2002, N 3, էջ 159:
[4] **Աճառյան Հ.,** Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Ե., 1977, էջ 635:

ցույց են տալիս, որ մելիքական իրավունքն սկզբնապես հաստատուն ու անփոփոխ մի երևույթ չէր,– գրում է պատմաբան Բ. Ուլուբաբյանը,– այլ փոփոխվում էր այս կամ այն շահի կողմից, հնթարկվելով նրա կամքին ու հայկական աշխարհի նկատմամբ ունեցած վերաբերմունքին»[5]:

Թեև XVI–XVIII դարերում Արևելյան Հայաստանում կային բազմաթիվ մելիքություններ, սակայն այդ իշխանություններից առավել անվանի էին Արցախի հինգ՝ Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի մելիքությունները[6], որոնց էլ վիճակված էր մեծ դեր խաղալ ուշ միջնադարի հայոց պատմության մեջ:

«Արցախը տեղագրական, լեռնագրական և բնական տեսակետներով մի աշխարհագրական ամբողջություն է կազմում,– իրավացիորեն նկատել է Լեոն,– որն ամբողջական կերպարանք է տալիս այդ երկրի կյանքին: Այսպիսով, թեև Արցախը բաժանված էր մի շարք մանր լեռնագավառների, սակայն, ընդհանուր առմամբ, ներկայացնում էր մի խիստ բնորոշ, ընդգծված ամբողջություն՝ տնտեսական, ազգագրական և լեզվական տեսանկյունից»[7]:

Հայկական ինքնավար այս իշխանությունները XVII դ. վերջերից փորձել են թոթափել պարսկական լուծը, իսկ 1724–1735 թթ. մարտնչել են Անդրկովկաս ներխուժած օսմանյան զորքերի դեմ, ինքնաբերաբար դաշնակցելով Իրանին: Այդ թվականներին տարածաշրջանում ստեղծված իրավիճակը լավագույնս ներկայացրել են Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-

[5] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Ե., 1975, էջ 417:
[6] Մելիքությունների տարածքները պատկերացնելու համար նշենք, որ **Գյուլիստանը** մոտավորապես ընդգրկում էր ներկայիս Շահումյանի շրջանը և Մարտակերտի հյուսիս-արևելքը, **Ջրաբերդը**՝ Մարտակերտի հիմնական մասը և Քարվաճառի արևելքը, **Խաչենը**՝ հիմնականում Ասկերանը և Մարտակերտի հարավը, **Վարանդան**՝ Ասկերանի հարավը և Մարտունին, իսկ **Դիզակը**՝ Հադրութի, Ջերբայիլի և Ֆիզուլու շրջանները (տե՛ս **Մելքոնեան Ա.,** Հայկական Քարվաճառ եւ Աղահեճք գաւառները պատմութեան մէջ, «Դրօշակ», 1993, թիւ 15, էջ 26):
[7] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Ե., 1973, էջ 10:

Ջալալյանն ու Արցախի մելիքները՝ 1723 թ. նոյեմբերի 1-ին Պետրոս I-ին հղած նամակում. «Թագաւորն Պարսից յոյժ նուազեցաւ, և ոչ իսկ երևի, և իշխանութիւն օսմանցոյն տակաւին առ մեզ ոչ է հասեալ»[8]: Եվ հենց կենտրոնական իշխանության բացակայության այդ պայմաններում է, որ Հայոց Սղնախները, որպես ռազմաքաղաքական միավորումներ, իրականացրել են իրենց երկրամասի կառավարումը և անվտանգության ապահովումը: Իր ազատությունը պաշտպանելու նպատակով լեռնաշխարհի հայությունը դիմել է կենաց և մահու պայքարի:

Գնահատելով թուրքերի դեմ մղված պայքարում հայերի բազմաթիվ ծառայությունները Իրանի Նադիր շահը 1736 թ. ճանաչել է Արցախի մելիքների ինքնիշխանությունը և վերահաստատել նրանց դաշնային ինքնավարությունը՝ Խամսայի մելիքություններ (հինգ մահալ, պարսկերեն՝ «Մահալ-ե խամսե») անունով: Իսկ Դիզակ գավառի տիրակալ Մելիք-Եգանը նշանակվել է Խամսայի մելիքությունների ընդհանուր կառավարիչ: Նա ուղղակիորեն ենթարկվում էր Նադիր շահի եղբայր Իբրահիմ խանին, որը նստում էր Ատրպատականի Թավրիզ քաղաքում: Մելիք-Եգանի մոտ էին հավաքվում Արցախի հինգ մելիքությունների հարկերը և նրա միջոցով հանձնվում շահական գանձարանին: Այսպիսով, «Անդրկովկասում Քարթլի-Կախեթի վրացական վալիության կողքին, առաջին անգամ ստեղծվում էր նաև «Մահալ-ե խամսե» անվանվող հայկական առանձին բեկլարբեկիություն, որն ընդգրկում էր պատմական Արցախն ու մինչև Արաքսի ափը ձգվող հարակից տարածքները»[9]: Համեմատության համար նշենք, որ «իրանցիների կողմից վրաց թագավորները ճանաչված էին սոսկ որպես «կառավարիչներ» կամ «վալիներ» ու «խաներ»: Այդ արգելք չէր, որ վրաց նույն

[8] Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, Е., 1967, с. 48-49.

[9] Փափազյան Հ., Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը, «ԼՀԳ», 1985, N 5, էջ 78:

այդ իշխողները թագավորներ կոչվեին Վրաստանում և որպես այդպիսիներ նաև ճանաչվեին վրաց միջնադարյան հանրության կողմից»[10]: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ հայ իրականության մեջ էլ Արցախի մելիքությունները, փարված իրենց անառիկ լեռներին, մնացել էին այն միակ ուժը, որոնց հենքի վրա հնարավորության դեպքում կարող էր վերստին հառնել հայոց պետականությունը: Պատահական չէ, որ Արցախի մելիքներն իրենց համարում էին «Հայոց թագաւորաց ազնիւ գինվորաց մնացեալ ժառանգք»[11]:

* * *

Թվում է, ոչինչ չէր սպառնում Արցախի մելիքների իշխանությանը իրենց երկրամասի վրա, եթե մի անակնկալ դիպված չդար խախտելու կիսանկախ լեռնաշխարհի անդորրը:

Նադիր շահը իր հրամանով 1744 թ. մահապատժի ենթարկված Մելիք-Միրզաբեկի փոխարեն Վարանդայի տիրակալ է նշանակել Մելիք-Հուսեինի ավագ որդի Մելիք-Հովսեփին, որին ևս պարսիկները Հուսեին էին անվանում: Նրա ստորագրությունն ու կնիքը պահպանվել են 1745 թ. հուլիսի 27-ին կազմված մի պարսկերեն կալվածագրում «Վարանդայի Մելիք Հուսեյն» ձևով[12]: Վերջինիս մելիքությունը, սակայն, կարճ է տևել:

Մելիք-Հովսեփի կրտսեր եղբայր Մելիք-Շահնազար Բ-ը, օգտվելով Նադիր շահի սպանությանը (1747) հաջորդած քաոսից, սպանել է եղբորը, կոտորել նրա ընտանիքը և իրեն հռչակել Վարանդայի մելիք: Ուշագրավ է այս եղբայրասպանության Բաֆֆու մեկնաբանությունը. «Մելիք-Հովսեփը և Մելիք-Շահնազարը խորթ եղբայրներ էին,– բացահայտում է նա,– Հովսեփը

[10] Յովհաննիսեան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք I, Ե., 1957, էջ 159:

[11] Armяно-русские отношения в XVIII веке, т. IV, Е., 1990, с. 179.

[12] Սատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 198, բնագիր:

ծնված էր Մելիք-Հուսեինի Աննա-խաթուն անունով կնոջից, որը Դիզակի իշխան Մելիք-Ավանի քույրն էր, իսկ Մելիք-Շահնազարը ծնված էր Զոհրա-խանումից, որը Նախիջևանի խանի աղջիկն էր, ազգով թուրք: Մելիք-Հուսեինը նրան իբրև գերի բերեց Նախիջևանից, հետո ամուսնացավ նրա հետ»[13]: Ըստ Մելիք-Շահնազարյանների տոհմական ավանդությունների՝ Մելիք-Հուսեինը Զոհրա-խանումին փախցրել է Արցախի սղնախների զորքի՝ դեպի Սյունիք 1724-ին կատարած օգնական ռազմերթի ընթացքում, երբ վերջինս ընդամենը 15 տարեկան էր[14], հետևաբար՝ Զոհրա-խանումը ծնվել է 1709 թ.: Այստեղից կարող ենք ենթադրել, որ Մելիք-Շահնազարը, ամենայն հավանականությամբ, ծնված պետք է լինի այդ դեպքից մեկ-երկու տարի անց՝ 1725 կամ 1726 թվականին[15]:

Շահնազարի կողմից սպանված Մելիք-Հովսեփը Խաչենի տիրակալ Հասան-Ջալալյանների տան փեսան էր և վերոհիշյալ արյունահեղությունից մազապուրծ եղած նրա փոքրահասակ որդին՝ Սայի-բեկը, ապաստանել էր այնտեղ, իր քեռի Մելիք-Ալլահվերդու մոտ: Սակայն չուտով սարջալլուների ցեղապետ Փանահ Ալիի հետ դաշնակցած Մելիք-Շահնազարի եղբայրասպան ձեռքը հասավ նաև նրան:

Շահնազարի մելիքական իշխանությունը 1748 թ. հաստատվել է Իրանի Ալի Իբրահիմ շահի հրովարտակով[16]:

Մելիք-Շահնազարի տմարդի արարքը նրա դեմ է հանում Արցախի մյուս մելիքներին: Այդ մելիքները՝ Գյուլիստանի Մելիք-Հովսեփը, Ջրաբերդի Մելիք-Ալլահվուլի սուլթանը, Խաչենի Մելիք-Ալլահվերդին և Դիզակի Մելիք-Եսային, միավորելով

[13] **Բաֆֆի,** Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1987, էջ 452:
[14] Մատենադարան, ձեռագիր 7429, էջ 31բ:
[15] **Մաղալյան Ա.,** Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Ե., 2007, էջ 173:
[16] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 203: Վավերագրի հակառակ կողմում ռուսերենով մակագրված է. **«Копія грамоты Ибрагимъ Шаха персидскаго 1161»**: Հրատ. տես Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ IV, կազմեց Ք. **Կոստիկյան,** Ե., 2008, էջ 70–71:

իրենց ուժերը, պաշարում են Մելիք-Շահնազարի Ավետարանոց բերդը, բայց վերահաս ձմռան պատճառով չկարողանալով գրավել՝ վերադառնում են իրենց տեղերը, գարնանը կրկին արշավելու պայմանով: Անտարակույս, Վարանդայի տիրոջ ուժերը բավարար չէին մյուս չորս մելիքների դեմ տևական ժամանակ պայքարելու համար: «Մելիք Շահնազարը զգալով իր տկարությունը մելիքների հանդեպ՝ անհանգստացած սկսում է ելք որոնել,– գրում է XIX դ. պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովը,– ճարահատյալ դիմում է Փանահ խանի օգնությանը, նրան հպատակվում և հավատարմության երդում է տալիս և նրա աջակցությամբ ազատվում մելիքների պատժից... Մելիք Շահնազարը լինելով շատ հարուստ՝ Ղարաբաղի խաներին ծառայություններ է մատուցում, որի չնորհիվ մեծ պատվի է արժանանում: Փանահ խանի իշխանության սկզբնական շրջանում, երբ նա փողի կարիք էր զգում, Մելիք Շահնազարը անհրաժեշտության դեպքում օգնության էր հասնում և նրա կարիքները բավարարում: Վերջում Մելիք Շահնազարը իր գործերը բարելավելու և դիրքերն ամրապնդելու համար, աղջկան՝ Հուրզադ խանումին, կնության է տալիս Իբրահիմ խանին (Փանահի որդուն – Ա. Մ.), և այդ կերպ նրա հետ բարեկամական կապեր հաստատում»[17]:

1775 թ. հուլիսի 6-ին Գանձասարից Սիմեոն Երևանցի կաթողիկոսին ուղղված մի անստորագիր նամակում կարդում ենք. «Եւ եթէ ի կողմանցս յայտցանէ հարցանիցես. **Հնգեքին մէլիքքն են ընդ մեզ բայ ի մէլիք Շահնազարէն, որ դեռևս խարդախութեամբ ընդ մեզ գնայ, և ո՛չ զնախանձն իւր հատանէ ի մէնջ»**[18]:

Այդ շրջանում Արցախում տեղի ունեցած իրադարձությունները ներկայացնում է նաև Հովսեփ արքեպս. Արղությյանը, որը 1780-ին հերթականությամբ ներկայացնելով Խամսայի մելիքներին, Վարանդայի Մելիք-Շահնազարի մասին գրում է.

[17] **Միրզա Յուսուֆ Ներսեսով,** Ճշմարտացի պատմություն, Ե., 2000, էջ 42, 50:
[18] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 258, վավ. 25, բնագիր, հրատ. տես **Մաղալյան Ա.,** նշվ. աշխ., էջ 236–237:

«Զօրացուցիչն է տաճկաց և միաբան ընդ խանին. ունի կարօղութիւն և սա հազար արանց պատերազմողաց»[19]: Իսկ ահա գեներալ Պավել Պոտյոմկինին Հ. Արղությանի՝ 1783 թ. հունվարի 28-ին գրած նամակում կարդում ենք. «Մելիք Ադամի, մելիք Յովսէփի և մելիք Եսայու խորհուրդն մի էր, բայց ի մէջ նոցա որպէս թէ խորոցէր մելիք Շահնազարն, որ է այր խորամանկ, թերահաւատ և ամենայն գործս բարեաց անպիտան, նենդաւոր և դաւաճանող եղերից: Ի Ղարաբաղ գայր էլ ինչ, որպէս յերկրիս նոզայիքն խորանաչրջիկ, որք կոչիւր Ջվանշիր, որոյ գլխաւորի անունն էր Փանայ խան: Խորամանկն ի չարիս մելիք Շահնազարն զնա կոչեալ ի յօգնութիւն իւր, կամաւ իւրով հնազանդեցաւ նմա և զբերթն իւր ետ նմա»[20]: Հնդկահայ ականջալուր-ժամանակակիցները Մելիք-Շահնազարին բնութագրել են այսպես. «Հնարամիտ անձնավորություն է, հմուտ դիվանագիտական օրենքներին ու ծեսերին: Սա ևս պարսից իշխանությանն է ենթարկվում. առանց պարսիկ իշխանի (Փանահի – Ա. Մ.), որը սրան իրեն է հպատակեցրել, որևէ բան, ինչ էլ որ կամենա, չի կարող անկախաբար կատարել»[21]: Մենք այս հղումները կատարեցինք ցույց տալու համար ժամանակակիցների միանշանակ դնահատականները Մելիք-Շահնազարի գործած դավաճանությանը:

Իսկ ահա այդ իրողության արձագանքները XIX դարի կեսերի հայկական մամուլում. «Շահնազար՝ Վարանդայի մելիքը, Ջարաբերդի Մելիք Ադամին և Գիւլիստանի Մելիք Յովսէփին մէջ եղած դաշնակցութիւններից վախենալով, ինքն էլ Փանահ խանին հետ մի բարեկամութիւն արաւ, նրան իր բնակատեղին Շուշուայ բերդը և իր աղջիկն էլ (Փանահի որդուն – Ա. Մ.) կնութեան տուաւ»[22]: Այս տեսակետի հետ համակարծիք է նաև ռուս նշանավոր պատմաբան Պ. Բուտկովը, որը Շահնազարի դավաճանության մասին գրում է. «Այստեղ ամենաամուր վայրը Շուշին է, որը պատկանել է Վարանդայի Մելիք-Շահնազարին: Վերջինս, թշնամանալով հնուց ի վեր իրար հետ դաշնակից երկու մելիքների՝ Ջրաբերդի Ադամի և Իգիրմիդորդի (Գյուլիստանի – Ա. Մ.) Հովսեփի հետ, դաշինքի մեջ մտավ Ղարաբաղի մերձակայքում թափառող թաթարական ջևանշիր ցեղի աննշան ցեղապետ Փանահ խանի հետ, և Նադիրի մահից հետո նրան հանձնեց Շուշին ու իր աղնախով հանդերձ հպատակվելով նրան՝ միացած նրա հետ 20 տարի շարունակ պատերազմ մղեց իրեն թշնամի այդ երկու մելիքների դեմ... Այսպիսով, Ղարաբաղի մելիքները իրենք իրենց մեղքով իրենց գլխին դրեցին դաժան տիրակալի»[23]:

Փաստորեն, այդ եղբայրասպան պատերազմում հայ մելիքներից հաղթողներ և պարտվողներ չեղան, այլ օգուտ քաղեց երրորդ, օտար կողմը՝ վաչկատուն սարջալլուների ցեղապետ Փանահ խանը, որը Մելիք-Շահնազարի թողությամբ 1752-ին հաստատվեց Արցախի սրտում՝ Շուշիում:

* * *

Ո՞վ էր Ղարաբաղի խանության հիմնադիրը Փանահը, որն այդքան ճարպկորեն օգտվեց Արցախի մելիքների երկպառակություններից: Նրա ծագման վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են հաղորդում մահմեդական պատմագիրներ Միրզա Ադիգյոզալ-բեկը, Միրզա Ջամալ Ջևանշիրը և Ահմեդ-բեկ Ջևանշիրը: Ըստ Միրզա Ադիգյոզալ-բեկի՝ «Փանահ խանի նախապապը՝ Փանահ-Ալի բեկը, ծագումով սարջալլու ցեղից է»[24]:

[19] Յովսէփ կաթուղիկոսի յիշատակարանը, «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, թիւ է, էջ 512, Դիւան հայոց պատմութեան, հ. Թ, Յովսէփ Արղութեան, Թիֆլիս, 1911, էջ 25, Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с.153.
[20] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 212.
[21] Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, Ե., 1991, էջ 103:

[22] «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, թիւ Ը, էջ 622:
[23] **Бутков П.,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, ч. I, СПб., 1869, с. 385–386.
[24] **Мирза Адигезаль-бек,** Карабаг-наме, Баку, 1950, с. 49.

Համաձայն Միրզա Ջամալ Ջևանշիրի՝ «Փանահ խանի տոհմը հին ժամանակներում Թուրքեստանից եկած բահմանլի ցեղի սարջալլու ճյուղից է»[25]: Իսկ Ահմեդ-բեկ Ջևանշիրը գրում է, որ Փանահը սերվել է ղարաբաղյան քոչվոր ցեղերից[26]: Այսպիսով, **Ղարաբաղի խանության երեք պատմագիրներն էլ միանշանակ Փանահ խանին քոչվորական ծագում են վերագրում**[27]:

Փանահի նախապապ **Փանահ Ալի բեկը** նախապես ծառայել է Գանձակի Զիադօղլի խաների մոտ, այնուհետև՝ գաղթել է Ջևանշիրի գավառը, որտեղ և ամուսնացել է: Նրա որդի Ալիին դժգունության պատճառով Սարիջե* Ալի էին անվանում: Ըստ Միրզա Ադիգյոզալ-բեկի՝ հարստության չնորհիվ նա իր շուրջն է հավաքում ծառաների և գործավորների մի մեծ բազմություն, **և Ջևանշիր ցեղի այդ քոչվորական խմբավորումը նրա անունով կոչվում է սարջալլու**[28]: Հետագայում դժգույն Ալիի ունեցվածքն անցնում է որդուն՝ Իբրահիմ Խալիլ աղային: Կարծում ենք, մահմեդական պատմագիրների՝ Փանահի նախնիների հայտնի և հարուստ լինելու պնդումներին մեծ վերապահումներով պետք է մոտենալ:

Նադիր շահը 1736 թ. Մուղանի կուռուլթայում (ավագանու ժողով) Իրանի գահին տիրանալուց հետո, իր գահակալմանը դեմ արտահայտված Գանձակի խանի իշխանությունը թուլացնելու նպատակով, նրան հպատակվող Ջևանշիր, օթուզիքի** և քյարիրլու ցեղերին գաղթեցնում է Խորասան: Այդ ժամանակ է, որ Իբրահիմ Խալիլի ավագ որդի Ֆազլ Ալի բեկին տեսնում ենք

[25] **Мирза Джамал Джеваншир Карабагский,** История Карабага, Баку, 1959, с. 66.
[26] **Ахмед-бек Джеваншир,** О политическом существовании Карабагского ханства, Баку, 1961, с. 18.
[27] Ղարաբաղի խաների տոհմածառը տե՛ս Акты Кавказской Археологической Комиссии (АКАК), т. II, Тифлис, 1868, док. 1415, с. 695.
* Սարիջե – թուրքերեն «դեղնավուն»:
[28] **Мирза Адигезаль-бек,** Карабаг-наме, с. 49–50.
** Օթուզիքի – թուրքերեն «երեսուներկու», որը քրդական ու թյուրքական 32 մանր ցեղերի միավորում էր, որի մեջ մտնում էր նաև ջևանշիր ցեղը:

Նադիր շահի մոտ որպես արքունի արաբողապետի թաբին (ենթակա, ստորադաս) ծառայելիս[29]:

Երբ թուրքերի դեմ մղված մարտերից մեկում Ֆազլ Ալի բեկը սպանվում է, շահի մոտ ծառայության է անցնում նրա կրտսեր եղբայրը՝ **Փանահ Ալի բեկը**: Վերջինիս բամբ ձայնը նրա համար ապահովում է շահի մունետիկի պաշտոնը: Նրան անվանում էին «ջառչի» (մունետիկ) Փանահ: Նա քաղաքի փողոցներում բարձրաձայն հայտարարում էր շահի հրամանները: Սակայն, երբ մի անկարգության համար Փանահը դատապարտվում է գլխատման, նրան հաջողվում է փախչել արքունիքից և անցնել Ղարաբաղ: Միրզա Ջամալ Ջևանշիրը Փանահի փախուստը թվագրում է հիջրի 1150 (1737/38) թվականով[30]: Նույն պատմագրի այն պնդումը, թե՝ «հատկապես մեծ սխրանքներ նա գործեց Նադիր շահի՝ Ռումի (Թուրքիայի – Ա. Մ.) զորքերի դեմ մղած կռիվներում»[31], դուրկ են պատմական հիմքից, քանի որ շահի մոտ Փանահի ծառայության ընթացքում Թուրք-պարսկական 1730–1736 թթ. պատերազմն արդեն ավարտվել էր, իսկ 1743–1746 թթ. պատերազմը դեռևս չէր սկսվել: Ինչ վերաբերում է ադրբեջանցի վայ-պատմաբան Ֆ. Շուշինսկու այն պնդմանը, թե՝ «արքունի սպասավորներից ինչ-որ մեկը նախանձելով Փանահին՝ չչնջաց Նադիր շահին, իբր Փանահը մտադրվել է սպանել նրան և տիրանալ գահին»[32], ապա այս դեպքում գործ ունենք ադրբեջանական պատմաշինարարությանը բնորոշ ծիծաղաշարժ հորինվածքի հետ՝ մղոններով հեռու պատմական իրականությունից:

Որոշ ժամանակ աստանդական կյանք վարելուց հետո Փանահը որպես ղարուղա (հարկահավաք) ծառայության է անցնում Ջրաբերդի մելիք Ալլահղուլի սուլթանի մոտ: Հայ մելիքի հովա-

[29] Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 47:
[30] **Мирза Джамал Джеваншир Карабагский,** История Карабага, с. 66.
[31] Там же.
[32] **Шушинский Ф.,** Шуша, Баку, 1968, с. 4.

նավորությունն ազատում է Փանահին շահի դահիճների ձեռքից: Փաստորեն, Ալլահգուլի սուլթանը իր ծոցում օձ ջերմացրեց, ապաստան ու մի աննշան պաշտոն տալով Նադիր շահի կողմից գլխատման դատապարտված փախստական մունետիկին, որը հետագայում իր զավակների հետ պատուհաս դարձավ և՛ Ալլահգուլի սուլթանի, և՛ Խամսայի մելիքությունների համար: Ինչպես կհամոզվենք ստորև, Փանահը «յուրովի» էր վարձահատույց լինելու Ջրաբերդի մելիքին իր կյանքը փրկելու համար:

1747 թ. հունիսին Խորասանում դավադրության գոհ է դառնում Նադիր շահը: Խորասանյան դավադրությունը գործունեության լայն ասպարեզ է բացում երբեմնի փախստականի համար: Այդ ժամանակ է, որ օգտվելով Իրանում ստեղծված քաոսային իրավիճակից Փանահի ցեղակիցները Խորասանից վերադառնում են Ջևանշիրի գավառը: Փանահը, թողնելով իր ծառայությունը, երիտասարդ ցեղակիցներից մի ավազակախումբ է կազմում և «զբաղվում ավազակությամբ Շերվանի, Շաքիի, Գանձակի և Ղարաբաղի վիլայեթներում: Բոլոր այդ երիտասարդներին նա դարձնում է հարուստ և առանց որևէ մեկից կախման: Մնացած ժողովրդի սերը նա գրավում է անասուններ, ձիեր և նվերներ բաժանելով, իսկ որոշ անհնազանդների իրեն է ենթարկում պատիժների և սպանությունների ճանապարհով»[33]: Այսպիսով, որոշ ժամանակ անց մեծ ճանապարհների այս ավազակը դառնում է ցեղապետ:

Այդ շրջանում Իրանում գահ է բարձրանում Նադիր շահի եղբորորդի Ադիլ շահը, որն իշխել է 1747–1748 թթ.: Նա Ամիր Ասլան խանին նշանակում է Ատրպատականի կառավարիչ: Վերջինս, լսելով Փանահի մասին, հանդիպում է նրան և պահանջում հպատակվել Ադիլ շահին: Փանահն, այլ ելք չունենալով, նպատակահարմար է գտնում հնազանդվել, և Ամիր Ասլան խանի միջնորդությամբ, 1748 թ. կարողանում է Ադիլ շահից խանու-

[33] **Мирза Джамал Джеваншир Карабагский,** История Карабага, с. 67.

թյան ուղղակի (շահական հրովարտակ) կորզել[34]: Ահա այսպես Նադիր շահի կողմից գլխատման դատապարտված քոչվոր ցեղապետը նրա եղբորորդի Ադիլ շահի կողմից բարձրացվեց խանի աստիճանի: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ Ղարաբաղի խանության հիմնադիր հորջորջվող Փանահը խանի տիտղոս ստանալու պահին դեռևս Խամսայում չէր դանվում, այնտեղ ոչ մի իշխանություն չուներ: Այդ պահին Փանահի խանի տիտղոսը ևս էր առանց բովանդակության:

Իր նորահաստատ իշխանությունն ամրապնդելու նպատակով Փանահը որոշում է անցնել նստակեցության և 1748 թ. Քյաբիրլուի մահալում կառուցում է Բայաթի բերդը[35], որի տեղի բնաբության գործում կարևոր դեր էր խաղացել քյաբիրլուի ցեղապետի դստեր հետ Փանահի ամուսնությունը: «Քյաբիրլուն մեծ աջակցություն էր ցույց տալիս նրան,– գրում է Լեոն,– և նա արագ կերպով ավազակապետի դիրքից անցնում է տիրապետողի դիրքի, իրեն հպատակեցնելով Ղարաբաղի տափարակներում թափառող ցեղերը: Ինքն էլ մի թափառական՝ իշխանություն ձեռք բերելուց հետո նա հասկանում է նստակեցության անհրաժեշտությունը»[36]: Նստակյաց կյանքի անցնելու անհրաժեշտության գիտակցումը հեղաբեկում էր քոչվորական աշխարհընկալման մեջ:

Խամսայի մելիքները, զգալով իրենց մերձակայքում այս նոր ուժի երևան գալը, միանում են Շերվանի կառավարիչ Հաջի Ջևդեթի հետ և արշավում Բայաթի վրա: Փանահ խանն իր ցեղակիցներով ամրանում է Բայաթում և սկսում պաշտպանվել: Ամրոցի պաշարումը որևէ արդյունքի չի հանգեցնում և դաշնակիցները վերադառնում են իրենց տեղերը, անշո՛ւշտ, հաջորդ տարի արշավանքը կրկնելու պայմանով: Նահանջի ճանապար-

[34] **Мирза Адигезаль-бек,** Карабаг-наме, с.52, Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 48:

[35] Բայաթ ավերակ ամրոցը գտնվում է Կարկառ գետի ծախ կողմում, Աղջաբեդուց 26 կմ դեպի արևմուտք:

[36] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 265:

հին Հաջի Զելեբին ասում է. «Փանահ խանը մինչև այժմ մի ոսկի էր առանց դրամի դրոշմի, մենք եկանք այն դրամ դարձրինք ու վերադարձանք»[37]: Այդ արտահայտությունը ժողովրդի մեջ վերածվում է առածի:

Փանահ խանն, իր հերթին, գալիս է այն եզրակացության, որ հարթավայրում գտնվող Բայաթ ամրոցը չի կարող հուսալի ապաստարան լինել թշնամիների հետագա արշավանքների դեպքում: Նման պայմաններում անգործությունը հավասարազոր էր կործանման: Եվ նա, առանց ժամանակ կորցնելու «իրեն հակառակ ցեղերի և հայ մելիքների դեմ հաջողությամբ կռվելու համար մի նոր բերդ հիմնեց Թարնակյուտ[38] անունով տեղում, Շահբուլաղ մեծ աղբյուրի վրա, որ համարյա խաչենի սահմանագլուխն էր կազմում: Այդ նոր բերդի մեջ էլ նա չուկա ու մզկիթ կառուցեց և 1749 թվին հաստատվելով այնտեղ՝ սկսեց ընդհարումներ Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքների հետ, աշխատելով քանդել մելիքների միությունը»[39]: Բերդի տեղի ընտրության գործում կարևոր դեր է խաղացել նաև հորդառատ աղբյուրի առկայությունը, որի շնորհիվ լուծվել է ամրոցի ջրամատակարարման խնդիրը: Այդ աղբյուրի անունով էլ բերդը կոչվել է Շահբուլաղ:

Փանահի կողմից Բայաթի և Շահբուլաղի բերդերի կառուցումը ոչ թե չրջապատի թշնամիների ուշադրությունը չեղող հնարք էր կամ «փորձաշրջան» նրա համար, ինչպես սխալմամբ

[37] **Мирза Адигезаль-бек,** Карабаг-наме, с. 54, Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 49:

[38] Թառնակյուտը Հայոց արքա Տիգրան Մեծի (մ. թ. ա. 95-55) կառուցած չորս Տիգրանակերտներից մեկի աղավաղված անունն է, գտնվում է Աղդամի շրջանում, Վանքասարի ստորոտում (տե՛ս **Կարապետյան Ս.,** Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Ե., 1999, էջ 227): Այժմ այնտեղ պեղումներ է իրականացնում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը՝ պ. գ. դ. Համլետ Պետրոսյանի ղեկավարությամբ (տե՛ս **Պետրոսյան Հ.,** Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները, «ԼՂՀ. անցյալը, ներկան և ապագան» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2007, էջ 434–445):

[39] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 265:

կարծում է քաղաքագետ Դ. Բաբայանը[40], այլ կոնկրետ իրավիճակով պայմանավորված անհրաժեշտություն: Այդ ժամանակահատվածում թշնամիների ուշադրությունը (հայտնի չէ թե ինչից) շեղելուց առավել Փանահը սեփական անվտանգությունն ապահովելու խնդիրը էր լուծում, և չէր էլ կարող ենթադրել, որ իրեն երբևէ բախտ կվիճակվի բնավորվել Արցախի սրտում:

Այդ առիթը ներկայացավ այն ժամանակ, երբ Վարանդայի Մելիք-Շահնազարը իր հետ թշնամացած Արցախի մյուս չորս մելիքությունների տիրակալներին դիմադրելու համար դաշնակցից Փանահի հետ՝ նրան տրամադրելով իր մելիքության տարածքում գտնվող Շուշի բերդը[41]: Այս կապակցությամբ ռուս նշանավոր դորավար Ա. Սուվորովը իրավացիորեն նկատել է. «Իր հայրենիքի այս դավաճանը կանչել է Փանահ խանին..., տվել նրա ձեռքը իր ամուր բերդը՝ Շուշի զալան և սղնախով հանդերձ հպատակվել նրան»[42]:

Այդ պահի դրությամբ նորաստեղծ խանության կազմի մեջ էին մտնում Դաշտային Ղարաբաղի մի մասը և Շուշին: Սակայն, Շուշին էր, որ կենսունակություն հաղորդեց տափարակներում անխուսափելի կործանման դատապարտված խանությանը՝ ձևը վերածելով բովանդակության:

[40] **Бабаян Д.,** Политическая история Карабахского ханства в контексте Арцахской дипломатии XVIII века, Е., 2007, с. 39–42.

[41] Անվիճելի է, որ Շուշիի բերդը կար մինչև Արցախում 1720-ական թթ. ազատամարտի սկիզբը: Հետևաբար, անհիմն են ադրբեջանցի պատմաշինարարների այն պնդումները, թե իբր Շուշին կառուցվել է Փանահ խանի կողմից 1750-ական թթ.: Իրականում, Շուշիի բերդը այդ թվականներին միայն վերակառուցվել է (տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. I, Е., 1964, с. XLI, Չորաբյան Պ., Շոշ և Քարագլուխ սղնախների նույնացման հարցի շուրջ, «ՊՔՀ», 1994, N 1–2, էջ 183–187):

[42] **Нерсисян М.,** А. Суворов и русско-армянские отношения в 1770-1780-х годах, Е., 1981, с. 136.

* * *

Խամսայի մելիքները ստիպված էին նոր մարտահրավերներին դիմակայելու Արցախում քոչվոր ջևանշիր ցեղի սարջալլու ճյուղի ցեղապետ Փանահի հայտնվելուց հետո: **Հենց Փանահի ժամանակներից սկսվեց այլացեղ և այլակրոն էթնիկ տարրի ներթափանցումն Արցախ:** «Ղարաբաղի նորահաստատ խանությանն համար կարևոր քաղաքական հարց էր մահմեդական ազգաբնակություն կազմելը երկրի այն կողմերում, ուր չկար այնպիսի տարր, որը պիտի խանական իշխանության նեցուկը դառնար: Փանահ խանը, դավաճանությամբ սողոսկելով զուտ հայաբնակ Խամսայի երկրի սիրտը, չուտ զգաց, որ Շուշու ժայռերը դեռ բավարար հիմք չեն տիրապետություն հաստատելու համար,— իրավացիորեն նկատում է Լեոն,— և նա չտապեց թուրք թափառական ցեղեր գրավել դրսից՝ հարևան խանություններից, խոստանալով նրանց զանազան արտոնություններ: Այսպիսով, Վրաստանից և այլ տեղերից Ղարաբաղ փոխադրվեցին փյուսյան, կրաչարլի, ջինլի, դամիրչի-հասանլու, ղըզըլ-հաջիլի, սաֆիքյուրդ, բոյ ահմեդլի, սահաթլի, քենգերլու և այլ շատ թափառական ցեղեր: Հոր օրինակին հետևելով, Իբրահիմ խանն էլ ամեն ջանք գործ էր դնում՝ դրսից բերելու նոր մահմեդական տարրեր»[43]: Անվանի պատմաբանի բերած ցեղերի այս չարանին կարող ենք ավելացնել թուրք-թաթարական քոչվոր ու կիսավայրենի այնպիսի ցեղախմբերի, ինչպիսիք են ջևանշիրցիները, սարջալլուները, օթուզիքինները, քյաբիրլուները, իգիրմիդորդները, քոլանիները և այլք, որոնց բնակեցումը Ղարաբաղի տարածքում **իսկական չարիք դարձավ արցախահայության համար:** Այդպիսով, Արցախում բնակվող միատարր ու միաձույլ հայության մեջ մտավ օտարասեռ էթնիկ տարրը, իր հետ բերելով մաքի և մշակույթի ահավոր հետամնացություն, ահռելի չափե-

[43] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 303:

րի հասնող աղքատություն[44]: **Խաչնարած ցեղերի՝ Արցախ ներթափանցելուց հետո ընկած ողջ ժամանակաշրջանը հագեցած է եղել բնիկ հայերի և եկվոր էթնիկ տարրերի հակամարտությամբ[45]: Բերված ցեղախմբերը, առաջին հերթին, Փանահ խանի համար հուսալի դաշնակիցներ էին Արցախի՝ իրեն չենթարկվող մելիքությունների դեմ պայքարի ժամանակ:**

Նախ Փանահ խանը ուխտադրժորեն ձերբակալեց հայ մելիքների կողմից իր մոտ բանակցությունների եկած Ջրաբերդի Մելիք-Իսրայելյան Ալլահդուլի սուլթանին և, Նախիջևանի կառավարիչ Հեյդար Ղուլի խանի դրդմամբ, հրամայեց գլխատել նրան: Փանահն այդպես էր վարճահատույց լինում իր կյանքը Նադիր շահի դահիճների ձեռքից փրկած Ջրաբերդի մելիքին: Արցախի հայերը դեռևս XIX դարում պահպանել էին հետևյալ տխուր երգը, որը ժողովրդական ավանդության համաձայն մահապատժից առաջ, Փանահ խանի զնդանում, հորինել էր Ալլահդուլի սուլթանը.

«Վարդապետին Քաջի[46] ասեք գայ առ իս,
Կամ գինքն սպանցէ կամ փրկեսցէ գիս,
Եղբայրդ իմ Ադամ զվրէժն իմ հան,
Ափսո՛ս, գի վրէժ իմ մնաց յաւիտեան»[47]:

Ալլահդուլի սուլթանին հաջորդել է եղբայրը՝ Մելիք-Ադամը (Հաթամ), որը «մանկության հասակից պատանդ էր եղել Դաղստանի Խոսրով սուլթանի մոտ և լավ վարժվել էր լեռնականների պատերազմական կարգերին: Նրան ազատել էր Նադիր

[44] Սևյան Վ., Շուշի, Ե., 1991, էջ 31:
[45] Հովհաննիսյան Լ., Էթնիկական գործընթացները Քաշաթաղի և Քարվաճառի գավառներում 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կեսին, «Եզերք» հանդես, 2006, N 1, էջ 13: Հմմտ. **Бабаян Д.,** указ. соч., с. 58.
[46] Խոսքը ժողովրդական հերոս Դալի-Մահրասայի մասին է: Նրա իսկական անունը Ավագ վարդապետ էր, բայց մելիքների մղած կռիվներում ցույց տված սխրագործությունների համար ժողովուրդը նրան տվել էր դալի (գիժ) մականունը: Ավագ վարդապետը սկզբնապես Ջրաբերդի եղիշե առաքյալի վանքի միաբան էր (նրա մասին տե՛ս **Րաֆֆի,** նշվ. աշխ., էջ 459–460):
[47] **Զալալեանց Ս.,** Պատմութիւն աշխարհին Աղուանից, Մատենադարան, միկրոժապավեն 367, էջ 4:

շահը»[48]: Հնդկահայ ժամանակակիցները Մելիք-Ադամին ներկայացնում են այսպես. «Սա խորամիտ և քաղաքավարի մի մարդ է, պատերազմի մեջ՝ խիզախ»[49], իսկ 1781 թ. կազմված «Պատմագիրք Սիւնեաց» ձեռագրի հիշատակարանում նա բնութագրվում է որպես «այր քաջասիրտ, և կարի ճարտարաբան. նաև՝ առատաձեռն ևս ըստ հոգեսէր ըղձից իւրոց՝ առ կարօտեալս և չքաւորեալս»[50]: Եվ հենց պատերազմների մեջ խիզախ այդ քաջասիրտ այրն էր, որ Խամսայի մելիքների դաշնակցությունում զբաղեցրեց եղբոր տեղը:

Փանահի հաջորդ գոհը դարձավ Խաչեն գավառի տիրակալ Մելիք-Ալլահվերդի Հասան-Ջալալյանը, որը գավազրաբար սպանվեց 1755 թվականին: Դրանով անդառնալի հարված էր հասցվում Հասան-Ջալալյանների աշխարհիկ իշխանությանը: Այնուհետև, Մելիք-Ալլահվերդուն գավելու համար, Փանահ խանը Խաչենի մելիք է նշանակում Խնձրիստան գյուղի տանուտեր Միրզախան Մելիք-Միրզախանյանին: Այսպիսով, Արցախի հինգ մելիքություններից երկուսը՝ Վարանդան և Խաչենը, այլևս անվնաս էին Փանահի համար, իսկ Գյուլիստանի, Ջրաբերդի և Դիզակի մելիքությունների վրա նրա իշխանությունը չէր տարածվում:

Այդ դեպքերից հետո «անկաւ մեծ իմն հակառակութիւն ընդ Փանահ խանի Ջուանշիր գաւառին. այս ինչ հակառակութիւնն տեւեալ մինչև ցեօթն ամ անընդհատ իմն չարունակութեամբ ընդ միմեանց պատերազմեալ յերկոցունց կողմանց եղեալ անթիւ արիւնհեղութիւն»[51]: Այդ ժամանակ Դիզակի Մելիք-Եսային առաջինն էր, որ գիտակցեց կանոնավոր զորախմբերի առկայության անհրաժեշտությունը: Նա, լինելով «հմուտ ամենայն հնարիցն մարտի՝ խրախոյս տայր և քաջալերէր, ուսուցանէր զամենայն հնարամարտութիւնս. աներկչոտ խրոխտաբար արձակելն ի վերայ մահազէն թշնամեաց՝ աներկիւղ իսկ նահատակիլն՝ քան վատ անուն ժառանգելով կեալն: Նաև մնալ միշտ պատրաստ ի լսել զձայն պատերազմի»[52]:

Ինավ էլ պատահական չէ, որ այդ գաղափարը ծնվել էր Դիզակի Մելիք-Եսայու մոտ: Կտրված իր երկու դաշնակիցներից՝ Գյուլիստանի Մելիք-Հովսեփից և Ջրաբերդի Մելիք-Ադամից, նա հարկադրված էր միայն սեփական ուժերին ապավինած պատերազմելու Փանահի և Վարանդայի տիրահռչակ տիրակալ Մելիք-Շահնազարի դեմ: Առանց կանոնավոր և մարտունակ զորամասերի առկայության նա, բնականաբար, ի վիճակի չէր լինի երկար դիմակայել խանական զորքերի հարձակումներին: Հայ պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովը (Հովսեփ Ներսիսյանց) գրում է, որ «Փանահի խանության սկզբնական շրջանում Դիզակի Մելիք-Եսային, որը հայտնի էր իր քաջությամբ, նրա դեմ բազում կռիվներ է մղում: Որոշ ժամանակ (յոթ տարի – Ա. Մ.) նրանց միջև թեժ մարտեր էին տեղի ունենում: Եվ մի անգամ Մելիք-Եսային Փանահ խանի զորքը այնպես է ջախջախում ու ցաքուցրիվ անում, որ նա, Բայաթի կողմը փախչելով, մեկ ամիս անտառներում է անցկացնում՝ չհամարձակվելով այնտեղից դուրս գալ»[53]: Սակայն, նույն պատմագրի այն հաղորդումը, թե հետագայում Փանահը «նրան (Եսայուն – Ա. Մ.) նենգորեն կալանավորում է ու սպանում»[54], չի համապատասխանում իրականությանը: Հայտնի է, որ Փանահի մահից հետո Մելիք-Եսային դեռ երկար շարունակում էր պայքարել նրա որդու՝ Իբրահիմ խանի դեմ: Վերջինիս կարգադրությամբ էլ գավաճրաբար «ի 1230 (1781) թուին Դողու Մալիք Սային սպանեցին»[55]: Այդ կապակցությամբ ռուս զորավար Ալ. Սուվորովը 1781-ին իշխան Գ.

[48] Լալայան Ե., Երկեր, հ. 2, Ե., 1988, էջ 216:
[49] Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, էջ 102:
[50] Մատենադարան, ձեռագիր 1488, էջ 218ա:
[51] Կոստանեանց Առ., Դիզակի մելիքութիւնը, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Ա, Վաղարշապատ, 1913, էջ 44:

[52] Նույն տեղում, էջ 49–50:
[53] Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 50:
[54] Նույն տեղում:
[55] Մատենադարան, ձեռագիր 3881, էջ 86բ:

Պոտյոմկինին ուղղած զեկույցում գրում է. «Շուշիի Իբրահիմ խանը չարություն գործադրելով՝ որոշ դումար է պահանջել Դիզակի Մելիք-Եսայուց և չարչարելով էլ սպանել նրան»[56]: Մելիք-Եսայու մահվան թվականը հաստատվում է նաև նրա տապանաքարի արձանագրությամբ. «Այս է տապան մեծին Մելիք եկանի որդի Մելիք Եսայուն, և էր սա իշխան կարգեալ Նահիր չահէն: Լ Գ (33) ամ տիրեաց երկիրս Դիզակու և արար բազում քաջութիւն և յաղթութիւն ընդ անօրէնսն. և էր ինքն պարթև և յոյժ զօրաւոր քան զառաջինսն իւր. և թիւ կենաց նորա ԿԱ (61) ամաց, վախճանեցաւ թվին ՌՄԼ (1781), հոկտեմբերի Բ (2)-ին երեքշաբթի. որ ընթեռնուք, մեկ Հայր մեղայ ասացէք. ամէն»[57]:

Փանահի դեմ հաջողությամբ մարտնչում էին նաև Մելիք-Եսայու դաշնակիցները՝ Գյուլիստանի Մելիք-Հովսեփը և Ջրաբերդի Մելիք-Ադամը: Նրանց «ամրոցի (Ջրաբերդի – Ա. Մ.) անմատչելիության շնորհիվ Փանահ խանը չէր կարողանում հասնել իր նպատակին,– գրում է Միրզա Ադիգյոզալ-բեկը,– այլ լեռնափեշերին փռված ցանքերն էր իր զորքի ձիերի ամբակների տակ տալիս... Սակայն երկու մելիքները, չնայած անասելի զրկանքներին, չորս տարի շարունակ ցույց տվեցին անսասանության և համառության օրինակներ: Այդքան երկար ժամանակի ընթացքում նրանք չնահանջեցին սպանության և ավարառության ճանապարհից՝ դրսևորելով համառության և հանդգնության օրինակներ: Նրանք դէխավորում էին [այժմ] հանգուցյալ Փանահ խանի դեմ մարտի եկած չրջապատի խաների զինված ջոկատները և ոչ մի քայլ չէին նահանջում նրա դեմ սկսած պայքարից»[58]:

[56] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 172, Нагорный Карабах в международном праве и мировой политике, документы и комментарий, составитель **Ю. Барсегов**, М., 2008, с. 79.
[57] Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Ե., 1982, էջ 179:
[58] **Мирза Адигезаль-бек**, Карабаг-наме, с. 60.

Հետագայում այդ մելիքները նահանջում և ամրանում են Գյուլիստանի բերդում: Այնտեղ Փանահի դեմ նրանց մղած հաղթական կռիվներից մեկի վերաբերյալ հետևյալ ուշագրավ տեղեկություններն է հաղորդում կապիտան Օթար Թումանովը 1754 թ. դեկտեմբերի 1-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային հղած զեկուցագրում. «Հայերը գտնվում էին Սղնախում՝ Գյուլիստանի բերդում: Նրանց գլխավորները մելիք Յուսուֆ (Հովսեփ – Ա. Մ.) և մելիք Աթամ են կոչվում: Սրանք մինչ 1500 [գինված] մարդ ունին: Այս հայերի վրա հարձակվել է Փանա-խանը, հայերը հաղթել են, Փանա-խանի մարդկանցից 300-ի չափ սպանել են: Այս պատերազմը եղավ 1754 թվի օգոստոսի 26-ին»[59]: Դիմադրությունը շարունակվել է նաև հաջորդ տարի, ինչպես տեղեկանում ենք Օթար Թումանովի 1755 թ. մարտի 21-ի զեկուցագրից. «Սղնախի հայերը մեկուսացած են իրենց տեղում, ներկայումս Փանա-խանին և թուրքերին չեն ծառայում»[60]: Իսկ նույն թվականի նոյեմբերի 20-ի զեկուցագրով Օթար Թումանովը հաղորդում է Ղզլարի պարետ Իվան Ֆոն Յոհաննդորֆին. «Սղնախի հայոց մելիք Յուսուֆը այստեղ (Վրաստան – Ա. Մ.) թագավորների մոտ եկավ իր ընտանիքով՝ 60-ի չափ մարդկանց ուղեկցությամբ: Սղնախը դատարկվել է: Իրոք հացի թանկություն է եղել այնտեղ... Գյուղացի-ռայաթը Փանա-խանին է մնացել: Մելիք Ադամն իր ընտանիքը գյանջա է ուղարկել, ինքը դեռևս իր բերդումն է գտնվում, սակայն ներկայումս ոչ մի տեղից օգնություն չի երևում»[61]: Այսպիսով, չդիմանալով Փանահի հարաճուն ճնշմանը, մելիքները իրենց զորքի և ժողովրդի մի մասի հետ հեռանում են իրենց տիրույթներից և

[59] **Մելիքսեթ-բեկ** Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Ե., 1955, էջ 107, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в. Документы подобрал, подготовил к печати и предпослал им исследование **В. Гамрекели**, Тбилиси, 1968, с. 140:
[60] **Մելիքսեթ-բեկ** Լ., նշվ. աշխ., էջ 108:
[61] Նույն տեղում, էջ 109, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в., с. 296.

ապաստանում Գանձակի Շահվերդի խանի մոտ, ապասելով հարմար առիթի՝ Փանահի դեմ իրենց դաժեմարտը չարունակելու համար: Յոթ տարի մելիքները մնում են Շամխորում:

Լսելով Փանահ խանի հզորացման մասին, 1757 թ. մեծաքանակ զորքով Շուշիի վրա է արշավում Մազանդարանի կառավարիչ Մուհամմադ Հասան խան Ղաջարը՝ Իրանի ապագա շահ Աղա Մուհամմադ խանի հայրը: Նրա բանակը կանգ է առնում Շուշիի մերձակայքում գտնվող Խաթուն-Արխ վայրում: Սակայն, շուրջ մեկ ամիս տևած պաշարումը որևէ արդյունքի չի հանգեցնում, և Մուհամմադ Հասան խանը՝ լսելով Քերիմ խան Զենդի ուժեղացման ու դեպի Արաղ շարժվելու մասին, հապշտապ հետ է վերադառնում: Այս իրողությունն իր արտացոլումն է գտել նաև վրացական սկզբնաղբյուրներում, մասնավորապես՝ արքայազն Դավիթ Բագրատիոնի «Նոր պատմություն» երկում այդ արշավանքի մասին կարդում ենք. «1757 թ. Մահմադ-Հասան Ղաջարը... դրավեց Պարսկաստանի ավելի քան կեսը ու մոտեցավ Շուշուն: Իսկ երբ Շիրազում երևաց Քերիմ-խան Զենդը, այս Մահմադ-Հասան Ղաջարը Շուշիից դնաց նրա դեմ»[62]: Շտապելու պատճառով նա Խաթուն-Արխում է թողնում անգամ թնդանոթները: Փանահ խանը դրանք տանում է Շուշի, որի բերդապարիսպները քանդելու համար նախատեսված թնդանոթները սկսում են պաշտպանել քաղաքը:

Մուհամմադ Հասան խանի ձեռնունայն վերադարձից հետո 1761 թ. մեծաքանակ բանակով Ղարաբաղ է արշավում Ուրմիայի կառավարիչ Ջաֆարալի խան Աֆշարը, որը Նադիր շահի առաջապահ զորագնդի հրամանատարն էր եղել: Նա, ինչպես կարդում ենք Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանում, «ի ՌՄԺ (1761) ամի թուականութեանս մերում, ժողովեալ զբազում զօրս ի վերայ իւր, չոգաւ ի վերայ մեծ և անուանի դղեկին Շոշ կոչեցեալ ամրագունեղ բերդին՝ ածել զնա ի ձեռն, և զիշխողն նորին զՓանահ խանն, որ ի Ջիւանշիր յազգէ»[63]: Ջաֆարալի խանի բանակը կանգ է առնում Ասկերանի մոտ գտնվող մի դաշտում, որտեղ ամրություն է կառուցում և ձմեռում: Այդ ժամանակ, ընդհանուր թշնամու դեմ պայքարելու համար, «Ջրաբերդի ու Թալիշի Մելիք Աթամն ու Մելիք Հովսեփը ևս Ջաֆարալի խանի մոտ գալով՝ նրա զորքին են միանում: Նրա ամրության կողքին մեկ ուրիշն են կառուցում»[64]: Վեց ամիս այնտեղ մնալուց հետո կողմերը հաշտության բանակցություններ են սկսում, և «Փանահ խանն արտաքուստ հնազանդություն է հայտնում նրան ու պատանդ է տալիս իր որդի Իբրահիմ-Խալիլ աղային»[65]: Այդպիսով, Փանահ խանն ընդունում է իր կախվածությունը Ջաֆարալի խանից:

Որդուն ազատելու նպատակով Փանահը դաշնակցում է հնարավորինս հզորացող վեցիլ Քերիմ խան Զենդի հետ, որը Ջաֆարալի խանի ոխերիմ թշնամին էր: Նրանց բանակը 1762 թ. Ուրմիայում պարտության է մատնում Ջաֆարալի խանին: Ազատելով պատանդի կարգավիճակով Ուրմիայում գտնվող Իբրահիմ-Խալիլ աղային՝ Քերիմ խան Զենդը 1762 թ. խանի տիտղոս է շնորհում նրան և ուղարկում Ղարաբաղ[66], իսկ Փանահ խանին իր հետ վերցնելով տանում է Շիրազ: Այնտեղ էլ 1762 թ. Փանահը մահանում է: Թեև ըստ խանության պատմագիրների՝ Քերիմ խանը նրան Շիրազ էր տարել պատվելու նպատակով, սակայն ակնհայտորեն Փանահը նրա մոտ էր գտնվում պատանդի կարգավիճակով: Այս տեսակետի օգտին է վկայում այն փաստը, որ այդ ժամանակ Քերիմ խանը որպես պատանդ իր հետ Շիրազ է տանում

[62] Մելիքսեթ-բեկ Լ., նշվ. աշխ., էջ 200:

[63] Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 57:

[64] Սիրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 60:

[65] Бакиханов А., Гюлистан-Ирам, Баку, 1926, с. 130.

[66] Мирза Джамал Джеваншир Карабагский, История Карабага, с. 76, Мирза Адигезаль-бек, Карабаг-наме, с. 72.

նաև Ղարադաղի Քյազիմ խանին և Խոյի Շահբազ խան Դումբուլիին[67]:

Այդ է պատճառը, որ նրանք քար լռություն են պահպանում Փանահի մահվան հանգամանքների վերաբերյալ: Սակայն, այդ բացը լրացնում են հայ հեղինակները, մասնավորապես՝ Ներսեսովն այդ մասին գրում է. «Փանահ խանը դիտմամբ մեռած է ձևացել, մերձավորներին նախօրոք պատվիրելով, որ իր «դին» Ղարաբաղ տանեն, որպեսզի այդպես Շիրազից դուրս գար, ճանապարհին ձի հեծներ և գնար Ղարաբաղ՝ ստանձնելու այնտեղի իշխանությունը: Քերիմ խանը այս հասկանալով ասում է. «Նա իմ լավ բարեկամն էր, պետք է նրա դիակը պատվով ու հարգանքով Ղարաբաղ ուղարկեմ»: Հրամայում է նրա որովայնը պատռել, դեղերով լցնել, որից հետո միայն ճանապարհ է դնում Ղարաբաղ»[68]: Հիրավի, ճակատագիրը իրեն արժանի մահ էր նախապատրաստել ողջ կյանքը խարդավանքների մեջ անցկացրած այս մարդու համար. ավազակապետ դարձած երբեմնի մուհեթիկ, որին կյանքի ալիքները բարձրացրին խանի աստիճանի՝ այնտեղից որպես հասարակ մի խաբեբայի ցած գլորելու համար:

Կարևոր է նաև այն փաստը, որ Փանահն անգամ մի կտոր հող չուներ Խամսայի մելիքությունների տարածքում, որը որպես գերեզմանատեղ ծառայեր նրա համար: Այդ է պատճառը, որ հարազատները նրա դիակը տարան և թաղեցին Աղդամի մոտ գտնվող իմարեթ վայրում:

Ըստ էության, Փանահ խանին այդպես էլ չհաջողվեց իր իշխանությունը տարածել Դիզակի, Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքությունների վրա: Փանահի մահից հետո (1762) նրա որդին և հաջորդը՝ Իբրահիմ խանը (1762–1806), ստիպված էր դեռ երկար պայքար մղելու այդ ինքնիշխան հայկական մելիքությունների դեմ: Դեռ ավելին, Նորահաստատ խանության դեմ այդ մելիքությունների չմարող պայքարը հաշվի առնելով է, որ 1780-ական թվականներին «Ռուսաստանում մտադրվել էին Արցախի հիման վրա վերականգնել հայոց պետականությունը՝ վերացնելով հայոց հողում հայ մելիքներից մեկի աջակցությամբ դրանից 30 տարի առաջ ստեղծված այսպես կոչված Ղարաբաղի խանությունը»[69]: Ղարաբաղի խաններին չհաջողվեց վերջնականապես ճնշել այստեղ մնացած մելիքների դիմադրությունը: Վեճերը նրանց միջև շարունակվեցին ընդհուպ մինչև 1813 թ., երբ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված Գյուլիստանի պայմանագրի համաձայն Արցախն անցավ Ռուսաստանին[70], իսկ 1822 թ. Ղարաբաղի խանությունը վերացվեց:

Ամփոփելով՝ նշենք, որ այնքան ժամանակ, քանի դեռ մելիքություններից մեկի տիրակալի սրտում բուն չէր դրել դավաճանության սխոը, ըստ էության ազատ էին նրանք և ինքնիշխան, իսկ երբ Վարանդայի Մելիք-Շահնազար Բ-ի թողտվությամբ Արցախում հաստատվեց վաչկատուն սարջալլուների ցեղապետ Փանահ խանը, վերջինիս և նրա որդուն՝ Իբրահիմ խանին հաջողվեց դժվարությամբ թուլացնել Արցախի մելիքությունները: Եվ միայն Արցախյան հերոսական ազատամարտի շնորհիվ հաջողվեց սրբագրել Մելիք-Շահնազարի թույլ տված չուրջ 240-ամյա ճակատագրական սխալը:

Եվ, վերջապես, եթե այսօր ունենք ազատ և անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ապա այդ պետության կայացման ենթախորքում, անտարակույս, իրենց անուրանալի դերն ունեն նաև Արցախի հերոսական մելիքությունները, որոնց տիրակալներին հաջողվեց միջնադարյան դժնդակ պայմաններում պահպանել այդ երկրամասի հայեցի նկարագիրը:

---

[67] Կոստիկյան Ք., Ղարաբաղի XVIII դարի պատմությունն ըստ Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի»-ի, «ՊԲՀ», 1999, N 2–3, էջ 355:

[68] **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, Ճշմարտացի պատմություն, էջ 62, տե՛ս նաև **Բաֆֆի**, նշվ. աշխ., էջ 467:

[69] **Чобанян П.**, О некоторых вопросах истории Арцаха, «ПБЖ», 2002, N 3, էջ 154: 1780-ական թթ. հայոց ազատամարտի մասին տե՛ս **Иоаннисян А.**, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Е., 1990.

[70] Нагорный Карабах. Историческая справка, Е., 1988, с. 14, **Мурадян П.**, История — память поколений, Е., 1990, с. 84.

АРТАК МАГАЛЯН
ИИ НАН РА

АРЦАХСКИЕ МЕЛИКСТВА И ВОЗНИКНОВЕНИЕ КАРАБАХСКОГО ХАНСТВА

РЕЗЮМЕ

В условиях отсутствия армянской независимой государственности Арцахские меликства были единственной силой, на основе которой, при возможности, могло воскреснуть армянское государство. В целом, Арцахские меликства были свободны и суверенны до тех пор, пока в сердце правителя одного из них не поселилось чувство вероломства. Когда по попустительству правителя Варанды Мелик-Шахназара II-го, в 1752 г. в Арцахе утвердился Панах хан – глава племени кочевых сарыджаллу, ему и его сыну Ибрагиму удалось значительно ослабить армянские меликства. Нанеся им огромный ущерб, они так и не смогли изменить положения дел в крае.

С водворением русского владычества в Карабахе ханство было упразднено в силу своей административно-политической несостоятельности и отсутствия сколь-либо значимой поддержки у местного населения.

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԼՈՌՈՒ ԳԱՎԱՌԻ ԷԹՆԻԿ ՊԱՏԿԵՐԸ XVIII Դ. ՎԵՐՋԻՆ ԵՎ XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ

Լոռու գավառում հայկական տարրը վաղնջական ժամանակաշրջաններից կազմել է բնակչության մեծամասնությունը:

Թուրքերը գաղթել են այստեղ Շահ Աբասի հրամանով (1605 թ.) և իրենց ցեղային բորչալու անունը տվել այն հարթությանը, որտեղ բնակություն են հաստատել: XVIII դ. I կեսին պարսից շահ Թահմասպն (1524–1576), իր թիկունքն ամրապնդելու համար, չիա դավանանքի թուրքական դուլքաթար ցեղախմբին պատկանող բորչալու, ղազախ, չամսադինլո, դաջար ցեղերի բնակեցրեց Հյուսիսային Հայաստանի Լոռի, Փամբակ, Ազատև, Տավուշ և այլ վայրերում[1]:

XVIII դ. II կեսին գավառի հյուսիս-արևելյան մասում՝ հիմնականում Ալավերդիում, Մադանում և Ախթալայում, բնակություն հաստատեցին հույները:

Հայ բնակչությունը Լոռիում ավելի շատացավ XVIII դ. վերջերին՝ Ղարաքաղից և XIX դ. առաջին երեսնամյակին՝ Արևմտյան Հայաստանի հյուսիս-արևելյան տարածքներից հայերի վերաբնակեցման հետևանքով:

Ռուս պատմաբան Վ. Իվաննիկոն նշում է, որ արդեն XVIII դ. վերջերին՝ սկզբին Վրաստանի բնակչության զգալի մասը

[1] Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., Մեծ Ղարաքիլիսա, հ. 1, Ե., էջ 69:

կազմում էին հայերը, այնտեղ բնակություն էին հաստատել հայոց հին թագավորության շառավիղները[2]:

Ըստ սկզբնաղբյուրների՝ Վրաստանում, առանց նրա կազմի մեջ մտնող Արևելյան Հայաստանի Ղազախ-Շամշադինի, Փամբակ, Տաշիր, Աչոցք գավառների, հայ ազգաբնակչության թիվը հասնում էր 27–28 հազարի[3]:

1801 թ. Արևելյան Վրաստանի հետ Ռուսաստանին անցած Լոռիում, Փամբակում, Ղազախում և այլ հայկական տարածքներում հայերի թիվը՝ կապված պարսկա-թուրքական ավերիչ արշավանքների (հատկապես պարսից Աղա Մամադ խանի) և հյուսիսկովկասյան լեռնականներ՝ լեզգիների հարձակումների հետ, խիստ նվազել էր: 1801 թ. հետո նշված տարածքների հայ բնակչության թիվը սկսեց նկատելիորեն աճել. բնակավայրերը լքած շատ լոռեցիներ վերադարձան:

Ռուսաստանին միավորմամբ հաստատվում է Վրաստանի վարչական նոր բաժանումը. կազմավորվում է վրացական նահանգը, որի կազմի մեջ մտնում էին Վրաստանը (Քարթլին և Կախեթը) և, այսպես կոչված, «Թաթարական դիստանցիաները»: Վրաստանն իր հերթին բաժանվում էր հինգ գավառների (ուեզդ), որոնցից երեքը Քարթլիում՝ Վերին Քարթլի (Դուշեթ կենտրոնով), Միջին Քարթլի (Գորի), Ներքին Քարթլի (Թիֆլիս և Սոմխեթ (Լոռի), իսկ երկուսը Կախեթում՝ Թելավ և Սղնախ[4]: «Թաթարական դիստանցիաներն» էին՝ Բորչալուի, Ղազախի, Փամբակի, Շամշադինի և Շորագյալի: Փաստորեն, Լոռու գավառը, Թիֆլիսի հետ միասին, հայտնվեց Ներքին Քարթլի վարչամիավորի կազմում, իսկ Գորիի և Դուշեթի հետ միասին՝ ավելի մեծ՝ Քարթլի վարչատարածքային միավորի կազմում: Ինչ անց նահանգն ընդարձակվում է՝ Լոռու կազմի մեջ մտած

[2] **Иваненко В.,** Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого Князя Михаила Николаевича, Тифлис, 1901, с. 29.
[3] Նույն տեղում:
[4] **Дубровин Н.,** Георгий XII, последный царь Грузии и присоединение ее к России, СПб., 1897, с. 250.

Փամբակի միավորմամբ[5]: Լոռին և Փամբակը միասին կազմեցին մեկ վարչական միավոր՝ Լոռի-Փամբակի ուղեմաս անվանումով: Գավառները բաժանվեցին վոլոստների:

Նույն 1801 թ. Ռուսաստանին անցած տարածքները ենթարկվեցին վարչական բաժանումների. կազմվեցին բոլոր գյուղերի անվանացուցակները, սակայն, առանց նրանց բնակչության թվաքանակը ներկայացնելու: Ցուցակի համաձայն՝ Լոռու 25 բնակավայրերից 17-ն ուներ հայ և վրացի խառը ազգաբնակչություն, չորսը՝ վրացի և մեկը՝ օսեթ քրիստոնյա:

Շուլավերի վոլոստի մեջ ընդգրկված Հաղպատ, Որնակ, Սանահին, Շնող, Դսեղ, Ուզունլար գյուղերի բնակիչների դիմաց արձանագրված է միայն հայեր, Ախթալա-Մադանի դիմաց՝ վրացիներ և հայեր[6]:

Անդրկովկասի ռուսական իշխանությունները նպաստում էին նորանվաճ տարածքների վերաբնակեցման գործընթացին: Դա պայմանավորված էր նորանվաճ տարածքներում Ռուսաստանի ռազմավարական և տնտեսական քաղաքականությամբ: Լոռու ամայի լինելու և նրա վերաբնակեցման կարևորության ու օգտակարության մասին նշում են Կովկասում ռուսական պետական պաշտոնյաները, ռուսական բանակի գինվորական հրամանատարության, գործարանային գերատեսչությունների ներկայացուցիչները՝ կայսրին, ռազմական բարձրաստիճան ներկայացուցիչներին և այլ անձանց ուղղված իրենց զեկուցագրերում, նամակներում, հրամանագրերում[7]: Այդ հաշվետվություններում մանրամասն քննարկվում են Լոռու վերաբնակեցման խնդիրները:

[5] **Шахатунян Н.,** Административный передель Закавказского края, Тифлис, 1918, с. 84.
[6] Акты Кавказской Археографической Комиссии (АКАК), т. 1, Тифлис,1866, с. 461–474.
[7] Նույն տեղում, т. 1, с. 15, 474, т. 2, Тифлис, 1868, с. 204-209, 211, 216, 615, т. 4, Тифлис, с. 52, 172, т. 5, ч. 1, Тифлис, с. 111, 115, 183; Присоединение Восточной Армении к России, сборник документов, ред. Ц. Агаян, т. 1, Е., 1972, с. 198, 202–203.

1804 թ. հոկտեմբերի 13-ին պարսիկներից վրկություն վճարող և Երևանից դուրս եկած 2 հազար հայ ընտանիք հեռացել էին Կարսի տարածք: Ռուսների ջանքերով նրանք գալիս են Լոռի, որոնցից մոտ 1000 տուն ցանկություն են հայտնում մշտապես բնակություն հաստատել Լոռիում[8]:

Ջավախքի Կոթելիա գյուղից գաղթեցված 57 ընտանիքների, որոնք ռուսական իշխանությունների ջանքերին հակառակ հաստատվել էին ոչ թե Լոռիում, այլ Թիֆլիսի չրջակայքում, դեռևս գներալ Ա. Տորմասովը հորդորում էր տեղափոխվել Բորչալու՝ նրանց խոստանալով կյանքի օրինակելի պայմաններ[9]: Նախատեսվում էր, որ սեպտեմբեր ամսին նրանք պետք է վերաբնակվեին Լոռե ամրոցի և Ուզունլար (Օձուն) գյուղի միջև՝ նախկինում եղած Բալախչայ գյուղատեղիում[10]:

1804 թ. կամերալ վիճակագրության համաձայն՝ Լոռու գավառում ապրում էր 780 ընտանիք կամ 3 908 մարդ՝ գերազանցապես հայ ազգաբնակչությամբ, որոնցից 2252 արական և 1656 իգական սեռի ներկայացուցիչներ[11]:

1804–1805 թթ. Փամբակի գավառում (Լոռին Փամբակից բաժանվում էր Բզովդալ կամ Դվալ լեռով) ապրում էր 514 ընտանիք կամ 3886 մարդ, որոնցից հայեր՝ 401 ընտանիք կամ 3297 մարդ, որոնք կազմում էին գավառի բնակչության 78,1 տոկոսը, իսկ մնացած 21,9 տոկոսը՝ 113 ընտանիքը (589 մարդ), մահմեդականներ էին[12]:

Բորչալուի ուղեմասում բնակվում էր 580 ընտանիք (1746 ար., 1166 իգ., ընդամենը՝ 2912 մարդ), որոնցից հայեր՝ 501 ընտանիք (1509 ար., 1008 իգ., ընդ.՝ 2517 մարդ), հույներ՝ 79 ընտանիք (237 ար., 158 իգ., ընդ.՝ 395 մարդ)[13]:

Լոռու և Բորչալուի ուղեմասերը միասին ներկայացնում են հետևյալ պատկերը. 1360 ընտանիք (3998 ար., 2822 իգ., ընդ.՝ 6820 բնակիչ), որոնցից՝ հայեր 1284 (3761 ար., 2664 իգ., ընդ.՝ 6425 բնակիչ), հույներ՝ 79 ընտանիք (237 ար., 158 իգ., ընդ.՝ 395 բնակիչ)[14]:

XIX դ. սկզբի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետևանքով գավառում տեղի ունեցավ ազգաբնակչության թվաքանակի կրճատում և տնտեսության քայքայում: Պատերազմների հետևանքով հայ բնակչության արտագաղթը և գերեվարությունները, ռուս զինվորական հրամանատարության կատարած վերաբնակեցումները մեծ ազդեցություն էին թողնում ազգաբնակչության թվի տատանումների վրա:

1814 թ. Փամբակում ռուսական զինվորական մարմիններն արևմտահայերից ստանում էին բազմաթիվ խնդրագրեր՝ Անդրկովկասի ռուսահպատակ մարզեր գաղթելու թույլտվություն ստանալու համար[15]: Անդրկովկասի ռուսական իշխանությունները չարունակում էին նպաստել նորնվաճ տարածքների վերաբնակեցման գործընթացին: Զանգվածային այս գաղթերը նպաստեցին Արևելյան Հայաստանի մի շարք տարածքների բնակչության էթնիկ պատկերի վերականգնմանը:

Այս տարածքներում կրկին ազգաբնակչության թվի վերլուծք գրանցվեց 1804–1813 թթ. ռուս-պարսկական և 1806–1812 թթ. ռուս-թուրքական պատերազմների ավարտից և երկրամասում խաղաղություն հաստատվելուց հետո: 1813 թ. հոկտեմբերի 12-ին կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագրով Ան-

[8] «Փորձ», Թիֆլիս, 1877–1878, N 2, էջ 390–391:
[9] Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 162:
[10] Присоединение ..., с. 602.
[11] Кавказский календарь на 1851 год, Тифлис, 1850, отд. III, с. 82.
[12] Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին, Գյումրի, 2005, էջ 145:

[13] Саркисян Г., Население Восточной Армении в XIX–XX вв., Е., 2002, с. 90.
[14] Նույն տեղում:
[15] Մելքոնյան Ա., Երզրում. Երզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ե., 1994, էջ 122: Նույնի՝ Ազգաբնակչության տեղաշարժերը Երզրումի նահանգի Բայազետ, Դիադին և Ալաշկերտ գավառներում 19-րդ դարի առաջին երեսնամյակին, «ԼՀԳ», 1988, N 5, էջ 16:

դըրկովկասի մի մասը, Վրաստանը, Շամշադինը, Ղարաբաղը, Շորագյալը, Լոռին, Ղազախը մտան Ռուսաստանի կազմի մեջ: Ռուսաստանին միանալուց հետո Լոռին, Փամբակը և Բորչալուն կազմում էին մեկ գավառ՝ Բորչալու անունով, որը մտնում էր Թիֆլիսի նահանգի մեջ: Թիֆլիսի նահանգի Բորչալու գավառում (Դեբեդ գետի ավազանի միջին մասը) ապրում էր չուրջ 7190 մարդ (1300 ծուխ՝ 3925 ար., 3265 իգ.), որոնցից հայերը կազմում էին 1110 ընտանիք (3355 ար., 2820 իգ, ընդ.՝ 6175 մարդ կամ գավառի ողջ բնակչության 86 տոկոսը), հույները՝ 115 ընտանիք (345 ար., 270 իգ., ընդ.՝ 615 մարդ կամ 8,5 տոկոսը), թյուրքալեզու էթնիկ խմբերը՝ 75 ընտանիք (225՝ ար., 175՝ իգ., ընդ.՝ 400 մարդ կամ 5,5 տոկոս)[16]:

XIX դարի 20-ական թթ. սկզբներից, կապված՝ պատերազմների ավարտի հետևանքով երկրամասում հաստատված խաղաղության հետ, այս տարածաշրջաններում կրկին գրանցվեց ազգաբնակրության թվի աճ:

1820 թ. ալաշկերտցի գաղթականները (հիմնականում կաթոլիկներ) գաղթելով՝ բնակվել են Շիրակի Ալի-Ղարաքիլիսա, Թափադոլլակ, Քաֆթառլու, Հոռոմ և այլ գյուղերում, որտեղից 1822 թ. վերաբնակվել են Լոռու Շահնազար, Մեծ և Փոքր Ղարաքիլիսա, Շիշթափա և Սարչապետ գյուղերում: Այս, ինչպես նաև հետագայում Լոռի եկած ալաշկերտցիներն ամբողջովին ենթարկվեցին լոռեցիների ազդեցությանը[17]:

1824–1825 թթ. Փամբակի, Շորագյալի և Լոռու գավառներում բնակչության ընդհանուր թիվը, գերազանցելով 1804–1805 թթ. ցուցանիշը (2102 ընտանիք), հասավ մինչև 2150 ընտանիքի[18]:

XIX դ. սկզբի պատերազմների և թուրք-պարսկական տիրապետության պայմաններում Փամբակի և Լոռու գավառներում ավելացավ նաև մահմեդականների թիվը, սակայն 1826–1828 թթ. ռուս-պարսկական և 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների հետևանքով նրանց մեծ մասն արտագաղթեց: 1826–1829 թթ. ընթացքում խիստ տուժեց տարածաշրջանի հայ ազգաբնակչությունը. բնակչության մի մասը լրիվ բնակավայրերը, մյուս մասը սպանվեց կամ գերի ընկավ, սակայն պատերազմներին հաջորդած զանգվածային վերաբնակեցումները համալրեցին Լոռու գավառի հայ բնակչության թիվը՝ պահպանելով էթնոժողովրդագրական նախկին պատկերը և հայ տարրի գերիշխանությունը մյուս ազգությունների նկատմամբ:

1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի և 1829 թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանուպոլսի հաշտության պայմանագրերը իրավունք ընձեռեցին քրիստոնյաներին՝ արտագաղթելու պարսկահպատակ և օսմանահպատակ տարածքներից:

1829 թ. հունվարի 5-ին Կարսի էյալեթի հայերից չուրջ 2464 ընտանիք, 3 փուլով գաղթելով, տեղավորվեցին Փամբակ-Շորագյալի ուղեմասում. նրանցից մի խումբ տեղավորվեց Փամբակի Ղարաքիլիսա գյուղում[19]: Վերաբնակվողների մի մասի խնդրանքի համաձայն՝ նրանց բնակության վայրեր հատկացվեցին Լոռի-Փամբակի գավառում[20]: Մինչ այդ՝ 1810 թ. վերջին և 1811 թ. ընթացքում գաղթած կարսեցիների ու արևմտահայ մյուս վերաբնակիչների մի մասը ևս տեղակայվել էին ինչպես Բորչալուում, այնպես էլ Փամբակում[21]:

1829–1830 թթ. Արևմտյան Հայաստանից դեպի Արևելյան Հայաստան կատարված զանգվածային վերաբնակեցման հե-

[16] **Саркисян Г.**, указ. соч., с. 106.
[17] Народы Кавказа, т. II, М., 1962, с. 441.
[18] Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 144:

[19] **Կարապետյան Մ.**, Եփրեմ Սեթը արևմտահայության 1829–1830 թթ. գաղթի մասին, «ՊԲՀ», 1974, N 2, էջ 292:
[20] **Դարբինյան Մ.**, Արևմտահայերի 1829-1830 թթ. գաղթը Հայկական Մարզ և հարակից շրջաններ, «ՊԲՀ», 1973, N 2, էջ 94, նաև՝ Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг., «ԲՀԱ», 1977, N 3, էջ 8–9:
[21] **Մուրադյան Հ.**, Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ե., 2006, էջ 118:

տևանքով տեղի ունեցավ բնակչության թվի կտրուկ աճ: Վերաբնակիչները հաստատվում էին ավերված և լքված գյուղերում՝ վերականգնելով և նոր չունչ տալով դրանց: Լոռի եկած արևմտահայերը հիմնականում բնակություն հաստատեցին գավառի արևմտյան մասում:

Ռուս-թուրքական սահմանն անցնելուց հետո, բայպետցիների բավական մեծ մի զանգված, Հայկական մարզում հաստատվելու փոխարեն նախընտրել է տեղավորվել Լոռի-Փամբակի և Շորագյալի գավառներում[22]:

Բուն Լոռու տարածքում եղել են նաև օտար, եկվոր էթնիկ բնակչությամբ գյուղեր: Երբ Կարսից արտագաղթում և Փամբակի ու Շիրակի ուղեմասերում մշտական բնակություն է հաստատում 2264 հայ ընտանիք, նրանց հետ գալիս է նաև 600 հույն ընտանիք[23]: Գերմանացիները գաղթել են 1818 թ.՝ Վյուտեմբերգյան թագավորությունից՝ հիմնելով Եկատերինենֆելդ՝ (Թբիլիսիից 60 կմ հեռու՝ Բորչալուի մոտ)[24], իսկ ավելի ուշ՝ 1857 թ., Ալեքսանդրսհիլֆս գաղութները: Հայ բոշաները էրզրումի գաղթականներ են, վերաբնակվել են տարբեր գյուղերում:

XIX դ. սկզբից, երբ Արևելյան Հայաստանի գրեթե կեսը (Արևելյան Շիրակ, Լոռի, Փամբակ, Տավուշ, Զանգեզուր) մտել էին Ռուսաստանի կազմի մեջ, ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ բնակչության ընդհանուր հաշվառմանը, կամ՝ կամերալ ցուցակագրմանը: Այն սկսվեց 1828 թ. և ավարտվեց 1834 թ.: Հայաստանի հյուսիսային շրջանները, այդ թվում՝ Փամբակ-Շորագյալը, հաշվառվել են 1829 թ.: Ըստ այդմ՝ Ղազախի, Բորչալուի և Փամբակ-Շորագյալի ուղեմասերի բնակչությունը միասին վերցրած կազմում էր 48022 մարդ, որոնցից 24343 հայեր էին[25]:

1829–1832 թթ. կամերալ ցուցակագրման տվյալների հիման վրա կազմված պաշտոնական վիճակագրության համաձայն՝ ներգաղթերից հետո Փամբակ-Շորագյալի ուղեմասի (ստեղծվել էր 1805 թ., Վրաստանի կազմում՝ արդեն Ռուսաստանին միացած Լոռու, Փամբակի և Շորագյալի միավորմամբ) բնակիչները բաժանվում են տեղաբնակների և վերաբնակիչների. վերջիններները 1829–1830 թթ. ռուսական տիրապետության տակ անցածներն էին:

Ըստ այդմ՝ ուղեմասում հաշվվում էին տեղաբնակները՝ 1536 ընտանիք (5425 մարդ) և վերաբնակիչներ՝ 3148 ընտանիք (10575 մարդ), ընդամենը՝ 4684 ընտանիք (16 000 մարդ՝ ար. սեռի): Բացի այդ՝ 214 ընտանիք (620 մարդ) հոգևորականներ, 3 ընտանիք (20 մարդ) մելիքներ: Փաստորեն՝ ներգաղթերից հետո ապրում էր 4901 ընտանիք կամ 16641 մարդ[26]: Ընդհանուր թվով՝ ազգաբնակչությունը կազմում էին հույները՝ 169, հայ առաքելականները՝ 14963, հայ կաթոլիկները՝ 963, մահմեդականները՝ 546 մարդ[27]:

Մինչև 1828–1829 թթ. գաղթերը նշված տարածքների ազգաբնակչության մեծամասնությունը կազմել են հայերը, թվաքանակով երկրորդ տեղում էին թուրքերը, երրորդում՝ վրացիները: Վերջիններս ողջ բնակչության 10 տոկոսից պակաս են եղել:

Լոռիում հաստատված հայերը հիմնականում եկել էին Ղարաբաղից, Շամշադինից, Ալաշկերտից, Կարինից, Փամբակից, Ղազախից: Ղարաբաղի գաղթականները գլխավորապես տեղավորվել են Բոլնիս-Խաչենում, Դաղեթ-Խաչենում[28], մասամբ՝ Շնողում, Օձունում, Դսեղում, Շահալիում և այլուր: Օձուն, Շնող և Շահալի գաղթած փոքրաթիվ ղարաբաղցիները ենթարկվել են բնիկների ազդեցությանը՝ կորցնելով սովորույթային և

[22] Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 100:
[23] Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Ե., 1979, էջ 29:
[24] **Яскорский А., Яскорский Р.,** Штабы Причерноморья и Кавказа, Е., 2003, с. 117.

[25] Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831–1931 թթ.), Ե., 1932, էջ XXVII:
[26] Обозрение российских владений за Кавказом, СПб., 1836, ч. 2, с. 303–304.
[27] Նույն տեղում:
[28] Մաղալյան Վ., Դաղեթ-Խաչեն, Ե., 1999, էջ 78:

բարբառային առանձնահատկությունները[29]: Լոռի էին գաղթել հիմնականում Գյուլիստան և Վարանդա գավառների բնակիչները, այսինքն՝ Մելիք-Բեգլարյանների և Մելիք-Շահնազարյանների հպատակները: Իսկ Ախչեղի և Դիզակի հայերը մասամբ մնացին իրենց տեղերում, մասամբ էլ՝ գաղթեցին այլ վայրեր. նրանցից շատերը տեղափոխվեցին Վրաստան, խառնվեցին վերահիշյալ երկու մելիքների հպատակների հետ[30]:

XIX դ. 30-ական թվականներին ցարական Ռուսաստանն իր դիրքերը ծայրամասային գավառներում ամրապնդելու նպատակով գործի է դնում Հայաստանի ռազմավարական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհների երկայնքով ռուսներ բնակեցնելու ծրագիրը[31]: Լոռին կապող օղակ էր Հայաստանի մնացած գավառների ու Ռուսաստանի միջև, ուստի մեծ թվով ռուսներ բնակեցվեցին հենց Տաշիր-Լոռիում՝ հիմնելով ռուսական գյուղեր:

Այսպիսով, շուրջ քառորդ դար տևած գաղթի շնորհիվ Լոռու գավառի ազգաբնակչությունն զգալի համալրում ստացավ: Ռազմական նախորդ գործողությունների հետևանքով բնակավայրերը լքած շատ լոռեցիներ վերադարձան իրենց հայրենի բնակավայրերը: XIX դ. դարի 30-ական թթ. Փամբակում գրանցվեց ազգաբնակչության թվաքանակի աճ: 1831 թ. Լոռու տարածքն ուներ 10636 բնակիչ, որոնցից՝ հայեր՝ 85,3 %, շիա թուրքեր (թաթարներ)՝ 11,2 %, հույներ՝ 3,5 %[32]:

Ամփոփելով, պետք է նշել մի կարևորագույն հատկանիշ, որ Լոռու գյուղերը, մինչև ներգաղթերը լինելով լիովին հայաբնակ, դրանից հետո ևս համլրվելով բացառապես հայ բնակչությամբ, պահպանեցին իրենց թվական գերակշռությունը և հայկական էթնո-ժողովրդագրական նկարագիրը նաև հետագայում:

[29] Լալայեան Ե., Բորչալուի գաւառ, Թիֆլիս, ա. թ., էջ 6:
[30] Մաղալյան Վ., նշվ. աշխ., էջ 67:
[31] Обзор переселенческого дела на Кавказе, СПб., 1913, с. 2–6.
[32] Մանասյան Ս., Գրիգորյան Ա., Եղյան Գ., Լոռու մարզ. բնությունը, բնակչությունը, տնտեսությունը, Ե., 2003, էջ 82:

АСМИК АМИРДЖАНЯН
ИИ НАН РА

ЭТНИЧЕСКИЙ ОБЛИК ЛОРИСКОЙ ОБЛАСТИ В КОНЦЕ XVIII – В ПЕРВОМ ТРИДЦАТИЛЕТИИ XIX ВВ.

РЕЗЮМЕ

Армянское население Лори всегда являлось большинством. В результате переселения греков и турок в конце XVIII века в Лори национально-этнический состав населения региона хотя значительно изменился, но армяне по-прежнему составляли большинство. На втором месте оказались турки, а на третьем—грузины (последние составляли менее 5 % от общего числа населения региона).

По указу царя Павла I от 18 января 1801 г. Картли-Кахет был присоединен к России. Некоторые области Северной Армении, в том числе Лори, в составе Восточной Грузии примкнули к Российской империи.

После присоединения Восточной Армении к России, царизм начал внедрять свои административные деления. Эти изменения охватили и область Лори. В этот период Лори был в центре внимания русского командования, так как для защиты новых завоеванных земель царское правительство нуждалось в надежном населении. Правительство стремилось заселить эти новые территории (в частности, Лорийскую область) благонадежным для себя населением.

После русско-турецкой войны 1828—1829 гг. множество армянских семеств из областей Западной Армении переселилось в Лори.

В результате этих переселений численность населения Лорийской области возросла за счет армян. Лорийская область осталась армянонаселенным регионом.

ԳԱՑԱՆԵ ՇԱԽԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԵՐՄԱՆ ԱԲԻԽԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

XIX դարի առաջին կեսին օտարազգի բազմաթիվ գիտնականներ հետազոտություններ կատարելու նպատակով այցելել են Հայաստան: Նրանց թվում գերմանացի հայտնի գիտնականներ Աուգուստ ֆոն Հաքստհաուզենը, Ֆրիդրիխ Բոդենշտեդտը, Մորից Վագները, Կարլ Ռոխը, Ֆրիդրիխ Պարրոտը, Հերման Աբիխը և ուրիշներ: Դեպի Հայաստան նրանց կատարած այցելությունների հիմնական նպատակը եղել է Արարատի ուսումնասիրությունը: Սույն հոդվածի շրջանակներում անդրադարձել ենք Հերման Աբիխի այն աշխատություններին, որոնցում Աբիխը ներկայացնում է իր այցելած հայկական վայրերը: Նա իր կյանքի քսաներեք տարիները նվիրել է Հայաստանի երկրաբանության ուսումնասիրությանը:

Հերման Աբիխը ծնվել է 1906 թ. դեկտեմբերի 11-ին՝ Բեռլինում: Հայրենի քաղաքում է ստացել նաև համալսարանական ուսում՝ աշակերտելով ժամանակի հռչակավոր գիտնականներ Ալեքսանդր Ֆոն Հումբոլդին, Կարլ Ռիտերին և Լեոպոլդ Ֆոն Բոխին: Նրանցից է ստացել նաև իր բուռն սերը դեպի երկրաբանությունը: Համալսարանը ավարտելուց հետո Հերման Աբիխը մեկնում է Իտալիա՝ այդ երկրի հրաբուխներն ուսումնասիրելու նպատակով: 1833–1834 թթ. հետազոտական աշխատանքների արդյունքում նա հրատարակում է երկու գիտական ուսումնասիրություններ, որոնցից մեկը ֆրանսերեն (1836 թ.), իսկ մյուսը գերմաներեն (1841 թ.) լեզուներով: 1842 թ. Հերման Աբիխին հրավիրում են Դորպատի համալսարան՝ որպես հանքաբանության և երկրաբանության դասախոս: 1843 թ. օգոստոսին նա համալսարանում գիտաժողովի ժամանակ կարդում է հրապարակային դասախոսություն՝ «Հայկական բարձրավանդակի երկրաբանական ընույթը» թեմայով: Գիտական իր ելույթի ժամանակ Աբիխը հայտարարում է, որ կայսեր հրամանով ինքը հաջորդ տարի՝ 1844 թ. սկզբին, 9–10 ամսով հետազոտական ճամփորդություն է ձեռնարկելու դեպի Անդրկովկաս և Հայաստան՝ նպատակ ունենալով ուսումնասիրել Արարատն ու Արագածը: Դեպի Կովկաս և Հայաստան ճամփորդությունը (1844 թ.) վճռական նշանակություն է ունենում Աբիխի կյանքում: Երկրաբանական տեսանկյունից Հայաստանը հետազոտելու միտքը այնքան էր գրավել երիտասարդ գիտնականին, որ նա ոչ թե 9–10 ամիս է մնում այնտեղ, այլ 10 տարի (1844–1853 թթ.): 1853 թ. Աբիխը ընտրվում է Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Նա նույն տարում մեկնում է Պետերբուրգ, որտեղ և բնակություն է հաստատում ու ամուսնանում (1855 թ.): 1858 թ. աշնանը Աբիխը ընդունում է Կովկասի կառավարության առաջարկը և երկրաբանական հետազոտություններ կատարելու նպատակով՝ մեկ տարով մեկնում Թիֆլիս: Երկրորդ այցելության ժամանակ նա Կովկասում մնում է ոչ թե մեկ, այլ տասնութ տարի (1858–1876 թթ.): Այսպիսով, Աբիխը ոչ պակաս քան քսաներեք տարի անցկացնում է Կովկասում և Հայաստանում: Նա այցելում է նաև Արևմտյան Հայաստան և Ատրպատական: Գիտնականի ուսումնասիրությունների առանցքը կազմում է Հայաստանի երկրաբանությունը:

1844 թ. Աբիխի դեպի Հայաստան առաջին ճամփորդության համար խթան են հանդիսացել հատկապես 1840 թ. Արարատի շուրջը տեղի ունեցած սոսկալի երկրաշարժը, Ակոռի գյուղի կործանումը: Երկու անհաջող փորձերից հետո (1844 թ.), նրան երրորդ անգամ հաջողվում է բարձրանալ Արարատի գագաթը (1845 թ. հուլիսի 29):

Անհաջողությամբ ավարտված առաջին երեք փորձերի ժամանակ մասնակցել և արշավախմբին իր ծառայություններն է մատուցել Խ. Աբովյանը: Աբովյանը Աբիխից առաջ ուղեկցել և թարգմանություն էր կատարել նաև Պարրոտի, Ռոխի, Վագների,

Հաքստհաուզենի և Բոդենշտեդտի ճանապարհորդությունների ժամանակ: 1876 թ.՝ 70 տարեկան հասակում, Աբիխը տեղափոխվում է Վիեննա և բնակություն հաստատում այստեղ, որպեսզի իր բազմամյա հետազոտությունների արդյունքները վերամշակի, ամբողջացնի և համակարգի: Նա ապրում է ևս 10 տարի և մահանում է 1886 թ. հուլիսի 1-ին՝ 80 տարեկան հասակում: Աբիխի մահով, դժբախտաբար, անավարտ է մնում իր գլուխգործոցը՝ «Հայաստանի երկրաբանությունը» մենագրությունը: Բայց, այնուամենայնիվ, այդ ստեղծագործության լույս տեսած առաջին մասերը՝ հեղինակի մեկնաբանությունները նույն նյութի մասին, բավական են, որ նա առանձնահատուկ տեղ գրավի Կովկասի և առանձնապես Հայաստանի երկրաբանությունը հետազոտողների շարքում[1]: Եվ առհասարակ, Աբիխը հանդիսանում է XIX դարի գերմանացի հայտնի երկրաբաններից մեկը:

Նա, իր կյանքի 28 տարիները անցկացնելով Կովկասում ու հատկապես Հայաստանում, հասցրել է բավականաչափ լավ ծանոթանալ Կովկասին, նրա տարածքներին, ժողովուրդներին: Աբիխը, գտնվելով Հայաստանում, շրջել է Արևելյան և Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր տարածքներով՝ հիմնականում կատարելով երկրաբանական և օդերևութաբանական չափումներ և հետազոտություններ: Նրան հատկապես հետաքրքրում էին հրաբխածին լեռները, Հայաստանում տարածված քարատեսակներն ու երկրաշարժերի դրդապատճառները, որոնց ուսումնասիրությանն ու հետազոտությանը նա բավականին երկար ժամանակ է հատկացրել, և մի առանձին գլուխ «Geologie des Armenischen Hochlandes» (Հայկական բարձրավանդակի երկրաբանություն) աշխատության մեջ նվիրված է հենց այդ հետազոտությունների արդյունքներին[2]:

[1] **Abich H.,** Aus Kaukasischen Ländern, Reisebriefe, Wien, 1896, Band II, Seite 45.
[2] **Abich H.,** Geologie des Armenischen Hochlandes, Wien, 1882.

Աբիխը, բավականաչափ ծանոթ լինելով հայ ժողովրդին և հայկական լեռնաշխարհին, իր ուրույն կարծիքն է արտահայտել հայ ժողովրդի, հայ գեղջուկի, հայուհու կերպարի վերաբերյալ: Այս տվյալները մենք իմանում ենք Աբիխի՝ իր կնոջը, քույրերին և մորը գրած նամակներից: Նա հայասեր էր և բարձր էր գնահատում հայ ժողովրդին՝ հաշվի առնելով հատկապես նրա հյուրընկալությունը: Աբիխն իր աշխատությունների մեջ ներկայացրել է Հայկական լեռնաշխարհի առանձին տարածքներ, որոնք ուսումնասիրել է աշխարհագրական և երկրաբանական տեսանկյուններից: Հայ ժողովրդին վերաբերող տեղեկությունները նա մեծ մասամբ ներկայացրել է իր այն նամակներում, որոնք ուղարկել է իր հարազատներին՝ ցանկանալով նկարագրել այն մարդկանց, ովքեր այդքան տարիներ շրջապատել են իրեն: Տարիների ընթացքում Աբիխն ավելի մոտիկից է ուսումնասիրում հայերին և Հայաստանը, և ավելի է խորանում նրա համակրանքը այդ երկրի ու այնտեղ ապրող ժողովրդի հանդեպ:

Նրա նամակներում հաճախ կարելի է հանդիպել հետևյալ խոսքին. «Das wunderbare Armenische Volk»,– (Հայոց զարմանահրաշ ժողովուրդը)[3]: Նա 1849 թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսից գրած իր նամակում այսպես է արտահայտվում հայ ժողովրդի վերաբերյալ. «Ինչպես հնում, հայ ժողովուրդը այժմ էլ շարունակում է պահպանել բնությունից իրեն տրված գերադասությունը՝ Արևելքի մնացած ժողովուրդների հանդեպ»[4]:

1845 թ. մարտի 14-ի նամակում նա գրում է. «Հայերը կազմում են Թիֆլիսի բնակչության կեսից ավելին և, անկասկած, նրանք իրենց ազգային նկարագրով ավելի բարձր են, քան տեղի վրացիները»[5]:

Նա հայուհու կերպարը հատկապես ներքոհեն է ներկայացնում իր մի նամակում, որը գրել էր Վրաստանի Քութայիս քա-

[3] Abich H., Aus Kaukasischen Ländern, Reisebriefe, Wien, 1882, Band I, Seite 122.
[4] Նույն տեղում, էջ 454:
[5] Նույն տեղում, էջ 216:

զաքից 1846 թ. հուլիսի 26-ին: Այստեղ կարդում ենք. «Ես տեսել եմ հրաշագեղ հայուհիներ, նրանք սքանչելի են: Նրանց գեղեցկությունն ավելի քնքուշ է և ավելի գրավիչ, քան վրացի կանանցը, թեև նրանք մի փոքր նման են միմյանց: Հայուհիներն ունեն արտակարգ նուրբ դիմագծեր, հրաշալի գեղեցիկ աչքեր և վերին աստիճանի նուրբ մաշկ»[6]:

Աբիխը հատկապես բարձր է գնահատել հայերի հյուրասիրությունը: Նա նշում է, որ ցանկացած հայ մարդ այդ ամենը կատարում է անշահախնդիր և առանց ակնկալիքի: Աբիխը զարմացած էր այն փաստից, որ նշանակություն չուներ գյուղապետ է, թե հասարակ գյուղացի, միևնույն է նրանք գիտեն հյուրասիրել և ամենուր այդպես է: Աբիխը հիացած էր հայ գյուղացու բնական խելքով և առողջ մտածողությամբ: Նա պարբերաբար շփվում էր հայ գյուղացիների հետ և այնքան գոհ էր մնում նրանց առողջ դատողությունից, որ այդ հատկանիշով հայ գյուղացուն ավելի բարձր էր դասում, քան գերմանացի գյուղացուն: Նա գրում է, որ հայ ժողովուրդն ունի բարձր զարգացած հոգեկան կարողություն՝ չնայած տարրական կրթության պակասին, իսկ բարոյական զգացումը կազմում է նրա բարոյական ժառանգությունը: «Ժամանակի վայրիվերումների միջով անցած ու անաղարտ մնացած ղրղզն է, որն իր մեջ արտացոլում է հին ու սրբազան, հոգեկան ամուր ազնվականությունը, մի ղրղզ,– գրում է Աբիխը,– որ իր վրա է կրում այս զարմանալի ժողովուրդը, որով և նա ավելի բարձր է կանգնած, քան շրջապատի որևէ մի ուրիշ ժողովուրդ: Այս մարդիկ զգում են այն իրենց հոգում, առանց տեղյակ լինելու սեփական ազգի անցյալին, որ իրենց նախնիները հերոս են եղել և ի ծնե կոչված են եղել իշխելու: Իրենց կարծիքով՝ աշխարհը պետք է, որ իրենց պատկաներ: Նրանք դեռևս սպասում են այն մարգարեին՝ իրենց

[6] Նույն տեղում, էջ 360:

ներսում հավատալով, որ մի օր իրենց կվերադարձնեն իրենց հայրերի ժառանգությունը»[7]:

Աբիխի համար հիացմունքի առարկա է նաև Հայաստան աշխարհը՝ հայ ազգի պատմական հայրենիքը՝ իր հրաշագեղ բնությամբ և քաղաքակրթական անցյալով: Նա իր գրեթե բոլոր նամակներում նման կերպ է բնութագրում Հայաստանը. «Փառավոր երկիր Հայաստան»[8], «գեղեցիկ Հայաստան», «հայոց սիրուն, զարմանահրաշ աշխարհը»[9]: Նա առանձնահատուկ հոգևոր կապով էր կապված Հայաստան աշխարհի հետ: Դա մենք նկատում ենք իր նամակներից մեկում կարդալով հետևյալ տողերը. «Զարմանալի մի ուժ ինձ հետ է կանչում դեպի այնտեղ, կրկին մի անգամ՝ դեպի հրաշքների այդ երկիրը»[10]:

Զարմանալի չէ, ուրեմն, որ հեռավոր Դորպատից կարճ ժամանակով Հայաստան եկած գիտնականն ինքն իրեն շուտով սերտորեն կապված է զգում այդ երկրի հետ և այստեղ ավելի երկար մնալու, ավելի լայն ու բազմակողմանի հետազոտություններ կատարելու պահանջ է զգում: Նա շուտով ձեռնամուխ է լինում տեսական ուսումնասիրություններին զուգընթաց նաև գործնական, ճարտարապետական և արվեստի տարբեր գործերի համար առանձին ձեռնարկներ ստեղծելու գործին: Նա հատկապես հետաքրքրված էր Հայաստանում գոյություն ունեցող լեռնահանքերով և օգտակար հանածոներով: 1849 թ. նոյեմբերի 23-ի նամակում Աբիխը գրում է. «Հայաստանի լեռնահանքերում հանդիպող մետաղական հարստությունները պետք է, որ շուտով հոսուն կերպարանք ընդունեն ի օգուտ մարդկության»[11]:

Հայաստանը հարուստ է ոչ միայն լեռնահանքերով, գեղեցիկ է ոչ միայն չքնաղ տեսարաններով, այլև այն այդպիսին է

[7] Նույն տեղում, էջ 85:
[8] Նույն տեղում, էջ 141:
[9] Նույն տեղում, էջ154–212:
[10] Նույն տեղում, էջ 212:
[11] Նույն տեղում, էջ 454:

նաև աշխատասեր հայ գյուղացու ձեռքի ստեղծագործություններով, նամանավանդ փարթամ այգիներով: Եվ Աբիխը Հայաստանը համեմատում էր Շվեյցարիայի և Իտալիայի հետ: Նա հատկապես հիանում էր հայկական մրգերի համով, հոտով, տեսակների բազմազանությամբ և գույներով: 1844 թ. սեպտեմբերի 9-ին Երևանից գրած իր նամակում կարդում ենք. «Դեղձ, ընտիր-ընտիր տանձեր, ինչպիսիք ես մեկ ուրիշ տեղ չեմ տեսել»[12]:

Աբիխը, երկար տարիներ ապրելով Հայաստանում, հատուկ ուշադրությամբ է ուսումնասիրել հայկական արվեստն ու ճարտարապետությունը: Յուրաքանչյուր անգամ այցելելով Հայաստանի տեսարժան վայրերը՝ նա միշտ հիացմունքով և բարձր ակնածանքով է իր հուշերում ու նամակներում գրում հայկական ճարտարապետության չքնաղագեղ կոթողների մասին: Հայ ժողովուրդն իր հայրենի հողի վրա բարձրացրել է անթիվ կոթողներ, որոնք ամեն քայլափոխի հիացմունք էին պատճառում օտարական ուղևորին: Նրան հատկապես գրավում է Անին՝ իր ավերված, բայց յուրահատուկ ճարտարապետական կոթողներով: Աբիխը մի քանի անգամ այցելել է այնտեղ՝ տարատեսակ հետազոտություններ և գծագրություններ կատարելու նպատակով: 1844 թ. նոյեմբերի 10-ին Երևանից գրած իր նամակում կարդում ենք. «Ամբողջ չորս օր ես Անիում էի՝ Բագրատունիների մայրաքաղաքում: Թեև 600 տարի չարունակ այն ենթարկվել է մարդկանց և բնական տարերքների ավերիչ ազդեցություններին, բայց և այնպես որոշ չափով լավ են պահպանվել Արևելքի այդ զարմանալի պետության ծաղկած օրերից մնացած հուշարձանները: Անվիճելիորեն, երկրի պատմության ամենանշանավոր աղբյուրների թվին են պատկանում դրանք թե՛ իրենց ճարտարապետությամբ և թե՛ իրենց անհամար արձանագրություննե-

[12] Նույն տեղում, էջ 143:

րով: Ինձ հաջողվեց նկարել ամբողջ քաղաքը, գծագրել ամենապլխավոր շենքերի հատակագծերը»[13]:

Նրա նամակներից տեղեկանում ենք նաև, որ Աբիխը պատրաստել է մի շարք ուրիշ գծագրություններ ևս Անիի ավերակներից, կատարել է նաև երկրաբանական հետազոտություններ Անիի շրջակայքում: Այդ նպատակով նա շրջագայություններ է կատարել Ախուրյանի եզերքով մինչև Արաքս: «Վեց-յոթ ժամ տևող այդ ճանապարհի վրա ամեն ինչ պատված էր ավերակներով: Այստեղ կողք-կողքի գտնվում են հին Հայաստանի նշանավոր մայրաքաղաքները»[14]:

Բագարանը, Երվանդաշատը, Անին, Թալինը, Ղոչավանքը (Հռոմոսի վանք), իր հեռավոր և մոտակա հնություններով անվերջ հետաքրքրության առարկա են եղել Աբիխի համար: Նա իր նամակներում ներկայացնում է մի քանի մանր գծագրություններ՝ Անիի Մայր տաճարը, քաղաքի և եկեղեցիների հատակագծերը, անգամ փոքրիկ գծագրություններ՝ «բաց կարմիր տուֆ» բարի, որով կառուցված են Անին և առհասարակ Հայաստանի ճարտարապետության շատ ու շատ կոթողներ: Իր նամակներից մեկում նա գրում է. «Ինչ վերաբերվում է քաղաքի պարիսպներին, իրենց մեծությամբ և հզորությամբ նրանք ոչ միայն հետ չեն մնում հին Հռոմից, այլև մինչև իսկ գերազանցում են Հռոմին»[15]: «Դժվար է բառերով արտահայտել այն հոյակապ տպավորությունը, որ մարդ կարող է ստանալ այս ժայռակոդուզ դեպի Ախուրյանի հովիտը և շրջակայքը բացվող տեսարանից, որոնցից յուրաքանչյուրի վրա բարձրանում են միջնաբերդի ու հին քաղաքի աշտարակները»,– գրում է Աբիխը[16]:

Աբիխը պատճենահանում է նաև վիմական արձանագրությունները: Իր նամակներից մեկում գրում է . «Իմ կատարած

[13] Նույն տեղում, էջ 162:
[14] Նույն տեղում, էջ 166:
[15] Նույն տեղում, էջ 188:
[16] Նույն տեղում, էջ 192:

հետազոտությունները Անիում կարող են մեծ օգուտ բերել Հայաստանի պատմության ուսումնասիրությանը: Եվ հենց այդ աշխատանքների համար միայն արժեր ճամփորդել այդ կողմերը»[17]:

Աբիխը հայկական արվեստի այդ հուշարձանների մասին կատարյալ հիացմունքով է արտահայտվում. «Անին կազմում է խոշորագույն աստղ Հայաստանի մյուս քաղաքների երկնակամարի վրա: Նա պայծառ ու դյութիչ կերպով փայլ է տվել բարբարոս ժամանակների խավարի միջով»[18]: Անիի պատմական հուշարձանների թվում Աբիխն ամենաուշագրավը համարում է Կաթողիկե Մայր տաճարը, որ «իր վրա կրում է մեծ հանճարի դրոշմը»: Նա չի մոռանում հիշել նաև արվեստի մյուս կոթողները:

Անիից բացի Աբիխն այցելել և հետազոտություններ է կատարել նաև Հայաստանի մյուս մարզերում: 1848 թ. սեպտեմբերի 20-ին Երևանից իր ծնողներին ուղարկած նամակում Աբիխը գրում է. «Դուք պետք է տեսնեք Հաղպատը, Սանահինը, Ղըփչախը (Հառիճ), Հովհաննեսի վանքը, Սաղմոսավանքը: Դուք պետք է տեսնեք Ղոշավանքը և Կարմիր վանքը և այն ժամանակ ինձ հետ միասին դուք ևս պիտի ճանաչեք և սիրեք այն ոգին, որ հին ժամանակ ճախրել է Հայաստանի վրա՝ արվեստի մարգերի վրայով, մինչև իսկ պատերազմների և անընդհատ տեղի ունեցող խռովությունների ժամանակ»[19]:

Նա իր նամակներում պատմում է Գեղարդի մասին, ուր Աբիխն առաջին անգամ այցելել է Աբովյանի հետ միասին Հայաստան հասնելու առաջին օրերին՝ 1844 թ. մայիսին: Նա հիացած էր Գառնու տաճարով, որն այսպես է բնութագրել. «Ինչ տեսարան: Ոճի ինչ մաքրություն, ինչպիսի վայելուչ գեղեցկություն և միաժամանակ ինչպիսի հոյակապ վսեմություն կա այս սյունազարդ խոյակների, վերնախոյակների և առաստաղային կառուցվածքների մեջ: Բոլորը պինդ են կառուցված հենց ուն

[17] Նույն տեղում, էջ 208, 260, 261:
[18] Նույն տեղում, էջ 242:
[19] Նույն տեղում, էջ 408:

հրաբխային քարից, նուրբ ծակոտկինեներով, արևի տակ փայլող: Նայողին թվում է, թե նոր է կառուցված»[20]:

Աբիխը Գառնի, Գեղարդ այցելել է երեք անգամ և յուրաքանչյուր անգամ իր հուշերում առանձնահատուկ հիացմունքով է պատկերել ճարտարապետական այդ գլուխգործոցները:

«Ինչքան գեղեցիկ ու նկարչական է թվում այստեղ ամեն ինչ. պատկառազդու, հնօրյա, ծածկված խորհրդավոր նշաններով և արձանագրություններով: Եվ միևնույն ժամանակ ձևի ինչ գեղեցկություն: Դրանք հիշեցնում են բյուզանդական ոճը, բայց և զուտ եկեղեցական են: Մեզ մոտ էլ պետք է այդպես կառուցեին, և մեր եկեղեցիները բոլորովին այլ տեսք կունենային, քան թե այսպես կոչված նորաձև եկեղեցիները: Շատ, շատ բան կուզեի ես ձեզ պատմել իսկապես վիպական ու գեղեցիկ այս հոյակապ վայրից՝ Գեղարդի չրջակայքի այս վայրի և հուժկու, բայց միևնույն ժամանակ իր ներքին կյանքի խորքերը մերկացնող բնությունից»,— գրում է Աբիխը[21]:

Աբիխն այցելել է նաև Ծաղկաձոր (Դարաչիչակ): 1844 թ. սեպտեմբերի 9-ին նրա գրած նամակում կարդում ենք. «Իսկական դրախտը, բուսական աշխարհի մի սրբավայր, որի նմանը ես, առանց չափազանցության, չեմ տեսել և ոչ մի տեղ: Ծաղկափթիթ հովիտների մեջ կաղնու չքնաղ անտառներ, հրաշալի ող, գեղեցիկ տեսարաններ, որսի կենդանիներ ու թռչուններ, որքան կուզեք: Կարծես դրախտ լինի»[22]:

«Բայց ավելին, Հայաստանի այդ մասում իմ տեսած վանքերի ավերակները արտացոլում են հին հայկական, հաճախ նաև հին իտալական ճարտարապետության ոճը՝ թափանցելով մինչև արդի, պրոզաիկ ժամանակները: Իմիջայլոց, այստեղ նկատեցի մի գավիթ զուտ հայկական ճարտարապետությունն իր մեջ ար-

[20] Նույն տեղում, էջ 83:
[21] Նույն տեղում, էջ 84–86:
[22] Նույն տեղում, էջ 140–141:

տացոլող մի չենք, որ մեծ, հսկայական լինելով՝ փառահեղ է և մեծաշուք, թողնում է խիստ հաճելի տպավորություն»[23]:

Գեղարդից և Ծաղկաձորից ոչ շատ հեռու գտնվում է Սևանը: Առաջին անգամ Աբիխը Սևանը տեսել է Թիֆլիսից Երևան գալիս, այցելել է կղզին և վանքը: Նա Սևանի շրջակայքում նաև երկարատև հետազոտություն է կատարել:

1845 թ. հոկտեմբերի 8–20-ը Աբիխն անց է կացրել Այուդյաց աշխարհում: Նա հատկապես բարձր է գնահատել չքնաղագեղ Տաթևի վանքը՝ որպես ճարտարապետական գլուխգործոց: Մորը գրած նամակում այսպես է արտահայտվել. «Թե՛ իր արժեքով որպես հին հայոց պատմական հուշարձան և թե՛ իր դիրքով Տաթևը պատկանում է Հայաստանում իմ այցելած ամենանշանավոր վանքերի թվին: Ուստի մեծ եղավ իմ ցավը, որ չկարողացա այդտեղից ավելին տեսնել, քան վանքի արտաքին տեսքը»[24]:

Աբիխն այցելել է Հայաստանի պատմական այլ վայրեր նույնպես. Թալին, Արտաշատ, Խոր Վիրապ, Հին Ջուղա, Էջմիածին և այլուր:

1844 թ. մայիսի 29-ի նամակում գրում է. «Էջմիածինը՝ իր գեղեցիկ շենքով և պարապատառ ու ընդարձակ կառուցվածքներով, հայտնի այդ հինավուրց պատկառելի վանքն առաջին վայրն էր, որ մենք այցելեցինք մի գեղեցիկ երեկո՝ Երևանը թողնելուց հետո: Իմ գալատյան լուրը վաղուց արդեն Էջմիածին էր հասել: Ջորս շաբաթ շարունակ նրանք սպասել էին ինձ: Ներսես կաթողիկոսը, որին ես ներկայացել էի Պետերբուրգում, հանձնարարական նամակ էր գրել իմ մասին, այդ պատճառով և փառավոր ընդունելության արժանացա Էջմիածնում»[25]:

Հայաստանի որոշ վայրեր Աբիխը գնացել է Աբովյանի ուղեկցությամբ: Նրանք գնացել էին Աբովյանի ծննդավայրը՝ Քանաքեռ: Նա զրուցել էր Աբովյանի հարազատների հետ և

[23] Նույն տեղում, էջ 547:
[24] Նույն տեղում, էջ 257:
[25] Նույն տեղում, էջ 75–76:

վառ տպավորություններ ստացել: Նա այսպես է նկարագրել այդ ճամփորդությունը. «առաջ էինք շարժվում դեպի Քանաքեռ՝ Աբովյանի ծննդավայրը: Սա գտնվում է հրաբխային աշխարհի հրաշագեղ լանջին, որ գոյացել է լավաններից: Գյուղն ունի ջինջ, ազատ, առողջարար օդ: Այն գտնվում է Զանգուի մի ադմկահույզ վտակի ափին, որը գալիս է «Քառասնանակ (40 ակունքներ)» կոչվող հրաբխային սարից և շրջապատում է հայկական հին գերդաստանների այն բնակավայրը, որտեղ վարում են նահապետական կյանք: Մի պսակ՝ ծաղկափթիթ գեղեցկության այգիների, որ արտադրում են սիցիլիական, միանգամայն նաև երևանյան գինու ամենալավ տեսակները»[26]:

1844 թ. մայիսի 29-ի նամակում Աբիխը գրում է. «Աբովյանի հետ միասին ես եղա Քանաքեռում՝ Երևանից 7 վերստ հեռավորության վրա գտնվող այդ գովասուն, բարձրադիր գյուղում: Այստեղ երկու եկեղեցի կա, թեև զարձյալ հին, բայց լավ պահպանված: Ունեն գեղեցիկ ճարտարապետական ոճ, մանավանդ նրանցից մեկը, որի դուռը յուրահատուկ ձևով է պատրաստված և պարզարված է հին հայկական միջնադարյան ոճով»[27]:

Քանաքեռի վրայով նրանք հասնում են Երևան, որի տները միանգամայն ասիական ճարտարապետության տեսք ունեն՝ չրջապատված փարթամ այգիներով: Նրանց Երևանում դիմավորում են Աբովյանի աշակերտները: Նա այսպես է նկարագրում Երևանը. «Պարսկական դռներ ունեցող այգիների մեջ ընկած մի երկայն փողոց շարունակ դեպի վար էր տանում ճամփան: Վերջապես հասանք մի ընդարձակ, ազատ հրապարակ: Աջ կողմում Սարդարի բերդն էր՝ իր բարձր պարիսպներով և աշտարակներով, անմիջապես այն կողմը՝ Արարատը, ձախ կողմը, մեջտեղում, դեպին տեսքով միահարկ մի տուն՝ երեք թևերով, բոլորովին եվրո-

[26] Նույն տեղում, էջ 523:
[27] Նույն տեղում, էջ 152:

պական ձևով և միակն իր տեսակի մեջ Երևանում: Այստեղ էր բնակվում Աբովյանը. Երևանի դավառական դպրոցն էր այդ»[28]:

1844 թ. հուլիսի 20-ի իր նամակում Աբիխը մորը մի շարք տեղեկություններ է հաղորդում Աբովյանի ուղեկցությամբ դեպի Նախիջևան, Օրդուբադ, Ագուլիս կատարած շրջագայությունների մասին:

Նախիջևանից Աբիխն անցնում է Մակու և Բայազետ: 1862 թ. մայիսի 19–31-ին՝ քրոջը՝ Ռոզաննային, գրած նամակում Աբիխը գրում է. «Այս տողերը քեզ կպատմեն Հաբեթի հայրենիքի մասին: Ես հիմա գտնվում եմ նրա հոր՝ Նոյի հայրենիքում՝ Նախիջևանում: Այս հիասքանչ այգիները, որոնցով բոլոր կողմերից շրջապատված է այս ավերված քաղաքը, այնպիսի գինի են տալիս, ինչը ցանկացած ուղղափառ հավատացյալի հիշեցնել է տալիս մեր նախնիներին, ովքեր իրենց ձեռքով այդ հողում տնկեցին խաղողի առաջին որթը»[29]:

1859 թ. սեպտեմբերի 28-ի նամակից, որ Աբիխը գրել էր իր սիրելի Ադելին, մենք կարդում ենք նրա՝ դեպի Գյումրի կատարած ճամփորդության մասին. «Մառախուղ էր, անձրև, հետո սկսվեց ձյուն, իսկ արևը վախվորած դուրս սահեց ամպերի հետևից և թույլ փայլեց, երբ մենք հասանք այդ հետաքրքիր գագաթին, որը ձգվում էր Դիլիջանի հովտից դեպի Փամբակի բարձունքները: Այստեղ մենք հանդիպեցինք հանքային ջրի ակունքի, որը հարուստ էր ածխաթթվով և հանքային այլ բաղադրիչներով: Փամբակի մարզի շրջակա գյուղերը բնակեցված էին հիմնականում մոլոկաններով: Ճանապարհը մեզ հասցրեց մինչև Համամլու գյուղը, որտեղ էլ սկսվեց իսկական ձմեռը: Փամբակից մեծ դժվարությամբ հասանք Դգիմրի քաղաքը (Ալեքսանդրապոլ, այժմյան՝ Գյումրի): Այստեղ ձյուն ընդհանրապես չկար, բացի դրանից Հայաստանի այս մասում խոտի, ծո-

[28] Նույն տեղում, էջ 246:
[29] Նույն տեղում, էջ 108:

ի կամ անտառի հետք անգամ չկար»[30]: Նրա ուշադրությունը գրավել էր հատկապես Ալեքսանդրապոլ քաղաքի ճարտարապետական յուրահատկությունը: Նա նշում էր, որ այդ քաղաքի տները շատ ցածր էին և կառուցված էին հիմնականում մոխրագույն տուֆից: Ուշագրավ էր Աբիխի համար հատկապես այն, որ այս քաղաքի բոլոր ֆաբրիկանների, տների ու եկեղեցիների կառուցման ժամանակ հայերն օգտագործել են հայկական անտիկ ճարտարապետության ոճը՝ կարմիր գույն ունեցող քարատեսակի հետ օգտագործելով սևագորշ քարեր՝ ինչն էլ պատերի վրա սև բծեր է առաջացրել: Առաջին հայացքից, երբ օտարազգիները տեսնում են ճարտարապետական այդ ոճը, կարող են մտածել, որ այն տարօրինակ է, սակայն հետագայում դա դառնում է սովորական: Օտարազգիները սկսում են կամաց-կամաց հասկանալ այդ ճաշակը, քանի որ այն համապատասխանում է շրջակա միջավայրին»[31]: Աբիխը մեկ ուրիշ անգամ հատուկ այցելում է Ալեքսանդրապոլ՝ աշխարհագրական չափումներ և երկրաբանական հետազոտություններ կատարելու նպատակով: Նա իր հետազոտությունների արդյունքում Ալեքսանդրապոլի շրջակայքում հայտնաբերել է քարերի մի քանի տեսակներ՝ սիենիտ, դիորիտ, ֆելզիտ և այլն[32]:

1872 թ. հունիսի 12-ի նամակում Աբիխը գրում է. «Շատ ավելի մեծ եղավ իմ ուրախությունը, երբ ես Անիի Մայր տաճարն իր ողջ չքեղությամբ հարություն առած տեսա Ալեքսանդրապոլում՝ շնորհիվ տեղի լուսավորչական հայերի կրոնական ու ազգային ոգու: Այդ համայնքը կարճ ժամանակվա ընթացքում կառուցել է նոր ժամանակների ամենագեղեցիկ ճարտարապետական շենքը: Այն կառուցվել է իր նախատիպին միանգամայն հավատարիմ եղանակով: Հեռվից իսկ զարմանք

[30] Նույն տեղում:
[31] Նույն տեղում, էջ 16–17:
[32] **Abich H.**, Geoloische Beobachtungen auf Reisen in den Gebirgsländern zwischen Kur und Araxes, Tiflis, 1867, Seite 5–6.

առաջացրեց իմ մեջ այդ վիթխարի նորակառույց շենքը, և ես երկար ժամանակ չէի կարողանում բաժանվել նրանից: Երկրին հատուկ փխրաքարի (տուֆ) երկու երանգները՝ կարմիր և մուգ սև, այստեղ շատ ավելի լավ են օգտագործվել. համաչափ, ճարտարապետորեն, քան նույնը Անիում: Ալեքսանդրապոլի նորակառույց մայր եկեղեցին նույնպես կառուցված է տուֆից»[33]:

1859 թ. հոկտեմբերի 7-ին գրած նամակից մենք տեղեկանում ենք, որ Աբիխը եղել է նաև Էրզրումում. «Կարսից Էրզրում տանող ճանապարհը շրջապատված էր բազմաթիվ սարերով և ժայռերով, սակայն զարմանալի էր, որ դրանք չունեին անտառածածկույթ: Այդ մութ սոճիների և կեչիների սակավ խառնուրդը ծածկում էր տպավորիչ կերպով, բարձր ու շատ խիտ շարքով միմյանց կողքին վեր խոյացող ապակենման լեռների լանջերը միայն: Այդ պատերից կարելի է եզրակացնել, որ ինչ-որ մի ժամանակ այդ լանջերը ձյունածածկ են եղել: Այս հրաշագործության ներքո է տարածվում Արաքսի հովիտը. գարնանը՝ ծաղկուն, իսկ ամռանն ու ուշ աշնանը՝ մրգառատ: Բազմաթիվ փոքր գյուղեր, որոնք տարածվում էին Արաքսի հովտում, հազիվ էին ընկալվում որպես գյուղեր, քանի որ նրանց տներն ասես փոքր քարակույտեր լինեին»[34]:

1866 թ. սեպտեմբերի 15-ի նամակում, երբ նա գտնվում էր Լոռվա չքնաղագեղ բնության գրկում, նա այսպես է նկարագրում. «Հրաշալի երկիր է հինավուրց Հայաստանը: Բնության ձեռքով ստեղծված գեղեցիկի և ինքնատիպի կողքին՝ այստեղ մենք տեսնում ենք պատմական զրավիչ անցյալի բազմաթիվ հիշատակարաններ: Հիշատակարաններ, որոնք անցորդի առջև դուրս են գալիս ամեն քայլափոխի, այս վիպական հովիտների մեջ խոհուն գեղեցկությամբ աչքի զարնող ճարտարապետական

[33] Նույն տեղում, էջ 16–17:
[34] **Abich H.**, Aus Kaukasischen Ländern, Reisebriefe, Wien, 1896, Band II, Seite 19–20.

բնակորներ, վիմագիր անթիվ արձանագրություններ: Ամեն ինչ խորհրդավոր տպավորություն է թողնում»[35]:

Աբիխը բավականին երկար ժամանակ անց է կացրել Լոռիում՝ հետազոտելով և աշխարհագրական չափումներ կատարելով սարերում՝ Ղարաբուլաղում, Մուշավերիում, Աղլաղանում, Լալվարում, Լեջանում: Նա նշում է, որ անհնար է չհիանալ Լոռվա բնությամբ, այն մի անզուգական վայր է, որ հարուստ է բազմատեսակ ծառերով և բույսերով: Ըստ Աբիխի հետազոտությունների արդյունքների՝ այս սարերի մեծ մասը հրաբխածին են: Աբիխը եղել է Օձունում, Ալավերդիում, Մադանում, Ախթալայում, Շամլուղում: Նա հատկապես ուշադրություն է դարձրել Ալավերդու պղնձամոլիբդենային հանքերին: Նա նշում է, որ Լոռին հարուստ է հանքերով: Պղնձի հանքեր կան նաև Շամլուղում, Ախթալայում և Մադանում: Շամլուղից ներքև գտնվում է Ախթալան՝ իր գեղեցիկ եկեղեցու ավերակներով[36]:

Աբիխի թարգմանիչը Լոռիից էր: Նա Իգահատ գյուղից էր, ինչը նշանակում էր «խաղողի այգու բարձրակետ»: Նրա ազգանունը Շահվերդյան էր: Ալավերդուց Աբիխը գնացել է Ղարաբիլիսա (բառացի՝ «սև եկեղեցի», այժմյան Վանաձոր): Նա անհամբերությամբ սպասում էր, թե երբ պետք է հասնի Երևան՝ Արարատը գոնե հեռվից տեսնելու համար: Հերման Աբիխն առաջին անգամ Հայաստան եկավ 1844 թ.՝ Արարատը ուսումնասիրելու առաջադրանքով: Նրա՝ Արարատը ուսումնասիրելու հիմնական պատճառը 1840 թ. տեղի ունեցած մեծ երկրաշարժն էր, որը պատճառել էր մեծամեծ ադեաններ՝ այդ թվում Ակոռի գյուղի կործանումը: Նա կատարած հետազոտությունների մասին գրել է իր գիտական հետազոտություններից չատերի և

[35] Նույն տեղում, էջ 239–240:
[36] **Abich H.**, Geoloische Beobachtungen auf Reisen in den Gebirgsländern zwischen Kur und Araxes, Seite 10–12.

հատկապես «Հայկական բարձրավանդակի երկրաբանությունը» (Die Geologie des Armenischen Hochlandes) աշխատության մեջ: Աբիխն Արարատը վերլուծել է մասնավորապես բնագիտական-երկրաբանական տեսանկյունից: Բացի այս աշխատությունից, նա իր կնոջը, քրոջն ու մորը գրած նամակներում ևս նկարագրում է Արարատը (օրինակ՝ "Aus Kaukasischen Landern, Reisebriefe" գիրքը):

Աբիխին Արարատի գագաթը բարձրանալու փորձերի և լեռան գագաթը վերջնականապես հաղթահարելու ժամանակ շատ են օգնել իր ճամփորդությունները Հայաստանի տարածքով: Նա իր ստեղծագործություններում գրում է. «Երբ ես ճամփորդում էի դեպի Մակու և Բայազետ, արդեն ճշգրիտ սահմանել էի, որ վերելքի համար միակ ապահով ճանապարհը հյուսիս-արևելյան, այսինքն՝ Փոքր Արարատին նայող կողմից է: Այդ իսկ պատճառով մեր առաջին երկու փորձերը երկու շաբաթվա ընթացքում կատարեցինք գեղեցիկ Սարբուլաղի եզերքին՝ զույգ Արարատների արանքի ուղղությամբ: Դեռևս հուլիս ամսին մենք Նախիջևանից նշմարել էինք Արարատի գմբեթից մինչև լեռնագագաթի ներքևի մասն ընկած տարածքը»[37]:

Աբիխն Արարատի գագաթը բարձրանալու անհաջողությունների հիմնական պատճառ է համարել անբարենպաստ եղանակը:: Սակայն, երբ կարդում ենք Աբիխի՝ Արարատի գագաթը բարձրանալու մասին մտորումները, համոզվում ենք, որ եթե նրան քսաներորդ անգամ էլ չհաջողվեր բարձրանալ Արարատի գագաթը, միևնույնն է՝ նա երբեք չէր հուսալքվի: Նա այնպիսի ոգևորվածությամբ էր պատմում իր այդ դժվարին փորձությունների մասին, որ հասկանում ես, որ, իսկապես, եթե մարդ իր առջև նպատակ է դնում, միևնույն է, ոչնչի առջև կանգ չի առնի: Առաջին փորձերի ժամանակ Աբիխին օգնել է

[37] Աբեղեան Ա., Աբիխ և Արարատ, «Հայրենիք», 1937, նոյեմբեր, էջ 82:

նաև Աբովյանը՝ որպես Ֆրիդրիխ Պարրոտի հետ արդեն Արարատի գագաթը բարձրացած անձնավորություն, սակայն բուն հաղթահարման ժամանակ Աբովյանն այդ արշավին չի մասնակցել:

Աբիխի առաջին երեք անհաջող փորձերը տեղի են ունեցել 1844 թ. ամռանը, իսկ հիմնական վերելքը եղել է 1845 թ. հուլիսի 29-ին: Աբիխը շատ մանրամասնորեն էր պատրաստվել իր չորրորդ փորձին: Նա գրեթե բոլոր կողմերից ուսումնասիրություններ է կատարել, հետևել է նաև Պարրոտի գրվածքներին: Նա հասնում է իր նպատակին և ոտք է դնում Արարատի գագաթին: Նա իր նամակներից մեկում այսպես է արտահայտվում Արարատի մասին. «Արարատի վրա գցած իմ առաջին իսկ հայացքից՝ ինձ համար պարզ դարձավ լեռան բնությունը: Դրան մեծապես նպաստում է ձյան ծածկույթը, որն էլ օգնում է ճանաչել ձևի մանրամասնությունները. մի բան, որ հեռավորության պատճառով անճանաչելի է դառնում: Ի ուրախություն ինձ՝ Արարատը շատ ավելի նշանակալից է, քան ես երազել էի[38]: Մի կողմից ես այն համարում եմ համայն աշխարհի ամենանշանավոր լեռնահսկան՝ չնորհիվ մեծաշուք և այդ կապակցությամբ նաև չդիտված իր կերպարանավորման հանդամանքին, իսկ մյուս կողմից՝ ես այդ սարը դիտում եմ որպես ամենափայլուն և ամենահստակ ապացույց նշանավոր լեռնագիտական բնագավառում, որոնք, սակայն, շատ թերահավատների համար դեռևս սոսկ հիպոթեզներ են: Եվ եթե ինձ հաջողվի այժմ ստույգ նկարագրությամբ և գծագրությամբ ամենքի համար մատչելի դարձնել մեզնից դժբախտաբար շատ հեռու անցյալում կատարված հրաբխային երկրակազմության չրջանը, ապա դրանով իսկ ես վարձատրված կհամարեմ իմ ճամփորդությունը»[39]:

Վեհափառ Արարատը դարձել էր Աբիխի մտերիմը, հարազատը: Ամեն տեղ ու ամեն ժամանակ նա խոսում էր Արարատի

[38] Նույն տեղում, էջ 79:
[39] Նույն տեղում:

մասին: Նա ամենուր հիշում էր միայն Արարատ լեռը: 1845 թ. հուլիսի 29-ի վերելքից հետո ևս քանի-քանի անգամներ նա նորից ու նորից առիթ է ունեցել Արարատը տեսնելու և վայելելու, սակայն չի սպառել «արարատյան սիրո ծարավը»:

1844 թ. մայիսի 29-ին մորն ուղղված նամակում Աբիխն այսպես է գրում. «Ինձ համար հիմա արդեն պարզ է Արարատի բնույթյունը: Ես մտածում էի, որ կարող եմ գտնել շատ ու շատ տվյալներ, այժմ իմ այդ հույսերը գտնում են իրենց հաստատումը: Դրա հետ մեկտեղ բացահայտվում են նաև շատ ավելի անսպասելի երևույթներ: Ինձ գոհունակություն է պատճառում այն գիտակցությունը, որ իմ ճամփորդության ժամանակ ես ձեռք եմ բերել այնպիսի տվյալներ, որոնք արժանի են դրանց համար թափած իմ ջանքերին»[40]:

Արարատի գագաթը բարձրանալուց և իր կատարած բոլոր հետազոտություններից հետո Աբիխը Հայաստան այցելությունների ժամանակ հատուկ հրճվանքով ու զմայլությամբ էր նայում Արարատին: Արարատը բարձրանալուց հետո Աբիխը գնացել է Ղարաբաղ՝ աշխարհագրական և երկրաբանական հետազոտություններ կատարելու: Նա Ղարաբաղում նույնպես հայտնաբերել է պղնձի հանքեր: Աբիխը հիացած էր Ղարաբաղի բնությամբ և Գանձասարով: Գանձասարի վանքը գտնվում է նույնանուն գյուղի մոտ, և նրա տները հիմնականում կառուցված են ֆելզիտից և պորփյուրից: Գանձասարի եկեղեցին եղել է Աղվանից կաթողիկոսների նստավայրը, և չնորհիվ իր վաղեմության, յուրօրինակ ճարտարապետության և կատարյալ կերտվածքի այն համարվում է հին հայկական ծաղկման ժամանակաշրջանի ամենահետաքրքիր ճարտարապետական արժեքներից մեկը: Գանձասարից դեպի հյուսիս-արևելք գտնվում էր Հակոբավանքը[41]:

[40] Նույն տեղում, էջ 80:
[41] **Abich H.**, Geoloische Beobachtungen auf Reisen in den Gebirgsländern zwischen Kur und Araxes, Seite 125–126.

Նայելով Աբիխի հետազոտությունների արդյունքներին՝ կարելի է հասկանալ, որ գերմանացի մեծ գիտնականն իր կյանքը և հոգին է ներդրել Հայաստանը հետազոտելու ընթացքում: Նրա կատարած աշխարհագրական և երկրաբանական հետազոտությունները, որոնք նա ամբարել է իր բազմաթիվ աշխատությունները, գիտական հոդվածների և մենագրությունների մեջ, մինչև օրս ծառայում են հայ ժողովրդին՝ տալով բազմաթիվ հարցերի պատասխանները:

Հայաստանում գտնված ժամանակահատվածում Աբիխը կարողացել է գրեթե ամենուր և բազմաթիվ արժեքավոր տվյալներ հավաքել Հայկական լեռնաշխարհի տարբեր մարզերի, քաղաքների ու գյուղերի աշխարհագրական և երկրաբանական առանձնահատկությունների վերաբերյալ: Հերման Աբիխի գլխավոր նպատակը եղել է Արարատի ուսումնասիրությունը և լեռան գագաթը բարձրանալը, սակայն նրա ծրագրում եղել է նաև Արագածի գագաթը բարձանալն ու հետազոտելը: 1844 թ. սեպտեմբերի 10–22-ը նա բարձրանում է Արագածի գագաթը[42]:

Արդարև, Աբիխի հետազոտությունները մեծ խթան կարող են հանդիսանալ Հայկական լեռնաշխարհը աշխարհագրական և երկրաբանական տեսանկյունից հետազոտելու համար: Այդ աշխատությունները ամուր հիմք կարող են ծառայել նրա գործը շարունակողների համար:

[42] **Abich H.**, Geologie des Armenischen Hochlandes, Wien, 1882, Seite 71.

ГАЯНЕ ШАХКЯН
ИИ НАН РА

ГЕРМАН АБИХ И АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Известный немецкий ученый Герман Абих 28 лет своей жизни посвятил изучению геологии Кавказа и Армении. Географические и геологические исследования Абиха нашли место в его многочисленных научных публикациях, которые и в наше время служат на благо армянского народа. Многие проблемы по истории Армении нашли ответы в его научных работах.

ԱՐՄԵՆ ՀԱՑՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀՈԳՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԳՅՈՒՄՐԻ–ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ (XIX ԴԱՐ)

Դեռևս VIII դ. հիշատակված Կումայրին, որը XIII դ. արդեն մեծ գյուղաքաղաք էր, XVIII դարավերջ հասավ որպես մի փոքրիկ գյուղ Գումրի (Գյումրի) անունով, ուր, ժամանակակիցների վկայությամբ, կար մի հին եկեղեցի և ապրում էին մոտ 30 տուն պարսիկներ և 20 տուն պարսկահպատակ հայեր[1]:

1804 թ. ռուսական կազակային առաջին խմբերը մտան Գյումրի և գյուղի մոտ կառուցեցին բնակելի թաղամաս: Ռուս-սահմանի հետ միավորումն էական ազդեցություն ունեցավ բնակավայրի էթնոժողովրդագրական պատկերի վրա: Ռուսական զորային ուժի ներկայության շնորհիվ հուսալի դառնալով՝ Գյումրին սկսեց դեպի իրեն ձգել պատերազմներից ու գրկանքներից այս ու այն կողմ ցրված հայերին:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող մի անվանացանկի համաձայն՝ 1807–1814 թթ. ընթացքում միայն Կարսի փաշայությունից Փամբակ-Շորագյալի դիստանցիա գաղթած 283 ընտանիքներից (1523 մարդ) 61 ընտանիքը (297 մարդ) հաստատվել էր Գյումրիում[2]:

Իր փաշայության տարածքից դեպի ռուսական տիրույթներ և մասնավորապես Գյումրի արտագաղթի ուժեղացումից անհանգստացած՝ 1814 թ. Կարսի Մահմադ փաշան, հիմք ընդունելով 1812 թ. Բուխարեստի ռուս-թուրքական պայմանագիրը, որն արգելում էր հպատակների ազատ երթևեկության իրավունքը, դեներալ Ռտիշչևից պահանջեց իր փաշայության բնակիչներին

[1] ՀՀ ԳԱԱ ՊԻՄ, գ. 103, Ս. Թամրազյանի նյութերը, տետր 1. «Թամրազյան Ս., Հիշողություններ XIX դարի Ալեքսանդրապոլի անցյալից մինչև մեր օրերը (1938 թ.)», ձեռագիր: Մատինեանց Կ., Ալեքսանդրապոլի վաճառականները. «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 2 փետրվարի, թիվ 5, 1874, էջ 3:
[2] Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 22ա, վավ. 86:

ուղարկել նախկին բնակության վայրերը: Սակայն, 1815 թ. մարտի 20-ին գեներալ-մայոր Սիմոնովիչի գեներալ Ռտիշչևին ներկայացրած զեկուցագրի համաձայն, Թուրքական կողմի պահանջը Փամբակի և Շորագյալի գյուղերում հաստատված կարսեցիներին հայտնելուց հետո վերադառնալու ցանկություն հայտնել էր ընդամենը 37 ընտանիք (196 մարդ), այդ թվում՝ Գյումրիից միայն 7 ընտանիք կամ 37 մարդ[3]:

Թուրքիայից, մանավանդ՝ Կարսի փաշայությունից, դեպի Հայաստանի հյուսիսային շրջաններ հայերի ներգաղթը նոր թափ ստացավ 1822 թ., երբ պարսկական 12000-ոց բանակը պաշարեց Կարսը: Այս պատերազմի օրերին ավելի քան 500 ընտանիք արևմտահայեր անցան ռուսական տարածքներ և հաստատվեցին Գյումրիում[4]:

1823 թ. միաժամանակ վերջ դրվեց հայերի զանգվածային գաղթին դեպի ռուսական սիրույթներ: Շուրջ քառորդ դար տևած գաղթի չնորհիվ Գյումրու ազգաբնակչությունը զգալի համալրում ստացավ: Արդյունքում՝ գրեթե անմարդաբնակ բնակավայրը 1824–1825 թթ. արդեն ուներ 503 ընտանիք կամ ավելի քան 3000 մարդ (373 ընտանիքը՝ հայկական, 130-ը թաթարական)[5], ինչը Գյումրու ազգաբնակչության XIX դարասկզբի ցուցանիչից՝ 50 ընտանիքից, ավել էր շուրջ 453-ով:

Սակայն բնակավայրի ազգաբնակչության թվի վերելքը հարատև չեղավ: 1826 թ. սկզբներին ռուս-պարսկական հարաբերությունների ծայրաստիճան սրումը հանգեցրեց նոր պատերազմի, որի արդյունքում (խաղաղ բնակչության շրջանում դերելաբություններ, թալան, բնակչության զանգվածային արտագաղթ)

[3] Акты Кавказской Археографической Комиссии (АКАК), т. 5, Тифлис, 1873, с. 816.
[4] Սաշտոցի անվան Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 192, թ. 2–3:
[5] **Коцебу М. Е.**, Описание вторжения персиян в Грузию в 1826 г., "Кавказский сборник", т. XXII, Тифлис, 1901, с. 19.

Գյումրու բնակչության թիվը 1825 թ. համեմատությամբ նվազեց գրեթե 5 անգամ հասնելով 100 ընտանիքի:

Բնակավայրը նորից աշխուժացավ միայն 1826–1829 թթ. հետո, երբ, օգտվելով ցարական կառավարության ընձեռած արտոնություններից ու ստեղծված հնարավորություններից, շուրջ 1250 ընտանիք արևմտահայեր հաստատվեցին այստեղ: 1829–1832 թթ. կամերալ ցուցակագրման տվյալների համաձայն՝ ներգաղթից անմիջապես հետո Գյումրու բնակչության թիվը հասավ 1350 ընտանիքի կամ 7250 մարդու (3980-ը արական, 3270-ը իգական սեռի), որից հայեր էին 1296 ընտանիքը (6960 մարդ) կամ 96 %-ը (այդ թվում՝ 8 ընտանիք կամ 44 մարդ հայ կաթոլիկներ), պարսիկներ՝ 40 ընտանիքը (217 մարդ) կամ 3 %-ը, իսկ հույներ՝ 14 ընտանիքը (73 մարդ) կամ 1 %-ը[6]: Համեմատության համար նշենք, որ Արևելյան Հայաստանի ամենամեծ քաղաքում՝ Երևանում, նույն 1829–1832 թթ. բնակչության ընդհանուր թվից՝ 2751 ընտանիքից, հայեր էին միայն 34 %-ը, իսկ մահմեդականներ՝ 66 %-ը[7]:

Հայահավաքման գործընթացը Հյուսիսային Հայաստանի այս հատվածում չարունակվեց նաև հաջորդ տասնամյակի ընթացքում, երբ հարյուրավոր գաղթական ընտանիքներ, չհամակերպվելով իրենց նոր բնակավայրերում ստեղծված պայմաններին, նորից բռնեցին գաղթի ճամփան: Օրինակ՝ համաձայն Ապարանում գաղթականների պրիստավ Կուրգանովի՝ Հայկական մարզի կառավարությանը ներկայացրած զեկուցագրի, Ջանդիի մահալի Մալիքենդ գյուղից 5 ընտանիք նախկին պարսկահայեր Հովհաննես Հազրանովի, Սիմոն Սարգիսովի, Մուրադ Հակոբովի, Գասպար Մելիքովի և Սարգիս Թաթոսովի գլխավո-

[6] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 93, ց. 1, գ. 83, թ. 1–274, գ. 84, թ. 1–380:
[7] **Зелинский С.**, Город Эривань, "Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. 1, отд. 1, Тифлис, 1881, с. 40–41.

բությամբ 1834 թ. հունիսի 29-ին տեղափոխվեցին Գյումրի[8]: Նույն այդ ժամանակահատվածում Գյումրիում վերահաստատվեցին նաև Փամբակի Ղարաքիլիսա գյուղից գաղթած մոտ 100 ընտանիք նախկին էրզրումցիներ[9]:

Արևմտահայերի մեծ գաղթից հետո գրանցված այս նոր վերաբնակեցումը, մեր կարծիքով, ընդունած պիտի լիներ շատ ավելի մեծ մասշտաբներ, որովհետև 1842 թվականով թվագրված «Կամերալ ցուցակագրման վերստուգում» ճեռագրերի համաձայն՝ XIX դ. 30-ական թվականների վերջին Գյումրու ազգաբնակչության թիվը հասավ ընդհուպ մինչև 1807 ընտանիքի կամ 9385 մարդու (4875-ը արական, 4510-ը իգական սեռի), որից հայեր էին 1728 ընտանիքը (8930 մարդ) կամ 95.6 %-ը (այդ թվում 11 ընտանիք կամ 62 մարդ հայ կաթոլիկներ), պարսիկներ՝ 48 ընտանիքը (340 մարդ) կամ 2.7 %-ը և հույներ՝ 31 ընտանիքը (115 մարդ) կամ 1.7 %-ը: Նույն կամերալ ցուցակագրման համաձայն 1831 թ. համեմատությամբ Գյումրու ազգաբնակչության թիվը ավելացել էր 457 ընտանիքով կամ 2135 մարդով, որից 206 ընտանիքը կամ 1023 մարդը (597-ը արական, 426-ը իգական սեռի) գաղթել էր Թուրքիայից[10]:

1837 թ. Գյումրին հռչակվեց քաղաք, իսկ որոշ ժամանակ անց ստացավ Ալեքսանդրապոլ անունը: 1840 թ. այն դարձավ գավառակենտրոն: Վերոբերյալ գործոններն էական դեր խաղացին Գյումրի-Ալեքսանդրապոլի բնակչության թվաքանակի հետագա համաչափ և անընդհատ աճի գործում: XIX դարի 40-ական թթ. քաղաքի էթնոժողովրդագրական և կրոնադավանաբանական պատկերի ձևավորման վրա որոշակի ազդեցություն թողեց նաև ժանտախտի համաճարակը, որը դեռ 1830-ական թվականների վերջերին մոլեգնում էր Վրաստանի

[8] ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 447, թ. 32–33:
[9] **Քաջբերունի**, Ղարաքիլիսա, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 27 հունվարի, N 3, 1873, էջ 3–4:
[10] ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 83, թ. 1–274, գ. 84, թ. 1–380:

Հարավային սահմանամերձ շրջաններում[11], իսկ կարճ ժամանակ անց տեղափոխվեց Արևելյան Հայաստանի տարածք և ընդգրկեց նաև Ալեքսանդրապոլի գավառն ու հատկապես գավառակենտրոնը: Թե ե՞րբ երևան եկան առաջին հիվանդները, տվյալների բացակայության պատճառով անհնար է պարզել: Առաջին ստույգ տեղեկությունները վերաբերում են միայն 1840 թ. աշնան կեսերին, երբ համաճարակն արդեն ընդունել էր բավականին մեծ մասշտաբներ: Այսպես՝ 1840 թ. հոկտեմբերի 17-ին տարաղավանների գործերով նախարար Բլուդովին ներկայացրած իր զեկուցագրում գեներալ Ե. Գոլովինը Ալեքսանդրապոլում համաճարակի հասցրած վնասների մասին գրում էր. «Պատիվ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ Ալեքսանդրապոլում ժանտախտի ի հայտ գալուց մինչև հոկտեմբերի 7-ը հիվանդացել է 126 մարդ, որից 88-ը մահացել է, իսկ մնացած 38-ը գտնվում է կասկածելի վիճակում»[12]: Ժանտախտի համաճարակը քաղաքում շարունակվել է նաև հաջորդ մեկ-երկու ամիսների ընթացքում և նահանջել է միայն ցուրտ ձմռան գալստյան հետ: Այդ են վկայում 1840 թ. դեկտեմբեր – 1841 թ. հունվար ամիսների ընթացքում գեներալ Ե. Գոլովինի՝ կոմս Սորոգանովին ներկայացրած զեկուցագրերը: Եթե 1840 թ. դեկտեմբերի 22-ի N 552 զեկուցագրով Գոլովինը տեղեկացնում էր, թե «նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 19-ը Ալեքսանդրապոլում ժանտախտով ախտահարվել է միայն երեք մարդ, որի հետևանքով հիվանդների թիվը քաղաքում նվազել է մինչև 37-ի (զեկուցագրին հաջորդած օրերի ընթացքում սրանցից 6-ը մահացել էր, 29-ը՝ առողջացել, 2-ը կասկածելի վիճակում էին)»[13], ապա արդեն 1841 թ. հունվարի 8-ով թվագրված իր N 4 զեկուցագրում Գոլովինը նույն

[11] Մինչև XIX դարի 50-ական թվականները Անդրկովկասում բռնկված ժանտախտի և խոլերայի համաճարակների մասին մանրամասն տե՛ս **Ерицов А.**, Чума в Закавказье (Исторический очерк), Тифлис, 1879, նույնի, История холерных эпидемии в Закавказье, Тифлис, 1872.
[12] АКАК, т. 7, Тифлис, 1878, с. 85.
[13] Նույն տեղում, էջ 87:

Ստրոգանովին հայտնում էր քաղաքում հիվանդության խպառ վերացման մասին[14]:

Մեր կարծիքով՝ համաճարակն Ալեքսանդրապոլում գերազանցապես տարածված է եղել ռուսական զինվորականության շրջանում, և ժանտախտի զոհ դարձածների մասին վերոհիշյալ թվային տվյալները մեծամասամբ վերաբերում են Ալեքսանդրապոլում տեղակայված ռուսական զորքերին և ոչ թե քաղաքային բնակչությանը: Դա է վկայում նաև գեներալ Գոլովինի արդեն հիշված 1840 թ. դեկտեմբերի 22-ի զեկուցագիրը՝ ներկայացված կոմս Ստրոգանովին, որում մասնավորապես նշվում էր, թե «ժանտախտն Ալեքսանդրապոլում մանավանդ տարածված է ռուսական զորքերում՝ ցածրաստիճան սպայական անձնակազմի և զինվորականության շրջանում»[15]: Ինչ վերաբերում է քաղաքային բնակչությանը, ապա, մեր կարծիքով, համաճարակի զոհերի թիվն այս շրջանում չպետք է մեծ լիներ հետևյալ պատճառով: Նախևառաջ, եթե այդպիսիք քաղաքում մեծ թիվ կազմեին, ապա անպայման հիշված կլիներին 1842 թվականով թվագրված «Կամերալ ցուցակագրման վերստուգում» ձեռագրերում և հետո, եթե համաճարակի զոհերն իրոք մեծաթիվ էին, ապա անհնար է, որ քաղաքի ժողովրդագրական դրության մեջ լուրջ հետընթաց չնկատվեր: Մինչդեռ արխիվային փաստաթղթերով ու մեր ձեռքի տակ եղած տվյալներով դա չի փաստվում: Ընդհակառակը, XIX դարի 40-ական թվականների ընթացքում նկատվում է քաղաքային բնակչության թվաքանակի համաչափ աճ: Այսպես՝ եթե ժանտախտի համաճարակի հայտնվելու նախօրեին քաղաքն ուներ 1807 ընտանիք բնակչություն, ապա արդեն 1848 թ. Ալեքսանդրապոլի բնակչության թիվը հասավ 1984 ընտանիքի կամ 11018 մարդու (5578-ը արական, 5440-ը իգական սեռի), որից հայեր էին 1896 ընտանիքը (10542 մարդ) կամ 95.5 % (այդ թվում՝ 25 ընտանիք կամ 137 մարդ հայ

[14] Նույն տեղում, էջ 88:
[15] Նույն տեղում, էջ 87:

կաթոլիկներ), պարսիկներ՝ 59 ընտանիքը (363 մարդ) կամ 3 %-ը, իսկ հույներ՝ 29 ընտանիքը (113 մարդ) կամ 1.5 %-ը: Նույն կամերալ ցուցակագրման համաձայն՝ անցած 8–9 տարիների ընթացքում քաղաքի ազգաբնակչության թիվն ավելացել էր 177 ընտանիքով (1633 մարդ), որից 109 ընտանիքը (1294 մարդ) բնական աճի արդյունք էր, 26 ընտանիքը (120 մարդ) Ալեքսանդրապոլ էր տեղափոխվել համանուն գավառի գյուղերից, 19 ընտանիքը (94 մարդ)՝ Ռուսական կայսրության տարբեր շրջաններից, իսկ 23 ընտանիքը (125 մարդ)՝ Օսմանյան կայսրությունից[16]:

Քաղաքի բնակչության կազմի միատարրությունը փոքր-ինչ խախտվեց միայն XIX դարի 50-ական թթ. կեսերին, երբ ցարական կառավարությունը, մի քանի հետաձգումներից ու անհաջող փորձերից հետո, վերջապես կյանքի կոչեց Անդրկովկասում մեծաթիվ ռուս զաղթականների (հիմնականում ազանդավորների) վերաբնակեցնելու նախօրոք մշակած ծրագիրը: Նորեկների ընդունման, բնակեցման և բնակավայրերի ընտրության գործը հանձնարարվեց Կովկասյան գլխավոր վարչության խորհրդի անդամ, երկրագործության և պետական գույքերի մինիստրության կովկասյան լիազոր Ֆադեևին և Երևանի գավառապետ Բալավատսկուն: Նրանք էլ որոշեցին Սևանա լճի ավազանի, Ալեքսանդրապոլի գավառի և Լոռվա դաշտի գյուղական շրջաններից բացի, առայժմ փոքր թվով զաղթականների (գերազանցապես արհեստավորների) տեղավորել նաև Ալեքսանդրապոլում:

Մեր ունեցած տվյալների համաձայն՝ այս գործընթացը նախնական փուլում համեմատաբար դանդաղ ընթանալով, որևէ էական ազդեցություն չունեցավ քաղաքի էթնոժողովրդագրական և կրոնադավանաբանական պատկերի վրա: Ալեքսանդրապոլը պահպանեց իր նախկին հայեցի դեմքը, իսկ բնակ-

[16] ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 97, թ. 1–282:

չության թիվը շարունակեց համաչափորեն աճել: Արդյունքում, եթե 1848 թ.՝ Ցագեևի կողմից Ալեքսանդրապոլի գավառը ռուսներով վերաբնակեցնելու նախագիծը կազմելու նախօրեին, Ալեքսանդրապոլը նորաստեղծ Երևանի նահանգում իր մարդաշատությամբ Երևանից հետո երկրորդն էր և առաջինն իր բնակչության միատարրությամբ (հայեր էին բնակչության 95,5 %-ը, այլազգիներ՝ 4.5 %-ը)[17], ապա 1859–1860 թթ.՝ վերոհիշյալ ծրագրի իրագործման արդեն առաջին տասնամյակի վերջին, քաղաքային բնակչության թիվը հասավ 2595 ընտանիքի կամ 13013 մարդու (6891-ը արական, 6122-ը իգական սեռի): Միևնույն ժամանակ քաղաքում երևան եկան ցարական կառավարության՝ Արևելյան Հայաստանը ռուսներով վերաբնակեցնելու առաջին թույլ նկրտումները. հայ, հույն, պարսիկ և հրեա (նրանք ևս նորեկներ էին) բնակչության կողքին Ալեքսանդրապոլում հայտնվեցին առաջին ռուս վերաբնակները՝ 16 ընտանիք (93 մարդ), որը կազմում էր քաղաքի ընդհանուր բնակչության 0,6 %-ը: Քաղաքային բնակչության մնացած 99,4 %-ն ըստ ազգությունների ուներ հետևյալ պատկերը. հայերն Ալեքսանդրապոլում ճնշող մեծամասնություն էին՝ 2450 ընտանիք կամ 12285 մարդ (այդ թվում 31 ընտանիք կամ 157 մարդ հայ կաթոլիկներ) և կազմում էին քաղաքային բնակչության 94,4 %-ը, պարսիկներ էին 3,7 %-ը (96 ընտանիք կամ 484 մարդ), հույներ՝ 1 %-ը (26 ընտանիք կամ 116 մարդ), հրեաներ՝ 0.3 %-ը (7 ընտանիք կամ 35 մարդ): Նախորդ 10-11 տարիների ընթացքում քաղաքային բնակչության թիվն ավելացել էր 611 ընտանիքով (1995 մարդ), որից 362 ընտանիքը (590 մարդ) բնական աճի արդյունք էր, 88 ընտանիքը (486 մարդ) Ալեքսանդրապոլ էր տեղափոխվել համանուն գավառի գյուղերից, 43 ընտանիքը (215 մարդ)՝ Ռուսական կայսրության տարբեր շրջաններից, 2 ընտա-

[17] "Кавказский календарь на 1850 год", Тифлис, 1849, отд. III, с. 33–34.

նիքը (7 մարդ)՝ Պարսկաստանից, իսկ 116 ընտանիքը (697 մարդ)՝ Օսմանյան կայսրությունից[18]:

Այսպիսին էր Գյումրի-Ալեքսանդրապոլի XIX դարի առաջին վեց տասնամյակների ժողովրդագրական պատկերը: Քաղաքային բնակչության թվաքանակի համաչափ աճը շարունակվեց նաև դարի երկրորդ կեսին: Այսպես՝ 1873 թ. անցկացված համընդհանուր ցուցակագրման համաձայն՝ Ալեքսանդրապոլն ուներ 3526 ընտանիք կամ 19976 մարդ (10414-ը արական, 9562-ը իգական սեռի), որից 3340 ընտանիքը (18996 մարդ) կամ 94.6 %-ը՝ հայեր էին (այդ թվում 45 ընտանիք կամ 254 մարդ հայ կաթոլիկներ), 98 ընտանիքը (593 մարդ) կամ 2.8 %-ը՝ պարսիկներ, 58 ընտանիքը (317 մարդ) կամ 1.6 %-ը՝ հույներ, 27 ընտանիքը (56 մարդ) կամ 0.9 %-ը՝ ռուսներ և 3 ընտանիքը (14 մարդ) կամ 0.1 %-ը՝ հրեաներ[19]: Նույն կամերալ ցուցակագրման համաձայն՝ քաղաքային բնակչության թիվը 1859–1860 թթ. համեմատությամբ ավելացել էր 941 ընտանիքով (6963 մարդ), որից 675 ընտանիքը (5790 մարդ) բնական աճի արդյունք էր, 86 ընտանիքը (376 մարդ) Ալեքսանդրապոլ էր տեղափոխվել համանուն գավառի գյուղերից, 64 ընտանիքը (269 մարդ)՝ Ռուսական կայսրության տարբեր շրջաններից, 8 ընտանիքը (28 մարդ)՝ Պարսկաստանից, իսկ 108 ընտանիքը (500 մարդ)՝ Օսմանյան կայսրությունից:

1877 թ. սկսվեց ռուս-թուրքական նոր պատերազմ (1877–1878 թթ.)՝ թվով չորրորդը XIX դարի ընթացքում: Պատերազմի արդյունքներն ամփոփող Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով Կովկասյան ռազմաճակատում Ռուսաստանը տեր դարձավ Բաթումի, Արդահանի և Կարսի շրջաններին: 1878 թ. Կովկասյան փոխարքայության մեջ, իբրև առանձին վարչական միավոր, կազմվեց Կարսի մարզը՝ Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի շրջաններով: Արդյունքում՝ Ալեքսանդրապոլի գա-

[18] ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 120, թ. 1–520:
[19] Նույն տեղում, գ. 184, թ. 1–760:

վառը, դադարելով այլևս սահմանամերձ չրջան լինելուց, կորցրեց իր երբեմնի ստրատեգիական նշանակությունը: Իսկ թե ինչ հետևանքներ ունեցավ այս նոր ձեռքբերումն Ալեքսանդրապոլ քաղաքի էթնիկ կազմի և ժողովրդագրական տեղաշարժերի վրա, պարզ երևում է 1886 թ. Անդրկովկասում անցկացված նոր աշխարհագրից, որի տվյալների համաձայն՝ Ալեքսանդրապոլ քաղաքն ուներ ընդամենը 3825 ընտանիք կամ 24230 մարդ (12391 արական, 11839 իգական սեռի) բնակչություն, որից 3650 ընտանիքը (22912 մարդ) կամ 95.5 %-ը՝ հայեր էին (այդ թվում 35 ընտանիք կամ 204 մարդ հայ կաթոլիկներ), 15 ընտանիքը (81 մարդ) կամ 0.4 %-ը՝ ռուսներ, 61 ընտանիքը (288 մարդ) կամ 1.6 %-ը՝ հույներ, 2 ընտանիքը (22 մարդ) կամ 0.04 %-ը՝ լեհեր, 89 ընտանիքը (881 մարդ) կամ 2.3 %-ը՝ պարսիկներ, 5 ընտանիքը (33 մարդ) կամ 0.1 %-ը՝ վրացիներ և 3 ընտանիքը (13 մարդ) կամ 0.06 %-ը՝ հրեաներ: Նույն աշխարհագրի համաձայն՝ նախորդ 13 տարիների ընթացքում քաղաքային բնակչության թիվն ավելացել էր միայն 299 ընտանիքով (4254 մարդ), որից 280 ընտանիքը (4166 մարդ) բնական աճի արդյունք էր, 4 ընտանիքն (21 մարդ) Ալեքսանդրապոլ էր տեղափոխվել համանուն գավառի գյուղերից, 10 ընտանիքը (49 մարդ)՝ Ռուսական կայսրության տարբեր չրջաններից, իսկ 5 ընտանիքը (18 մարդ)՝ Օսմանյան կայսրությունից: Դրան հակառակ, նույն 13 տարիների ընթացքում Ալեքսանդրապոլ քաղաքից (հիմնականում Կարսի մարզի ուղղությամբ) հեռացել էին ավելի քան 200 ընտանիքներ. ևս 13 մարդ (միայն արական սեռի), տարբեր հանցանքների համար, ցարական իշխանությունների կողմից աքսորվել էին Սիբիրի երկրամաս[20]:

1897 թ., մի քանի հետաձգումներից հետո, ցարական իշխանություններն ի վերջո անցկացրեցին համառուսաստանյան մարդահամար: Այդ նպատակով 1895 թ. հունիսի 5-ին հրա-

[20] Նույն տեղում, գ. 241, թ. 1–1668:

պարակվեց Պ. Սեմյոնով-Տյան-Շանսկու (1875–1897 թթ. վիճակագրական խորհրդի նախագահ) կողմի մշակած "Положение о первой всеобщей переписи населения Российской империи" վերնագրված ծրագիրը, որով հաստատվեց մարդահամար անցկացնելու նպատակը՝ պարզել բնակչության քանակը, կազմը, տեղաբաչխումը և այլն: Մարդահամարն անցկացվեց 1897 թ. փետրվարի 9-ին (հունվարի 28), սակայն արդյունքները հրապարակվեցին միայն 1904–1905 թթ.:

Համաձայն համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալների՝ Ալեքսանդրապոլ քաղաքը, ունենալով 30616 բնակչություն, թվով և բնակչության կազմի միատարրությամբ առաջինն էր Երևանի նահանգի քաղաքների մեջ[21]: 1892 թ. համեմատությամբ (25990 մարդ) քաղաքի բնակչությունն ավելացել էր 20 %-ով: Հայերը կազմում էին բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 21771 մարդ կամ 71 % (նահանգային կենտրոն Երևանն ուներ 29006 մարդ, որից հայեր էին միայն 43.2 %-ը): Քաղաքային բնակչության մնացած 29 %-ը բաժանվում էր հետևյալ կերպ. 13.2 %-ը ռուսներ էին (վերջիններիս թվի ավելացումը հիմնականում պայմանավորված էր ռուսական բանակային ստորաբաժանումների առկայությամբ, Թիֆլիս-Կարս երկաթգծի կառուցմամբ, ինչպես նաև ցարական կառավարության գաղութային քաղաքականությամբ՝ տարածքն օգտագործվում էր որպես աքսորավայր), 15.8 %-ը այլազգիներ (մոտ 20 ազգությունների ներկայացուցիչներ): 1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարը մանրամասն տեղեկություններ էր ընդգրկում նաև Ալեքսանդրապոլի ազգաբնակչության կրթական մակարդակի և գրագիտության վերաբերյալ: Այսպես՝ քաղաքում կար 10144 գրագետ մարդ (8324-ը արական, 1820-ը իգական սեռի), որից 29-ը ստացել էր համալսարանական կրթություն, 6-ը՝ բարձրագույն տեխնիկական կրթություն, 30-ը՝ հատուկ միջնակարգ կրթություն, 126-ը՝ բարձրագույն գիմնազիական

[21] Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., Эриванская губерния, кн. 71, СПб., 1905.

կրթություն և 689-ը՝ ուսումնարանական կրթություն: Վերջապես՝ մարդահամարը ի թիվս այլ հարցերի, տեղեկություններ է պարունակում նաև քաղաքային բնակչության սոցիալական կազմի վերաբերյալ. ազնվական դաս՝ 1111 մարդ, հոգևորական դաս՝ 302 մարդ, վաճառական դաս՝ 363 մարդ, արհեստավորներ և մանր առևտրականներ՝ 20240, գյուղացիներ՝ 7999, այլահպատակներ՝ 462 մարդ, այլ դասերի ներկայացուցիչներ՝ 139 մարդ:

Փաստորեն, XIX դարի 30-ական թվականների կեսերից սկսած, չնայած նորաստեղծ լինելու հանգամանքին, Գյումրի–Ալեքսանդրապոլն ամբողջ Անդրկովկասում դարձավ ամենահայեցի ու միատարր բնակչությամբ քաղաքը, իսկ դարավերջին՝ նաև Երևանի նահանգի ամենամարդաշատ բնակավայրը:

АРМЕН АЙРАПЕТЯН
ИИ НАН РА

ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В ГЮМРИ–АЛЕКСАНДРОПОЛЕ (XIX ВЕК)

РЕЗЮМЕ

К началу XIX в. Гюмри был небольшим поселком в 50 домов. Только в 1828-1829 гг. местность стала оживляться, когда примерно 1250 семей западных армян обосновались здесь и стали ядром города Александрополя. Последующему росту населения города Гюмри-Александрополя способствовало становление города уездным центром в 1840 г. В результате, с половины 30-ых годов XIX в. город стал одним из самых армянонаселенных центров в Закавказье, а уже к концу века - самым плотнонаселенным пунктом в Ереванском уезде.

ՀԱՅԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (XIX ԴԱՐԻ II ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Օսմանյան կառավարության քաղաքականությունը հայերի նկատմամբ տարբեր ժամանակներում տարբեր բնույթ է կրել: Թուրքահայերի դրությունը եղել է երբեմն անկայուն, երբեմն՝ նրանք վայելել են այն հարաբերական անդորրությունը, ինչ-որ ունեցել են երկրի մյուս ժողովուրդները: Իրենց բնածին ընդունակությունների և չինարար աշխատանքով նրանք ազատ գործունեություն են ծավալել՝ նպաստելով երկրի զարգացմանը: Հաճախ էլ ենթարկվել են հալածանքների, բռնությունների, տեղահանության ու բնաջնջման:

Մեր նպատակն է ցույց տալ, թե հայերն ինչ դեր են խաղացել Օսմանյան կայսրության վարչակառավարական համակարգում, մասնավորապես ինչ նշանավոր ծառայություններ են մատուցել կայսրությանը՝ արժանանալով մեծամեծ պատիվների և չքանշանների:

Երկրի կառավարական մեխանիզմի գլխավոր անիվները հանձնվել են հայերին, հայ ամիրաները, սեղանավորները, եվրոպական բարձրագույն կրթություն ստացած իրավաբանները, տնտեսագետներն ու ճարտարապետները տարբեր ժամանակներում զբաղեցրել են պետական բարձր պաշտոններ, արժանացել կատարել իրենց գործը, հասել այնպիսի պատիվների, որ չարժել են իրենց այլազգի պաշտոնակիցների նախանձը: Սուլթանների մեծարանքը և բարյացակամ վերաբերմունքը հայ մեծամեծների ու պաշտոնյաների նկատմամբ հաճախ ոչ պաշտոնական բնույթ է կրել: Պատվավոր կոչումներից, տիտղոսներից, առանձին զգեստ կրելու կամ գլխարկ դնելու իրավունքներից զատ, հայ շատ ամիրաներ վայելել են սուլթանների անձ-

նական մտերմությունն ու բարեկամությունը: Հաճախ սուլթանները ճաշելու կամ ընթրելու են գնացել հայ ամիրաների տուն, որի կամ զրոսանքի դուրս եկել նրանց հետ՝ որպես ամենահավատարիմ մարդկանց:

Հայ ամիրաները Թուրքիայի մեծահարուստներից էին: Նրանց մեծ մասը ֆեոդալական Թուրքիայի ջատագովներ և խոշոր հարստություն կուտակած հայ վաչխառուներ էին: Ամիրայական կապիտալը ծառայում էր և՛ բռնապետության շահերին, և՛ նպաստում հայ մեծատունների չքեղ և փառավոր ապրուստին[1]: Նրանք հաճախ են սատարել սուլթանին՝ երկրի առաջ ծառացած ծանր իրավիճակներից դուրս գալու[2]:

«Ամիրա»[3] տիտղոսը կրելու իրավունք են ունեցել օսմանյան արքունիքի սեղանավորները, վաճառապետերը, փողբանոցի, վառոդարանի տեսուչները, ճարտարապետները:

Թուրքիայում ամիրաներն ունեին մեծ ազդեցություն. որքան շատ էր նրանց հարստությունը, այնքան մեծ էր նրանց ազդեցությունը: Երեք տասնյակից ավելի ամիրաներ սուլթանից արտոնություն էին ստացել կրելու «ոսկեղեն թուրայով» (սուլթանի մենագրով) զարդարված ֆեսեր, իսկ Հարությունն Երկանյան (Ուզունյան) ամիրան՝ նաև ակնազարդ պատվոնշան[4]:

Ամիրաները տարբեր պաշտոնյաների հաշվակալներն ու դրամապահներն էին, զբաղվում էին դրամի վաճառքով, փոխանակությամբ[5]: Նրանք, որպես երկրի ազդեցիկ մարդիկ՝ մասնակից էին ազգային բոլոր գործերին[6]: Նրանց հսկողության տակ էր ազգային ողջ եկամուտը, որը ստացվում էր եկեղեցական հարկերից և նվիրատվություններից: Նրանք բարեգործական հիմնարկների հոգաբարձուներ էին, հովանավորում էին չունևոր ընտանիքների ընդունակ երեխաներին: Ամիրաներն իրենց ծախսերով կառուցում էին դպրոցներ, եկեղեցիներ, հիվանդանոցներ[7]:

Օսմանյան կառավարությունը պետական գանձարանի կենտրոնական վարչություն չուներ: Յուրաքանչյուր նախարար, կուսակալ կամ պալատական իր սեղանավորն ուներ, որը կատարում էր նրանց ծախսերը, վճարումները, բանկային գործարքները, վարկեր էր տալիս առևտրականներին, նույնիսկ սուլթաններին: Որպեսզի այս մասնավոր ծառայությունները համապատասխանեին, օսմանյան պետության հովանավորությամբ ստեղծվեց սեղանավորների միությունը՝ պետական բոլոր գանձումներն ու վճարումներն ընկերովի կատարելու համար, ինչը նպաստեց Օսմանյան կայսրությունում վաճառականության ծաղկմանը[8]: Այդ պաշտոնում ընտրվեց 12 սեղանավոր՝ բոլորն էլ հայ ամիրաներ. նրանք բաժանվեցին երկու խմբի՝ մի մասը եվրոպական, մյուսը՝ ասիական նահանգների հասույթները գանձելու և կենտրոնական գանձարան հանձնելու նպատակով: Ասիական խմբում էին Հարություն Երկանյանը, Պետրոս Քյուրքչիխանյանը, Միսաք Միսաքյանը, Մկրտիչ Ճեզայիրլյանը (Ջեզայիրլյան), Բաղդասար Ջարաղյանն ու Պողոս Աշնանյանը, իսկ եվրոպական խմբում՝ Ջանիկ Փափազյանը, Մաքսուդ Սարիմյանը, Հարություն Կելկելյանը, Աբրահամ Ալլահվերդյանը, Հովհաննես Թունկըրյանը, Հովսեփ Դավուդյանը: Միության ընդհանուր

---

[1] **Ղուկասյան Վ.**, Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը, Ե., 1975, էջ 22:

[2] 1829 թ. ռուսական բանակը մոտեցավ Կ. Պոլսին և 15 միլիոն ռուբլի պատերազմական տուգանք պահանջեց, հակառակ դեպքում սպառնալով գրավել քաղաքը: Գանձարանում գումար չկար, և սուլթան Մահմուդ II-ը հայտնվեց դժվարին կացության մեջ: Պեզճյան ամիրայի առաջարկությամբ գանձարանի հին արծաթները հալեցնելով և խառնելով պղնձի հետ, նոր դրամներ հատվեցին, դրվեցին շրջանառության մեջ, իսկ ժողովրդից հավաքված ոսկեդրամով տուգանքը վճարվեց: Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, «Սարմարա», Ստամբուլ, 17 օգոստոսի, 1967 թ.:

[3] «Ամիրա» բառն առաջացել է արաբական «էմիր», «միրմիրան» բառերից, նշանակում է հրամայող, իշխան:

[4] **Ղուկասյան Վ.**, նշվ. աշխ., էջ 23:

[5] **Չորմիսյան Լ.**, Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, հ. Ա, 1850–1878, Բեյրութ, 1972, էջ 163:

[6] **Աճառյան Հ.**, նշվ. աշխ.:

[7] **Ղուկասյան Վ.**, նշվ. աշխ., էջ 23:

[8] **Նույն տեղում:**

նախագահն էր երկանյանը, եվրոպական ճյուղի փոխնախագահը՝ Փափազյանը[9]:

XIX դարում Թուրքիայի տնտեսության տարբեր բնագավառների զարգացման գործում թուրքերը պարտական են առաջին ամիրային՝ արքունի ճարտարապետ Գրիգոր Պալյանին ու նրա զերդաստանին, պետության վառոդապետեր Դադյաններին (Տատյան): Նրանք 100 տարի շարունակ ժառանգաբար ղեկավարել են Թուրքիայի զինագործությունը, թղթի արտադրությունը, ապահովել՝ բանակի հանդերձավորումը[10], Դյուզյաններին (Տուզյան)՝ որոնց վստահված էր պետական գանձարանի (փողերանոց) պատասխանատվությունը: Ջեզայիրլյաններն (Հովսեփյանց) օժանդակել են օսմանյան պետությունում առաջին թատրոնի կառուցմանը, ղեկավարել Կայսրության մաքսատները, նպաստել գյուղատնտեսության և մետաքսագործության զարգացմանը[11]: Նրանց անձնական ծախսերով կառուցվել են մետաքսի գործարաններ[12]: Մոմագործությունը Մումջյանների ամիրայական զերդաստանի մենաշնորհն էր[13]:

Ամիրաներից նշանավոր էին Աբրահամ Ալլահվերդյանը (1791–1861) (տնտեսագետ-դրամափոխ), Հարություն Ասլանյանը (1852–1917) (ծովային երթևեկության պետական հատուկ ապահովման վարիչ)[14], Գևորգ ամիրա Փափազյանը (Բահչևանօղլու) (1807–1885)[15]: Հայտնի էին Քարաքահյանների (Աբրահամ փաշան նավիրի պաշտոն է վարել Աբդուլ Համիդի օրոք), Փիշմիշյանների (Գրիգորը և հաջի Զելեպի Հովհաննեսը 1797–1868 զբաղվել են սեղանավորությամբ, Մովսեսը՝ իրավագիտությամբ, Հարությունը՝ տնտեսագիտությամբ)[16], Ադնավուրյանների (Ադնավուր ամիրան և նրա զավակներ՝ Գասպարը և Հովհաննեսը՝ սեղանավորությամբ), Երկանյանների (Հարությունը, Հովհաննեսը և Երամը՝ սեղանավորությամբ), Խորասանջյանների (իրավագիտությամբ և բժշկությամբ) զերդաստաններն[17]:

Օսմանյան կառավարությունը խուսափում էր նախարարություններն ամբողջովին հայերին հանձնելուց: Նրա որոշմամբ յուրաքանչյուր թուրք նախարարի մեկ հայ էր կցվում՝ որպես խորհրդական կամ օգնական: Ռեշիդ փաշայի մոտ Հակոբ Կրճիկյանն էր, ծովակալ Մեհմեդ Ալի փաշայի մոտ՝ Հովսեփ Վարդան փաշան, Եպարքոս Ալի փաշայի մոտ՝ Համամջյանն ու Սեֆերյանը, Ֆուադ փաշայի մոտ՝ Սերվիչենն ու Սահակ Ապրոն, Մահմուդ Նեդիմ փաշայի մոտ՝ Արթին փաշա Դադյանը, Ջևդեթ փաշայի մոտ՝ Վահան Էֆենդին, Միդհատ փաշայի մոտ՝ Գրիգոր Օտյանը, Ինվիզ Սայիդ փաշայի մոտ՝ Նուբյանը, Սերվեթ փաշայի մոտ՝ Կոստանդ փաշան, Սայիդ փաշայի մոտ՝ Ազաբեգյան Սարգիս Էֆենդին[18]:

Սուլթան Աբդուլ Մեջիդի (1839–1861) ժամանակ հայերի դերն ավելի զգալի դարձավ պետական քաղաքականության և դիվանագիտության բնագավառում: Այդ ժամանակաշրջանի փայլուն դիվանագետներից էր կարապետ Արթին Դավուդյանը (1816–1873): Նա 1846–1867 թթ. վարել է Բեռլինում թուրքական դեսպանի պաշտոնը, 1861 թ. դարձել է Լիբանանի կառավարիչ: Դիվանագիտական ծառայության մեջ փայլող հայերից էին Տիրան Ալեքսանյանը (Բրյուսել), Սարգիս Համամջյանը (Հռոմ): Ընդհանուր հյուպատոսներ են եղել Մանուկ Ազարյանը

---

[9] **Մաղաքիա արք. Օրմանյան**, Ազգապատում, հ. Գ, Ս. Էջմիածին, 2001, էջ 4307–4308:
[10] **Ազատյան Թ.**, Տատյան գերդաստանը և իր ականավոր դեմքերը, Իստանպուլ, 1952, էջ 12, **Pamukciyan K.**, Zamanlar, Mekânlar, Insanlar, III c, Instanbul, 2003, s. 127.
[11] **Yarman A.**, Osmanlı Sağlık Hizmetlerinde Ermeniler ve Surb Pırgiç Ermeni Hastanesi Tarihi, Istanbul, 2001, s. 85:
[12] «Բանասեր», Կ. Պոլիս, 1851, N 1–12, էջ 314:
[13] **Yarman A.**, նշվ. աշխ., էջ 78:
[14] **Ալպոյաճյան Ա.**, Պատմություն Եվդոկիոյ հայոց, Կահիրե, 1952, էջ 1667:
[15] **Pamukciyan K.**, նշվ. աշխ., էջ 123:

[16] **Ազատյան Թ.**, Սկզ և ակնցիք, Ազգագրական և կենսագրական հիշատակարան, Իսթանբուլ, 1943, էջ 50:
[17] **Yarman A.**, նշվ. աշխ., էջ 78–82:
[18] **Աճառյան Հ.**, նույն տեղում:

(Պետերբուրգ), Միհրան Գավաֆյանը (Վիեննա, Հռոմ), Հրանտ բեյ Թուզը (Մեսինա), Մինաս Երամը (Նեապոլ)[19]:

Հայերը վարել են նաև նախարարական պաշտոններ: Դրանք այն նախարարություններն էին, որոնք մասնագիտական հմտություն էին պահանջում՝ ելևմտական, երկրագործական, Հանրօգուտ Շինության: Առաջին հայ նախարարը Հանրօգուտ Շինության նախարար Գրիգոր Աղաթոնն էր (1825–1868)[20]: Նրա մահից հետո այդ պաշտոնը ստանձնել է Դավուդ փաշան (Կարապետ Արթին Դավուդյան), այնուհետև՝ Հովհաննես Ջամիչը:

Սուլթանների անձնական գանձապետի պաշտոնը հայերի մենաշնորհն էր: Հակոբ փաշա Գազազյանը, Միքայել փաշա Փարթուգալը, Հովհաննես փաշա Սագըզը հաջորդաբար վարել են այդ գործը: Նրանք կոչվել են «Սուլթանի անձնական գանձերի նախարար»: Հակոբ փաշա Գազազյանը սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք, վարել է ելևմտական նախարարությունը[21]: Նրա մահից հետո այդ պաշտոնն ստանձնեց Միքայել Փարթուգալ փաշան (1842–1897), որը Պոլսում ծրագրել և իրականացրել է լրագրերի դրոշմի և դրոշմաթղթի մասին օրենքը: Դրանից հետո Միքայել փաշան դարձել է ելևմտից նախարարության խորհրդական: Ստացել է վեզիրության բարձրագույն աստիճան, ունեցել է «Օսմանի», «Մեջիդի», «Իմթիազի» ոսկե և արծաթե չքանշաններ և այլ տերությունների պատվոնշաններ: Նշված պաշտոններից բացի վարել է կրթության բարձրագույն հսկիչի պաշտոնը:

Հովհաննես փաշա Սագըզը 1857 թ. աշխատել է բարձրագույն դռան Արտաքին գործերի թարգմանությունների բաժնում: 1863 թ. եղել է մամլո տեսուչ, 1868 թ. Պետական խորհրդի դատական «Առաջին» խորհրդական, 1872 թ. Առևտրի նախարա-

[19] «Հայ հանդես», թիվ 10, 15 հունվար, 1903, Վենետիկ, էջ 145: Սիրունի Հ., Պոլիս և իր դերը, հ. IV, Անթիլիաս, 1988, էջ 291:
[20] Նույն տեղում, էջ 288:
[21] Նույն տեղում, էջ 289–290:

բության, 1875 թ. Առևտրական վերաքննիչ ատյանի, 1876 թ. Հանրային կրթության նախարարության խորհրդական, 1877 թ. եղել է Պետական խորհրդի անդամ, 1879 թ. հաշվակալության ատյանի ընդհանուր դատախազ: 1896 թ. պետական խորհրդի բաղաքային բաժնի, 1897–1908 թթ. կայսերական դանձերի նախարար[22]:

1910 թվականից Թուրքիայի փոստի և կապի նախարարը Ոսկան բեյ Մարտիկյանն էր, «որ օրինակելի կարգ-կանոն էր մացրել այդ նախարարության մէջ եւ գովեստի արժանացել»[23]:

Օսմանյան կայսրությունում փաշայի տիտղոսը տրվում էր բաղաքացիական և զինվորական ամենաբարձր աստիճանավորներին: Փաշայի տիտղոս կրող քաղաքացիական ամենաբարձր աստիճանավորը վեզիրն էր:

Հայ առաջին փաշան Կարապետ Արթին Դավուտյանն էր: Նա այդ տիտղոսը ստացել էր 1860 թ. Լիբանանի կառավարիչ նշանակվելու կապակցությամբ[24]: Փաշայության տիտղոս ունեին Հակոբ Գազազյանը, Միքայել Փարթուգալը, Հովհաննես Սագըզը և Հարություն Դադյանը: Թուրքիայի պաշտոնական ցուցակներում իբրև փաշաներ նշված են նաև Եգիպտոսի կրթության նախարար Յագուպ Արթինը, արտաքին գործերի նախարար Տիգրան փաշա Ապրոն և Պողոս Նուբար փաշան: Մեծահարուստ Երամյանների ընտանիքից փաշայության տիտղոս ուներ Աբրահամ Երամյանը:

Հովսեփ Վարդանյան փաշան (1815–1879) 1837 թ. աշխատել է իբրև թարգման՝ ծովային նավատորմում, հասել է ավագ թարգմանի պաշտոնի[25]: 25 տարի զինվորական ծառայությունից հետո 1860 թ. անցել է քաղաքացիական պաշտոնների: Զբաղվել է հրապարակագրությամբ: 17 տարի չարունակ (1855–1872 թթ.)

[22] Նույն տեղում:
[23] Ամատունի Գ., Հայերի մատուցած ծառայությունները, «Ջարթոնք», Բեյրութ, 11 սեպտեմբերի 1970 թ.:
[24] Սիրունի Հ., նշվ. աշխ., էջ 294:
[25] Սիրունի Հ., նշվ. աշխ., էջ 295:

հրատարակել է «Մեճմուայի հավատիս» («Իրադարձությունների հանդես») հայատառ թուրքերենով լրագիրը, հետո աշխատակցել է Կ. Փանոսյանի «Մանզումեի էֆքեարին» («Մտքադարան») և խմբագրել է «Թերջումանը էֆքեարին» («Մտքերի թարգման, արտահայտիչ») մինչև իր մահը[26]:

Անտոն փաշա Թընկըրյանը («Յավեր փաշա») (1815–1908) 1857 թ. նշանակվել է արքունի նավատորմի ընդհանուր քննիչ, 1859 թ. ստացել է միրիլիվայության (գեներալ-մայոր) աստիճան, 1868 թ. զարձել պետական խորհրդի անդամ: Նրան շնորհվել է Ռումելիի բեյլերբեյության աստիճան: 1876 թ. եղել է Օսմանյան թղթատարության վերատեսուչ, 1881 թ. հանրային պարտուց վարչության քննիչ, 1903 թ.՝ եվմտական բարձր խորհրդի անդամ:

Արտաքին գործերի նախարարությունում խորհրդական են աշխատել Հովհաննես Գույումջյանը, Մանուկ Ազատյանը, նույն նախարարության տարբեր դրասենյակներում տեսուչներ են եղել Հմայակ և Նշան Սեֆերյանները, եվմտական նախարարությունում՝ Միհրան Գարագաշյանը, Սերովբե Բերբերյանը և Պետրոս Քերեսթեճյանը[27], Պաշտպանության, Հանրօգուտ շինության նախարարություններում՝ Միքայել Մամիկոնյանը, Մկրտիչ Սինապյանը և Գևորգ Ասլանը:

Հաշվակալության ատյանի անդամներ են եղել Գրիգոր Խտրյանը, Հովհաննես Ալլահվերդյանը և Կարապետ Գարագաշը, արքունի կալվածքների կառավարիչներ՝ Հարութ Զեքին և Մկրտիչ Հեքիմյանը: Իրենց հանրային գործերով, պետական ծառայություններով, առևտրական գործունեությամբ հայտնի էին Գևորգ Փաստմանյանը, Հարություն Ղազարյանը վանի

[26] Զարդարյան Վ., Հիշատակարան (1512–1933), հ. Ա–Ե, Կահիրե, 1933–1939, էջ 8–24:
[27] Սիրունի Հ., նշվ. աշխ., էջ 292:

կուսակալի օգնական Մարկոս Աղաբեգյանը, Ավետիս և Լևոն Ջրաուեյանները[28]:

XIX դարի երկրորդ կեսից շատ հայեր գործել են նաև դատական ատյաններում՝ վարելով բարձր պաշտոններ, նպաստել Օսմանյան կայսրության իրավագիտության զարգացմանը: Դատական տեսչությունը Թուրքիայում ուներ երկակի կառուցվածք՝ դատական հաստատություններ մուսուլմանների համար՝ Շերիե և ընդհանուր դատական հաստատություններ մուսուլմանների և ոչ մուսուլմանների համար՝ Նիզամիե: Շերիեի դատարանները կիրառում էին Ղուրանի վրա հիմնված կրոնական և քաղաքացիական օրենքներ[29]: Ընդհանուր դատարանները քննարկում էին քաղաքացիական բոլոր վեճերը մուսուլմանների և ոչ մուսուլմանների միջև և նրանց կողմից կատարված բրեական գործերը[30]: 1874 թ. Կայսերական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հիմնադրումը[31] լայն ասպարեզ բացեց Թուրքիայում իրավագիտության զարգացման, ինչպես նաև հայերի համար, ովքեր կարճ ժամանակում բարձր դիրքեր գրավեցին այդ համակարգում: Այստեղ դասավանդում էին նաև հայ մասնագետներ՝ Սահակ Գարայանը, ով երկար տարիներ անդամակցել է Առևտրական առաջին դատարանին[32], հետո եղել է վճռաբեկ ատյանի անդամ, դասավանդել «Քաղաքացիական դատավարություն»[33]: Ս. Գարայանը արժանացել է «Երրորդ»

[28] Ալպոյաճյան Ա., Պատմություն Եվդոկիո հայոց, էջ 1338:
[29] **Убичини А., П. де Куртейль,** Современное состояние Оттоманской империи. (статистика, правление, администрация, финансы, армия, общины немусульманские и пр.), С.-Петербург, 1877, с. 125—126.
[30] Նույն տեղում, էջ 128:
[31] Իրավագիտական ֆակուլտետը ստեղծվել է Կայսերական վարժարանի «Իրավունքի և քաղաքական տնտեսության» ամբիոնի փակման հետևանքով (նույն տեղում, էջ 142):
[32] Առևտրական դատարանները ստեղծվել էին 1847 թ., բայց վերջնականապես կազմավորվել են 1860–ականներին: Բաղկացած էին երկու դեպարտամենտներից՝ ցամաքային առևտրի և ծովային առևտրի (նույն տեղում, էջ 132):
[33] Ընդարձակ տարեցույց Ազգային հիվանդանոցի, Կ. Պոլիս, 1931, էջ 145:

կարգի «Օսմանի» շքանշանի[34]: Գրիգոր Զոհրապը դասավանդել է «Իրավագիտության պատմություն», փաստաբան Հմայակ Խոսրավյանը «Միջազգային իրավագիտություն», փաստաբան Տիրան Քելեկյանը «Քրեական դատավարության օրենք» առարկաները[35]:

Հովհաննես Վահանյանը 1860 թ. ընտրվել է նորաստեղծ Առևտրական դատարանի անդամ, 1864 թ. Առևտրական երկրորդ դատարանի նախագահ, 1868 թ. Առևտրական գործերով փոխնախարար, 1871 թ. Կրթության նախարարի խորհրդական, 1872–73 թթ. Գալաթա-Սարայի վարժարանի տնօրեն, 1872 թ. Հանրօգուտ շինության նախարարի խորհրդական, 1875 թ. Արդարադատության նախարարի խորհրդական[36]: 1877 թ. դառնում է Առևտրական առաջին դատարանի նախագահ, որի անդամներից չատերը հայեր էին: Այս ատյանը օտար և օսմանյան հպատակների դատերն էր վարում. նրա վճիռները անվերաքննելի էին[37]: Վահան Էֆենդին 1873-ից մինչև իր մահը, 1891 թ., եղել է պետական խորհրդի անդամ[38]:

Հարություն Մոստիճյանը 1881 թ. պաշտոնավարել է Կ. Պոլսի նախագահ ատյանում՝ որպես քննիչ, 1884 թ. եղել է վերաքննիչ ատյանի օգնական-անդամ, 1896 թ. ընտրվել է Բերայի նորակազմ Պատժական երկրորդ դատարանի անդամ, 1905 թ. նշանակվել է Ադրիանապոլսի և Սալոնիկի դատական քննիչ, 1906 թ. Հուսեին Հիլմի փաշայի օգնական՝ իբրև Ռումելիի բարեկարգության ընդհանուր քննիչ, 1908 թ. Մանաստիրի դատական քննիչ[39]:

Միսակ Մակարյանը 1901 թ. դատական քննիչ էր Միջերկրական կղզիներում, 1906 թ. Էդիրնեի դատական քննիչ, 1914 թ.

[34] «Բյուզանդիոն», 1994, 28 դեկտեմբերի:
[35] Ընդարձակ տարեցույց, Ազգային հիվանդանոցի, Կ. Պոլիս, 1931, էջ 145:
[36] Ալպոյաճյան Ա., Պատմության հայ Կեսարիո, հ. Բ, Կահիրե, 1937, էջ 2118:
[37] «Հայ հանդես», Վենետիկ, 15 հունվարի, 1903 թ., էջ 146:
[38] Սիրունի Հ., նշվ. աշխ., էջ 296:
[39] Ընդարձակ տարեցույց Ազգային հիվանդանոցի, էջ 146:

Բերայի հարցաքննիչ դատավոր, Քաղաքային և Պատժիչ դատարանների անդամ, վերաքննիչ դատարանի անդամ[40]:

Արթուր Մազաքյանը 1908 թ. եղել է Ադանայի նահանգի վերաքննիչ ատյանի ընդհանուր դատախազ, այնուհետև՝ Սալոնիկի պատժիչ դատարանի նախագահ, Առևտրական դատարանի նախագահ, Վերաքննիչ ատյանի առևտրական ճյուղի նախագահ, Դատական քննիչ մարմնի նախագահ, Վճռաբեկ ատյանի անդամ, փաստաբան[41]:

Հմուտ իրավագետ և գրող Հրանտ Ասատուրը Կ. Պոլսի Մովային առևտրական դատարանի, նաև պետական խորհրդի անդամ էր[42], Սարգիս Գարագոչը Դատական նախարարության օրենքների կարգավորման բաժնի պետ էր, պետական օրենքների հեղինակ, արժանացել է բազմաթիվ պարգևների[43], Վռամշապուհ Մանուկյանը եղել է Պոլսի Առևտրական վերաքննիչ ատյանի, նաև Առաջին դատարանի նախագահ, Վճռաբեկ ատյանի անդամ[44], Տիգրան Ումճյանը Մովային առևտրական դատարանի անդամ է եղել, արժանացել է «Մեջիդի» պատվոնշանի[45], Վիչեն Հոդոջյանը եղել է Առևտրական առաջին դատարանի անդամ, արժանացել է «Օսմանի» երրորդ կարգի շքանշանի[46], Գևորգ Մնձատուրյանը 1890–1891 թթ. զբաղվել է փաստաբանությամբ, 1909–1912 թթ. եղել է Էրզրումի ընդհանուր դատախազ[47]: Խոբասանճյան Պետրոս բեյը՝ բժիշկ Խորասանճյանի որդին, Հանրօգուտ շինության նախարարությունում վարել է իրավագետ խորհրդականի պաշտոն[48]: Կարապետ Շահպազը արդարադա-

[40] Նույն տեղում:
[41] Նույն տեղում:
[42] Նույն տեղում, էջ 147:
[43] «Բյուզանդիոն», 22 փետրվարի 1902 թ.:
[44] Ընդարձակ տարեցույց..., էջ 141:
[45] «Բյուզանդիոն», 13 հոկտեմբերի 1905 թ.:
[46] Տեր-Պետրոսյան Հ., Հայերու սատարը թուրք մշակույթին և տնտեսությանը, Կահիրե, 1976, էջ 246:
[47] Ազատյան Թ., Ակն և ակնցիք..., էջ 106:
[48] Նույն տեղում, էջ 104:

տուքյան բնագավառում սկսել է իր աշխատանքը որպես Նախադատ ատյանի անդամ, 1873–1879 թթ. Վերաքննիչ ատյանի, 1884 թ. Վճռաբեկ ատյանի անդամ[49]:

Շահպազը դասավանդել է իրավագիտական վարժարանում «Միջազգային իրավունք» և «Առևտրական իրավունք» առարկանները[50]: Նշված ժամանակահատվածի դատական ատյանների բարձրաստիճան պաշտոնյաներից, որոնք պաշտոնավարել են Թուրքիայի տարբեր շրջաններում, հիշատակելի են Ռաֆայել Ռաֆայելյանը՝ Ադրիանապոլսի Վերաքննիչ ատյանի անդամ, Ամբաստանիչ ատյանի նախագահ, Գրիգոր Մուրադյանը՝ Տրապիզոնի դատական քննիչ, Մելքոն Պարոնիկյանը՝ Կ. Պոլսի Քաղաքային դատարանի անդամ, Գրիգոր Քյուրեքյանը՝ Բերայի Նախնական դատարանի անդամ, Թորոս Սարյանը՝ Լիմնոսի դատարանի նախագահ, Միհրան Մարկոսյանը՝ Մուշի դատավոր, Լևոն Կարապետյանը՝ Կ. Պոլսի Ծովային առևտրական դատարանի նախագահ, Կարապետ Այնեյանը՝ Վանի, Բլեյիխի դատական քննիչ, Արամ Դարադյանը՝ Թոքաթի դատավոր, Գաբրիել Գաբրիելյանը՝ Կ. Պոլսի Առևտրական երկրորդ դատարանի նախագահ: Վերաքննիչ ատյանի անդամներ էին. Դավիթ Ուրֆալյանը՝ Ադանայում, Գևորգ Խորասանճյանը՝ Իզմիրում, Պողոս Նեջարը՝ Մանասթըրում, Գրիգորիս Մկրտչյանը՝ Պրուսայում, Նշան Անդրիասյանը՝ Սեբաստիայում, Մարտիրոս Խաֆաֆյանը՝ Էրզրումում: Բարձրաստիճան տարբեր պաշտոնյաներ էին Հովհաննես Ալեքսանյանը, Տիգրան Յուսուֆյանը, Թագվոր Համամճյանը, Արթուր Մաղաքյանը, Թորոս Սարաջը և այլոք[51]:

Այսպիսով, XIX դ. II կեսին – XX դ. սկզբին հայերը, հանդիսանալով օսմանյան պետության ամենաքաղաքակիրթ ու գործունյա ազգը, գործել են երկրի տնտեսության տարբեր բնագավառներում՝ սատարելով այդ երկրի տնտեսության ծաղկմանն ու բարգավաճմանը, անգնահատելի ծառայություններ են մատուցել հանրային կյանքի զարգացմանը: Թուրքիայի ազգայնամոլ կառավարիչները չէին հաշվում այն մտքի հետ, որ միևնույն տնտեսական և քաղաքական պայմաններում ապրող թուրքերը զիջում էին հայերին, ովքեր գերազանցում էին իրենց ձեռներեցությամբ, արհեստների իմացությամբ, երկրագործության ասպարեզում փորձառությամբ, կրթական համակարգով:

Դա պատճառներից մեկն էր, որ օսմանյան կառավարությունը ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի բնաջնջմանը՝ որոշելով մեկընդմիշտ ազատվել անցանկալի տարրից:

[49] Ալպոյաճյան Ա., Պատմության հայ Կեսարիո, հ. Բ, Կահիրե, 1937, էջ 2121:
[50] Նույն տեղում, էջ 45:
[51] Ընդարձակ տարեցույց ..., էջ 148:

НАИРА ГИНОСЯН
ИИ НАН РА

АРМЯНЕ В АДМИНИСТРАТИВНО – УПРАВЛЕНЧЕСКОЙ СИСТЕМЕ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ
(вторая половина XIX – начало XX века)

РЕЗЮМЕ

Во второй половине XIX – начале XX вв. армяне, обладая разносторонними природными дарованиями и большой любознательностью, являлись самой культурной и трудолюбивой нацией многонациональной Османской империи. Важнейшие механизмы государственной власти находились в руках армян. Армянские амира, высококвалифицированные юристы, экономисты, архитекторы и. т. д., занимая высокие государственные посты, с честью выполняли свою работу, тем самым способствуя развитию различных областей экономики Османской империи.

ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՑԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՍԵԲԱՍՏԻԱ ՔԱՂԱՔԻ ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Մինչև 19-րդ դարի առաջին քառորդը Սեբաստիայի սանջակի հայաբնակ շրջաններում այժմյան ըմբռնմամբ դպրոցներ չկային: Եկեղեցիներին կից գործում էին դպրատներ, որոնց մեջ դասավանդում էին տիրացուները: Նրանք լավագույն դեպքում սովորեցնում էին թվաբանության չորս գործողությունները, կրոնական գիտելիքներ և եկեղեցական երաժշտություն: 1839 թ. Սեբաստիա քաղաք այցելած մի ճանապարհորդ նշում է, որ Սեբաստիան ուներ ընդհամենը 170 աշակերտ[1]: Սեբաստիայի սանջակի դպրոցների մեծ մասը 19-րդ դարի վերջին կենտրոնացած էր Սեբաստիա քաղաքում:

Սեբաստիայի կրթական գործի բարեկավմանը մեծապես աջակցեցին Կ. Պոլիս գաղթող սեբաստահայերը: Հենց նրանց կողմից 1860-ական թթ. ստեղծվեց «Սենեքերիմյան ընկերությունը», որը հոգաց 1818 թ. Սեբաստիա քաղաքի Բազար թաղի ս. Աստվածածին եկեղեցու մեջ հաստատված ս. Թարգմանչաց վարժարանի ֆինանսական աջակցության և դեկավարման խնդիրները[2]:

1851 թ. սեբաստացի երկու կրթասեր անձնավորություններ՝ Հովսեփ և Գևորգ Օտապաշյան եղբայրները, իրենց ծախսով նոր, ընդարձակ, փայտակերտ, երկհարկանի դպրոցական հոյակապ շենք են կառուցում և «նվիրում ազգին»[3]: Մայր վարժարանը տեղափոխվում է այս նորաշեն շենքը և այնուհետև սկսում կոչվել «Ս. Թարգմանչաց վարժարան»: Այս վարժարանի

[1] Առաքել Պատրիկ, Պատմագիրք հուշամատեան Սեբաստիոյ եւ գավառի հայութեան, հ. Ա, Պէյրութ, 1974, էջ 448:
[2] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 193, ց. 1, գ. 792, թ. 5:
[3] Նույն տեղում: Նաև՝ «Մասիս», Կ. Պոլիս, 1856, թիվ 36:

կրթական մակարդակը ժամանակի համար բավականին բարձր է եղել:

1858 թ. աշակերտների համար մասնակի գիտելիքների ստուգում է անցկացվում: Քննական առարկաներն էին կրոնի պատմությունը, հայոց պատմությունը, ինչպես նաև կատարվում էր ավետարանի թարգմանություն, հայոց լեզվի քերականական գիտելիքների ստուգում: Աշակերտների մեջ ոգևորություն առաջացնելու նպատակով քննությունը հաջողությամբ հանձնած աշակերտները պարգևատրվում էին մրցանակներով: Նույն տարվա օգոստոսի 24-ին տեղի ունեցած տարեվերջյան հանդեսին ներկա են գտնվել շուրջ 2000 մարդ, որից հետո տեղի է ունեցել հետևյալ քննական առարկաներից սաների քննությունը՝ հայոց լեզու (արտասանություն, քերականական գիտելիքների ստուգում), թուրքերեն, թվաբանություն, վերլուծություն[4]:

1862 թ. վարժարանի շենքը նորոգման կարիք ուներ: 1868 թ. վերակազմվում է 1860-ական թթ. սկզբներին կազմավորված «Սենեքերիմյան ընկերությունը», և այժմ նրա անդամները նոր եռանդով լծվում են մայր վարժարանը նորոգելու և ավելի ընդարձակելու գործին: Նշենք, որ նույն 1868 թ. օսմանյան կառավարությունը պետական վարժարան է բացում Սեբաստիայի մեջ: Ս. Թարգմանչաց վարժարանի 20 առաջադեմ աշակերտներ տեղափոխվում են այդ վարժարան[5]:

Ուշագրավ է, որ տարեցտարի ս. Թարգմանչաց վարժարանի ուսումնական ծրագրում տեղ էին գտնում նորանոր առարկաներ: Այսպես՝ 1867 թ. Քրիստափոր Ղազարյանը սկսում է դասավանդել տրամաբանություն, սեբաստացի Հարություն Թաչճյանը, ով ս. Փրկչի վարժարանը ավարտելուց հետո երկար տարիներ ապրել էր ԱՄՆ-ում՝ բարոյական իմաստասիրություն, Պետրոս Պա-

[4] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 792, թ. 8:
[5] Նույն տեղում, թ. 9:

լոգյանը՝ անգլերեն լեզու առարկաները[6]: Սկսում են դասավանդվել նաև ֆրանսերեն, աշխարհագրություն, թվաբանություն առարկաները[7]: Այն, որ այս վարժարանում ուսումնական մակարդակը բավականին բարձր է եղել, վկայում է նաև մի ճանապարհորդ, ով 1869 թ. այցելել էր ս. Թարգմանչաց վարժարան: Նա նշում է, որ թե՛ ս. Թարգմանչաց և թե՛ Ներսիսյան վարժարաններում ուսումը բավականին ծաղկած վիճակում է գտնվում, մայրենի և օտար լեզուների ուսուցումը դոհացուցիչ է և այս երկու վարժարանները Փոքր Հայքում ամենաառաջադեմն են[8]: Վարժարանն ավարտած աշակերտների չարքերում կային այնպիսիք, ովքեր հեռագրատան մեջ պաշտոններ էին զբաղեցնում, իսկ ոմանք էլ հայերեն լեզվի դասախոսություններ էին կարդում[9]:

Արդեն 1875–1876 թթ. ուստարում վարժարանի երկրորդ հարկում ուսանում էին բարձր դասարանների 200 աշակերտներ: Նրանք սովորում էին թվաբանություն, հայոց լեզու, աշխարհագրություն, տրամաբանություն, ճարտասանություն, հայոց պատմություն, թուրքերեն և ֆրանսերեն լեզուներ[10]: Առաջին հարկում 90 տղա էր ուսանում, որոնք միայն ընթերցանությամբ էին զբաղվում: Այստեղ էր գտնվում «Անձնվեր ընկերության» թանգարանը, ուր պահվում էին բազմատեսակ գրքեր[11]:

Մեծ բանահավաք Գ. Սրվանձտյանցը, որն անձամբ շրջել էր Սեբաստիա քաղաքի վարժարաններում, բաժանված էին թաղերի մեջ, 1878 թ. այցելել էր նաև ս. Թարգմանչաց վարժարան: Վերջինս, խոսելով այդ ժամանակի համար բավականին առա-

[6] Նույն տեղում:
[7] Այս առարկաների ուսուցիչների անուններն անհայտ են:
[8] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 792, թ. 9:
[9] **Նաթանեան Պ.**, Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Սեբաստիոյ եւ անոր կուսակալութեան ներքեւ գտնուող մէկ քանի գլխաւոր քաղաքաց, Կ. Պոլիս, 1877, էջ 89:
[10] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 792, թ. 12 (Հայոց լեզու դասավանդում էր Թադեոս Կեզիվրյանը, աշխարհագրություն՝ Սիմոն Թերզյանը):
[11] **Նաթանեան Պ.**, նշվ. աշխ., էջ 89:

ջընթաց ապրող ուսումնական հաստատության մասին, այն հիշատակում է իբրև «Սեբաստիայի մեծ ուսումնարան»[12]: Շարունակելով միտքը՝ հեղինակն ավելացնում է, որ ս. Թարգմանչաց վարժարանի ավագ վարժապետը Թադեոս Կեզիվրյանն էր, ում թուրքերն Աչըղ Մոլլա էին անվանում: Վերջինս կույր էր, սակայն կարողանում էր դասավանդել ճարտասանություն, գրագիտություն, տրամաբանություն, պատմություն, կրոնագիտություն, գրականություն, գիտեր նաև պարսկերեն[13]: Երաժշտության ուսուցիչն էր վարժարանի դաստիարակ Հակոբ Մեսիայանը:

1880 թ. «Մասիս» օրաթերթի հաղորդած տվյալների համաձայն՝ ս. Թարգմանչաց վարժարանն այդ ժամանակ բաժանված էր 3 մասի՝ ծաղկոց, նախակրթարան, ուսումնարան: Ուսումնարանն ուներ 30 աշակերտ, նախակրթարանը՝ 70, իսկ երկուսը միասին ունեին 6 ուսուցիչ և 1 դաստիարակ: Ընդհանուր վարժարանն ուներ 155 աշակերտ և 2 ուսուցիչ[14]:

1888 թ. վարժարանում սովորող աշակերտների թիվը արդեն հասել էր 300-ի: Նույն ժամանակ վարժարանի ուսումնական ծրագրում նախկինում դասավանդվող առարկաների կողքին արդեն տեղ էին գտել այնպիսի նոր առարկաներ, ինչպիսիք էին՝ իրավագիտությունը, գծագրությունը, մարմնամարզությունը, բժշկագիտությունը և տարբեր արհեստներ: Վարժարանի տնօրենը և գլխավոր ուսուցիչը Մարտիրոս Պոկճյանն էր, կրոնի ուսուցիչը՝ Հովսեփ քահանա Արծրունին: Ուսուցիչների թվում էին նաև Կարապետ Գաբիկյանը, Սենեքերիմ Քյուրքչյանը, Հաբրություն Զաքարյանը, Պետրոս Մարտիրոսյանը, Վաղարշակ Կիվլեզյանը, Թադեոս Տերտերյանը, Մատթեոս Մազմանյանը[15]:

XX դարի սկզբին ս. Թարգմանչաց վարժարանը չարունակում էր կարևոր դեր խաղալ Սեբաստիայի կրթական կյանքում:

[12] **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հ. 2, Ե., 1982, էջ 243:
[13] Նույն տեղում:
[14] «Մասիս», Կ. Պոլիս, 1880, թիվ 2779:
[15] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 792, թ. 14: Նաև **Առաքել Պատրիկ**, նշվ. աշխ., էջ 462:

1901–1902 թթ. Կ. Պոլսի պատրիարքարանի կազմած վիճակագրության համաձայն՝ այն ուներ 2 կարգ՝ ուսման տևողություն կազմելով մեկ տարի երկու ամիս, ուր ուսանում էին 107 աշակերտներ[16]: Վարժարանի աշակերտների թիվը հետագայում աճեց և արդեն 1908 թ. հասավ 200-ի[17]:

Ցավոք, այս վարժարանը, ինչպես և բազում այլ թաղային վարժարաններ, 1909 թ. վերածվեցին մանկապարտեզների, և միայն Արամյան վարժարանն էր, որ պահպանեց իր կարգավիճակը:

Այսպիսով, ս. Թարգմանչաց վարժարանն իր բարձրակարգ ուսուցչական կազմով, ուսումնական ծրագրով և աշակերտների բազմությամբ աչքի ընկնող ուսումնական կենտրոն էր, որը XIX դարի վերջին և XX դարի սկզբին մեծ ներդրում ունեցավ Սեբաստիայի կրթական մակարդակը բարձրացնելու գործում:

Սեբաստիա քաղաքի հայությունը վաղուց ի վեր նոր և ընդարձակ ուսումնական կենտրոնի կարիք էր զգում: 19-րդ դարի կեսերին հիմնված ս. Թարգմանչաց վարժարանը այլևս չէր բավարարում հետզհետե աճող հայ բնակչության պահանջներին: Դա էր պատճառը, որ 1878 թ. Կ. Պոլսի սեբաստացի պանդուխտներ խնդրագրով դիմեցին Բ. Դռանը այսպիսի վարժարան կառուցելու համար տրամադրելու 1500 մ^2 տարածք: 1879 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում, անգլիական հյուպատոսի միջնորդությամբ, Սեբաստիայի կուսակալը 1500 մ^2 տարածք է տրամադրում վարժարանի շինարարության համար[18]: Սակայն, ի վերջո, թուրք պաշտոնյաները համաձայնվեցին միայն 850 մ^2 տարածք տրամադրել[19]: Այդ տարածքը գտնվում էր Սեբաստիա քաղաքի «Սև հողեր» կոչվող վայրում՝ ս. Գևորգ անունով մատուռի հարևանությամբ:

[16] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 792, թ. 14:
[17] Նույն տեղում:
[18] Նույն տեղում, գ. 805, թ. 1:
[19] Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., էջ 486:

Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հայերը որոշում են հանգանակություն կատարել: Բացի տեղի հանգանակություններից, Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից Իզմիածին է ուղարկվում Սեբաստիայի մայր եկեղեցու ավագ քահանա Ղևոնդ Տեր-Գաբրիելյանը[20]: Վերջինս լինում է նաև Մոսկվայում, Կովկասի հայաշատ կենտրոններում և, հավաքելով մեծ քանակությամբ դրամ, վերադառնում է Սեբաստիա: Այս բարերարի անունը հավերժացնելու համար դպրոցի մուտքի մոտ պետեղված էր նշատախտակ:

1889 թ. սկսվում է Արամյան վարժարանի շինարարությունը: Սակայն շինարարությունն այնքան մեծ ծավալներ էր ընդունել, որ հավաքած դումարը բավական չէր շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու համար: Ղևոնդ Տեր-Գաբրիելյանից բացի հայտնվեցին այլ բարերարներ ևս, որոնց հավաքած հանգանակությունների շնորհիվ դպրոցաշինությունը ունեցավ իր բնականոն ավարտը: Այսպես՝ արժանահիշատակ է Գաբրիել քահանա Մանվելյանը[21]: Նա երկու անգամ հանգանակություն է կատարել, ինչպես նաև Պետրոս եպիսկոպոսը, ով դյուղերից հավաքել է մեծ քանակությամբ արծաթեղեն և տրամադրել Արամյան դպրոցի կառուցման համար[22]:

Նախապես որոշվել էր դպրոցն անվանակոչել «Արարատյան»՝ ի պատիվ արևելահայերի, որոնք մեծ քանակությամբ նյութական օժանդակություն էին կատարել վարժարանը կառուցելու համար: Սակայն, թուրքերի մեջ նոր թշնամանք չսերմանելու նկատառումով, որոշվեց այն անվանել «Արամյան»:

1893–1894 թթ. ավարտվեց վարժարանի շինարարությունը և 1895 թ. արդեն դասերը սկսվեցին: Այստեղ ուսանում էին 500 աշակերտներ[23]: Այս երկարատև շինարարությունն ավարտվեց և,

[20] Նույն տեղում, էջ 488:
[21] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 805, թ. 1: Տես նաև «Արևելք», Կ. Պոլիս, 1891, թիվ 2234:
[22] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 805, թ. 1:
[23] Նույն տեղում:

ինչպես «Անդրանիկ» օրաթերթն է նկարագրում, «Սեբաստիան ունեցավ փառավոր դղյակ ընդարձակ բակի մեջ, երկճյուղ սանդուղքներով և լուսաժպիտ սենյակներով»[24]: Այս երկհարկանի շենքի առաջին հարկում իրենց դասերն էին անցկացնում «Հռիփսիմյան» վարժարանի աղջիկները[25]:

1903 թ. Արամյան վարժարանը պետք է տար իր առաջին շրջանավարտները, սակայն Ուսումնական խորհուրդը, կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով, ևս մեկ տարի ավելացրեց ուսումնառության ընթացքին, և միայն 1904 թ. վարժարանն ունեցավ իր առաջին շրջանավարտները[26]: Փաստորեն, Արամյան վարժարանի դասընթացների տևողությունը 9 տարի էր: Այդ համակարգը մինչև 1915 թ.՝ Արամյան վարժարանի փակումը, մնաց անփոփոխ: Այս վարժարանի դասարանները բաժանվում էին 2 մասի՝ միջնակարգ և բարձրագույն: Մինչև 3-րդ դասարան միջնակարգ էր համարվում, իսկ 4-րդ դասարանից սկսած՝ բարձրագույն[27]: Ուսումնական ծրագրում ընդգրկված էին բազմապիսի առարկաներ, որոնց դասավանդումը սկսվում էր տարբեր դասարաններում: Օրինակ, հայոց լեզուն, որն ընթերցանության, քերականության ուսումնասիրության և շարադրության միջոցով էին ուսուցանում, սկսում էին դասավանդել սկզբից մինչև 5-րդ դասարան, իսկ 5-րդ դասարանից սկսած դասավանդում էին նաև գրաբար: Չորրորդ դասարանից դասավանդվող առարկաների ցանկում էին նաև ֆրանսերենը և թուրքերենը, իսկ գրաբար՝ 7-րդ դասարանից: Մինչև 5-րդ դասարան սովորում էին թվաբանություն, իսկ 6-րդ դասարանից՝ հանրահաշիվ: Երկրաչափություն և տիեզերագիտություն առարկանները սկսում էին ուսուցանվել 7-րդ դասարանում: Հինգերորդ դասարանից սկսած վարժարանի ուսումնական ծրագրի մեջ ներառված էին նաև քիմիա, բնագիտություն, հայոց պատմություն, կրոն, եկեղեցու պատմություն առարկաները: Ուշագրավ է, որ վարժարանի ծրագրում տեղ էին գտել այնպիսի առարկաներ, ինչպիսին էին՝ առողջապահությունը, իսկ 6-րդ դասարանից սկսած՝ նաև տնտեսագիտությունը և գծագրությունը[28]: Այս առարկաների կողքին կամավոր ցանկությամբ վճարովի հիմունքներով դասավանդվում էր նաև երաժշտություն[29]: Վարժարանի ընդհանուր կրթական մակարդակը բարձր էր, և գերազանցիկ շրջանավարտներն առանց դժվարությունների կարող էին ընդունվել Կ. Պոլսի, Բեյրութի և նույնիսկ Ֆրանսիայի վարժարանները: Սակայն ճշմարտացիության համար պետք է նշել, որ ոչ բոլոր առարկաների դասավանդման մակարդակն էր բարձր: Անգլերեն և ֆրանսերեն լեզուները սովորելու համար վարժարանի սանները ստիպված էին այլ վարժարաններ հաճախել:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Արամյան վարժարանի տնօրինությունն անընդհատ փոփոխվել է: Այսպես՝ 1896 թ. Արամյան վարժարանի տնօրինությունը ստանձնում է Հովհաննես Թորիկյանը, որին 1903 թ. փոխարինում է Կարապետ Տեր-Խաչատրյանը և այդ պաշտոնում մնում մինչև 1906 թ., որին այդ թվականին փոխարինում է Արտաշես Այվազյանը[30]: 1908–1909 թթ. վարժարանի տնօրինությունը ստանձնում է Շավարշ վարդապետ Սահակյանը և այդ պաշտոնում մնում մինչև 1915 թ.[31]: Վերջինս շատ ազգասեր, նվիրյալ հոգևորական գործիչ էր: Տնօրինության հետ մեկտեղ՝ նա նաև գրաբար և ընդհանուր պատմություն էր դասավանդում: Նրա օրոք վարժարանի ներքին կյանքում տեղի ունեցավ ևս մի նշանակալից իրադարձություն. 1909 թ. սեպտեմբերից վարժարանի բարձր դասարաններում հայերեն և ֆրանսերեն դասավանդելու համար այստեղ

[24] «Անդրանիկ», Սեբաստիա, 1910, թիվ 76:
[25] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 404, թ. 1:
[26] Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., էջ 490:
[27] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 423, թ. 1 շրջ.:

[28] Նույն տեղում:
[29] Նույն տեղում:
[30] Նույն տեղում, գ. 805, թ. 2–3:
[31] Նույն տեղում, գ. 404, թ. 1:

է հրավիրվում մեծ գրող Դանիել Վարուժանը[32]: Մեծ գրողի և ուսուցչի կողքին սաներին դասավանդում էին այնպիսի հայտնի ուսուցիչներ, ինչպիսիք էին՝ հայագետ, բանաստեղծ Միհրան Իսպիրյանը, պատմության, աշխարհագրության, ֆրանսերենի ուսուցիչ Կարապետ Գաբրիկյանը, թվաբանության ուսուցիչ Միհրան Ջուգասզյանը, որը երկար տարիներ ապրել էր ԱՄՆ-ում և արտակարգ տիրապետում էր անգլերենին: Քանի որ մինչ այդ միայն մեկ հանրահաշիվի գիրք կար՝ լույս ընծայված 1880 թ., նա ձեռնամուխ եղավ անգլերենից նոր դասագրքի թարգմանությանը: Ցավոք, վերջինս 1915 թ. հունիսին քննության ժամանակ դասարանում ձերբակալվեց[33]:

Պաշտոնապես թուրքերենի ուսուցիչ էր նշանակված ազգությամբ թուրք Սբտզը[34], բայց վերջինս լավ չէր տիրապետում թուրքերեն լեզվին, ինչի պատճառով դասավանդում էր Վահան Մոսկոֆյանը: Ուսուցիչների թվում էին նաև Հակոբ Մնճուզյանը (ֆրանսերեն), Տիգրան Խանասխմազյանը (կրոնագիտություն), Եվրոպայում կրթություն ստացած ոմն Հայկը (քիմիա և բնագիտություն), Հրանտ Գլճյանը (երաժշտություն), Տիգրան Փոլատյանը (պատմություն)[35]:

Նշենք, որ այս և այլ ականավոր ուսուցիչներ, իրենց գործունեության ընթացքում օգտագործում էին աշակերտներին պատժելու բազմաթիվ եղանակներ: Այսպես, բացի հին՝ ավանդական ծեծից, աշակերտներին պատժելու համար ուսուցիչը կիրառում էր նաև նոր մեթոդ՝ ստիպելով նրան 50–100 անգամ կրկնել նյութը[36]:

Վերադառնալով Շավարշ վարդապետ Սահակյանի տնօրինության ժամանակաշրջանին՝ նշենք, որ, բացի դրական տեղաշարժերից, որոնք տեղի ունեցան վարժարանի կյանքում, այստեղ

[32] «Անդրանիկ», Սեբաստիա, 1909, թիվ 38:
[33] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 423, թ. 2 շրջ.:
[34] Նույն տեղում: Նաև գ. 805, թ. 3: «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1906, թիվ 2970:
[35] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 423, թ. 2 շրջ:
[36] Նույն տեղում:

տեղ գտան նաև բացասական երևույթներ: 1911 թ. վարժարանի աշակերտների ուսման ամենամսյա վճարը բարձրացնելու պատճառով շատ ծնողներ իրենց զավակներին հանեցին վարժարանից, և այդ պատճառով նույն տարի միայն 9 շրջանավարտ տվեց վարժարանը. այն դեպքում, երբ 1906 թ. շրջանավարտների թիվը 14 էր[37]: Հետագայում՝ 1914 թ., շրջանավարտների թիվը կրկին աճեց՝ հասնելով 22-ի[38]: Ցավոք, ուսումնական այս առաջատար հաստատությունը 1915 թ. քանդվեց Թուրքական կառավարության կողմից:

Այսպիսով, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Արամյան վարժարանը Սեբաստիայի նշանավոր կրթօջախներից էր: Այստեղ դասընթացի տևողությունը 9 տարի էր, ուր բարձրակարգ ուսուցիչների կողմից դասավանդվում էին հայերեն, ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն լեզուներ, աշխարհագրություն, պատմություն, կրոն, հանրահաշիվ, երկրաչափություն, երաժշտություն և այլ առարկաներ:

1860 թ. Կ. Պոլսում հիմնադրված «Անձնվեր սանուց» ընկերությունն իր առջև խնդիր էր դրել գավառներում բարելավել կրթական մակարդակը: «Անձնվեր սանուց» ընկերության սեբաստացի անդամներից ոմանք, 1864 թ. վերադառնալով հայրենիք, նույն տարվա վերջին կազմում են տվյալ ընկերության մասնաճյուղը: Նախապատրաստական աշխատանքներից հետո Սեբաստիա քաղաքի մեջ 1865 թ. փետրվարի 21-ին Թարգմանչաց մայր վարժարանի մեջ երեք քահանաների և շուրջ 40 հանդիսականների մասնակցությամբ «Անձնվեր սանուց» ընկերության սեբաստացի անդամները բացում են Սեբաստիայի կիրակնօրյա առաջին վարժարանը[39]: Առաջին օրը վարժարան ընդունվեցին 51 աշակերտներ, սակայն չուտով ընկերության անդամներ Պողոս Խաչատրյանի, Հակոբ Համբարձումյանի, Գաբրիել

[37] Նույն տեղում, գ. 404, թ. 4:
[38] Նույն տեղում:
[39] Նույն տեղում, գ. 166, թ. 1:

Տեր-Խաչատրյանի և Մովսես Մուրադյանի ջանքերով, որոնք ջանքեր չէին խնայում վարժարանի համար դրիչ, թուղթ, դիրք ձեռք բերելու ուղղությամբ, վարժարանի աշակերտների թիվը հասավ 103-ի[40]: Շուտով այս վարժարան է այցելում Մկրտիչ Խրիմյանի աշակերտ Ղևոնդ վարդապետը: Նա օսմանյան 10 ոսկու արժողությամբ գրքեր և դրենական պիտույքներ է նվիրում վարժարանին: Այստեղի ուսուցիչներից էին Անդրանիկ Վարդանյանը և Հակոբ Համբարձումյանը: Երկուսն էլ Կ. Պոլսի «Անճնվեր սանուց» ընկերության դպրոցի սաներ էին[41]: 1868 թ. վարժարանը ներքին երկպառակությունների պատճառով փակման վտանգի տակ էր, սակայն «Անճնվեր սանուց» ընկերության անդամների ջանքերի շնորհիվ հաջողվում է ոչ միայն վերացնել այդ խնդիրները, այլև չորեքշաբթի և շաբաթ օրերին նոր դասախոսություններ ավելացնել:

Արժանահիշատակ հաջորդ կրթօջախը «Շահնազար Նուբարյան» վարժարանն է: Վարժարանի հիմնադիրը Սիմոն Հեքիմյանն էր: Վերջինս Կ. Պոլսի Առաքել-Նուբար-Շահնազարյան վարժարանը հաջողությամբ ավարտելուց հետո, 1871 թ. վերադառնում է Սեբաստիա և նույն թվականի դեկտեմբերի 22-ին հիմք է դնում նոր վարժարանի և այն մկրտում այն անունով, ուր ինքն ուսանել էր: 1872 թ. հունվարին վարժարանն արդեն բացված էր և ուներ թոշակ ստացող 40 աշակերտներ[42]: Վարժարանն ուներ բավականին որակյալ ուսումնական ծրագիր: Դասավանդվող առարկաների թվում էին հայոց լեզուն, ֆրանսերենը, թուրքերենը, թվաբանությունը, հայոց պատմությունը, երկրաչափությունը, աշխարհագրությունը, բնագիտությունը, տարրական բուսաբանությունը, տիեզերագիտությունը, դիցաբանությունը, ճարտասանությունը, փիլիսոփայությունը, բժշկագիտությունը: Կատարվում էր օսմանյան օրենքների և սահմանադրության ուսումնասիրություն: 1872 թ. հուլիսի 12-ին կազմակերպվեցին տարեկան քննությունները, որից հետո՝ օգոստոսի 6-ին, տեղի ունեցավ առաջին շրջանավարտների հանդեսը[43]:

Սեբաստիայի կրթական կյանքի բարելավման գործում կարևոր դեր է կատարել նաև «Համալսարանական» երկսեռ վարժարանը: Այս վարժարանի հիմնադիրը «Համալսարանական» ընկերությունն էր, որը նպատակ ուներ կրթել գավառի հայ տղաներին[44]: Վարժարանը բացվեց 1878 թ. ապրիլ ամսին: Մկրտիչ Փորթուգալյանը, որը 1878 թ. Եվդոկիայից անցել էր Սեբաստիա, հետաքրքրված լինելով Սեբաստիայի կրթական կյանքով, գովեստով է խոսում այս վարժարանի մասին՝ նշելով, որ այն մանավոր վարժարանների մեջ ամենագոհացուցիչն է և կանոնավորը:

Այդ ժամանակ ուսուցիչների թվում էին բժիշկ Շիրինյանը, Ն. Թերզյանը, Սերովբե Օտապաշյանը, Դավիթ Արակյանը, Տեր Վարդան քահանան, Ագարիա Տեր-Հովսեփյանը, Օհան Մարկոսյանը, Նազարեթ Պոլսեցին, Հարություն Զարդարյանը, ինչպես նաև Զմրուխտ և Նոյեմզար ուսուցչուհիները[45]: Բացի սովորական ուսուցանվող առարկաներից, աղջիկներն այստեղ ուսանում էին նաև տարազագործություն և ձեռագործություն:

1880 թ. Սեբաստիայի մեջ կազմվում է Սեբաստիայի կրթական միությունը, որին է միանում նաև «Համալսարանական» ընկերությունը: Վերջինիս է հանձնվում նաև վարժարանի տնօրինությունը: 1880 թվականից այս վարժարանը սկսեց կոչվել «Փոքր Հայքի Կրթական միության երկսեռ վարժարան»[46]: 1880 թ. դրությամբ վարժարանն ուներ 100 աշակերտ, 4 ուսուցիչ: Այստեղ դասավանդում էին ֆրանսերեն, կրոնագիտություն, թվաբանություն, աշխարհագրություն, հայոց պատմություն,

[40] Նույն տեղում, թ. 2:
[41] Նույն տեղում:
[42] Նույն տեղում, գ. 178, թ. 1:

[43] Նույն տեղում: Նաև՝ «Մասիս», Կ. Պոլիս, 1872, թիվ 1289:
[44] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 120, թ. 1: Տե՛ս նաև՝ «Մասիս», Կ. Պոլիս, 1878, թիվ 2176:
[45] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 120, թ. 1:
[46] Նույն տեղում, թ. 2:

բժշկագիտություն, մարմնամարզություն, իսկ աղջիկներին նաև կար և ձեռագործ[47]: 1880 թ. հետո այս վարժարանը այլևս չի հիշատակվում:

19-րդ դարի վերջի Սեբաստիայի կրթական կյանքի բարելավման գործում որոշակի ավանդ ունի նաև «Արծրունյան ժառանգավորաց» վարժարանը:

1876 թ. Սեբաստիայի թեմի առաջնորդ Պետրոս Թահմիզյանը, հարթելով բոլոր դժվարությունները, Սեբաստիայի ս. Նշան վանքում բացում է գիշերօթիկ «Արծրունյան ժառանգավորաց» վարժարանը[48]: 1878 թ. դրությամբ վարժարանն ուներ 25 աշակերտ, որոնց դասավանդում էին հայ գրականություն, հայոց պատմություն, կրոն, թվաբանություն, թուրքերեն և երաժշտություն: Վարժարանն ուներ ուսուցիչների պակաս: Պատահական չէ, որ 1880 թ. դրությամբ այն ուներ ընդհամենը 4 ուսուցիչ, որոնք աշխատում էին ձրի և, հետևաբար, այդ ամենը չէր կարող ցանկալի արդյունք տալ: Նշենք, որ նույն տարում այստեղ ուսանում էին 24 աշակերտ, որոնցից 10-ը՝ անվճար հիմունքներով[49]: 1883 թ. այստեղ արդեն դասավանդում էին ս. Թարգմանչաց վարժարանի ուսուցիչները և նույն տարի վարժարանն ունեցավ շրջանավարտներ: Սակայն այդ տարվա վերջում Սեբաստիայի վարդապետ Հակոբը, համագործակցելով վանական խորհրդի հետ, շատ համարելով վարժարանի ծախսերը, ցրում է մնացած աշակերտներին և փակում վարժարանը: 1888 թ. Կ. Պոլսից ուսուցիչներ են ուղարկվում՝ վարժարանը կրկին վերաբացելու նպատակով, սակայն ապարդյուն են անցնում այդ ջանքերը:

20-րդ դարի սկզբին Սեբաստիա քաղաքի կրթական մակարդակի բարձրացման գործում իր լուման ունի «Լուսաբեր» ընկերության կիրակնօրյա վարժարանը: «Լուսաբեր» ընկերությունը, հետևելով «Անձնվեր» ընկերության օրինակին, 1904 թ. վերջին բացում է կիրակնօրյա վարժարան[50]: Արդեն 1910 թ.

[47] «Մասիս», Կ. Պոլիս, 1880, թիվ 2758:
[48] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 122, թ. 1:
[49] Նույն տեղում: Նաև՝ «Մասիս», Կ. Պոլիս, 1880, թիվ 2780:
[50] «Անդրանիկ», Սեբաստիա, 1909, թիվ 18: Նաև՝ ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 1128, թ. 1:

վարժարանն ուներ 80–100 աշակերտ: Ուսումնական ծրագիրը հարմարացված էր Արամյան վարժարանի տարրական դասընթացի ծրագրին: Դասավանդվող առարկաների ցանկում էին հայոց լեզուն, կրոնագիտությունը, թվաբանությունը, տոմարագիտությունը, հայոց պատմությունը, օսմանյան պետության պատմությունը, աշխարհագրությունը, գեղագիտությունը, գրագրությունը, բարոյագիտությունը, բժշկագիտությունը[51]: Շարվ վարդապետ Սահակյանի վերատեսչությամբ դպրոցում դասավանդում էին այնպիսի նշանավոր ուսուցիչներ, ինչպիսիք էին՝ Կարապետ Գաբիկյանը, Խաչատուր Կոտորյանը, Միհրան Իսպիրյանը, Հովհան Մոսկոփյանը, Նշան Ավագյանը, Նշան Խոբիկյանը, Թադևոս Տերտերյանը, Կարապետ Դեղնածյանը և ուրիշներ: 1910 թ. դպրոցի շրջանավարտների թիվը հասնում էր 10-ի, իսկ 1911 թ.՝ 27-ի[52]: Կիրակնօրյա վարժարանի վկայագրերը պատրաստված էին Արամյան վարժարանի անունով և այն ունեցողներն ազատվում էին ծառայությունից, քանի որ վավերացված էին թուրքական կառավարության կողմից:

Սեբաստիա քաղաքի կրթական կյանքի բարելավման ասպարեզում 20-րդ դարի սկզբին իր փոքրիկ ներդրումն ունեցավ նաև արհեստավորների հատուկ վարժարանը, որը բացվել էր 1904 թ. հոկտեմբերի 2-ին: Այստեղ 1905 թ. ուսանում էին մոտ 100 տղաներ[53]: Վարժարանում ուսումը տևում էր 4 տարի, ուր դասավանդում էին հայոց լեզու, թուրքերեն, ֆրանսերեն: Վարժարանն ուներ ընթերցասրահ, լսարան:

Անշուշտ, իր դիրքով և կրթական մակարդակով այս ուսումնական հաստատությունների մեջ առանձնանում է Սանասարյան վարժարանը: Այն հիմնադրվել է 1881 թ. Էրզրումում՝ Մկրտիչ Սանասարյանի միջոցներով և Կարապետ Եզյանի ջանքերով: 1912 թ. այն տեղափոխվում է Սեբաստիա և նույն թվականի սեպտեմբերի 24-ին վերաբացվում Սեբաստիա քաղաքի ս. Նշան վանքում: Վարժարանն ունեցել է նաև գիշերօթիկ բաժին,

[51] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 1128, թ. 1:
[52] Նույն տեղում, թ. 2:
[53] Նույն տեղում, գ. 147, թ. 1: «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1905, թիվ 2594:

լաբորատոր սարքավորումներ, գրադարան, հիվանդանոց, դեղատուն, փուռ, ներկատուն, թանգարան (որում պահպանվել է 94 ձեռագիր և 986 թ. ընդօրինակված մի ավետարան): Վարժարանն ունեցել է կանոնադրություն[54], որը կազմվել էր Մկրտիչ Սանասարյանի կտակի համաձայն: Վարժարան ընդունվել ցանկացողները պետք է լինեին 11–12 տարեկան, կարողանային հայերենով վարժ դրել, կարդալ, վարժ կատարել պարզ թվաբանական 4 գործողությունները: Յուրաքանչյուր աշակերտի համար պետք է վճարվեր 20 օսմանյան ոսկի[55]: Սակայն սրանց կողքին վարժարան կարող էին ընդունվել նաև «ձրիավարժ աշակերտներ», որոնք աղքատ, ծնողազուրկ երեխաներ էին[56]:

Վարժարանն աչքի էր ընկնում նաև դասավանդվող առարկաների բազմազանությամբ: Ուսումնական բաժնում դասավանդվել են մայրենի լեզու, պատմություն, աշխարհագրություն, մատենագիտություն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն, հանրահաշիվ, երկրաչափություն, եռանկյունաչափություն, բնագիտություն, քիմիա և այլ առարկաներ: Մանկավարժական բաժնի հիմնական առարկաներն են եղել մանկավարժությունը, հոգեբանությունը, տրամաբանությունը, իմաստասիրությունը, մեթոդիկան, դպրոցական առողջապահությունը: Արհեստագործական բաժնում սովորել են կազմարարական ատաղձագործություն և այլ արհեստներ:

Ուսումնական մասում դասավանդում էին այնպիսի ուսուցիչներ, ինչպիսիք էին՝ Մ. Տերեյանը, Յ. Արուսյանը, Թորգոմ եպիսկոպոսը, Ս. Մանուկյանը, Լ. Գանթարյանը, Յ. Մնճուկյանը, Գ. Ղոյինյանը, որոնք բոլորն էլ իրենց բնագավառում արհեստավարժ էին[57]:

Այս վարժարանների կողքին գործում էին նաև մեկայն իգական սեռի ներկայացուցիչների համար նախատեսված վարժարաններ: Դրանցից էին՝ Հռիփսիմյան, Պեզիկյան, Գայանյան, Լուսինյան վարժարանները, որոնք, անշուշտ, իրենց նպաստը

[54] Կանոնադրության մասին մանրամասն տես ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 847:
[55] Նույն տեղում, ֆ. 411, ց. 1, գ. 200, թ. 10:
[56] Նույն տեղում:
[57] Նույն տեղում, ֆ. 193, ց. 1, գ. 137, թ. 1:

ներեցին Սեբաստիա քաղաքի կրթական կյանքի բարելավման համար: Նշենք նաև, որ 19-րդ դարի վերջին Սեբաստիայում գործում էր նաև բողոքականների մեկ դպրոց, որը 1888 թ. ուներ 200 աշակերտ[58]: Այս դպրոցը գոյատևեց մինչև 1915 թ.:

Բացի վերոհիշյալ դպրոցներից, Սեբաստիա քաղաքում կային նաև մի քանի մանր այլ դպրոցներ, որոնք նույնպես իրենց կնիքը թողեցին քաղաքի կրթական մակարդակի բարելավման վրա և վերոհիշյալ կրթական հաստատությունների հետ հիմք ստեղծեցին Սեբաստիա քաղաքի կրթական մակարդակի էլ ավելի բարձրացման համար:

АРМАН СААКЯН
ИИ НАН РА

НАУЧНАЯ ЖИЗНЬ ГОРОДА СЕБАСТИИ В КОНЦЕ XIX – НАЧАЛЕ XX ВЕКА

РЕЗЮМЕ

По сравнению с началом XIX века, уже в конце XIX и начале XX века научная жизнь в городе Себастия получила существенное развитие. Этому содействовали своими профессиональными преподавателями и образовательными программами такие гимназии, как Св.Таргманчац, Арамян и Санасарян, а также некоторые другие гимназии и школы.

В конце XIX – начале XX века также в Себастии действовали гимназии только для девушек, в том числе Рипсимян, Пезикян, Гаянян, Лусинян, которые также содействовали развитию образовательной системы города. В то же время в Себастии действовала школа для протестантов, которая просуществовала до 1915 г..

[58] Նույն տեղում, գ. 352, թ. 1:

ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՑԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ 1905–1907 ԹԹ.

Միջազգային սոցիալիստական շարժման վերելքի և 1905 թ. սկսված ռուսական առաջին հեղափոխության անմիջական ազդեցությամբ՝ Հ. Յ. Դաշնակցությունը (ՀՅԴ) չբավարարվեց կուսակցության 1892 թ. ծրագրում ամրագրված՝ սոցիալիստական գաղափարների քարոզչությամբ և սոցիալիզմի համար պայքարի խնդիրը դարձրեց իր հիմնանպատակներից մեկը: Նման քաղաքականության հետևանքն էր ՀՅԴ կապերի ու հարաբերությունների ընդլայնումը միջազգային սոցիալիստական շարժման և այն ղեկավարող՝ Սոցիալիստական կամ Երկրորդ ինտերնացիոնալի հետ:

Հայտնի է, որ դեռևս 1896 թ. ՀՅԴ-ն հատուկ ներկայացուցիչ է ուղարկել Լոնդոն՝ Երկրորդ ինտերնացիոնալի 4-րդ համաժողովի հետ հարաբերություններ հաստատելու նպատակով[1]: 1898 թ. կայացած երկրորդ ընդհանուր ժողովից հետո, երբ ՀՅԴ-ն զարկ տվեց «եվրոպական պրոպագանդին», Արևմտյան Եվրոպայի սոցիալիստական կուսակցությունների ականավոր դեմքերի հետ նրա կապերն ու հարաբերությունները ավելի գործնական բնույթ ստացան: Եվրոպական տարբեր երկրների (Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա) խորհրդարաններում ներկայացված սոցիալիստ և սոցիալ-դեմոկրատ պատգամավորները հարցապնդումներ արեցին հօգուտ Հայկական հարցի, իրենց աջակցությունը հայտնեցին արևմտահայությանը: Արդեն XX դ. սկզբներին ՀՅԴ-ն ներկա էր լինում ոչ միայն միջազգային սոցիալիստական կոնգրեսներին, այլև Եվրոպայի խոշոր քաղաքներում կազմակերպում էր ցույցեր և բողոքի գործողություններ:

[1] Վարանդեան Ս., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992, էջ 418:

Միաժամանակ, ՀՅԴ-ն գործնական կապերի մեջ էր նաև Ռուսական կայսրության սոցիալիստական ուժերի, առանձնապես՝ Սոցիալիստ-Հեղափոխականների (Էսէռների) կուսակցության հետ: Ուստի, միջազգային սոցիալիստական շարժման շարքերում վստահություն ձեռք բերած ՀՅԴ-ն, հրավիրվեց 1904 թ. վերջերին Փարիզում գումարված Ռուսական կայսրության ընդդիմադիր և հեղափոխական կազմակերպությունների խորհրդաժողովին, որը նպատակ ուներ ցարիզմի դեմ պայքարում համախմբել ընդդիմադիր բոլոր ուժերին[2]:

Գնահատելով ստեղծված իրավիճակը և հաշվի առնելով ՀՅԴ կովկասյան մարմինների հետևողական պահանջները՝ 1905 թ. փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում երկու անգամ հրավիրված ՀՅԴ Խորհուրդն ընդունեց «Նախագիծ Կովկասեան դործունեութեան» (այսուհետև՝ «Կովկասյան նախագիծ»)՝ որոշելով Անդրկովկասում «ինքնապաշտպանության շրջանից անցնել բուն յեղափոխական գործունեութեան»[3]:

Դրանից անմիջապես հետո ծնվում ՀՅԴ-ի, ռուս սոցիալիստ-Հեղափոխականների և Լեհական սոցիալիստական կուսակցության նախաձեռնությամբ կազմակերպվեց ցարական վարչակարգի դեմ պայքարող ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը, որին մասնակցում էին միայն հեղափոխական կուսակցությունները[4]:

«Կովկասյան նախագծի» ընդունումը, ակտիվ պայքարը ցարական իշխանությունների դեմ և միջազգային սոցիալիստական շարժման հետ ձևավորված սերտ հարաբերությունները չէին կարող անարձագանք մնալ: Ուստի, Ամստերդամի 1904 թ. սոցիալիստական կոնգրեսից հետո կանոնավոր կերպով գործող

[2] Միջկուսակցային խորհրդաժողովների որոշումները, Ժընև,1905, էջ 3–27:
[3] Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիւթեր...), հ. Բ, Պէյրութ, 1985, էջ 231–236:
[4] Միջկուսակցային խորհրդաժողովների որոշումները, էջ 4–27: Նաև Նիւթեր ..., հ. Գ, էջ 45–46, «Դրօշակ», 1905, մայիս, N 5, էջ 65–69:

Բրյուսելի Միջազգային սոցիալիստական բյուրոն, որը հանդիսանում էր Սոցինտերնի գործադիր մարմինը և հետևում էր սոցիալիստական համաժողովների որոշումների իրականացմանը, 1905 թ. մայիսի 12-ին նամակով դիմեց ՀՅԴ պաշտոնաթերթի «Դրօշակի» խմբագրությանը, փորձելով պարզել՝ հարու՞մ է արդյոք ՀՅԴ-ն միջազգային սոցիալիստական կոնգրեսների որոշումներին, թե՞ ոչ: Այդ նպատակով Միջազգային սոցիալիստական բյուրոն խնդրում էր ուղարկել պաշտոնական ծանուցում և ՀՅԴ կանոնագրի մի օրինակ՝ հարցի պարզաբանման համար[5]:

ՀՅԴ-ն չհապաղեց և նույն թվականի մայիսի 17-ին Բրյուսել ուղարկեց իր պատասխան նամակը: Այդ նամակով ՀՅԴ Արևմտյան բյուրոն հաստատում էր, որ կուսակցությունը հարել է միջազգային սոցիալիզմի գաղափարական սկզբունքներին, որոնք 15 տարի ի վեր արծածել է իր տարբեր հրատարակություններում և մասնավորապես՝ պաշտոնական օրգան «Դրօշակում»: Սակայն, այդ ամենը կրել է զուտ տեսական բնույթ, քանի որ, ՀՅԴ գործունեությունը հիմնականում կենտրոնացած է եղել Արևմտյան Հայաստանում, իսկ այնտեղ համապատասխան հող չկար սոցիալիստական գործունեության համար: Բայց Արևելյան Հայաստանում ուժեղացող հեղափոխական շարժումների վերելքը, ՀՅԴ ղեկավարության կարծիքով, նպաստավոր պայմաններ էր ստեղծել նաև սոցիալիստական շարժում կազմակերպելու համար: Այդ պատճառով Արևմտյան բյուրոն տեղեկացվում էր, որ ՀՅԴ Խորհուրդն արդեն ընդունել է «Կովկասյան նախագիծը», որտեղ արտացոլված են կուսակցության սոցիալիստական հայացքները: Նամակի մեջ մասնանշվում էր նաև այն փաստը, որ, բացի «Կովկասյան նախագծի» ընդունումից, ՀՅԴ-ն համամաձայնություն է ձեռք բերել Ռուսական կայսրության սոցիալիստական ուժերի հետ՝ ցարիզմի և կապիտալիզմի դեմ միասնական պայքար կազմակերպելու համար: Միաժամանակ

[5] Նույն տեղում, յունիս, N 6, էջ 82:

նամակում նախազգուշացվում էր, որ «Կովկասյան նախագծի» հաստատումը պետք է կատարվի ՀՅԴ առաջիկա ընդհանուր ժողովում, որի մասին խմբագրությունը պաշտոնապես կտեղեկացնի Միջազգային սոցիալիստական բյուրոյին[6]:

Պետք է նշել, որ մինչև ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովի գումարումը Միջազգային սոցիալիստական բյուրոն ուշիուշով հետևում էր ՀՅԴ գործունեությանը և կապ էր պահպանում ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի հետ՝ տեղեկություններ հաղորդելով սոցիալիստական շարժման ակնառու իրադարձությունների մասին, որոնց լուսաբանումը իրականացվում էր «Դրօշակի» էջերում: Հատկանշական է, որ 1905 թ. սկզբներին, երբ սկսվեց ռուսական առաջին հեղափոխությունը, Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը կազմակերպել էր հանգանակություն՝ Ռուսաստանի սոցիալիստական կուսակցություններին օժանդակելու համար, որից Միջազգային սոցիալիստական բյուրոն մի որոշակի գումար հատկացրեց նաև ՀՅԴ-ին՝ «իբրև մի մարմնի, որ կանգնած է սոցիալիստական պայքարի հողի վրայ»[7]: Իր հերթին ՀՅԴ Արևմտյան Բյուրոն՝ «Դրօշակի»-ի խմբագրության միջոցով, նույնպես մշտական կապ էր պահում Միջազգային սոցիալիստական բյուրոյի հետ: 1905 թ. փետրվարին Բաքվում տեղի ունեցած հայկական կոտորածների առնչությամբ, «Դրօշակի» խմբագրությունը 1905 թ. մարտի 10-ին դիմեց Միջազգային սոցիալիստական բյուրոյին, որն անմիջապես դատապարտող կոչ ուղղեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհի սոցիալիստական կուսակցություններին և նրանց օրգաններին: Մերկացնելով ցարիզմի ջարդարարական նպատակները և կայսրության տարբեր ազգություններին իրար դեմ զրգռելու քաղաքականությունը՝ Միջազգային սոցիալիստական բյուրոյի կոչն արձանագրում էր. «Հրէաներին ջարդել տալուց հետոյ, Նիկոլայ Երկրորդի խորհրդականները վերակսում են հայերի դէմ Աբդիւլ Համիդի արիւ-

[6] Նույն տեղում, էջ 82–83:
[7] Նույն տեղում, 1907, օգոստոս, N 8, էջ 110:

նոտ քաղաքականութիւնը, որ Միջազգային Սոցիալիստական Բիւրօն մատնել է քաղաքակրթված աշխարհի ցասումին 1901 թվի հոկտեմբերի 18-ին: Գործադիր կոմիտէն կարծում է, որ ինքը թարգմանը կը լինի բոլոր սոցիալիստների, վերստին բողոքելով այն նախամտածված ջարդերի դէմ, որոնց զոհ է հանդիսանում դժբախտ հայ ժողովուրդը: Մենք համոզված ենք, որ դուք կը միանաք մեր բողոքին, առնելով բոլոր այն նախաձեռնութիւնները, որոնք բխում են 1900-ի Պարիզի Միջազգային Սոցիալիստական Կոնգրէսի որոշումից»[8]: Կոչը ստորագրված էր Միջազգային սոցիալիստական բյուրոյի Գործադիր կոմիտեի կողմից՝ ի դեմս նրա քարտուղար, հոլանդացի Քամիլ Հյուիսմանսի:

1905 թ. ՀՅԴ որդեգրած սոցիալիստական քաղաքականութեյան սկզբունքների հաստատումը տեղի ունեցավ Վիեննայում 1907 թ. փետրվարի վերջերին սկսված և մինչև մայիսի սկզբները տևած 4-րդ ընդհանուր ժողովում: Այս ժողովը պետք է հանդուցալուծում տար ՀՅԴ Խորհրդի կողմից «Կովկասյան նախագիծն» ընդունելու իրավասութեյան, Կովկասում ինքնապաշտպանութեյունից՝ հեղափոխական գործունեութեյան անցնելու խնդիրներին, որոնց շուրջը բուռն բանավեճ էր ծավալվել կուսակցութեյան ներսում: Երկարատև ու բուռն քննարկումներից հետո ժողովը հավանութեյուն տվեց «Կովկասյան նախագծին» և ընդունեց «... սոցիալիստական ծրագիրը եւ յեղափոխական տակտիկը»[9]: Բացի այդ, 4-րդ ընդհանուր ժողովում հատուկ քննարկման ենթարկվեց 1905 թ. մայիսի 12-ին «Դրօշակին» ուղղված՝ Միջազգային սոցիալիստական բյուրոյի առաջարկը: Այս հարցը բարձրացրեց Արևմտյան բյուրոյի անդամ Խ. Մալումյանը (Ակնունին) Արևմտյան բյուրոյի 1904–1906 թթ. գործունեութեյան տեղեկագիրը (հաշվետվութեյունը) ներկայացնելու ժամանակ: Նա նշեց, որ այդ տարիների ընթացքում Միջազգային սոցիալիստական բյուրոն միշտ աջակցել է ՀՅԴ դիմումներին և դրանց

[8] Նույն տեղում, 1905, մարտ, N 3, էջ 46:
[9] Նիւթեր ..., հ. Գ, էջ 299:

համաձայն իր բողոքի ձայնն է բարձրացրել հայերի դեմ ճնշումներ իրականացվելու դեպքում»[10]: Քննելով Խ. Մալումյանի առաջարկը՝ 1907 թ. մայիսի 4-ին կայացած ընդհանուր ժողովի 121-րդ նիստն ընդունեց վերջինիս ներկայացրած բանաձևը՝ այն դարձնելով ընդհանուր ժողովի որոշում. «Յանձնարարել Արևմտեան Բիւրոյին՝ բանակցութեան մէջ մտնել յիշեալ Բիւրոյի (Միջազգային սոցիալիստական բյուրո – Կ. Հ.) հետ, գրաւոր թէ բանաւոր, յայտնել նրան՝ Դաշնակցութեան յարումը միջազգային սոցիալիստական կոնգրէսների որոշումներին և միջոցներ ձեռք առնել ապահովելու Դաշնակցութեան մասնակցութիւնը Միջազգային Սոցիալիստական Բիւրոյում և կոնգրէսներում»[11]:

ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովի ընտրած նոր Արևմտյան բյուրոն պետք է ամեն ջանք թափեր՝ իրագործելու համար ընդհանուր ժողովի այս որոշումը, որը մեծ կարևորութեյուն էր ներկայացնում: Սոցիալիստական ինտերնացիոնալը այն բաղձալի միջազգային ամբիոններից մեկն էր, որտեղից կարելի էր ներկայացնել հայութեյան հիմնախնդիրները, դրանք քննել եվրոպական և համաշխարհային պրոբլեմների համատեքստում: Հնարավոր էր նաև օգտագործել Սոցիալիստական ինտերնացիոնալի կապերը՝ սոցիալիստական կուսակցութեյունների ու նրանց օրգանների միջոցով տարբեր երկրներում հայկական հարցը արծարծելու և հասարակական լայն շրջանակների սեփականութեյունը դարձնելու համար: «Ինտեռնացիօնալը,– գրում է Մ. Վարանդյանը,– ամբիոն մըն էր մեզի համար–քաղաքակիրթ աշխարհի բարձր ու հմայքոտ ամբիոններէն մէկը – ուրկից կարծարծէինք մեր ազգային դատը, ձգտելով չահագրգռել մեծ երկրներու ընկերվարական պարագլուխները հայ ժողովուրդի ճակատագրով»[12]:

[10] Նույն տեղում, էջ 35–36:
[11] Նույն տեղում, էջ 289:
[12] Վարանդեան Մ., Յ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, էջ 418:

ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովից մոտ երեք ամիս անց՝ 1907 թ. օգոստոսին, գերմանական Շտուտգարտ քաղաքում, կուսակցությունը հնարավորություն ստացավ մասնակցելու Երկրորդ ինտերնացիոնալի 7-րդ համաժողովին: ՀՅԴ-ն երեք պատգամավորով էր ներկայանալու այդ համաժողովին. մեկը՝ ողջ կուսակցության կողմից՝ վճռական ձայնով, մյուս երկուսը՝ կովկասյան մարմինների կողմից՝ խորհրդակցական ձայներով[13]:

Մինչև Շտուտգարտի համաժողովին մասնակցելը պետք էր որոշակի նախապատրաստական աշխատանք կատարել՝ սոցիալիստական մեծ ընտանիքին հավուր պատշաճի ներկայանալու համար: Առաջնահերթ խնդիր էր համաժողովին մասնակցելու համար ներկայացուցիչների ընտրության հարցը: Փաստերը վկայում են, որ քննարկվող թեկնածուների շարքում են եղել Ռոստոմը (Ստ. Զորյան), Մ. Վարանդյանը (Հովհաննիսյան) և Ավ. Ահարոնյանը: Սակայն, վերջինս 1907 թ. հուլիսի 23-ին Խ. Մալումյանին գրած նամակում դժգոհում էր. «Շտուդգարդի համար ինձանից ինչ իս սպասում, ես դեռ չեմ հասկացել: Չէ, որ Ռոստոմը այդտէղ է: Մի խոսքով, նամակդ ինձ ժրնև բերելու համար բաւական համոզիչ չէր ...»[14]: Ինչպես հետագայում վկայում էր Մ. Վարանդյանը, Ռոստոմը և ինքը մեկնել են Շտուտգարտի համաժողովին: Սակայն դեռևս դժվար է որոշել, թե ո՞վ է եղել դաշնակցական պատգամավորներից երրորդը:

Ռոստոմը համաժողովի սկսվելուց հետո, ընդամենը մի քանի օր մասնակցելով նրա աշխատանքներին, մեկնեց այնտեղից: Այդ մասին Մ. Վարանդյանը գրում է. «Ընկերները կը յորդորէին, որ յետաձգէ իր մեկնում յաջորդ օրուան, անգամ մը լսելու համար Ժօռէսին, որ այդ օրն իսկ պիտի արտասաներ իր գեղեցկագոյն ճառերէն մէկը, ամենահրատապ խնդիր մը շուրջ, ընդդէմ Բէբէլի, Ցոլմարի և ամբողջ գերման սոցիալ-դէմոկրատական տակտիկի՝ յատկապէս միլիտարիզմի և

[13] «Դրօշակ», 1907, օգոստոս, N 8, էջ 110:
[14] ԳԱՄԹ, Ավ. Ահարոնյանի ֆոնդ (փոխանցված ՀՅԴ արխիվից), գ.158:

պատերազմի նկատմամբ: ... Ռոստոմը չէր տեսած աշխարհահռչակ Թրիբունը, և մեկնելու համար աճապարելու պէտք ալ չունէր: Լաւ չեմ յիշեր, թէ ինչ պատասխանեց ընկերներուս յորդորներուն՝ օր մըն ալ մնալու: Հեգնական խօսք մըն էր, որ կուղէր ըսել.— «Թողէք հոսհոսութիւնները»[15]: Թերևս, Ռոստոմի այդօրինակ վերաբերմունքը կարելի է բացատրել նրանով, որ համաժողովները հոգեհարազատ չէին վերջինիս խիստ դործնական խառնվածքին:

Շտուտգարտի համաժողովին ներկայացնելու համար Արևմտյան Բյուրոն կազմել էր մի տեղեկագիր, որով համաժողովի մասնակիցները պատկերացում պետք է կազմեին ՀՅԴ 17-ամյա գործունեության վերաբերյալ: Այն, որպես փաստաթուղթ, «Դրօշակում» տպագրվել է և՛ 1907 թ., և՛ հետագայում[16]: Տեղեկագիրը կազմված էր ըստ ՀՅԴ երկու հիմնական գործելադաշտերի՝ Անդրկովկաս և Օսմանյան կայսրություն և հիմնավորում էր 1892 թ. ծրագրի դրույթների՝ միջազգային սոցիալիստական շարժման սկզբունքներին համապատասխանության դաղափարը. «Մենք կ՛աշխատինք տարածել համայնական սեփականութիւնը և համայնական աշխատանքը, որպէսզի աւելի պատրաստ գտնուինք անցնելու հանրային այն կազմակերպութեան, որ այսօր-վաղը պիտի հաստատուի տնտեսապէս աւելի զարգացած երկիրներու մէջ՝ պրոլետարիատի յեղափոխութեամբ»[17]: Այնտեղ նշվում էր, որ չնայած Արևմտյան Հայաստանում տիրող ռազմաֆեոդալական կարգերը հնարավորություն չէին ընձեռնում սոցիալիստական գործունեության համար, այդուհանդերձ կուսակցությունն իրականացրել է սոցիալիստական քարոզչություն՝ իր տարբեր հրատարակությունների միջոցով, ինչպես

[15] Սիմոն Զավարեան, հ. Ա, Վ. Սէթեան տպ., էջ 28:
[16] «Դրօշակ», 1907, սեպտեմբեր, N 9, էջ 134–137: 1986, N 12, էջ 16–19, N 13, 1986, էջ 13–16:
[17] «Դրօշակ», 1986, N 12, էջ 17:

նաև կարողացել է չեզոքացնել քուրդ որոշ ավատապետերի անսահմանափակ իշխանությունը[18]:

Անդրադառնալով կուսակցության կովկասյան գործունեությանը՝ տեղեկագրում նշվում էր, որ 1905 թ. ռուսական առաջին հեղափոխության տարիներին ՀՅԴ քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխության և դրա հիման վրա ձևնարկված՝ միջազգային սոցիալիստական սկզբունքներից բխող քայլերի կարևորությունը: Կուսակցությունը համարում էր, որ Անդրկովկասում հայ գյուղացիության չրջանում ստեղծվել են բարենպաստ պայմաններ, որոնք «պատրաստ կը դարձնեն ընկալելու ընկերվարական գաղափարներու քարոզչութիւն մը, և յատկապէս հողի համայնացման գաղափարը»[19]:

«Բանվորության մեջ» բաժնում, մասնանշվում էր 1900-ից ի վեր ՀՅԴ կառույցների կողմից կազմակերպված գործադուլների փաստը: Նչվում էր նաև ՀՅԴ դրոշի տակ գործող բանվորության ընդհանուր քանակը՝ 23.300: Կուսակցությունը ներկայացրել էր նաև իր կողմից ստեղծված արհեստակցական միությունների պատկերը՝ ըստ նրանց աշխարհագրական տեղաբաշխման և անդամների թվի: Անդրկովկասում ՀՅԴ-ի կողմից կազմակերպվել էին նաև գյուղացիական միություններ:

Շտուտգարտի համաժողովին ներկայացված տեղեկագրում ՀՅԴ-ն կարևորում էր նաև 1906 թ. օգոստոսին էջմիածնում տեղի ունեցած արևելահայերի Կենտրոնական ժողովը: Քանզի այստեղ մեծամասնություն կազմող դաշնակցական պատգամավորների անցկացրած բանաձևերը փաստել են, որ հայ «... ժողովուրդը պատրաստ է արդէն իրականացնելու ընկերվարական նուագագոյն ծրագրի պահանջներուն մէկ մասը-գլխոցներու ամբողջական աշխարհականացում, հողերու համայնացում, կիներու քաղաքական իրավունքներ, իգական սեռի ընդունում՝ կրթական գործի դեկավարման մէջ և այլն»[20]:

Տեղեկագիրն ավարտվում էր ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի որոշումների լուսաբանությամբ. «... անիկա (Ընդհանուր ժողովը – Կ. Հ.) որոշեց չարունակել պայքարը երկու պետութեանց մէջ Դաշնակցութեան դրօշի տակ, և առնել բոլոր գործնական միջոցները՝ միւս բոլոր ընկերվար-յեղափոխական տարրերու հետ գործակցութեան հասնելու համար: Միաձայնութեամբ որոշվեցաւ մասնակցիլ ընկերվարական միջազգային համագումարնեբուն»[21]: Այսպիսով, ՀՅԴ-ն Շտուտգարդի միջազգային սոցիալիստական համաժողովին էր ներկայացել իր հարուստ գործունեության, այդ թվում՝ սոցիալիզմի համար պայքարի մասին վկայող ամբողջական հաշվետվությամբ:

Ինչպես նշեցինք, ՀՅԴ-ի կողմից Շտուտգարտի համաժողովին կարող էր մասնակցել երեք պատգամավոր, սակայն նման իրավունք էր ստացել միայն նրա՝ Ռուսական կայսրությունում գործող հատվածը՝ ռուսական սեկցիայի՝ սոցիալիստ-հեղափոխականների ենթասեկցիայի կազմում: Ընդ որում՝ ամբողջ ռուսական սեկցիային տրվել էր 20 ձայն, որից 10-ը՝ սոցիալդեմոկրաններին, 7-ը՝ սոցիալիստ-հեղափոխականներին և 3-ը՝ չեզոք արհմիություններին: Բայց մինչև կոնգրեսի սկսվելը՝ 1907 թ. օգոստոսի 16-ին, տեղի ունեցավ Միջազգային սոցիալիստական բյուրոյի ժողովը, որտեղ ՀՅԴ-ի կողմից հարց բարձրացվեց, որ կուսակցության Թուրքիայի հատվածին առանձին ներկայացուցիչ ունենալու իրավունք տրվի: Դրա նպատակն էր ստեղծել առանձին հայկական սեկցիա, որի մեջ պետք է մտնեին ՀՅԴ երկու հատվածները: Բայց Միջազգային սոցիալիստական բյուրոն որոշեց հետաձգել այդ խնդրանքի իրականացումը՝ մինչև իր առաջիկա նիստը, երբ ՀՅԴ Թուրքիայի կառուցի դեկավար մարմինը կներկայացնի համապատասխան տեղեկագիր՝

[18] Նույն տեղում, էջ 16–18:
[19] Նույն տեղում, N 13, էջ 15:
[20] Նույն տեղում:
[21] Նույն տեղում, էջ 16:

Թուրքիայի հատվածի կազմակերպության և նրա գործունեության վերաբերյալ[22]: Նմանօրինակ որոշման վրա, թերևս, որոշ ազդեցություն էր գործել բոլշևիկների կողմից տարվող քարոզչությունը, քանզի նրանք ՀՅԴ-ին փորձում էին ներկայացնել, որպես ազգայնական կուսակցություն ու խոչընդոտել նրա մուտքը Սոցինտերն: «1907 թ.ին,– գրում է Մ. Վարանդյանը,– նրանց (բոլշևիկների – Կ. Հ.) մի հայ ներկայացուցիչ (խոսքը վերաբերում է Բ. Կնունյանցին – Կ. Հ.) հրաւիրած էր ռուսական սեկցիայի կողմից Շտուտգարտի միջազգային կօնգրեսը «յատուկ նպատակով՝ դուրս մղելու Դաշնակցութիւնը, որի ընդունելութեան խնդիրն էր դրված Ինտեռնացիօնալի մէջ»[23]:

Շտուտգարդի սոցիալիստական համաժողովի բացումը տեղի ունեցավ 1907 թ. օգոստոսի 18-ին: Ներկա էին տարբեր պետությունների և ազգությունների մոտ 1000 պատգամավորներ: Կոնգրեսը բացեց Միջազգային սոցիալիստական բյուրոյի նախագահ, Բելգիայի սոցիալիստական կուսակցության առաջնորդ Է. Վանդերվելդեն և խոսքը փոխանցեց Ա. Բեբելին: Վերջինս ներկայացրեց սոցիալիստական աշխարհում Ամստերդամի 1904 թ. կոնգրեսից հետո տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները: Ա. Բեբելից հետո խոսք վերցնելով՝ Է. Վանդերվելդեն քաջալերանքի խոսքեր ուղղեց Ռուսական կայսրության բոլոր հեղափոխականներին:

Եվ միայն 1907 թ. օգոստոսի 20-ին տարբեր մասնաժողովներում սկսվեցին համաժողովի կանոնավոր աշխատանքները: Համաժողովի օրակարգի կետերն էին.

ա) միլիտարիզմը և միջազգային ընդհարումները

բ) փոխհարաբերությունները սոցիալիստական կուսակցությունների և արհեստակցական միությունների միջև

գ) գաղութային քաղաքականությունը

դ) աշխատավորների արտագաղթը և ներգաղթը

ե) կանանց ընտրական իրավունքը[24]:

Համաժողովի ամենահրատապ հարցը դարձավ օրակարգի առաջին կետը: Նրա շուրջ ձևավորվեցին իրար հակադիր երկու թևերը, որոնց մոտեցումները միմյանցից էականորեն տարբերվում էին: Ֆրանսիական սոցիալիստների բլոկը, Ժ. Ժորեսի և Պ. Վայանի գլխավորությամբ, իրենց առաջարկած բանաձևում առաջ էր քաշում այն միտքը, որ եթե մի պետություն ապառնում է մեկ այլ ազգի անկախությանը, ապա դրանով նա դուրս է գալիս տվյալ ազգի աշխատավոր դասակարգի և ամբողջ միջազգային աշխատավորության դեմ: Եվ այդ պարագայում ազրեսիայի ենթարկված ազգը և նրա աշխատավոր դասակարգը իրավունք ունի պաշտպանելու իր անկախությունը և ակնկալելու ամբողջ աշխարհի աշխատավորության աջակցությունը: Բանաձևում միլիտարիզմի կանխարգելման միջոց էր դիտվում աշխատավորության համաժողովրդական ընդվզումը և պայքարը պատերազմենատական միջոցներով[25]:

Այսպիսի մոտեցմանը դեմ արտահայտվեցին գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները՝ հանձինս Ա. Բեբելի և Ֆոլմարի, որոնք իրենց ելույթներում չեշտեցին, որ վերոհիշյալ մոտեցումները կարող են գերմանական սոցիալ-դեմոկրատիայի վրա հրավիրել Վիլհելմ-Բյուլովյան կառավարության զայրույթը և դեմ քվեարկեցին այդ բանաձևին: Այս իրավիճակից դուրս գալու համար Է. Վանդերվելդեի և Վ. Ադլերի կողմից մշակվեց մի փոխզիջումային բանաձև: Նրա բովանդակության մասին «Դրօշակը» գրում էր, որ «իւրաքանչիւր երկրի սոցիալիստների կը շարունակեն ունենալ իրենց յատուկ տաքտիկը,

[22] ՀՅԴ Թուրքիայի հատվածի մուտքը Սոցինտերն տեղի ունեցավ 1908 թ. հոկտեմբերին Միջազգային սոցիալիստական բյուրոյի 10-րդ համագումարում, որը նրան տվեց 4 ձայնի իրավունք: Տես «Դրօշակ», 1908, N 9–10, էջ 151:

[23] Վարանդեան Մ., Յուսանքներ, Ժընև, 1910, էջ 199–200: Նաև "История второго интернационала", т. 2, М., 1966, с. 204.

[24] Տե՛ս История второго интернационала, т. 2., с. 204.

[25] «Դրօշակ», 1907, օգոստոս, N 8, էջ 112: Նույն տեղում: Վարանդեան Մ., Աւգուստ Բէբէլ, Ժընև, 1913, էջ 19–20: "История второго интернационала", т. 2, с. 209.

համաձայն իրենց պայմաններին, ցեղական տեմպերամենտին և այլն»[26]:

Օրակարգի երկրորդ կետով քննարկման դրվեց սոցիալիստական կուսակցությունների ու արհմիությունների փոխհարաբերությունների կանոնակարգման խնդիրը և ընդունվեց մի բանաձև, որն առաջարկեցին ԱՄՆ-ի սոցիալիստները: Նրա բովանդակության մեջ նշվում էր, որ սոցիալիստական կուսակցությունները և արհմիությունները աշխատավոր դասակարգի ազատագրման գործում համահավասար արժեք ունեն, և այդ ազատագրական կռվի հաջողությունը կապված է նրանից, թե որքան սերտ հարաբերություններ կհաստատվեն այդ երկու համազոր գործոնների միջև: Պահանջվում էր, որ այդ երկու ուժերը առաջ գնան ներդաշնակ ջանքերով, հանուն ընդհանուր ազատագրության: Բանաձևին ձայն տվեց նաև ռուսական սեկցիան՝ հանձինս սոցիալիստ-հեղափոխականների, սոցիալ-դեմոկրատների, ՀՅԴ-ի և հրեական Բունդի[27]:

Բնական պետք է համարել ռուսական սեկցիայի նման վերաբերմունքը, քանզի արհմիությունները 1905 թ. Ռուսաստանում սկսված հեղափոխության շարժիչ ուժը հանդիսացող աշխատավոր դասակարգի տնտեսական շահերի պաշտպանն էին: Ուստի ռուսական սեկցիայի մեջ մտնող կուսակցությունների ներկայացուցիչները լավ էին գիտակցում վերջիններիս հետ համախոհորեն աշխատելու կամ նրանց իրենց հակակշռի տակ պահելու խնդիրը:

Համաժողովի օրակարգի 3-րդ կետի հետ կապված առաջ քաշվեց հետևյալ հարցը. արդյո՞ք հարկ է օգտակար ճանաչել դաղութային քաղաքականությունը, որը բարենպաստ վարչակարգի պարագայում կարող է օժանդակել քաղաքակրթության առաջադիմությանը, աշխատավոր դասակարգի և սոցիալիստական շարժման առաջացմանը, թե՞ այն պետք է լիովին վնասա-

[26] «Դրօշակ», 1907, օգոստոս, N 8, էջ 112:
[27] Նույն տեղում, էջ 113:

կար համարել՝ աչքի առաջ ունենալով գաղութներում տեղի ունեցող բռնությունները: Համաժողովը 128 ձայնով, ընդդեմ 107-ի, վնասակար ճանաչեց գաղութային քաղաքականությունը, որին կողմ քվեարկեց նաև համառուսական սեկցիան՝ հանձինս ՀՅԴ ներկայացուցչի:

Օրակարգի սպառումից հետո կոնգրեսն ընդունեց Մարոկկոյի դեմ ֆրանսիական արշավանքը դատապարտող և Ամերիկայի հանքագործ բանվորներին աջակցություն հայտնող և այլ ընթացիկ հարցեր շոշափող բանաձևեր: Զբավարարվելով համաժողովի սկզբում է. Վանդերվելդեի կողմից Ռուսաստանի հեղափոխականների հասցեին հնչեցված դրվատանքի խոսքերով՝ Շտուտգարտի համաժողովը ընդունեց նաև «... Ռուսաստանի հերոս մարտիկներին, գյուղական և քաղաքային հեղափոխական աշխատավորությանը»[28] իր աջակցությունն արտահայտող հատուկ բանաձև:

Այսպիսով, ՀՅԴ-ն 1904–1905 թթ. կայուն հարաբերություններ հաստատելով միջազգային սոցիալիստական շարժման հետ, իսկ 1907-ին՝ Շտուտգարտի կոնգրեսում, անդամագրվելով Սոցիալիստական ինտերնացիոնալին, դարձավ սոցիալիստական շարժման առաջատարն Անդրկովկասում, իսկ քիչ անց նաև՝ Օսմանյան կայսրության տարածքում և Իրանում: Սոցինտերնի լիիրավ անդամի կարգավիճակը հնարավորություն տվեց ՀՅԴ-ին Հայկական հարցը և հայ ժողովրդի առջև ծառացած հրատապ այլ խնդիրները բարձրացնել ու քննարկել քաղաքական այնպիսի բեմի վրա, որը տվյալ պատմաշրջանում հասու չէր հարևան ժողովուրդներից որևէ մեկին:

[28] **Зайдель Г.,** Очерки по истории второго интернационала, Прибои, 1931, с. 54.

КАРЕН АКОПЯН
ИИ НАН РА

АРФ ДАШНАКЦУТЮН И СОЦИАЛИСТИЧЕСКИЙ ИНТЕРНАЦИОНАЛ В 1905-1907 ГГ.

РЕЗЮМЕ

В начале XX в. между АРФ Дашнакцутюн и международным социалистическим движением сформировались доверительные отношения, которые в дальнейшем переросли в устойчивое взаимодействие. Первая русская революция 1905-1907 гг. поставила АРФ Дашнакцутюн перед необходимостью изменения политики партии в Закавказье. Спустя несколько месяцев после начала революции, партией была принята так называемая "Кавказская платформа". В этом документе было сказано, что АРФ Дашнакцутюн в Закавказье от самообороны переходит к революционной борьбе. Все эти шаги не могли быть не замечены Международным социалистическим бюро, который пригласил АРФ Дашнакцутюн в Социалистический интернационал. В ступление АРФ Дашнакцутюн в большую социалистическую семью произошло в августе 1907 г. на Штутгардском конгрессе Социалистического интернационала. АРФ Дашнакцутюн стала первой национальной партией действующей на территории Закавказья, Османской империи и Ирана, которая имела полноправное членство в Социалистическом интернационале.

ԱՐՓԻՆԵ ԲԱԲԼՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Խարբերդի նահանգը, որպես Օսմանյան կայսրության վարչական միավոր, կազմավորվել է 1879–1880 թթ.: Նահանգն անվանվել է Մամուրեթ-ուլ-Ազիզ՝ համանուն կենտրոնով: 1888 թ. նահանգին միացվեց շուրջ 500 փոքր գյուղերից բաղկացած Դերսիմը[1]: Վերջինս լեռնոտ տարածք էր՝ բնակեցված հիմնականում քրդերով: Տարբեր վերաճևումներից հետո նահանգի տարածքը XX դարի սկզբին կազմեց 37.800 կմ²: Այն բաղկացած էր երեք գավառներից՝ Խարբերդ, Դերսիմ, Մալաթիա, մեկ տասնյակից ավել գավառակներից և 2.443 գյուղերից[2]:

Դեռևս XVI–XVIII դարերում տարածքի բազմաթիվ գյուղեր հայաթափվել էին, թեև XIX դարի վերջին դեռևս պահպանում էին իրենց հայկական անվանումները: 1890-ական թթ. հայ միգյան ջարդերի հետևանքով ևս հայաթափվում են բազմաթիվ գյուղեր: XIX դարի վերջին Մալաթիայի, Դերսիմի գավառներին, Ակնի, Արաբկիրի գավառակներին կցված ու նախկինում որպես հայաբնակ հիշատակվող շատ գյուղեր XX դարի սկզբին արդեն թուրքաբնակ կամ քրդաբնակ էին: Նախորդ դարերում սկսված նահանգի հայաթափումն ավարտվեց 1915–1922 թթ. իրականացված Հայոց ցեղասպանության հետևանքով: Նախկինում նահանգի բնակչության զգալի մասը կազմող հայության հիմնական մասը բնաջնջվեց, իսկ ցեղասպանությունը վերապրած խարբերդահայերը բնակություն հաստատեցին տարբեր երկրներում:

[1] **Krikorian M.**, Armenians in the Service of the Ottoman Empire 1860–1908, London, 1977, p. 39–40.
[2] **Hewsen R.**, Armenia, A Historical Atlas, Chicago and London, 2001, p. 196.

Ստորև անդրադարձ է կատարվում Խարբերդի նահանգում Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից հայ բնակչության նկատմամբ իրականացված ցեղասպանության քաղաքականության դրսևորումներին: Մի քանի բնակավայրերի հայության կորուստների օրինակով փորձել ենք մոտավոր կերպով հաշվարկել Խարբերդի նահանգի հայության մարդկային կորստի չափը, անդրադարձ է կատարվել նաև նահանգի տարածքում արձանագրված բռնի մահմեդականացման դեպքերին:

Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից 1912 թ. կազմված վիճակագրության համաձայն՝ Խարբերդի նահանգում ապրում էր 168.000 հայ[3]: Պատրիարքարանի տվյալների մեջ ներառված չէր Մալաթիայի հարավային հատվածի հայության թիվը: Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ Ապահովաց հանձնաժողովի կողմից պատրաստած վիճակագրական ցուցակի տվյալներով՝ նահանգի հայ բնակչության թիվը 204.000 էր, որն ըստ թեմական վիճակների բաշխվում էր հետևյալ կերպ. Խարբերդի գավառ՝ 128.000, Մալաթիայի գավառ՝ 36.000, Դերսիմի գավառ՝ 40.000[4]: Այս տվյալների հիմքը պատրիարքարանի նույն 1912 թ. վիճակագրությունն է: Պատրիարքարանի արդեն 1913–1914 թթ. վիճակագրության համաձայն՝ Խարբերդի նահանգում բնակվող հայերի թիվը նշվում է 124.289, որից Խարբերդի գավառում՝ 68.877, Մալաթիայի գավառում՝ 38.705, Դերսիմի գավառում՝ 16.707 հայ[5]: Թեոդիկի և Գևորգյան-Փաբուդջյանի 1913–1914 թթ. պատրիարքարանի անցկացրած մարդահամարի ցուցակների քննությունը ցույց է տալիս, որ սիրուքահայ ուսումնասիրողների կողմից բերվող Խարբերդի նահանգի հայաբնակ բնակավայրերի ցուցակները թերի են և չեն ներկայացնում նահանգի հայ բնակչության իրական թիվը: Մեկ այլ

[3] «Արարատ», էջմիածին, 1914, թիւ Թ, էջ 809:
[4] Թեոդիկ, «Ամենուն տարեցոյց», ԺԶ տարի, 1922, էջ 261:
[5] **Ke'vorkian R.,** Paboudjian P., Les Arme'niens dans l'empire Ottoman. A la veille du Ge'nocide, Paris, 1992, p. 59.

վիճակագրության համաձայն, որը տարբեր վիճակագրությունների համադրությամբ կազմել է Բ. Եղիայանը, Խարբերդի նահանգի հայ բնակչության թվաքանակը հաշվվում է 200.150 մարդ[6]: Ինչևիցե, ընդունենք, որ 1915 թ. նախօրյակին նահանգում ապրում էր շուրջ 200.000 հայ. սա այն դեպքում, երբ նահանգի բազմաթիվ բնակավայրերից 1915 թ. դրությամբ հազարավոր հայեր արտագաղթել էին ԱՄՆ: Միացյալ Նահանգներ արտագաղթածների վերաբերյալ վիճակագրական տվյալները են բերված Ռ. Գևորգյանի ու Փ. Փաբուդջյանի՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1913–1914 թթ. տվյալների հիման վրա կազմված մեծածավալ աշխատության մեջ, որի համաձայն Խարբերդի նահանգից մինչ այդ արտագաղթել էր 29.410 հայ[7]:

1914 թ. ամռանը հայտարարված զորակոչն ընդդրկեց նաև Խարբերդի նահանգը: Այն ժամանակ, երբ հայկական բոլոր բնակավայրերից զորակոչի տարիքի հայերը զորակոչվել էին թուրքական բանակ, հայ բնակչությանը հրաման է արձակվում հանձնել եղած զենքն ու զինամթերքը: Մինչդեռ 1915 թ. սկզբներից իշխանությունները բացահայտ կերպով զենք էին բաժանում մուսուլման բնակչությանը[8]: Հայերից զենքի հավաքումը պատճառաբանվում էր Վանի «ապստամբությամբ». իբր այդ արվում էր նախազգուշական նկատառումներով: Սկզբում վստահեցնում էին, որ որևէ վտանգ չկա խարբերդահայերի համար և սերաստացիների ու էրզրումցիների տեղահանությունն իրականացվում է ռազմագիտական նկատառումներով: Խարբերդում, Մեզրեում, Խարբերդի դաշտի գյուղերում, այլ վայրերում հայերը փորձում էին խուսափել ձերբակալություններից և զենք էին գնում հարևան թուրքերից ու հանձնում իշխանություններին: Իշխանությունների ներկայացրած տվյալների համաձայն՝

[6] Եղիայան Բ., Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ. 1914–1972, Անթիլիաս, 1975, էջ 891:
[7] **Ke'vorkian R.,** Paboudjian P., Les Arme'niens dans l'empire Ottoman, p. 59.
[8] **Riggs H.,** Days of Tragedy in Armenia: Personal Experience in Harpoot. 1915–1917, USA, 1997, p. 50.

որոշ տեղերում իբրև թե հայտնաբերվել էին նույնիսկ ռումբեր, պայթուցիկ նյութեր: Խարբերդում ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսը տեղեկացնում էր, որ այդ ռումբերը «ոստիկանությունն է նախօրոք թաղել, որպեսզի հայերի դեմ հանցանշաններ ունենա»[9]:

Զենք հավաքելու պատրվակով կազմակերպված խուզարկություններին զուգահեռ՝ թուրքական իշխանությունները 1915 թ. մարտ ամսից սկսել էին բանտարկությունները: Ընդ որում՝ ձերբակալվում ու բանտարկվում էին նահանգի կյանքի տարբեր ոլորտներում աչքի ընկնող մարդիկ, որոնք իշխանությունների կողմից մեղադրվում էին կառավարության դեմ կազմակերպվող խռովության մեջ: Սա, իհարկե, բացահայտ կեղծիք էր, որն ընդգծեցին այս ամենին ականատես բազմաթիվ այլազգիներ: Ինչպես նշում էր գերմանացի քարոզիչ Յոհաննես Լեմանը, «այստեղի քրիստոնյաների մտքով իսկ չի անցնում ըմբոստանալ կառավարության դեմ»[10]:

Ձերբակալություններն առավել ակտիվացան և գավառներում տարածվեցին 1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին: Մայիսին Խարբերդ և Մեզրե քաղաքներում առանց որևէ պատճառաբանության ձերբակալվում են մի քանի հարյուր հեղինակավոր հայեր, այդ թվում՝ առևտրականներ, վաճառականներ, եփրատ քոլեջի ուսուցիչներ: Մայիսին ձերբակալվում են նաև Ակնի, Արաբկիրի, Զմշկածագի, Զարսանճագի հայության առաջնորդները, թուրքական իշխանությունների կողմից «վտանգավոր» ճանաչված մարդիկ: Հունիսի 1-ին ձերբակալված Ակնի առաջնորդական փոխանորդը հետագա օրերին ակնեցի 30 ազդեցիկ անձանց հետ ուղարկվում է Արաբկիր, այնուհետև այս խմբին միացվում է ևս 90 հոգի: Իբրև Ակնի ապստամբ հայության

[9] Դևիս Լ., Սպանդի նահանգը. Ամերիկյան դիվանագետի զեկուցագիրը հայկական ջեղասպանության մասին. 1915–1917 թթ., Ե., 2001, էջ 101:
[10] «Գերմանիան և Հայաստանը 1914-1918. Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու», հրատարակությունը և ներածությունը դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, հ. 1, Ե., 2006, էջ 82:

դլխավոր պարագլուխներ՝ Գյումուշ Մադենի առջև նրանց նավ են նստեցնում, հետո խեղդամահ անում[11]: Իշխանություններն առանձնակի դաժանությամբ վարվեցին Մեզրեում բանտարկված նահանգի առավել հեղինակավոր անձանց և առանձնապես Եփրատ քոլեջի պրոֆեսորների հետ: Հունիսի 23-ի գիշերը Մեզրեի բանտից բանտարկյալների մի մեծ խմբի Տիգրանակերտ տանելու պատրվակով գաղտնի հանում են քաղաքից: Նրանց թվում էին՝ Խարբերդի հայոց առաջնորդ Պսակ վարդապետը, պրոֆեսորներ, մեծ թվով վաճառականներ: Վերջիններիս սպանում են Արղանա Մադենի մոտակայքում[12]: Սա Մեզրեից դուրս հանված և ոչնչացված առաջին մեծ խումբն էր: Հետագա օրերին Մեզրեի բանտից դուրս են հանվում հայերի բազմաթիվ խմբեր, որոնց ևս սպանում են քաղաքի չրջակայքում:

Նույնաբնույթ գործողություններ իրականացվեցին նաև Դերսիմի գավառում: Դեռ 1915 թ. մայիս-հունիս ամիսներին Զմշկածագում ձերբակալված և բանտարկված մոտ 60 մտավորականներին ու հոգևորականներին դաժան ծեծի ենթարկելուց հետո տանում են եփրատի ուղղությամբ, սպանում և դիակները նետում գետը[13]: Այս ընթացքում արդեն սպանվել էին Զարսանճագի գյուղերի՝ Բերբիում բանտարկված հայտնի գործիչները:

1915 թ. սկզբին սկսված ձերբակալությունների ալիքը հունիս ամսին համատարած բնույթ է ստանում. գրեթե միաժամանակ զինաթափվում ու սպանվում են նահանգի տարածքում ծառայության կանչված բազմաթիվ հայ զինվորներ: Զինաթափելուց հետո Խարբերդում ծառայող 13.000 հայ զինվորների տեղափոխում են Մեզրեի բանտ: Մեկ շաբաթ անց ժանդարմների խիստ հսկողության ներքո նրանք դուրս են բերվում բանտից՝ Ուրֆա տանելու պատրվակով: Այս զինվորներին սպանում են

[11] Թեոդիկ, Յուշարձան նահատակ հոգեւորականութեան, Ե., 1990, էջ 240:
[12] Դևիս Լ., Սպանդի նահանգը, էջ 109:
[13] Գասպարեան Հ., Չմշկածագ եւ իր գիւղերը, Պոսթըն, 1969, էջ 398–399:

Պագր Մադենի մոտ[14]: Սպանված երիտասարդների մեծ մասն ամերիկյան, ֆրանսիական քոլեջների, կենտրոնական հայկական դպրոցի աշակերտները էին: Հետագայում նույն պատրվակով քաղաքներից դուրս են հանվում ու սպանվում հայերի բազմաթիվ խմբեր: 1915 թ. հունիսի 5-ին Մալաթիայից հինգ-վեց ժամ հեռու գտնվող Զիֆթլիկ և Մամուրան վայրերում, սպանվում են խճուղիների շինարարության մեջ ներգրավված 1.500 մալաթիացի դինվորներ[15]:

Ակնհայտ էր, որ հայերի բնաջնջմանն ուղղված գործողությունները համակարգված էին կենտրոնական իշխանության կողմից և անմիջականորեն իրագործվում էին տեղական իշխանությունների, ժանդարմների կողմից, այլապես անհնար կլիներ նման համակարգված կերպով իրականացնել այդքան մարդկանց սպանությունը: Դեռևս 1915 թ. մարտի 16-ին նահանգի կուսակալ Սաբիհ բեյը Խարբերդով անցնող գերմանացի փոխհյուպատոսին զրույցի ժամանակ ասել էր. «Հայերը պետք է բնաջնջվեն, նրանք հարստացել են, շատացել՝ սպառնալիք դառնալով իշխող թուրք ռասայի համար»[16]:

Հայ ղեկավար գործիչների, մտավորականների, հոգևորականների, զինվորների ոչնչացումից հետո, ինչը ողջ նահանգում իրագործվել է գրեթե միաժամանակ, իշխանությունները կազմակերպում են հայ բնակչության մյուս մասի՝ կանանց, երեխաների, տարեցների բնաջնջումը: Հայտարարվում է բոլոր հայերի տեղահանության մասին, որը Խարբերդի նահանգում, բացառությամբ որոշ բնակավայրերի, իրականացվում է 1915 թ. հունիս-հուլիս ամիսներին: Տեղահանությունը, որը բնաջնջման պակաս դաժան մեխանիզմ չէր (սրանում խարբերդցիները համոզվեցին, երբ նահանգի տարածքում հայտնվեցին այլ նահանգներից տեղահանված հայերի առաջին խմբերը), ընտրվել էր որպես առավել նպատակահարմար միջոց՝ ոչնչացնելու կանանց, երեխաներին, կենդանի մնացած սակավաթիվ տղամարդկանց: Եթե որոշ սահմանամերձ նահանգների հայության տեղահանությունը կարելի էր ինչ-որ կերպ պատճառաբանել պատերազմական անհրաժեշտությամբ, ապա Խարբերդի նահանգի դեպքում այդ ընդհանրապես անընդունելի է: Թուրքական իշխանությունների բերած պատրվակները անհիմն են: Այս մասին նշել է նաև Յոհաննես Լեփսիուսը. «Խարբերդի վիլայէթը ամբողջովին դուրս կը գտնուի պատերազմի թատրէն, երկրի սրտին վրայ, զօրաւոր և բարձրաբերձ լեռնաշղթաներէ շրջապատուած, որոնք Փոքր Ասիոյ ներքին մասը գրեթէ անանցանելի կը դարձնեն»[17]:

Հունիսի վերջերին իշխանությունները սկսում են նահանգի կենտրոնական երկու քաղաքների հայության տեղահանությունը: Հունիսի 26-ին հայտարարվում է, որ տեղահանությունը պետք է սկսվի չորս օրից: Նախ պետք է տեղահանվեր Մեզրեի, հետո նաև՝ Խարբերդի հայությունը: Հուլիսի 1-ին Մեզրեից տեղահանվում է 3.000 հայերից կազմված առաջին խումբը[18]: Այս խմբի տղամարդկանց սպանում են Պագր Մադենում: Քարավանի վերջին հանգրվանն էր Դեր-Զորը:

Յուրաքանչյուր երեք-չորս օրը մեկ մի նոր խումբ էր տեղահանվում Մեզրեից, Խարբերդից ու շրջակա գյուղերից: Հուլիսի 3-ին Մեզրեից ու Խարբերդից տեղահանվում է ևս 3.000 հոգուց բաղկացած քարավան, որի մեջ էին նահանգի ամենահարուստ մարդկանց, պաշտոնյաների ընտանիքները, այդ թվում՝ Ֆաբրիկատորյանները, Խարբութլյանները, Գազանճյանները, Զարիֆյանները և այլն: Տղամարդկանց կոտորում են Մալաթիայի մոտ, կանանց՝ քշում Դեր-Զոր: Այս խմբից Հալեպ են

[14] **Bryce J. and Toynbee A.,** The Treatment of Armenians in the Ottoman Empire. 1915–1916, New Jersey, 2000, p. 296.
[15] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրութ, 1961, էջ 938:
[16] **Parmele R.,** Pioneer in the Euphrates Valley, Princeton and London, 2002, p. 18.

[17] «Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի. Հայաստանի ջարդերը», թարգմանեց՝ Միքայել Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 74:
[18] Թեոդիկ, Յուշարձան նահատակ հոգեւորականութեան, էջ 124–125:

հասնում 68 հոգի[19], այսինքն՝ տեղահանվածների շուրջ 2.27 %-ը: Հուլիս ամսվա ընթացքում շարունակվում են տեղահանությունները Մեզրեից, շրջակա գյուղերից ու Խարբերդ քաղաքից: Խարբերդ քաղաքից դուրս եկած և 3.000 հոգուց բաղկացած առաջին երեք քարավանին՝ տարագրության 15-րդ օրը միանում է Սեբաստիայից, Ակնից, Թոքաթից եկող մեկ այլ խումբ՝ ձևավորելով 18.000-ոց մի մեծ քարավան: 70-րդ օրը, երբ նրանք հասնում են Հալեպ, Խարբերդի 3.000 տարագրյալներից կենդանի էին մնացել 35 կին ու երեխա, իսկ 18.000-ոց քարավանից՝ 150 կին ու երեխա[20]: Փաստորեն՝ Հալեպ էր հասել Խարբերդցիների 1.16 %-ը:

1915 թ. հուլիսի 4-ից սկսվում է Խարբերդ-Մեզրեի շրջանի հայկական գյուղերի բնակիչների տեղահանությունը: Վերջիններիս քշում են դեպի Տիգրանակերտ, ապա՝ Դեր-Զոր: Հուլիսին 3.000 հուսեյնիկցիների անց են կացնում Եփրատը. տղամարդկանց առանձնացնում են ու գնդակահարում Մերտինից Ռուսլա տանող ճանապարհին գտնվող մի ամայի ձորում, իսկ կանանց՝ քշում Դեր-Զոր[21]: Հուլիսի 1-ից տեղահանվում են Բարջանճի հայերը, որոնց քշում են դեպի Դիարբեքիր ու Մարդին[22]: Նույնը կատարվում է նաև Դատեմ, Բազմաչեն, Թլկատին, Հոդե և Խարբերդի դաշտի մյուս գյուղերի հայ բնակիչների հետ: Արդյունքում՝ հայաթափվեց ողջ Խարբերդի դաշտը:

Հուլիսին կազմակերպվում է նաև Խարբերդի գավառի Արաբկիր գավառակի հայությանն տեղահանությունը: Մինչև տեղահանությունը Արաբկիրի 15 գյուղերում և Արաբկիր քաղաքում, համաձայն Թեոդիկի բերած վիճակագրության, ապրում էր 2.659 տուն հայ[23]: Արաբկիր քաղաքի 2.000 տուն հայերի կեսից ավելին 1915 թ. իսլամ են ընդունում և խուսափում տարագրությունից[24] (նման մասսայական դավանափոխությունը եզակի դեպք էր ողջ նահանգի համար), մյուսները՝ մեծամասամբ կանայք և երեխաներ, տարագրվում են: Նրանց մի մասը նահատակվում է Գըրգ-Կեող վայրում: Եղեսիայի մերձակա Գապատակում Հայատար արաբական գյուղ է հասնում միայն քարավանի 1/4-ը: Այս բնակավայրում տեղի ունեցած կոտորածից ազատվում են միայն 100 հայեր: Հետագայում Արաբկիրից տեղահանվում են նաև որոշ իսլամացած հայեր: Հուլիսի 5-ին տեղահանվում է Ակնի հայ բնակչությունը. քաղաքում մնում են միայն իսլամ ընդունած հայերը, որոնք կազմում էին հայ բնակչության 5 %-ը[25]:

Հունիսի 15-ից, երբ արդեն կոտորվել էր Զմշկածագի տղամարդկանց հիմնական մասը, սկսվում է գավառակի հայության բռնագաղթը, որն ավարտվում է մի քանի օրերի ընթացքում: Տեղահանված կանանց, երեխաների մի մասը ջրախեղդ է արվում, մյուսներին տանում են Դեր-Զորի ուղղությամբ: Զմշկածագի գավառակի գյուղերի հայությունը տեղահանվում է գրեթե ամբողջությամբ: Հունիսին տեղահանվել ու ոչնչացվել էին նաև Զարսանճագի գավառակի հայերը:

Մի փոքր այլ էր վիճակը Մալաթիայում: Այստեղի կառավարիչ Նազիմ բեյը հայերի նկատմամբ անհրաժեշտ խստություն չգործադրելու համար 1915 թ. մայիսի սկզբներին պաշտոնանկ էր արվել: Նրան հաջորդում է հայերի նկատմամբ անմարդկային հալածանքներ գործադրած Առայի կառավարիչը և, ի վերջո, Ռեշիտ փաշան, որը հունիսի վերջերին Մալաթիա է գալիս կոտանդնուպոլսից: Հուլիսի սկզբներին արդեն սպանված էր Մալաթիայի հայության 2/3-ը: Անպաշտպան կանանց ու որբերի խումբը տարագրվում է դեպի Դեր-Զոր: Հունիսին տեղահանվել

---

[19] Ճիզմէճեան Մ., Խարբերդ եւ իր զաւակները, Ֆրէզնոյ, 1955, էջ 466:
[20] **Bryce J. and Toynbee A.**, The Treatment of Armenians in the Ottoman Empire, p. 295.
[21] Տերանեան Մ., Հիւսէնիկ. Յուշէր եւ յոյզեր, Պոսթըն, 1981, էջ 90-91:
[22] Ծերօն Մ., Բարջանճ գիւղ. Համայնապատում (1600–1937), Պոսթըն, 1938, էջ 247:
[23] Թեոդիկ, Յուշարձան նահատակ հոգեւորականութեան, էջ 548:

[24] Նույն տեղում, էջ 233:
[25] Ակունի Ս., Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 175:

էին նաև Մալաթիայի Մուշովկա և Անսուր գյուղերի բնակիչները:

1915 թ. օգոստոսին Խարբերդի նահանգի հայությունը տեղահանվել ու հիմնականում ոչնչացվել էր. յուրաքանչյուր բնակավայրից փրկվել էին սակավաթիվ մարդիկ, հիմնականում՝ կանայք ու երեխաներ:

Խարբերդում հավաքված գաղթականները կրկին աքսորվում են: Մասսայական ձերբակալություններ ու տեղահանություն է կազմակերպվում 1915 թ. սեպտեմբերի վերջերին, ապա նաև՝ նոյեմբերին: 1916 թ. հատուկենտ խարբերդցիների կարելի էր հանդիպել նահանգի հայաբնակ վայրերում, այն էլ՝ հիմնականում Մեզրե և Խարբերդ քաղաքներում: Սա կապված էր այն փաստի հետ, որ այստեղ դեռևս մարդասիրական գործունեություն էին իրականացնում մի քանի օտարերկրացիներ: Ինչպես ԱՄՆ հյուպատոս Լեսլի Դևիսը, այնպես էլ միսիոներներ Մարիա Յակոբսենը, Հենրի և Թեսի Ատկինսոն ամուսինները և ուրիշներ, պատերազմի սկզբից (նրանք Խարբերդից հիմնականում հեռացան 1917 թ.) իրենց հնարավորության սահմաններում աջակցում էին խարբերդահայերին և այստեղ հայտնված բազմաթիվ գաղթականներին: Նրանք իրենց մոտ ապաստան էին տալիս հարյուրավոր հայերի, խնամում ու մահից փրկում բազմաթիվ որբերի: Շատ խարբերդցիների համար փրկության իրական ուղի դարձավ Դերսիմը: Դերսիմի քրդերի օգնությամբ 10-15.000 հայեր փրկվում են ջարդերից: Նրանց մի մասն անցավ Կովկաս, մյուս մասը մինչև 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարը մնաց քրդերի մոտ, այնուհետև վերադարձավ Խարբերդ: 1919–1920 թթ. Խարբերդ և Մեզրե քաղաքներում արդեն հավաքվել էին մի քանի հազար հայեր՝ հիմնականում կանայք և որբեր: Նրանց հիմնական մասը (այդ թվում՝ շուրջ 6.000 որբեր) Խարբերդից հեռացավ 1922 թ. վերջերին: Շուրջ 2.000 հայեր (հիմնականում որբեր) 1918 թ. հավաքվել էին Մալաթիա

քաղաքում[26]: 1922–1923 թթ. նրանք ևս հեռացան: Ինչպես Խարբերդ քաղաքը, այնպես էլ ողջ նահանգը հայաթափվեց. միայն մի քանի բնակավայրերում հատուկենտ հայեր ապրում էին:

Հանրագումարի բերելով ասվածը՝ նշենք, որ տարբեր վկայությունների համաձայն (ընդ որում՝ ինչպես տեղացիների, այնպես էլ օտարազգիների) Խարբերդի նահանգի հայ բնակչությունը ոչնչացվել է նույն մեխանիզմների կիրառմամբ, ինչպես մյուս նահանգներում: Ավելին, նահանգում իրականացված բոլոր գործողությունները լավ համակարգված էին ու ներառում էին Հայոց ցեղասպանությանը բնորոշ բոլոր գծերը: Այս առթիվ Ֆրանսիացի հրապարակախոս Հանրի Պարպին գրում է. «Տաճկաստանի թուրք մնացած վայրերու մէջ, հայ ազգաբնակչութեան բնաջնջումը աւելի կատարեալ եղած ըլլալ կը թուի, աւելի մեթոտաւոր, քան այն մարզերուն մէջ, որոնք կովկասեան սահմանագլուխին դրացի են, որովհետև այդ վայրերուն մէջ, դահիճները լիապէս ժամանակ ունեցած են գործելու: Խարբերդը այս մասին օրինակ մըն է»[27]: Խարբերդի նահանգի օրինակը ցույց է տալիս, թե որքան անհիմն էր թուրքական իշխանությունների՝ նահանգի հայության տեղահանությունը պատերազմի անհրաժեշտությամբ պատճառաբանելու փաստարկը. նահանգ, որը բավական հեռու էր պատերազմական գործողությունների շրջանից: Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը ռայխսկանցլեր Բեթման Ֆոն Հոլվեգին հղած նամակում գրում էր, որ այն բանից հետո, երբ Բ. Դուռը որոշեց արտաքսել նաև Տրապիզոնի, Մամուրեթ-ուլ-Ազիզի ու Սեբաստիայի նահանգների հայությանը, պարզ դարձավ, որ «կառավարությունը իրականում նպատակ է հետապնդում բնաջնջել հայ ցեղին թուրքական կայսրությունում»[28]:

---

[26] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, էջ 956:
[27] Պարպի Հ., Սարսափի երկրին մէջ, Պէյրութ, 1965, էջ 63–64:
[28] «Գերմանիան և Հայաստանը 1914–1918. Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու», էջ 210–211:

Ինչպես Էրզրումի ու Սեբաստիայի նահանգներում, Խարբերդի նահանգի հայ բնակչության հիմնական մասի տեղահանությունը ևս կազմակերպվեց 1915 թ. հունիս-հուլիս ամիսներին: Նահանգի հայությունը տարագրվեց Դիարբեքիրի, Ուրֆայի ճանապարհներով: Վերջնական հանգրվանը հիմնականում Դեր-Զորն էր: Խարբերդի նահանգի հայության հիմնական սպանդարաններից էին՝ Դևե Բոյնի ձորը, Ծովք լճի շրջակայքը, Թլաբերդը, Գյումուշ Մադենը, Մալաթիայի Իզոլի գյուղի շրջակայքը, Ինտարե լեռան ստորոտը, Արղանա Մադենը, Դիարբեքիրը, Դեր-Զորը:

Այն ժամանակ, երբ Խարբերդ և Մեզրե քաղաքների հայության տեղահանությունը նոր էր սկսվել, Խարբերդի նահանգի տարածքում հայտնվում են այլ նահանգներից տեղահանված հայեր: Հաղարավոր հայեր էին գալիս հյուսիսից՝ Էրզրումից, Երզնկայից, Սեբաստիայից, Տրապիզոնից և այլ վայրերից: Խարբերդի նահանգն իր դիրքի, տեղանքի չնորհիվ կարծես ընտրվել էր որպես առավել հարմար վայր՝ հայերին ոչնչացնելու համար: Ջհանելով անապատներ՝ կարելի էր այստեղ ոչնչացնել առավել շատ մարդկանց: Ականատեսի վկայությամբ՝ «Մամուրեթ-ուլ-Ազիզը դարձել էր բոլոր հայերի դերեզմանոց. տարբեր նահանգներից այստեղ ուղարկված և ճանապարհին չմահացած բոլոր հայերը գալիս էին այստեղ՝ մեռնելու»[29]:

Եղած փաստական նյութի հիման վրա նահանգի հայության մարդկային կորուստների մոտավոր հաշվարկման փորձ կատարելով՝ տեսնում ենք, որ տեղահանությունից ու ջարդերից փրկվել է միայն հայության չնչին տոկոսը, իսկ համաշխարհային պատերազմի սկզբում զորակոչված, ապա նաև՝ աշխատանքային գումարտակների անվան տակ հավաքագրված տղամարդկանց խմբերը կոտորվել են գրեթե ամբողջությամբ:

[29] "United States Official Records on the Armenian Genocide. 1915–1917", compiled and with an introduction by Ara Sarafian, Princeton and London, 2004, p. 366.

Լորդ Բրայսի և Առնոլդ Թոյնբիի կազմած փաստաթղթերի ժողովածուում հիշատակվում է Խարբերդից դուրս եկած մի քարավանի մասին, որի 5.000 մարդուց Հալեպ են հասել միայն 213-ը՝ 96 % կորստով: Խարբերդ քաղաքին մոտակա մի գյուղի քարավանի 2.500 հայերից Հալեպ հասան 600-ը (24 %), Խարբերդի մոտակա մեկ ուրիշ գյուղի (Հյուսնի Մանսուր) առաջին քարավանից՝ 60 %-ը, երկրորդ քարավանից՝ 46 %-ը, նույն տարածքի Բերրի գյուղից՝ 25 %-ը[30], Խարբերդից Հալեպ ճանապարհված 3000 տարագրյալներից տեղ հասան 35 կին ու երեխա[31]: Այս դեպքում կորուստը կազմում է՝ 98.8 %: Խարբերդից դուրս եկած 2.000 հոգուց բաղկացած մեկ ուրիշ քարավանից Ուրֆա հասան միայն 200-ը մյուսները՝ կամ մահացան ճանապարհին, կամ՝ սպանվեցին ու առևանգվեցին[32]: Այս դեպքում կորուստը կազմում է 90 %: Բարջանճ գյուղի 179 տուն (784 անձ) հայերից 515-ը նահատակվեց 1915–1920 թթ., 25-ը մահացան տանջանքներից, հիվանդությունից, 14-ը թրքացվեց ու մնաց գյուղում: Վերապրեց միայն 230 բարջանճցի[33]. կորուստը կազմում է՝ 68.9 %՝ առանց իսլամացած հայերի: Դատեմի 700 հոգանոց քարավանից փրկվեցին միայն անապատներ հասած 25 կին[34]: Այս քարավանի կորուստը կազմում է 96.5 %: 300-ից ավել անձանցից բաղկացած Ակնի երկրորդ քարավանից փրկվեց 13 հոգի[35]. կորուստը կազմում է 95.7 %: Արաբկիրի Աղբն գյուղի 800 հայերից փրկվեց 61-ը[36]. կորուստը կազմում է 92.4 %: Անջրդի գյուղի 500 հոգուց բաղկացած խմբից փրկվեց ընդամե-

[30] **Bryce J. and Toynbee A.**, The treatment of Armenians in the Ottoman Empire, p. 646–647.
[31] Նույն տեղում, էջ 295:
[32] «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Մ. Ներսիսյան, Ռ. Սահակյան, Ե., 1991, էջ 463:
[33] Ծերօն Մ., Բարջանճ գիւղ, էջ 108:
[34] Մխիթարեան Գ., Մեր գիւղը Դատեմ, Պոսքըն, 1958, էջ 197:
[35] Քեչեան Ա., Ակն եւ ակնցիք, Փարիզ, 1952, էջ 760:
[36] Բախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայի գիւղերը, Պէյրութ, 1934, էջ 153:

նը 18 կին[37]. կորուստը կազմում է 96.4 %: Ջմշկածագ քաղաքի ու 20 գյուղերի 3.427 շունչ հայերից (Թեոդիկի տվյալների համաձայն գավառակի հայության թիվն ավելի մեծ էր) 1915 թ. սպանվել, քաղցից մահացել կամ կորել էին 2.328-ը[38], ինչը կազմում էր բնակչության 67.9 %-ը: Զարսանճագի գավառակի Հոշե գյուղի 219 հայերից 1915 թ. գոհ գնացին 150-ը[39]. կորուստը կազմում է 68.49 %: Նույն գավառակի Լուսատարիճ գյուղի 224 հոգուց վերապրեցին 20-ը[40]. կորուստը կազմում է 91 %:

Բերված մի քանի տվյալների համադրման արդյունքում պարզ է դառնում, որ ջարդերի ընթացքում սպանվել կամ մահացել է Նահանգի բնակավայրերից տեղահանվածների շուրջ 80 %-ը: Ավելացնենք, որ թվարկված օրինակներում չենք հաշվառել տղամարդկանցից բաղկացած այն քարավանների մասին վկայությունները, որոնք կոտորվել են գրեթե ամբողջությամբ. նման օրինակները ևս բազմաթիվ են: Նույն Լեսլի Դևիսը նշում է, որ 1915 թ. Նահանգի՝ ջարդից ազատվածների թիվը թեև սպասվածից ավել էր, սակայն չէր անցնում 8.000–10.000-ից. սա այն դեպքում, «եթե նկատի ունենանք այլ վիլայեթների 1.000 կամ 2.000 փախստականներին»[41]: Հիշենք, որ Դևիսը Նահանգի հայ բնակչության թիվը հաշվում էր 150.000[42], իսկ այդ նշանակում է, որ նրա տվյալների համաձայն փրկվել էր խարբերդահայերի շուրջ 6 %-ը: Սա, իհարկե, եղած տվյալներից առավել փոքրն է: Ինչպես հավաստում է ամերիկացի միսիոներուհի, դեպքերի ականատես Իզաբել Հարլին, «կարելի է հաստատ ասել, որ Խարբերդի վիլայեթի ժողովրդի ամենաքիչը 75 %-ը բնա-

[37] «Անջրդի եւ շրջակա գիւղերու ոճրագործներու արարքները. 1915–1918», Պոսթըն, ա. թ., էջ 15:
[38] Գասպարեան Հ., Ջմշկածագ եւ իր գիւղերը, էջ 440:
[39] Երեւանեան Գ., Պատմութիւն Չարսանճագի հայոց, Պէյրութ, 1956, էջ 190:
[40] Նույն տեղում, էջ 216:
[41] Դևիս Լ., Սպանդի նահանգը, էջ 201:
[42] Նույն տեղում, էջ 82:

ջնջվել է»[43]: Իհարկե, դժվար է պարզել Նահանգի հայության զոհերի ճշգրիտ թիվը, առավել ևս, երբ հետագա տարիներին, փրկվածների մի մասը կրկին տեղահանվեց, շատերը մահացան հիվանդություններից, սովից:

Նույնքան բարդ խնդիր է պարզել իսլամացած հայերի թիվը: Իսլամացման դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք բոլորը եղել են ընդհանուր քաղաքականության մի մասը, ծրագրավորվել, գործողության մեջ են դրվել ու վերահսկվել հենց կենտրոնական իշխանությունների կողմից: «Այն ճնշումը, որ կիրարկուեցաւ քրիստոնեայ ազգաբնակչութեան հանդէպ, զայն մղելու համար, որ իսլամութիւնը ընդունի, բնաւ մահմետական ազգաբնակչութենէն չէր գար, ոչ ալ իսլամ հոգեւորականներէն, այլ միմիայն կառավարութենէն»,– հաղորդում է Յ. Լեփսիուսը[44]: Շատ դեպքերում կրոնափոխ եղածները ևս տարագրվեցին ու սպանվեցին: Խարբերդում տեղահանությանն այլընտրանք համարվող իսլամացումն առավել տարածված էր կանանց մոտ: Ա. Թոյնբիի հավաստմամբ՝ «Հայ կնոջ մահմեդականացումը 1915 թ. ավելի շատ ֆիզիկական, քան կրոնական փոփոխություն էր: Այն կարող էր հաստատվել անհապաղ ամուսնությամբ մահմեդականի հետ, և եթե կինն արդեն ամուսնացած էր կամ այրի, քանի որ այս ընթացքում միայն որոշ հայ տղամարդիկ էին ողջ մնացել, նա պետք է իր երեխաներին (եթե երեխա ուներ) տեղավորեր «կառավարական որբանոցում»»[45]: Ժամանակակիցների հավաստմամբ՝ Խարբերդում, սկսած բարձրաստիճան պաշտոնյայից ու վերջացրած հասարակ գյուղացիով, բոլորն էլ կարող էին ցանկացած հայ կնոջը կամ աղջկան բռնությամբ կնության վերցնել և կրոնափոխ անել: Շվեդ միսիոներու-

[43] **Harley I.,** What I Saw and Know to Have been True in Turkey, in The Treatment of Armenians by Turks in Harpoot, in Turkish Atrocities. Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey. 1915–1917, Michigan, 1998, p. 69.
[44] «Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննես Լեփսիուսի. Հայաստանի ջարդերը», էջ 272:
[45] **Bryce J. and Toynbee A.,** The Treatment of Armenians in the Ottoman Empire. 1915–1916, p. 638–639.

հի Ալմա Յոհաննոնը նշում է, որ տեղահանության ընթացքում «Խարբերդում գրեթե յուրաքանչյուր թուրք առևանգեց մի հայ կնոջ»[46]: Որոշ վկայությունների համաձայն՝ տեղահանությունից հետո Խարբերդում և Մալաթիայում կային 5.000–6.000 գեղեցիկ հայ աղջիկներ, որոնք թուրք խոջաների և ժանդարմների կանայք էին[47]:

Բռնի իսլամացման բազմաթիվ դեպքերի մասին վկայությունները (հատկապես Արաբկիրում և Ակնում) թույլ են տալիս ենթադրել, որ Խարբերդի նահանգում իսլամացած հայերի թիվը բավական բարձր տոկոս էր կազմում: Զինադադարից հետո իսլամ ընդունած հայերի մի մասը փախավ թուրքերի մոտից, ապաստանեց օտարերկրացի միսիոներների բացած որբանոցներում, տներում: Այնուամենայնիվ, 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին վերաբերող տվյալի համաձայն Խարբերդի նահանգում կար 20.000 թրքացած հայ[48]: Նույն թիվն է հիշատակում նաև Հենրի Ռիգզը[49]: Դժվար է հստակեցնել, թե նրանցից քանիսը հետագա մի քանի տարիներին ևս շարունակվող փրկագնման աշխատանքների արդյունքում կարողացան վերադառնալ հայի ինքնությանն ու քրիստոնեությանը:

Համաձայն վերապրողների վկայությունների՝ զինադադարից հետո Խարբերդ քաղաքում ապրում էր ընդամենը 9.000 հայ, որից 700-ը թուրքական որբանոցում ապաստանած որբեր էին[50]: Թեոդիկի «Ամենուն Տարեցոյց»-ի համաձայն՝ 1921 թ. Խարբերդի նահանգում ապրում էին 35.000 հայեր, որոնց մի մասը գաղթել էին այլ նահանգներից[51]:

Եթե ընդունենք, որ Թեոդիկի մատնանշած թվի կեսից ավելին կազմում էին նահանգի հայերը (20.000–25.000), ապա կստացվի, որ ցեղասպանությունից փրկվել ու 1921 թ. դրությամբ Խարբերդի նահանգի տարածքում ապրում էր նախկին

[46] "United States Official Records on the Armenian Genocide. 1915–1917", p. 367.
[47] «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 510:
[48] Վահէ Հ., Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 1469:
[49] **Winter J.**, America and the Armenian Genocide of 1915, Cambridge, 2003, p. 267.
[50] **Ակունի Ս.**, Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը, էջ 157:
[51] **Թեոդիկ**, «Ամենուն տարեցոյց», էջ 261:

չուրջ 200.000 հայ բնակչության 10–12 %-ը՝ չհաշված դավաճան եղածներին: Այս ընթացքում ջարդերից փրկված խարբերդահայերի մի փոքր մասն ապաստան էր գտել այլ բնակավայրերում, հատկապես Հալեպում:

1922 թ. վերջին ցեղասպանությունը վերապրած և Խարբերդում հավաքված սակավաթիվ հայերը ևս հեռացան: Այսպիսով, Խարբերդի նահանգի տարածքը, որը հայ ժողովրդի ծագման հիմնական շրջաններից էր, ուր XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին հայերն այստեղ զգալի տոկոս էին կազմում, 1915–1922 թթ. Հայոց ցեղասպանության հետևանքով ամբողջովին հայաթափվեց:

АРПИНЕ БАБЛУМЯН
МИГА НАН РА

ПОСЛЕДСТВИЯ ГЕНОЦИДА АРМЯН В ХАРБЕРДСКОМ ВИЛАЙЕТЕ

РЕЗЮМЕ

В статье рассматриваются события в Харбердском вилайете с начала Первой мировой войны, в частности, рассматриваются механизмы истребления армянского населения. Сделана попытка на примерах нескольких поселений Харбердского вилайета вычислить приблизительное число армян - жертв геноцида на территории Харбердского вилайета. В 1915-1922 гг. до 80 % армянского населения Харбердского вилайета было истреблено, или обращено в ислам. В 1921 г. на территории Харбердского вилайета проживало около 10-12% армян (не считая тех, которые были обращены в ислам) из числа около 200.000 армян, проживавших в этом вилайете до 1915 г. В 1922 г. территорию Харбердского вилайета покинули и эти несколько тысяч армян.

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԵՎ ԱՆԴՐԱՆԻԿԸ

1918 թ. մայիսյան հերոսամարտերի շարքում Ղարաքիլիսայի ճակատամարտը, թերևս, ամենաողբերգականն էր: Այս ճակատամարտում ունեցանք մարտավարական ցավալի պարտություն, որից հետո թուրքերը ներխուժեցին բնակավայր և կազմակերպեցին Ղարաքիլիսայի և շրջակա գյուղերի բնակիչների կոտորած: Այդ կերպ թշնամին վրեժ էր լուծում այն բնակչությունից, որը չորս օր անհավասար մարտում հերոսական ու անձնուրաց դիմադրություն ցույց տվեց թուրքերին՝ պատճառելով մարդկային զգալի կորուստներ:

Այս ճակատամարտի հետ է առնչվում նաև մեր պատմության առեղծվածային խնդիրը՝ զորավար Անդրանիկի Ղարաքիլիսայի ճակատամարտին չմասնակցելու հարցը, ինչը որոշ հետազոտողների կարծիքով բացասաբար անդրադարձավ ճակատամարտի ելքի վրա:

Մեր առջև խնդիր ենք դրել անդրադառնալ այն հարցին, թե, այնուամենայնիվ, ինչպես պատահեց, որ զորավար Անդրանիկը չմասնակցեց Ղարաքիլիսայի ճակատամարտին:

Ղարաքիլիսայի ճակատամարտից դեռ ութ օր առաջ՝ 1918 թ. մայիսի 16-ին, գեներալ Թ. Նազարբեկյանը հայկական 1-ին դիվիզիայի հրամանատար գեներալ Մ. Արեշյանին կարգադրել էր կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը դեպի Ղարաքիլիսա՝ պաշտպանելով նախապես գրավված դիրքերը Ջաշան լեռան, Գյոյ Յոխոչ, Մեծ Քյափանակ և Ավդիբեկ բնագծում, որի համար կային համապատասխան ուժեր: Մայիսի 16–20-ը թուրքերը Ղարաքիլիսայի ուղղությամբ ակտիվ գործողություններ չձեռնարկեցին, ինչն այդ օրերին հայկական ջոկատների համար հնարավորություն էր ստեղծում ամուր պաշտպանություն կազմակերպել այնպիսի նպաստավոր բնագծում, ինչպիսին էր Ջա-

ջուռի լեռնանցքը: Սակայն Արեշյանը ոչ միայն չի կատարում այս հրամանը[1], այլև մայիսի 18-ին տեղեկացնում է Նազարբեկյանին, որ հրամանատարությունը հանձնում է իր տեղակալ գնդապետ Բեյ-Մամիկոնյանին[2]: Նազարբեկյանը ոչ միայն հաստատում է Բեյ-Մամիկոնյանին, այլև նրան է վստահում Ղարաքիլիսայի ճակատի հրամանատարությունը[3]:

Պետք է նշել, որ Բեյ-Մամիկոնյանը դասվում էր այն սպաների շարքին, ով առանձնապես հարգանք և հեղինակություն չէր վայելում հայ սպայակույտի շրջանում: Անձամբ Անդրանիկն էլ էր դժգոհ, որ Նազարբեկյանը Բեյ-Մամիկոնյանին է հանձնել Ղարաքիլիսայի ճակատի հրամանատարությունը: Սակայն, ինչ վերաբերվում է Անդրանիկին Ղարաքիլիսայի ուղղությունը վստահելու հարցին, ապա, որոշակի հանգամանքներից ելնելով, Նազարբեկյանը դրա դեկավարումն Անդրանիկին երբեք չէր հանձնի:

Էրզրումի անկումից հետո Անդրանիկը Սարիղամիշից ուղարկեց իր հրաժարականը: Սակայն Թիֆլիս վերադառնալուց հետո Հայոց ազգային խորհուրդը նրան ստիպում է ճակատ գնալ: Անդրանիկը պայման դրեց, որ ցանկանում է ենթարկվել միայն զորավար Նազարբեկյանին: Բոլորը համակերպվեցին: Էրզրումի անկումից մինչև զինադադար Անդրանիկը գործեց իբրև հինավուրց հայդուկ, ինքնակամ, ինքնագլուխ[4]:

Այսպիսով, Անդրանիկը ճանաչում էր միայն մեկ հեղինակություն՝ գեներալ Թ. Նազարբեկյանին և չէր պատրաստվում ենթարկվել որևէ այլ անձի: Նրա պայմանի հետ կարծես թե համակերպվել էին Հ. Յ. Դաշնակցության լիդերները, սակայն կուսակցության ու Անդրանիկի միջև փոխադարձ մեղադրանքները,

---

[1] Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Ե., 1984, էջ 189–190:
[2] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 121, ց. 2, գ. 97, թթ. 1–31:
[3] Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Ե.,1969, էջ 173:
[4] Ազգային հերոս Զոր. Անդրանիկ (Օզանեան). կյանքն ու գործունեութիւնը, Պէյրութ, 1985, էջ 62:

անվստահությունն ու քննադատությունը չարունակվեցին մինչև վերջ: Դա ցայտուն երևում է Արևմտահայ ապահովության խորհրդի նախագահ Վ. Փափազյանի՝ Հայկական կորպուսի հրամանատար Թ. Նազարբեկյանին ուղղված 1918 թ. ապրիլի 15-ի կարգադրությունից՝ ռազմաճակատից Անդրանիկի ջոկատի հեռացման անհրաժեշտության մասին: Փաստաթղթում ասվում է. «Նպատակահարմար է, արդյոք զինադադարի պայմաններում (Տրապիզոնի բանակցությունների ընթացքում) թուրքահայերին, իրենց փայլուն զորահրամանատար Անդրանիկի գլխավորությամբ կանգնեցնել թուրքերի դեմ, երբ նա իր դրաված դիրքով կարող է չեզոքարկվել Ձեր (Նազարբեկյանի) հրամաններին, ուստի հնարավոր չէ արդյոք այդ ջոկատը փոխարինել այլ զորամասով»[5]: Այս փաստաթղթից պարզ երևում է երկու բան: Նախ, որ դաշնակցական լիդերների և Անդրանիկի մոտեցումները թուրքհայկական պատերազմն ավարտելու վերաբերյալ տրամագծորեն հակառակ էին: Կուսակցությունը ձգտում էր հարցը կարգավորել բանակցությունների և պայմանագիր կնքելու, իսկ Անդրանիկը՝ զենքի ուժով հաղթանակի հասնելու ճանապարհով, ինչն էլ հակասությունների հիմնական պատճառն էր երկու կողմերի միջև: Եվ երկրորդ՝ սա ուղղակի հրաման էր Նազարբեկյանին, և այս նախազգուշացումից հետո նա երբեք Ղարաքիլիսայի ճակատամարտը չէր վստահի Անդրանիկին:

Հետագա մարտական գործողությունները ցույց տվեցին, թե որքան սխալ որոշում կայացրեց Նազարբեկյանը՝ Բեյ-Մամիկոնյանին վստահելով Ղարաքիլիսայի ճակատի ղեկավարումը:

Գնդապետ Ն. Ղորղանյանը, անդրադառնալով Բեյ-Մամիկոնյանի կողմից ճակատամարտն անտաղանդ կազմակերպելու հարցին, իր զեկուցագրում մասնավորապես նշում է, որ Բեյ-Մամիկոնյանը ճակատամարտի վերջին օրը՝ մայիսի 27-ի լույս 28-ի գիշերը, կեղծ տվյալներ է հաղորդել իրեն, թե Անդրանիկը մոտե-

[5] Մելիքյան Վ., Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը, «Հայկական բանակ», 1988, N 2, էջ 58:

նում է, դիմացեք և ըստ այդմ վերադասավորվեք[6]: Հետագայում Ղորղանյանը Դսեղում անձամբ առիթ է ունենում հարցնել Անդրանիկին, թե ինչու նա դուրս չեկավ իր աջ թևը, ինչին ի պատասխան վերջինս ցույց է տալիս Նազարբեկյանի հեռագիրը, ըստ որի ինքը պետք է հսկեր երկաթգիծը, իսկ գնդապետ Բեյ-Մամիկոնյանի գրավոր խնդրանքն իր համար պարտադիր չի համարել[7]: Փաստորեն, Անդրանիկը, համաձայն Հ. Յ. Դաշնակցության հետ իր պայմանավորվածության, ենթարկվում էր միայն Նազարբեկյանին, իսկ վերջինս նրան Ղարաքիլիսա գնալու հրաման չէր տվել: Անդրանիկի վերաբերմունքը Բեյ-Մամիկոնյանի նկատմամբ պարզվում է հետևյալ դրվագից: Ստանալով օգնության հասնելու Բեյ-Մամիկոնյանի գրավոր խնդրանքը՝ Անդրանիկը բանավոր պատասխանել է. «Ես զօրավար Վարդան Մամիկոնեան կը ճանչնամ, ես Բէյ-Մամիկոնեան զօրավար չեմ ճանչնար»[8]: Այսպիսով, միմյանց նկատմամբ անձնական անհարգալից վերաբերմունքը և, անշուշտ, հավակնությունները, այս էլ որերորդ անգամ, մեծ վնաս են հասցնում ազգային շահին: Ինչ վերաբերում է Բեյ-Մամիկոնյանին, ապա նա, փաստորեն, դրական պատասխան չստանալով Անդրանիկից, ապակողմնորոշել էր գնդապետ Ղորղանյանին:

Անդրադառնալով Ղարաքիլիսայի ճակատամարտին Անդրանիկի չմասնակցելու խնդրին, պետք է նշենք, որ այս հարցում գոյություն ունի երկու ծայրահեղ և իրարամերժ տեսակետ:

Առաջին տեսակետի կողմնակիցները միանշանակ մեղադրում են Անդրանիկին, որ նա իր 3000-անոց (երբեմն նշվում է նաև 5–6000-անոց) ջոկատով հետ քաշվեց Դսեղ, և հնարավո-

[6] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 79, թ. 7–10: Տե՛ս նաև Սահակյան Ա., Ղարաքիլիսայի ճակատամարտը և զորավար Անդրանիկի դիրքորոշումը, «Բանբեր: Գիտական աշխատություններ – 1», Վանաձոր, 2007, էջ 159:

[7] Նույն տեղում:

[8] ՀԱԱ, ֆ. 152, ց. 1, գ. 101, թ. 192–202, տե՛ս նաև Ա. Ահարոնեան, Աւարայրի ոգեկոչումը. Ղարաքիլիսայի ճակատամարտը, «Հայրենիք», Բոստոն, 1932, թիւ 3 (յունվար):

բությունն տվեց Թշնամու զորախմբին տեղափոխվել Ղարաքիլիսայի ճակատ[9], իսկ հետո էլ օգնության չհասավ Ղարաքիլիսայի հերոսներին, ինչով և կանխորոշվեց Ղարաքիլիսայի պարտությունը:

Մյուս տեսակետի կողմնակիցները փորձում են պաշտպանել զորավարին, արդարացնել Ղարաքիլիսայի ճակատամարտին նրա չմասնակցելը՝ հիմնվելով Նազարբեկյանի հրամանների վրա, որոնցով նախ Անդրանիկին հրամայվում էր պաշտպանել Լոռու տափաստանը[10], իսկ հետո էլ երկաթգիծը[11]: Բացի այդ, հիմք է ընդունվում Հովհաննես Թումանյանի հեղինակավոր կարծիքը, որում կրկին հղում է կատարվում Նազարբեկյանի հրամանին և նշվում, որ, մինչև այդ հրամանը փոխվեց, արդեն երրորդ օրն էր և գրեթե միաժամանակ եկավ Ղարաքիլիսայի անկման բոթը[12]: Սրան գումարվում է նաև այն հանգամանքը, որ Անդրանիկի ջոկատն ապահովում էր շուրջ 20000 գաղթականների անվտանգությունը[13]:

Սակայն, ամեն ինչ այդքան պարզ չէ, որքան թվում է առաջին հայացքից: Դեպքերի և փաստերի խորն ուսումնասիրությունը թույլ է տալիս մեզ կատարել ավելի հիմնավոր ու անաչառ հետևություններ:

Նախ անդրադառնանք զորավար Նազարբեկյանի դիրքորոշմանը Անդրանիկի՝ Ղարաքիլիսայի ճակատամարտին չմասնակցելու խնդրին, որը խիստ հակասական է: Մի կողմից՝ նա հրամայում է Անդրանիկին պահել Լոռու տափաստանը և երկաթուղին, մյուս կողմից՝ Անդրանիկի գործողություններին տալիս է հետևյալ գնահատականը. «Անդրանիկը, գրավելով Բզովդալի ու Ջալալօղլու նպաստավոր բարձունքները, թուրքերին չդի-

[9] Օհանյան Գ., Մեծ Ղարաքիլիսայի հերոսամարտը, Ե., 1992, էջ 47:
[10] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 30, թ. 3:
[11] Նույն տեղում, ց. 2, գ. 79, թ. 7–10:
[12] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Թումանյանի ֆոնդ, գ. 225: Սահակյան Ա., նշվ. աշխ., էջ 156–159:
[13] Մելիքյան Վ., նշվ. աշխ., էջ 58:

մադրեց և ծանր դրության մեջ դրեց Ղարաքիլիսայի ջոկատը»[14]: Մեկ հետաքրքրական փաստ ևս: Անդրանիկին ուղղված մի նամակում Նազարբեկյանի օգնական Ս. Մանասյանը հայտնում է, որ թուրքերն անընդհատ հետաքրքրվում են իրենով: Նա զգուշացնում էր, որ մինչև իսկ լուր կա, որ իբր թուրքերը կարող են պահանջել, որ իրեն (Անդրանիկին) հանձնեն իրենց (թուրքերին)[15]: Բնականաբար՝ Մանասյանը Անդրանիկին չէր կարող այս նամակն ուղարկել առանց Թ. Նազարբեկյանի իմացության:

Թ. Նազարբեկյանի մոտեցումների այս հակասականությունը, մեր կարծիքով, բացատրվում է Արևմտահայ ազատագրության խորհրդի նախագահ Վ. Փափազյանի վերը նշված կարգադրությամբ, համաձայն որի էլ Թ. Նազարբեկյանն իր հրամաններով Անդրանիկին հեռու է պահում Ղարաքիլիսայի հերոսամարտից, իսկ հետո էլ փորձում պարտության պատճառը բարդել նրա վրա:

Հ. Թումանյանը նշում է, որ երկաթուղին պահելու Թ. Նազարբեկյանի՝ Անդրանիկին ուղղված հրամանը փոխվել է Ղարաքիլիսայի ճակատամարտի երրորդ օրը, և գրեթե միաժամանակ եկել է Ղարաքիլիսայի անկման բոթը: Հավանաբար խոսքը Բեյ-Մամիկոնյանի մայիսի 27-ի գրավոր խնդրանքի մասին է, որով-հետև Անդրանիկին Ղարաքիլիսայի կռվին միանալու Թ. Նազարբեկյանի կողմից տրված հրաման մեզ հայտնի չէ: Եթե այս պնդումը ճիշտ է, ապա ակնհայտ է, որ Անդրանիկը Բեյ-Մամիկոնյանի խնդրանք-հրամանին չէր ենթարկվելու և չենթարկվեց: Մյուս կողմից՝ Անդրանիկի հուշերում և արդարացումներում էլ կան շատ հակասություններ, որոնք նույնպես խորհելու տեղիք են տալիս:

Անդրանիկն իր հուշերում նշում է, որ Ղարաքիլիսայի կռվի առաջին օրը չորս ժամ կռվելուց հետո, հաջորդ առավոտ

[14] Մելիքյան Վ., նշվ. աշխ. էջ 59:
[15] Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե.,1976, էջ 604:

կռիվը վերսկսվում է և երեք ժամ հետո ինքն իմանում է, որ Ղարաքիլիսան արդեն հանձնել են և նահանջել Դիլիջան[16]: Ղարաքիլիսայի ճակատամարտը սկսվել է մայիսի 25-ին և տևել է չորս օր՝ մինչև մայիսի 28-ը, սակայն Անդրանիկի հուշերից ստացվում է, որ այն ավարտվել է մայիսի 26-ին: Այստեղ է, որ Նժդեհը հարց է տալիս, թե ով և ինչ ճանապարհով կարող էր այդ ստահոդ լուրը հաղորդել Անդրանիկին, այն էլ մեր ամենամեծ հաղթության օրը[17]: Ցավոք, այս հարցի պատասխանը չկա, քանզի Անդրանիկն իր հուշերում չի նշում, թե ումից է ստացել այդ տեղեկությունը:

Անդրանիկը նշում է, որ Նազարբեկյանի օգնական Մանասյանն իրեն տեղեկացրել է, որ հայ զինվորները ոգևորված հալածում են թշնամուն Ղարաքիլիսայի երկաթուղու ուղղությամբ, ինչին ինքը պատասխանել է, թե թշնամու նահանջը կեղծ է և խորհուրդ է տվել կենարոնով առաջ չգնալ և երկու թևերն ամուր պահել[18]: Այս հարցի առնչությամբ Նժդեհը հատակ մեղադրանք է ներկայացնում Անդրանիկին, որ փոխանակ Դսեղից խորհուրդներ տալու, լավ կլիներ, որ Անդրանիկն իր զորքով գար և մասնակցեր ճակատամարտին, մանավանդ որ հասկացել էր, որ թշնամին մտադիր է թևերից շրջանցել ու ոչնչացնել հայկական ուժերը[19]: Վերջում Նժդեհը կարծիք է հայտնում, որ ինքը հասկանում է Անդրանիկին, որն իր հուշերում ջանացել է արդարացնել իր անգործությունը Ղարաքիլիսայի և Սարդարապատի օրերին[20]:

Իրողությունն այն էր, որ դաշնակցական լիդերների հրահանգով Նազարբեկյանը գրեթե մեկուսացրել էր Անդրանիկին և հեռու էր պահում մարտական լուրջ գործողություններից, որպեսզի թուլլ տրվի Բաթումում գտնվող պատվիրակներին խաղաղություն հաստատել թուրքերի հետ: Ստված էին Նազարբեկյանի և Անդրանիկի կապերը: Անդրանիկը ոչ միշտ էր տեղյակ իրադարձությունների ընթացքի մասին[21]: Անշուշտ, Անդրանիկն էլ էր հասկացել, թե ինչ վիճակում է հայտնվել:

Նա չպետք է թուլլ տար, որ իրեն մեկուսացնեին և հաշտվեր այդ վիճակի հետ: Դրանից երեք տարի առաջ՝ 1915 թ., նա չենթարկվեց ռուսական հրամանատարության՝ առաջ չշարժվելու հրամանին և առաջիններից մեկը օգնության հասնելով Վանի պաշտպաններին: Փաստորեն, Անդրանիկն ընդունակ էր նման քայլերի, բայց, ցավոք, Ղարաքիլիսայի ճակատամարտի ժամանակ նման անհնազանդություն չդրսևորեց: Ինչու նա այդ չարեց 1918-ին: Դրա համար կար առնվազն երեք պատճառ: Ակնհայտ է, որ ստեղծված իրավիճակում Անդրանիկը ևս ուներ իր հաշվարկները: Նախ՝ այս հարցում կարևոր դեր էր խաղացել իր վիճակից նրա վիրավորվածությունը: Միևնույն ժամանակ, անշուշտ, դեր են խաղացել Անդրանիկի հավակնությունները. նա չէր ցանկացել հաղթելուց հետո դափնիները կիսել որևէ մեկի հետ: Իսկ գուցե՞ Ղարաքիլիսայի ճակատամարտի ելքն Անդրանիկը համարել է արդեն կանխորոշված և չի ցանկացել մասնակից լինել պարտությանը: Ինչևէ, բոլոր դեպքերում, նրա այս պահվածքը չափազանց ծանր հետևանք ունեցավ Ղարաքիլիսայի և շրջակա գյուղերի վրա:

Ավելորդ է խոսել այն մասին, թե ինչ մեծ ոգևորություն կառաջացներ հայ մարտիկների մոտ և ինչ խուճապի կմատներ թուրքական զորքին Անդրանիկի հայտնվելը Ղարաքիլիսայում: Մինչև վերջին պահը Ղարաքիլիսայի հերոսները սպասում էին, որ շուտով Դսեղից հասնելու է Անդրանիկը: Մի պահ նույնիսկ նրանց թվաց, թե Անդրանիկը հասել է կռվին և հայ մարտիկնե-

[16] Ջօր. Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 27:
[17] Ահարոնեան Ա., Աւարայրի ոգեկոչումը. Ղարաքիլիսայի ճակատամարտը, «Հայրենիք», 1932, թիւ 4, էջ 99:
[18] Ջօր. Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 27:
[19] Ահարոնեան Ա., նշվ. աշխ., էջ 99:
[20] Նույն տեղում:

[21] Յարութիւնեան Ա., նշվ. աշխ., էջ 196–197:

րը չարժվեցին առաջ՝ նրան դիմավորելու, սակայն նրանց առջև դուրս եկան թուրք ասկյարները[22]:

Երբ Ղարաքիլիսան արդեն հանձնվել էր թշնամուն, Դիլիջան ժամանելուց հետո, իմանալով Բաթումում կնքված նվաստացուցիչ պայմանագրի մասին, Անդրանիկը դժտվում է դաշնակցականների ղեկավարության հետ և հրաժարվում որևէ հրաման կատարելուց: Նա պատասխանատվություն չի վերցնում Դիլիջանում եղած հայկական ստորաբաժանումները ղեկավարելու համար և իր ջոկատով այլ ուղի է ընտրում[23]:

Ամփոփելով՝ նշենք, որ անգամ այդ պայմաններում, կարծում ենք, որ Անդրանիկը պետք է վերահաստատեր իր ազգային հերոս լինելը, անձնական վիրավորանքի ու քաղաքական տարաձայնությունների պատճառով չպետք է իրեն հեռու պահեր տեղի ունեցող իրադարձություններից: Ընդհակառակը, նա պետք է ջոկատի մի փոքր հատվածը թողներ գաղթականների անվտանգությունը պաշտպանելու համար, իսկ հիմնական մասով օգնության հասնել Դեղից, գար և դիրքեր զբաղեցներ գնդապետ Ղորղանյանի աջ թևում՝ թույլ չտալով այդ կողմից հայկական ուժերի շրջանցումը, և գուցե այդ ժամանակ դեպքերն այլ ընթացք ունենային:

Անշուշտ, չի կարելի Ղարաքիլիսայի ճակատամարտի մարտավարական պարտությունը բարդել միայն Անդրանիկի վրա, որովհետև կան շատ պատճառներ, որոնք ազդեցին ճակատամարտի ելքի վրա: Չի կարելի նաև մի նշանակ պնդել, թե Անդրանիկի մասնակցության պարագայում Ղարաքիլիսան անպայման կպահվեր հաղթանակով, քանզի թուրքերը նպատակ էին դրել շարունակել արշավանքը դեպի Բաքու և ամեն գնով ջանում էին ճեղքել հայերի դիմադրությունը: Բայց մեկ բան կարելի է վստահ ասել. Անդրանիկի և նրա ջոկատի հայտնվելը Ղարաքիլիսայում գոնե հնարավորություն/կտար ժամանակ շահել և խուսափել մարդկային ավելորդ կորուստներից:

[22] Մ. Դ. (Մուշեղ Դազարեան), Ղարաքիլիսայի հերոսամարտը. ականատեսի վկայութիւններ, Թիֆլիս, 1920, էջ 21:
[23] Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 196–197:

Ղարաքիլիսայի ճակատամարտը մեկ անգամ ևս հաստատեց այն պարզ ճշմարտությունը, որ ազգային միասնության պայմաններում, երբ յուրաքանչյուր հայ ազգային շահն ավելի բարձր է դասում իր անձնական շահերից ու հավակնություններից, հայ ժողովուրդն ընդունակ է կատարել անհնարինը. հակառակ պարագայում լինում է այն, ինչ եղավ Ղարաքիլիսայի հերոսամարտից հետո՝ անխուսափելի կորուստներ:

Ղարաքիլիսայի հերոսամարտից մենք պարտավոր ենք դասեր քաղել, քանզի պատմության դասերը չսերտելու դեպքում դատապարտված ենք կրկնելու դրանք:

АРМЕН МАРУКЯН
ИИ НАН РА

КАРАКЛИССКОЕ СРАЖЕНИЕ И АНДРАНИК

РЕЗЮМЕ

В победных майских сражениях 1918 г., после которых была провозглашена Первая Республика Армения, Караклисское сражение было, пожалуй, самым трагичным. После сражения турками был устроен настоящий погром населения Караклиса и окружающих сел. Таким образом турки мстили населению, которое четыре дня в неравном бою оказывало героическое сопротивление превосходящим турецким регулярным войскам, нанеся им ощутимые потери и задержав дальнейшее продвижение турецких войск.

С этим сражением связана одно из таинственных проблем истории майских сражений — неучастие любимого героя армянского народа генерала Андраника в Караклисском сражении, что, по мнению некоторых исследователей, повлияло на поражение армянских сил.

В статье выявляются причины, которые повлияли на генерала Андраника не принять участие в Караклисском сражении. Делается также попытка выяснить эти мотивы.

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ՝ ԵՐԵՎԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (1918 Թ. ՄԱՅԻՍ-ՀՈՒԼԻՍ)

Անդրկովկասը դրավելուց և այստեղ փոխարքայություն հաստատելուց հետո Ռուսական կայսրությունը Թիֆլիսը՝ կենտրոն: 1917 թ. փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ամիսներին և հատկապես Անդրկովկասյան կոմիսարիատի ու Սեյմի իշխանության շրջանում երկրամասի քաղաքական և մշակութային կենտրոն Թիֆլիսում իրենց կենտրոնատեղիներն էին հաստատել ոչ միայն վրացական, այլև հայկական ու մահմեդական հասարակական, քաղաքական, մշակութային և բարեգործական կազմակերպությունները:

Թուրքական վերջնագրերի և Անդրկովկասի ժողովուրդների միջև փոխվստահության բացակայության հետևանքով՝ 1918 թ. մայիսի 26-ին վրացի մենշևիկների նախաձեռնությամբ լուծարվեց Անդրկովկասի Սեյմը: Նույն օրը վրացիները հայտարարեցին Վրացական Հանրապետության անկախությունը, իսկ մայիսի 27-ին Կովկասի մահմեդականներին (կովկասյան թաթարներ, թուրքեր, հետագայում՝ ադրբեջանցիներ) ներկայացնող Մուսուլմանական ազգային խորհուրդը հայտարարեց Ադրբեջանական Հանրապետության անկախությունը՝ յուրացնելով Պարսկաստանի հյուսիսային նահանգ Ատրպատականա-Ադրբեջանի պատմական անվանումը:

1917 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին Թիֆլիսում գումարված Հայոց ազգային համախորհրդակցության որոշմամբ ստեղծված Հայոց ազգային խորհուրդը, որը ստանձնել էր հայության ճակատագրի տնօրինությունը, Վրաստանի և Ադրբեջանի անկախության հայտարարումով, կանգնեց կատարված

փաստի առջև: Նա այլ այլընտրանք չուներ, քան Անդրկովկասի հայության քաղաքական ղեկավարությունն իր ձեռքը վերցնելը: Ահա այսպիսի պայմաններում մայիսի 30-ին Խորհուրդը հրապարակեց իր հայտնի հայտարարությունը՝ «Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: ... Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»[1]: Այս փաստաթուղթն ընդունված է համարել Հայաստանի անկախության հռչակագիրը:

Վրաստանի անկախացումից հետո Թիֆլիսը հռչակվեց վերջինիս մայրաքաղաքը՝ դադարելով Անդրկովկասի բոլոր ժողովուրդների համար միասնական կենտրոն հանդիսանալուց: Այս պայմաններում առաջ եկավ Թիֆլիսում տեղակայված հայկական և ադրբեջանական պետական իշխանության մարմինները՝ քաղաքից հեռանալու և սեփական նորանկախ պետություններ տեղափոխվելու խնդիրը: Ահա թե ինչու արդեն Հայոց ազգային խորհրդի մայիսի 26-ի և 30-ի նիստերում խոսվում է հայկական իշխանության մարմինները Թիֆլիսից Երևան տեղափոխելու մասին[2], իսկ հունիսի 2-ին Երևանի ազգային խորհրդին ուղղված նամակում Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանն ու քարտուղար Ն. Աղբալյանը տեղեկացնում էին. «Հայտնել ենք Վրաց կառավարությանը, որ Հայոց կառավարությունը կազմելուց (հետո-Հ. Ս.) Ազգային խորհուրդը մեկնելու է Երևան»[3]:

---

[1] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ՝ Գ. Գալոյանի և Վ. Ղազախեցյանի, Ե., 2000, էջ 18: Ավանդաբար ընդունված է Հայաստանի անկախության օր համարել 1918 թ. մայիսի 28-ը, երբ Հայոց ազգային խորհուրդը հավանություն տվեց օսմանյան վերջնագրին և Ալ. Խատիսյանի գլխավորած պատվիրակությանը լիազորեց բանակցություններ վարել թուրքերի հետ:

[2] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 226 շրջ., 241:

[3] Նույն տեղում, ֆ. 289, ց. 1, գ. 11, թ. 1 շրջ.:

Արդեն հունիսի 1-ին Վրաստանի կառավարության հանձնարարությամբ Ռազմական նախարար Գ. Գեորգաձեն Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանին ուղղված գրությամբ տեղեկացնում էր, որ Վրաստանի տարածքում օրենսդիր և վարչական իրավունքներով օժտված այլ մարմնի գոյությունը ոտնահարում է վրաց ժողովրդի ինքնիշխանության իրավունքը[4]: Սա ոչ այլ ինչ էր, քան Հայոց ազգային խորհուրդը Թիֆլիսից հեռացնելու անթաքույց հրահանգ: Այնուհետև վրացիներն ադրբեջանցիներից ու հայերից պահանջեցին անմիջապես լքել Անդրկովկասի Դաշնային Հանրապետության դեկավարության նստավայր նախկին փոխարքայական պալատը: Հայ գործիչներն անմիջապես հեռացան պալատից, իսկ ադրբեջանցիները համառեցին, սակայն հունիսի 2-ին վրացիները նրանց ուժով ստիպեցին հեռանալ[5]: Անկախ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսից հեռանալու վրացական իշխանությունների պահանջին ի պատասխան՝ հունիսի 2-ին Հայոց և Մուսուլմանական ազգային խորհուրդների համատեղ նիստում որոշում կայացվեց, որ «յուրաքանչյուր Խորհուրդ կշարունակի մնալ Թիֆլիսում այնքան ժամանակ, ինչքան այդ անհրաժեշտ կլինի իրերի բերումով»[6]: Այն իրողությունը, որ Թիֆլիսում գտնվող ինչպես հայ, այնպես էլ ադրբեջանցի գործիչներն ամենևին չէին շտապում հեռանալ Վրաստանի մայրաքաղաքից[7], հասկանալի պատճառներով, առաջացնում էր վրացական դեկավար շրջանների դժգոհությունը[8]:

Հայոց ազգային խորհրդի հունիսի 7-ի նիստում դաշնակցական նշանավոր գործիչ Հովհաննես Քաջազնունուն հանձնա-

[4] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 7:
[5] Նույն տեղում, ֆ. 289, ց. 1, գ. 11, թ. 1 շրջ.:
[6] Նույն տեղում, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 58 շրջ.:
[7] Մուսուլմանական ազգային խորհուրդն ու Ֆ. Խան-Խոյսկու գլխավորած կառավարությունը Թիֆլիսից Ադրբեջանի ժամանակավոր մայրաքաղաք Գանձակ տեղափոխվեցին հունիսի 15-ին:
[8] «Հորիզոն», 5 յունիսի 1918 թ., N 107:

րվեց կազմել կոալիցիոն կառավարություն, միաձայն որոշվեց նաև Հայոց ազգային խորհուրդը տեղափոխել Երևան[9]: Սակայն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ձգձգվում էր Հայոց ազգային խորհրդի և ՀՀ կառավարության՝ Երևան տեղափոխման հարցը:

Հայաստանի Հանրապետության իշխանության կենտրոնական մարմինների տեղափոխմանը խոչընդոտում էին ճանապարհների փակ լինելը, Անդրկովկասի Դեմոկրատական Հանրապետության միասնական գույքի բաժանման չլուծված խնդիրը, տեղափոխումից հետո փոստ-հեռագրի բացակայության պայմաններում տարբեր պետությունների և Թիֆլիսում տեղակայված դիվանագիտական առաքելությունների հետ անհրաժեշտ կապեր պահպանելու դժվարությունները, Վրաստանի և Ադրբեջանի հետ Հայաստանի Հանրապետության սահմանների շուրջ ընթացող բանակցությունները, չլուծված ֆինանսական խնդիրները, տեղափոխման հարցում Թուրքերի կողմից հարուցվող խոչընդոտները, Կ. Պոլսի կոնֆերանսի ավարտին սպասելը, Թուրքական պատանդի վիճակում հայտնվելու հեռանկարը և այլն[10]: Ահա թե ինչու Հայոց ազգային խորհրդի մի շարք անդամներ անտրամաբանական էին համարում այսպիսի պայմաններում Երևան գնալը՝ մտավախություն ունենալով, թե երկրի բարձրագույն իշխանությունները կապ չէին ունենա դրսի աշխարհի

[9] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 249 շրջ.: Կոալիցիոն կառավարություն կազմելու Հ. Քաջազնունու անհաջող փորձերից հետո՝ հունիսի 27-ին Հայոց ազգային խորհուրդը վերջինիս հանձնարարեց կառավարություն կազմել անհատական սկզբունքով: ՀՀ առաջին կառավարության վերջնական կազմի մասին Խորհրդի կողմից պաշտոնապես տեղեկացվեց միայն ՀՀ իշխանության կենտրոնական մարմինների Երևան ժամանելուց հետո՝ հուլիսի 24-ին («Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 53):
[10] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 11, գ. 141, թ. 264, ֆ. 200, ց. 1, գ. 557, թ. 60 շրջ.-61: «Աշակ», 27 յունիսի 1918 թ., N 122: **Ջամալեան Ա.**, Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք», 1928, սեպտեմբեր, էջ 119: **Արզումանյան Մ.**, Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973, էջ 162: Հմմտ. նաև՝ **Խոնդկարեան Ա.**, Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում, «Վէմ», 1934, թիւ Գ, էջ 94–95, թիւ Ե, էջ 43–46:

հետ և կմեկուսացվեին: Պետք է նշել նաև, որ այստեղ իր որոշակի բացասական դերակատարությունն ունեցավ այն հանգամանքը, որ հայ գործիչների մի մասը դժվարությամբ էր հաշտվում համեմատաբար չքեղ Թիֆլիսը թողնելու և անտուն գաղթականներով լեցուն գավառական Երևան տեղափոխվելու հեռանկարի հետ, որի համար սուր քննադատության են արժանացել[11]:

Վերը թվարկված հանգամանքներով էր պայմանավորված, որ Հայոց ազգային խորհրդի և ՀՀ կառավարության տեղափոխությանը նվիրված Հայոց ազգային խորհրդի նիստերի ժամանակ վերջինիս անդամների համար հեշտ չէր ընդհանուր հայտարարի գալ և ըստ այդմ գործել: Սա առաջացնում էր հատկապես Երևանի գործիչների դժգոհությունը և կորուկ պահանջը՝ անմիջապես տեղափոխվել Երևան[12]: Այս պայմաններում հուլիսի 6-ին կայացած Հայոց ազգային խորհրդի նիստում, ընդառաջելով Երևանի գործիչների պահանջներին, որոշում է կայացվում նախապատրաստական աշխատանքներ կատարել՝ երկու շաբաթվա ընթացքում Երևան տեղափոխվելու համար[13]:

Հուլիսի 7–9-ին Թուրքերը խախտեցին զինադադարը և ռազմական գործողություններ իրականացրեցին Էջմիածնի՝ վիճելի համարվող մի քանի գյուղերի ուղղությամբ: Այս տեղեկությունը Թիֆլիսում ստանալուց հետո՝ հուլիսի 12-ի առավոտյան տեղի ունեցած Հայոց ազգային խորհրդի արտահերթ նիստում անկուսակցական Ստեփան Մամիկոնյանն առաջարկեց վերաքննել Հայոց ազգային խորհրդի՝ Երևան տեղափոխվելու հարցը[14]: Երկար վիճաբանություններից հետո նույն օրը երեկոյան տեղի ունեցած նիստում, ստանալով 8 կողմ ձայն, հավանության է արժանանում սոցիալ-դեմոկրատ Արամայիս Երզնկյանի առաջարկած բանաձևը՝ Երևան ուղարկել արտակարգ լիազորություններով օժտված երեք ներկայացուցիչներ: Որոշման ընդունումից հետո Հ. Քաջազնունին, ով Երևան տեղափոխվելու ջերմ կողմնակից էր, հայտարարեց վարչապետի պաշտոնից հրաժարվելու մասին[15]:

Հայոց ազգային խորհրդի հուլիսի 13-ի նիստում վիճաբանություն է առաջանում կուսակցությունների կողմից Երևան ուղարկվող լիազորների և նախորդ օրն ընդունված բանաձևի առնչությամբ: Արդյունքում՝ չեղյալ է հայտարարվում նախորդ բանաձևը: Վիճաբանությունների ընթացքում քննարկվում են հինգ բանաձևեր: Սոցիալ-դեմոկրատների կողմից Հայկ Ազատյանն առաջարկում էր Երևան ուղարկել խորհրդի երեք կամ չորս լիազորների, ովքեր Երևանի ազգային խորհրդի հետ ձեռնամուխ կլինեն տեղական խնդիրների լուծմանը: Հայ ժողովրդական կուսակցության կողմից Արշալույս Մխիթարյանն առաջարկում էր Հայոց ազգային խորհուրդը պահել Թիֆլիսում՝ իբրև գերագույն մարմին, իսկ Երևանի ազգային խորհուրդը դարձնել վարչություն՝ երկրի ներքին գործերը կառավարելու համար: Հ. Յ. Դաշնակցության կողմից Խաչատուր Կարճիկյանն առաջարկում էր Հայոց ազգային խորհուրդն անմիջապես տեղափոխել Երևան՝ Հայաստանի բարձրագույն իշխանության մարմինները (կառավարություն, պառլամենտ) կազմակերպելու համար: Սոցիալիստ-հեղափոխական Անուշավան Ստամբոլցյանն առաջարկում էր, որպեսզի Ազգային խորհուրդը դնա Երևան, կազմի կա-

[11] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 186–187: Նույնի, Կեանքի ուղիներով, հ. Ե, Պէյրութ, 1966, էջ 12: Յովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. I, Ե., 2005, էջ 43: Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918–1921 թթ., Ե., 2002, էջ 36-38:

[12] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 262 և շրջ.: «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 38: «Ձանգ», 11 յունիսի 1918 թ., N 41:

[13] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 288 շրջ.:

[14] Նույն տեղում, թ. 294 շրջ.:

[15] Նույն տեղում, թ. 297 շրջ.: Ի դեպ, բանաձևին կողմ էին քվեարկել անկուսակցական Ս. Սամիկոնյանը, սոցիալ-դեմոկրատներ Ա. Երզնկյանը, Մ. Դարաբեկյանը, ՀԺԿ անդամներ Ա. Մխիթարյանը, Մ. Բերբերյանը, սոցիալիստ-հեղափոխական Ա. Ստամբոլցյանը, ՀՅԴ անդամներ Ա. Սահակյանը և Ս. Տիգրանյանը:

ռավարություն և այնուհետև վերադառնա Թիֆլիս՝ «իբրև ընդհանուր հայկական խորհուրդ»: Իսկ վարչապետ Հ. Քաջազնունին կրկին առաջադրում էր նախորդ օրը հավանության չարժանացած իր բանաձևը, որով առաջարկում էր Երևանում կազմակերպել Հայաստանի կառավարությունը, ինչից հետո Հայոց ազգային խորհուրդը երկու ամսով ընդհատելու էր իր գործունեությունը: Քվեարկության ընթացքում Ա. Մխիթարյանի առաջարկած բանաձևը ստանում է 2 ձայն, Խ. Կարճիկյանինը՝ 5 ձայն, Ա. Ստամբոլցյանինը՝ 6 ձայն, Հ. Քաջազնունունը՝ 6 ձայն: Սոցիալ-դեմոկրատները հետ են վերցնում իրենց բանաձևը և ձայն տալիս Խ. Կարճիկյանի առաջարկած բանաձևի օգտին, որը, ստանալով 7 ձայն, համարվում է ընդունված[16]:

Հայոց ազգային խորհուրդն ու կառավարությունը Թիֆլիսից ճանապարհվելու էին հուլիսի 16-ին: Նրանք երկաթուղով հասնելու էին մինչև Ազստաֆա, իսկ այստեղից ճանապարհը շարունակելու էին ավտոմեքենաներով: Սակայն տեղի ունեցավ անսպասելին. մեկնելու օրը վրացական իշխանությունները զրավեցին խորհրդին պատկանող բոլոր ութ ավտոմեքենաները, իսկ այնուհետև հրաժարվեցին նաև մեկնող հայ գործիչներին տրամադրել գնացքի վագոններ: Միայն Հայոց ազգային խորհրդի ժամանակավոր նախագահ Ավետիք Սահակյանի և վրացական կառավարության ներկայացուցիչների միջև կայացած բանակցությունների արդյունքում միջադեպը կարգավորվեց[17]: Հայ գործիչները, որոնց թվում էին՝ Հայոց ազգային խորհրդի և կազմավորման ընթացքում գտնվող ՀՀ կառավարության անդամներ Ավետիք Սահակյանը, Սիրական Տիգրանյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Արտաշես Բաբալյանը, Արշալույս Մխիթարյանը, Ստեփան Մալխասյանը, Հայկ Ազատյանը, Արշամ Խոնդկարյանը, Հովհաննես Քաջազնունին, Խաչատուր Կարճիկյանը, Հով-

[16] Նույն տեղում, թ. 298-299:
[17] «Հորիզոն», 18 յուլիսի 1918 թ., N 141:

հաննես Հախվերդյանը[18], Թիֆլիսից մեկնեցին միայն հուլիսի 17-ին: Վրաստանի ղեկավարները չբարեհաճեցին նույնիսկ երկաթուղային կայարան գալու և բարի ճանապարհ մաղթելու Երևան մեկնող հայ գործիչներին:

Ի տարբերություն վրացիների, որոնք նույնիսկ փորձեցին հայ-վրացական սահմանում նոր խոչընդոտներ հարուցել հայ գործիչների առջև, Ղազախում ադրբեջանական տեղական իշխանության ներկայացուցիչները աղ ու հացով, երաժշտությամբ դիմավորեցին ՀՀ ղեկավարներին: ՀՀ ղեկավար մարմինների նկատմամբ վրացիների այս վերաբերմունքը սուր քննադատության է արժանացել ժամանակակիցների կողմից[19]:

Հուլիսի 19-ի երեկոյան Հայոց ազգային խորհուրդն ու ՀՀ կառավարությունը ժամանեցին Երևան: Հայոց ազգային խորհրդի և Երևանի ազգային խորհրդի համատեղ նիստերի ընթացքում որոշում կայացվեց Հայոց ազգային խորհրդի կազմը եռապատկելու (բացի անկուսակցականներից), ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավման ճանապարհով կազմավորել Հայաստանի Հանրապետության գերագույն օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը: Վերջին նիստը գումարվեց օգոստոսի 1-ին: Հ. Քաջազնունու կառավարության գործունեության ծրագիրը հաստատելուց հետո ՀՀ իշխանությունները ձեռնամուխ եղան նորանկախ Հանրապետության առջև կանգնած բազմաթիվ հիմնախնդիրների կարգավորմանը:

[18] Նույն տեղում, 17 յուլիսի 1918 թ., N 140:
[19] Ջամալեան Ա., նշվ. աշխ., էջ 120: «Հորիզոն», 23 յուլիսի 1918 թ., N 144: «Աշխատավոր», 24 յուլիսի 1918 թ., N 90: «Մշակ», 24 յուլիսի 1918 թ., N 143: Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 187–188: Բաբալեան Ա., Էջեր Հայաստանի անկախութեան պատմութենէն, «Հայրենիք», 1923, յունիս, էջ 45:

АМО СУКИАСЯН
ИИ НАН РА

ВОПРОС ПЕРЕЕЗДА ЦЕНТРАЛЬНЫХ ОРГАНОВ ВЛАСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В ЕРЕВАН (МАЙ-ИЮЛЬ 1918 Г.)

РЕЗЮМЕ

После провозглашения 30 мая 1918 г. в Тифлисе независимости Армении Армянский национальный совет и правительство Республики Армения направились в столицу Ереван только 17 июля. В статье сопоставлением архивных и опубликованных документов, а также сообщений прессы показывается процесс возвращения армянских властей в Ереван.

ՍՄԲԱՏ ՄԻՆԱՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԳԱՂԹԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ 1918 Թ.

1918 թ. Թուրքական արշավանքի հետևանքով 600 հազար հայ գարձավ գաղթական: Նրանցից 400 հազարը, խուլս տալով կոտորածներից, կուտակվեց Սևանա լճի ավազանում, մյուս մասն էլ անցավ Վրաստան[1]:

Վրաստանում ապաստանած հայության զանգվածային գաղթը Հյուսիսային Կովկաս սկսվեց մայիսի կեսերից, երբ Թուրքական զորքերը շարժվեցին Թիֆլիսի ուղղությամբ: Անդրադառնալով այս գաղթին՝ Ս. Վրացյանը գրում է. «Անտանելին, սակայն, հայ ժողովրդի, Թիֆլիսում խռնված կարսեցի, չիրակեցի, արևմտահայ բազմահազար գաղթականության վիճակն էր: Մանավանդ, շատ էին ջղայնանում արևմտահայերը, որոնք, հասկանալի պատճառներով, ավելի էին սարսափում թուրքական արշավից: Նրանց դրությունը ահռելի էր: Ի՞նչ անել: Ու՞ր գնալ: Եվ ահա ծայր տվեց մի խուճապային փախուստ դեպի Հյուսիսային Կովկաս»[2]:

Վրաստանի տարածքից Հյուսիսային Կովկաս գաղթականները կարող էին անցնել Ռազմավիրական ճանապարհով և Փոթիից՝ նավերով (Բաթումը գրավված էր թուրքերի կողմից): Վրաստանում գտնվելու ընթացքում գաղթականների հիմնական մասը կողոպտվել էր, կամ էլ՝ ծախսել սեփական միջոցները: Այդ պատճառով նրանց մեծ մասը նախընտրեց Հյուսիսային Կովկաս անցնել համեմատաբար ավելի մատչելի Ռազմավիրական ճանապարհով: 1918 թ. մայիսի վերջից Ռազմավիրական ճանապարհը

[1] Դանիելյան Է., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914–1922 թթ. (շարժը, կացությունը, թվակազմը), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Ե., 1996, էջ 93–94:
[2] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 122:

ծածկվեց Հյուսիսային Կովկաս շտապող տասնյակ հազարավոր գաղթականներով[3]: Այս առթիվ Ս. Վրացյանը գրում է. «Հազարավոր մարդիկ, ծեր ու երեխա, դյուղացի ու քաղաքացի, աշխատավոր ու մտավորական — ով ինչով կարող էր — խուժեցին դեպի Ռազմավիրական ճանապարհը: Հոսանքի մի ծայրը հասել էր արդեն Վլադիկավկազ ու Արմավիր, մինչ մյուսը դեռ նոր էր դուրս գալիս Թիֆլիսից: Օրեր անընդհատ, Թիֆլիսից շարժվում էին հազարավոր սայլեր, կառքեր, ինքնաշարժներ, գրաստներ, փուրգոններ՝ բեռնավորված տնային իրերով, կանանցով և երեխաներով»[4]:

Մայիսին Թիֆլիսից Հյուսիսային Կովկաս մեկնեց Արևմտահայ ապահովության խորհուրդը: Քննադատելով այդ քայլը՝ նշանավոր պատմաբան Ջոն Կիրակոսյանը գրում է. «Փոխանակ հայացքը հառելու դեպի մայր երկիրը, սեփական ժողովուրդի պայքարի գործը կազմակերպելը, Արևմտահայ խորհուրդը շտապում էր տեղափոխվել Հյուսիսային Կովկաս՝ իր հետևից տանելով ահաբեկված գաղթականությանը, որի ծայրը հասել էր Վլադիկավկազ և Արմավիր»[5]:

Մի տեղեկության համաձայն՝ այդ օրերին Վրաստանից Հյուսիսային Կովկաս անցնել ցանկացող գաղթականների թիվը հասնում էր 100 հազարի[6]: Գաղթի ընթացքում սննդամթերքի և բժշկական օգնության բացակայության պատճառով շատ գաղթականներ ճանապարհին մահացան: Իրավիճակը հատկապես բարդացավ, երբ Հյուսիսային Կովկասում գործող թուրք գործակալների հակահայկական քարոզչությունը տվեց իր պտուղները: Սկզբից Ռազմավիրական ճանապարհով շարժվող հայ գաղթականները ենթարկվեցին ինդուշական ավազակախմբերի հարձակումներին, իսկ մայիսի 23-ին ինդուշները փակեցին Դարիալի կիրճը՝ կազբեկում կուտակված մոտ 30 հազար գաղթականներին խոչընդոտելով անցնել Հյուսիսային Կովկաս[7]:

Գաղթականներին Կազբեկից Վլադիկավկազ տեղափոխելու գործում կարևոր դերակատարություն ունեցավ Վլադիկավկազի Հայոց եկեղեցու քահանա և քաղաքի Հայոց ազգային խորհրդի նախագահ Հակոբ Սահիկյանը: Վլադիկավկազի խորհրդային իշխանության աջակցությամբ վերջինս բանակցություններ մեջ մտավ ինգուշների ներկայացուցիչների հետ: Մայիսի 27-ին Սահիկյանի դժվարին նախաձեռնությունը պսակվեց հաջողությամբ: Ինգուշները համաձայնվեցին ճանապարհը բացել և գաղթականներին թույլ տալ մտնել Վլադիկավկազ՝ պայմանով, որ վերջիններս 15-20 օրից ավել չմնան քաղաքում և չաջակցեն Թերեքի կազակներին: Միայն մայիսի 27-ին Վլադիկավկազ ժամանեցին ավելի քան 18 հազար գաղթականներ[8]:

1918 թ. մայիսի վերջից մինչև հունիսի սկիզբը անընդմեջ շարունակվող գաղթականական հոսանքի հետևանքով Վլադիկավկազում և հարակից շրջաններում կուտակվեց շուրջ 100 հազար գաղթական[9]: Արխիվային նյութերում եղած տեղեկությունների համաձայն՝ այս գաղթական զանգվածում հայերի թվաքանակը տատանվում էր 42-50 հազարի միջակայքում[10]:

Վլադիկավկազից Հյուսիսային Կովկասի այլ շրջաններ հայության գաղթն իրականացվում էր հատկապես Վլադիկավկազի և ընդհանրապես Հյուսիսային Կովկասի հայաշատ վայրերում գործող հայկական կազմակերպությունների գործուն մասնակցությամբ: Գաղթին աջակցում էր նաև Թերեքի խորհրդային իշխանությունը, որը գաղթականությանն այլ վայրեր տեղափոխելու համար գնացքներ և վագոններ տրամադրեց Վլադիկավկազի

[3] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 2, գ. 5, թ. 1:
[4] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 122:
[5] Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914–1916 թթ., Ե., 1967, էջ 534:
[6] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 122:

[7] Государственный архив Российской Федерации, ф. 1318, оп. 1, д. 413, л. 23. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Հ. Սահիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 105:
[8] Նույն տեղում, թ. 107–108:
[9] Նույն տեղում, թ. 108:
[10] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 187, գ. 291, մաս I, թ.13:

Հայոց ազգային խորհրդին[11]: Գաղթականներին Վլադիկավկազից Հյուսիսային Կովկասի այլ շրջաններ գնացքներով տեղափոխելու գործը ղեկավարում էր Մկրտիչ Լևոնյանը:

Քաղաքացիական կռիվների հետևանքով Հյուսիսային Կովկասի երկաթուղային գծերն ու ճանապարհներն ամիսներով անանցանելի դարձան և Վլադիկավկազից այլ շրջաններ ուղևորվող գաղթականների խմբերը հաճախ ստիպված էին շաբաթներով և նույնիսկ ամիսներով սպասել կայարաններում:

Վլադիկավկազից Հյուսիսային Կովկասի տարբեր մասեր շարժվող գաղթականների թիվն այնքան մեծ էր, որ չուտով տեղական իշխանությունները ստիպված եղան արգելել նոր գաղթականների մուտքը քաղաքներ և գյուղական բնակավայրեր: Օրինակ՝ Արմավիրում և Եկատերինոդարում ապաստանած գաղթականների թիվը հասել էր համապատասխանաբար 18 և 8 հազարի[12]: Արդեն հունիսի 11-ի դրությամբ Արմավիրը, Սուրբ Խաչը, Մոզդոկը, Գեորգևսկը և այլ քաղաքներ հրաժարվեցին նոր գաղթականներ ընդունել: Հյուսիսային Կովկասի հայկական կազմակերպությունները ստիպված դիմեցին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին՝ Հյուսիսային Կովկաս գաղթող հայերի հոսքն առժամանակ դադարեցնելու խնդրանքով[13]:

1918 թ. հունիս–հուլիս ամիսներից Թերեքի խորհրդային իշխանությունն արգելեց Վրաստանից եկող գաղթականներին (բացառությամբ ռուսների) անցնել սահմանը[14]: Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատար Ա. Ջամալյանը, բանակցությունների մեջ մտնելով Թերեքի իշխանության հետ, փորձում էր գաղթականների առջև բացել սահմանը[15]:

[11] ԳԱԹ, Հ. Սաոիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 109 :
[12] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 59: Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918–1920 թթ.), Ե., 2006, էջ 62:
[13] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 142:
[14] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 46, թ. 2:
[15] Նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 30, թ. 7 :

Բանակցությունների արդյունքները հայտնի չեն: Սակայն արխիվային նյութերում եղած տեղեկությունները փաստում են, որ հունիս–հոկտեմբեր ամիսներին ռազմավիրական ճանապարհով և Փոթիից՝ նավերով, հայ գաղթականները շարունակում էին գնալ Հյուսիսային Կովկաս:

1918 թ. սեպտեմբերին սկսվեց հայ գաղթականների հերթական մեծ հոսքը Հյուսիսային Կովկաս, ինչը կապված էր Թուրքիայի կողմից Բաքվի գրավման հետ: Թուրքական զորքերի կողմից քաղաքը գրավելու նախօրեին՝ սեպտեմբերի 14-ից 15-ը, գաղթականներով բեռնված նավերը Բաքվից ուղևորվեցին Կասպից ծովի ափին գտնվող մոտակա նավահանգստային քաղաքները[16]: Բաքվից գաղթած հազարավոր հայեր ափ իջան Պետրովսկ և Դերբենտ քաղաքներում:

Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից տեղեկատվական բյուրոյի 1918 թ. հոկտեմբերի 10-19-ի իրադարձությունները լուսաբանող հաշվետվության մեջ նշվում է, որ Թիֆլիս ժամանած (օրը նշված չէ) Դաղստանի ժողովրդական խորհրդի պատասխանատու աշխատակիցներից մեկը (անուն ազգանունը նշված չէ) հաղորդել է «Կավկազսկոյե սլովո» թերթի աշխատակցին, որ Բաքվի անկման երրորդ կամ չորրորդ օրը 40 հազար գաղթականներ շոգենավերով ժամանել են Դերբենտ[17]: Եթե անդամ այս տեղեկությունը համապատասխանում է իրականությանը, ապա այդ զանգվածից միայն մի քանի հազարն էր հայ: Արխիվային նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ թե Դերբենտն էր դարձել Բաքվից գաղթած հայության հավաքատեղի, այլ Պետրովսկը: Այստեղ կուտակված գաղթականների թվաքանակի վերաբերյալ հավաստի տեղեկություններ չկան: Սակայն հայտնի է հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին Պետրովսկից այլ շրջաններ, մասնավորապես Թերեքի մարզ և Դաղստանի խորքերը գաղթած հայերի թվաքա-

[16] Նույն տեղում, գ. 34, թ. 52:
[17] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 32:

նակը, որի օգնությամբ հնարավոր է դառնում ճշգրտել սեպտեմբերին Պետրովսկում ապաստանած հայերի թիվը, ինչը շուրջ 10–15 հազար էր:

Սեպտեմբերին Բաքվից Պետրովսկ և Դերբենտ եկած հայ գաղթականների ընդհանուր թիվը կազմում էր առնվազն 20 հազար: Այս քաղաքներում ապաստանած գաղթականների մեծ մասն ապրում էր բաց երկնքի տակ և սննդամթերքի բացակայության հետևանքով սովամահության էր մատնվել: Միայն Պետրովսկում մահացած հայ գաղթականների թիվը շուրջ 1500 էր[18]: Սովը և թուրքական զորքերի՝ Դերբենտի ու Պետրովսկի ուղղությամբ առաջխաղացումը գաղթականներին ստիպեցին հեռանալ այլ վայրեր: Կրկին սկսվեց գաղթը: Գաղթականների հիմնական մասը հեռացավ Դաղստանի խորքերը և Թերեքի արևելյան շրջաններ: Մնացած գաղթականների մի հատվածը Ցենտրոկասպյան դիկտատուրայի և անգլիացիների աջակցությամբ տեղափոխվեց Էնզելի, իսկ մյուս հատվածը՝ Կասպից ծովի հյուսիսային և արևելյան ափերին գտնվող նավահանգստային քաղաքներ[19]: Հոկտեմբերին Պետրովսկից Աստրախան մեկնած գաղթականների միայն մեկ խմբում կար 2–3 հազար հայ և 500 ռուս գաղթական[20]:

Հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին Բաքվից գաղթած հազարավոր հայ գաղթականների մահվան և արտագաղթի հետևանքով Հյուսիսային Կովկասում նրանց թիվը 20 հազարից նվազեց 10–15 հազարի: Անդրկովկասից Հյուսիսային Կովկաս գաղթող հայերի հոսքը դադարեց 1918 թ. նոյեմբերին, երբ առաջին համաշխարհային պատերազմում պարտված Օսմանյան կայսրության զորքերը սկսեցին հեռանալ Անդրկովկասից:

[18] **Դադայան Խ.**, Հայերը և Բաքուն (1850-ական թթ. – 1920 թ.), Ե., 2006, էջ 144:
[19] «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Ե., 2003, էջ 140, 273:
[20] «Հայրենիք», 1923, հունվար, էջ 71:

Հ. Սաոիկյանի կարծիքով՝ 1918 թ. ընթացքում Հյուսիսային Կովկաս գաղթած հայերի թիվը հասնում էր 150 հազարի[21]: Ավելի փոքր թիվ է նշում ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանը՝ 130 հազար[22]: Ամենայն հավանականությամբ Հ. Սաոիկյանը և Վ. Խոջաբեկյանը, ինչպես նաև այլոք, 1918 թ. ընթացքում Հյուսիսային Կովկաս գաղթած հայության թվաքանակը հաշվելիս այդ թվին ավելացրել են 1915–1917 թթ. ընթացքում երկրամաս գաղթած 20 հազար արևմտահայերին[23], կամ էլ՝ 1914 թ. Հյուսիսային Կովկասում բնակվող մոտ 70 հազար հայերին[24]:

Արխիվային նյութերի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ 1918 թ. փետրվար–հոկտեմբեր ամիսներին ռազմավիրական ճանապարհով, երկաթգծով, նավերով Փոթիից և Բաքվից Հյուսիսային Կովկաս են գաղթել 80–100 հազար արևմտահայ և արևելահայ գաղթականներ: 1915–1917 թթ. ընթացքում Հյուսիսային Կովկաս գաղթած 20 հազար արևմտահայերի հետ միասին 1918 թ. վերջին երկրամասում գաղթականության թիվը հասնում էր 100–120 հազարի:

[21] ԳԱԹ, Հ. Սաոիկյանի ֆոնդ, գ. 4, թ. 112:
[22] **Խոջաբեկյան Վ.**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX–XX դարերում և XXI դարի շեմին, Ե., 2002, էջ 138:
[23] **Симонян М.**, Армянская диаспора Северо-Западного Кавказа: формирование, конфессиональный облик, взаимоотношения с властью, общественными и религиозными объединениями (конец XVIII - конец XX века)», диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Краснодар, 2003, с. 28.
[24] **Խոջաբեկյան Վ.**, նշվ. աշխ., էջ 115:

СМБАТ МИНАСЯН
ИИ НАН РА

МИГРАЦИЯ АРМЯН НА СЕВЕРНЫЙ КАВКАЗ (1918 Г.)

РЕЗЮМЕ

Весной 1918 г. когда турецкие войска вторглись в пределы Закавказья, начался массовой поток беженцев на Северный Кавказ. Основная часть беженцев-армян передвигалась на Северный Кавказ по Военно-грузинской дороге и морем через Поти и Баку. В конце мая и в начале июня только по Военно-грузинской дороге в Терскую область перешли около 45 тысяч беженцев-армян. За весь 1918 г. на Северном Кавказе скопилось от 80 до 100 тысяч беженцев-армян, которые надеялись найти там убежище и кров. Однако оказавшись в центре гражданской войны, значительная часть беженцев, а также и местное армянское население, добровольно или принудительно, приняли участие в войне. Голод, холод, болезни и военные действия отняли жизни тысяч беженцев-армян.

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ԵՊՀ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀՍԽՀ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1921–1922 ԹԹ.)

1921–1922 թթ. խորհրդային հանրապետությունների հետ ՀՍԽՀ առևտրատնտեսական հարաբերությունները մեծ նշանակություն են ունեցել հանրապետության տնտեսական կյանքի աշխուժացման համար, սակայն այդ հարաբերությունները համակողմանի կերպով չեն ուսումնասիրվել: Պետք է նշել, որ խորհրդային հանրապետությունների շարքում առանձնապես մեծ է եղել Ռուսաստանի դերը, որի հետ սերտ առևտրատնտեսական կապերը և նրանից ստացած տնտեսական օգնությունը մեծապես նպաստեցին Հայաստանի քայքայված տնտեսության վերականգնմանը: ՌԽՖՍՀ-ի հետ մեկտեղ Հայաստանն առևտրատնտեսական կապեր էր հաստատել խորհրդային մի շարք հանրապետությունների հետ (Ադրբեջան, Վրաստան, Ուկրաինա): Այդ հարաբերությունների շնորհիվ խորհրդային Հայաստանի իշխանությունները կարողացան փոքր ինչ աշխուժացնել երկրի արդյունաբերությունը, ինչն էլ իր հերթին մեծ նշանակություն ունեցավ երկրում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար: Հենց այդ հարցի լուսաբանմանն էլ նվիրված է սույն հոդվածը:

1921 թ. սկսած առևտրատնտեսական որոշակի հարաբերություններ են հաստատվում Հայաստանի և Ադրբեջանի միջև: Հոկտեմբերին Ադրբեջանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Դովլաթովը և Բաքվի «Դոմկրատ» գործարանի տնօրեն Հ. Քոչարովը պայմանագիր են ստորագրում, համաձայն որի՝ խորհրդային Հայաստանի կառավարությունն անհատույց իր տնօրինման տակ էր վերցնում վերջինիս դեռևս չպետականացված գործարանը՝ այնտեղ կացինների, պայտերի և գյուղատնտեսության հա-

մար անհրաժեշտ այլ գործիքների արտադրություն սկսելու համար: Պայմանագիրը բաղկացած էր 8 կետից, որտեղ նշված էին Հ. Քոչարովի կողմից գործարանը ՀՍՍՀ-ին հանձնելու կարգը և պայմանները: Բացի այդ՝ նշվում էր, որ Քոչարովի գործարանն իր արտադրանքը պետք է վաճառեր միայն Խորհրդային Հայաստանին: Եթե ՀՍՍՀ իշխանությունները պատրաստի արտադրանքի համար չվճարեին երկու ամսվա ընթացքում, Քոչարովն իրավունք ուներ դրանք վաճառել մասնավոր անձանց[1]: Այս գործարքի մասին Դովլաթովը տեղեկացնում է ՀՍՍՀ ժողտնտխորհի նախագահ Լուկաշինին՝ նշելով, որ մետաղի ջարդոնի գնի պատճառով ավելի նպատակահարմար է, որպեսզի գործարանը մնա Բաքվում և աշխատի այնտեղ[2]:

Թե ինչպիսի պատասխան է տվել Լուկաշինը Դովլաթովի առաջարկին, հայտնի չէ, բայց, ամենայն հավանականությամբ, այն բացասական է եղել: Այս կարծիքը հիմնավորվում է այն փաստով, որ 1921 թ. վերջերին նույն Քոչարովը դարձյալ համագործակցության առաջարկով դիմում է Բաքվում Խորհրդային Հայաստանի ներկայացուցչությանը, բայց այս անգամ ոչ միայն իր, այլև Բաքվի պղնձաձուլարանների նախկին տնօրեններ Օգանեզով եղբայրների և Աստվածատուր Տեր-Կարապետովի անունից: Խումբը Հայաստանի իշխանություններին առաջարկում էր իրենց պատկանող հաստոցների, շարժիչների և գործիքների օգտագործմամբ Երևանում բացել պողպատ-պղնձի ձուլարան և մեխանիկական գործարան: Ըստ նախաձեռնող խմբի ներկայացրած ծրագրի՝ բացվող գործարանում առաջարկվում էր ունենալ պողպատ-պղնձի ձուլարան, դարբնոց, մեխանիկական արտադրամաս[3]:

[1] ՀԱԱ, ֆ.115, ց. 1, գ. 36, թ. 62:
[2] Նույն տեղում, թ. 64:
[3] Նույն տեղում, գ. 82, թ. 21:

Թե ինչպիսին եղավ ՀՍՍՀ կառավարության պատասխանը և ինչ ճակատագիր ունեցավ վերոհիշյալ պայմանագրի նախագիծը, մեզ հայտնաբերել չհաջողվեց:

Մեր կարծիքով, Բաքվի հայ գործարանատերերի այս չհաջողվածությունը բացատրվում էր նրանով, որ վերջիններս մտավախություն ունեին, թե իրենց պատկանող հաստոցները կարող են պետականացվել ադրբեջանական իշխանությունների կողմից: Դրանք նվիրելով Հայաստանին՝ նրանք որոշ չափով կապահովանեին իրենց ունեցվածքը, որովհետև Հայաստանի իշխանություններին առաջադրած պայմաններով հաստոցների տերերը պետք է հիմնադրվող գործարանում աշխատեին որպես տնօրեններ:

Հայ-ադրբեջանական առևտրատնտեսական համագործակցության օրինակ է այն փաստը, որ երկրի կաշվե արդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ ադաղման[4] նյութերը Հայաստանի կառավարությունը որոշում է ձեռք բերել Ադրբեջանից: Այդ նյութերը ձեռք բերելու նպատակով ՀՍՍՀ իշխանություններն Ադրբեջան են ուղարկում Հայրապետ Խաչատրյանցին: Վերջինս իր օգնականի հետ շրջում է Ադրբեջանի մի շարք շրջաններում և պարզում, որ այդ նյութերն ավելի նպատակահարմար է ձեռք բերել «Ազսոյուզի» միջոցով, քանի որ մասնավոր անձանցից գնելու դեպքում հարկ կլիներ մի քանի անգամ ավելի թանկ վճարել: Հայաստանի պատվիրակներին հաջողվում է 1921թ. հուլիսի 5-ին Ադրբեջանին հանձնված Ղարաբաղի շրջանում ձեռք բերել 1222 փութ ադաղման նյութեր: Նոյեմբերի 20-ին Լուկաշինը Դովլաթովին և Խաչատրյանցին հեռագիր է ուղարկում՝ առաջարկելով ադաղման նյութեր ձեռք բերել նաև Ադրբեջանի Գյանջայի շրջանում: Հանձնարարությունը կատարվում է և Հայաստանի պատվիրակներին հաջող-

[4] Այս նյութերը օգտագործվում են կաշվի վերամշակման համար:

վում է Գյանջայի և Գյոքչայի շրջաններում ձեռք բերել 446 փութ ազաղման նյութեր[5]:

Այս գործարքներից բացի Հայաստանի իշխանություններն առևտրական ակտիվ հարաբերություններ էին ապրեցնական մեկ այլ ընկերության՝ «Ազնեվթի» հետ: 1922 թ. հունվարի 30-ին «Ազնեվթի» ղեկավար Ա. Սերեբրովսկին և ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը համագործակցության վերաբերյալ պայմանագիր են ստորագրում: Այն բաղկացած էր 9 հոդվածից: Պայմանագրի համաձայն՝ «Ազնեվթը» Հայաստանի ձեռնարկությունների կարիքների համար տրամադրում էր մոտ 100 հազար փութ նավթամթերք, որը բաց էր թողնվելու 1914 թ. հունվարի գներով: Նավթի փոխարեն Հայաստանի ժողտնտեսության բարձրագույն խորհուրդը Բաքու էր ուղարկում Հայաստանի պետական մարմինների տրամադրության տակ գտնվող ամբողջ ծծմբաքարը, գինին և կոնյակը: Պայմանագիրն ուժի մեջ էր մտնում փետրվարի 1-ից և գործելու էր մինչև 1923 թ. մայիսի 1-ը[6]:

Այս պայմանագրում որպես համագործակցության հիմք ընդունվել էր ապրանքափոխանակությունը: Ադրբեջանին տրամադրելով այդ պահին Հայաստանում արտադրվող ապրանքները, ՀՍԽՀ իշխանությունները դրա դիմաց ստացվող նավթը ոչ միայն օգտագործում էին երկրի գործարանների կարիքների համար, այլև այն փոխանակում էին այլ երկրներում՝ Հայաստան ներկրելով առաջին անհրաժեշտության ապրանքներ:

«Ազնեվթի» հետ մեկ այլ պայմանագիր Հայաստանի իշխանությունները ստորագրում են ապրիլի 26-ին Բաքվում: «Ազնեվթի» կողմից այն ստորագրում է կազմակերպության ղեկավարի օգնական Դոցը, իսկ հայկական կողմից՝ ՀՍԽՀ ժողտնտեսության բարձրագույն խորհրդի ներկայացուցիչ Արտեմ Զոհրաբյանցը: Պայմանագիրը բաղկացած էր 14 հոդվածից:

[5] Նույն տեղում, գ. 87, թ. 9:
[6] Նույն տեղում, թ. 55:

Առաջին հոդվածի համաձայն՝ հայկական կողմը պարտավորվում էր Ալավերդու, Սուսխմադանի և Տանձուտի հանքերից «Ազնեվթի» կարիքների համար տարեկան ուղարկել 300 հազար փութ ծծմբաքար: Ըստ 9-րդ հոդվածի՝ Հայաստանից ուղարկվող ծծմբաքարի դիմաց «Ազնեվթը» ուղարկելու էր նավթ և կերոսին հետևյալ համամասնությամբ՝ 60 %-ը նավթ, 40 %-ը՝ կերոսին: Պայմանագրով նավթի մեկ փութի գինը սահմանվում էր 40 կոպեկ, կերոսինի մեկ փութը՝ 50 կոպեկ: Բաքու ուղարկվող ծծմբաքարի նախորդ ամսվա խմբաքանակի դիմաց ադրբեջանական կողմը վճարելու էր հաջորդ ամսվա 15-ին: «Ազնեվթը» որպես կանխավճար հայկական կողմին տրամադրում էր 7 ցիստեռն նավթ և 3 ցիստեռն կերոսին (հոդվ. 11): 13-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագրի բնօրինակը պահվելու էր Բաքվում, իսկ կրկնօրինակը՝ Երևանում[7]:

Սրանք Ադրբեջանի հետ առևտրատնտեսական հարաբերությունների կոնկրետ օրինակներ են և մեծ նշանակություն ունեցան Հայաստանի տնտեսության զարգացման համար:

Ադրբեջանի հետ առևտրատնտեսական հարաբերություններին զուգահեռ, խորհրդային Հայաստանը առևտրատնտեսական որոշակի առնչություններ է ունեցել նաև խորհրդային Ադրբեջանի մաս կազմող Նախիջևանի Ինքնավար Սոցիալիստական խորհրդային Հանրապետության հետ: 1921 թ. փետրվարի 22-ին Նախիջևանում բացվում է խորհրդային Հայաստանի տնտեսական ներկայացուցչություն[8], իսկ 1922 թ. փետրվարի 22-ին ՀՍԽՀ արտաքին ժողկոմատը Նախիջևան է ուղարկում Սերո Մանուցյանին: Վերջինիս տրված մանդատում նշվում էր, որ այն ներկայացնողը Նախիջևանի Ինքնավար Սոցիալիստական խորհրդային Հանրապետությունում ՀՍԽՀ լիազոր ներկայացու-

[7] Նույն տեղում, գ. 83, թ. 22:
[8] Եսայան Ա., Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920–1922 թթ., Ե., 1967, էջ 395–396:

ցիչն է, և խնդրվում է Նախիջևանի իշխանություններին ամեն հարցում աջակցել նրան[9]:

«Խորհրդային Հայաստան» թերթի «Եղբայրական օգնություն Նախիջևանին» վերնագրով հոդվածում նշված է, որ «Հայաստանի Ժողկոմխորհը իր համեստ միջոցներից միշտ էլ բաժին է տրամադրել Նախիջևանի հանրապետությանը: Որոշում է ընդունվել Նախիջևանին մաս-մաս տրամադրել 20.000 ռ. ոսկով, որից 5000-ը մայիսի 10-ին է տրամադրվել»[10]:

1922 թ. հուլիսի 2-ին «Հայկոոպի» և «Նախսոյուզի» (Նախիջևանի շրջանի կոոպերատիվների միություն) միջև ստորագրված համաձայնագրով վերջինս, որպես ինքնուրույն կոոպերատիվ կազմակերպություն, մտնում է Հայկոոպի կազմի մեջ: «Նախսոյուզը» պարտավորվում էր արտասահմանյան բոլոր գնումները կատարել Հայկոոպի արտասահմանյան գրասենյակների միջոցով: Փոխադարձ իրազեկության և կապի հաստատման նպատակով երկու կողմերը պայմանավորվում են երկուստեք ունենալ ներկայացուցիչներ: «Նախսոյուզի» հետ համաձայնություն է կնքվում Սուատինակի աղահանքերը շահագործելու, ինչպես նաև Օրդուբադում շերամի կոկոններ գնելու մասին[11]:

Երկկողմ հարաբերություններում, այնուամենայնիվ, գոյություն ուներ նաև որոշակի լարվածություն: 1921 թ. դեկտեմբերի 10-ին ՀՍՍՀ արտգործժողկոմատը բողոքի նոտա է ուղարկում Նախիջևանի արտգործժողկոմատ, որտեղ նշվում է, որ Ջուլֆայից Հայաստան եկող գնացքները կանգնեցվում են Նոր-Բայազետում և ձերբակալվում են ՀՍՍՀ այն քաղաքացիները, որոնց մոտ լինում է թեկուզ մեկ փութ ցորեն: «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կովբյուրոյի հրամանով Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև բոլոր բեռները պետք է անցնեն առանց ստուգման և որ Հայաստանից Նախիջևան մեկնող գնացքները չեն ստուգվում մեր կողմից, խնդրում եմ, որպեսզի Նախիջևանի Արտգործնախարարությունը միջամտի՝ հետագայում նման դեպքերը բացառելու նպատակով»,– գրված է նոտայի վերջում[12]:

Ընդհանրապես, Նախիջևանի իշխանություններից և մանավանդ Նորաշենի կայարանի ղեկավարությունից միայն հայերը չէին դժգոհում: Հանիրավի գործողություններ էին կատարվում նաև Պարսկաստանի քաղաքացիների նկատմամբ: Հայտնի է, որ Նորաշենի կայարանում պարսիկ ուղևորների բեռները հափշտակելու փաստով Երևանում Պարսկաստանի փոխհյուպատոս Աբդուլֆեթթ խանը բողոքի նոտա է ուղարկել Նախիջևանի իշխանություններին՝ նշելով, որ նման դեպքերի կրկնության դեպքում ինքը կդիմի Պարսկաստանի կառավարությանը[13]:

Խորհրդային հանրապետությունների շարքում մյուս երկիրը, որի հետ որոշակի առևտրատնտեսական առնչություններ հաստատելու փորձեր կատարեցին Խորհրդային Հայաստանի իշխանությունները, Վրաստանն էր: Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 27-ին Վրաստանում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ էր նշանակվել Դանուշ Շահվերդյանը: Այդ մասին հայկական կողմը հատուկ նամակ էր ուղարկել Վրաստան[14]:

Հայաստանի համար Վրաստանի հետ առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելը կարևոր էր այն առումով, որ ՀՍՍՀ իշխանություններն այլ երկրների հետ ապրանքափոխանակության համար կարող էին օգտագործել Վրաստանի սևծովյան նավահանգիստները, և բեռներն առանց դժվարությունների տեղափոխել Երևան: Վրաստանի հետ հարաբերություններն ակտիվացան միայն 1921 թ. փետրվարից հետո, երբ այնտեղ հաստատվեցին խորհրդային կարգեր: Մինչ այդ, վրացական իշխանություններն անընդհատ արգելքներ էին հարուցում և թույլ

[9] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 206, թ. 1, գ. 241, թ. 87:
[10] «Խորհրդային Հայաստան», 14 մայիսի 1922 թ., N 105:
[11] Նույն տեղում, 2 հուլիսի 1922 թ., N 145:

[12] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 206, թ. 11:
[13] Նույն տեղում, գ.187, թ. 90:
[14] Նույն տեղում, ց. 2, գ. 49, թ. 2:

չէին տալիս իրենց տարածքով անցնի Ռուսաստանից և Ադրբեջանից դեպի Հայաստան ուղարկվող հացահատիկը և այլ բեռներ: Այս փաստը հարուցում էր Հայաստանի իշխանությունների արդարացի զայրույթը:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ չատ հաճախ Վրաստանի կենտրոնական իշխանությունների հրահանգները չէին կատարվում տեղական վրացական չինովնիկների կողմից: Դրա վառ օրինակ է հանդիսանում Վրաստանից Հայաստան եկող գնացքի կոմենդանտի հեռագիրը, որը նա 1921 թ. հունվարի 30-ին ուղարկել էր Վրաստանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանին: Հեռագրում նշվում էր, որ Հայաստան եկող իր ղեկավարած գնացքը բերում է 12 վագոն ցորեն, գարի, բրինձ և դանազան այլ ապրանքներ: Սակայն, Շահալի կայարանի ղեկավարությունը հրաժարվել էր բաց թողնել 3 վագոն՝ չտալով ոչ մի բացատրություն և դրանով խախտելով տրանզիտի վերաբերյալ հայ-վրացական պայմանավորվածությունները: «Խնդրում եմ Ձեզ անհապաղ միջամտելու երեք վագոն ապրանքը բաց թողնելու համար»,– գրված է հեռագրի վերջում[15]:

Այս խնդրի վերաբերյալ Դանուշ Շահվերդյանը հետևողականություն է ցուցաբերում և միջադեպը հարթվում է: Վրացական կողմը համաձայնվում է վերադարձնել առգրավված 3 վագոն ապրանքը: Այդ մասին մենք տեղեկանում ենք Դ. Շահվերդյանի կողմից 1921 թ. փետրվարի 15-ին Բաքվում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Աթաբեկյանին ուղարկված հեռագրից: Նշվում էր, որ Շահալիում կանգնեցված երեք վագոն ապրանքը բաց է թողնվել և Թիֆլիսում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունը անում է հնարավոր ամեն ինչ՝ ապագայում այլևս նման երևույթների չկրկնման համար[16]:

[15] Նույն տեղում, ց. 1, գ. 42, թ. 29, գ. 44, թ. 32:
[16] Նույն տեղում, գ. 83, թ. 13:

Թիֆլիսում լիազոր ներկայացուցչությունից բացի ՀՍԽՀ-ն հյուպատոսարաններ ուներ նաև Բաթումում և Սուխումում: Հատկապես ակտիվ էր Բաթումի հյուպատոսարանը: Այնտեղ էր գտնվում նաև Հայաստանի տնտեսական ներկայացուցչությունը:

Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչությունը տնտեսական կապեր էր հաստատել Բաթումում գործող «Կովկաս» առևտրային ընկերության հետ: Վերջինս ՀՍԽՀ իշխանությունների պատվերով երկրին անհրաժեշտ ցանկացած ապրանք գնում էր արտասահմանից և տեղափոխում Բաթում, որտեղից էլ Հայաստանի իշխանությունները կազմակերպում էին այդ բեռների տեղափոխությունը Հայաստան[17]:

1922 թ. հունվարի 30-ի Բաթումում ՀՍԽՀ տնտեսական ներկայացուցչի գրությունում մանրամասն ներկայացված է Բաթումում իրենց գործունեությունը և Հայաստանի տնտեսության համար Բաթումի նշանակությունը: ՀՍԽՀ տնտեսական ներկայացուցչությունը պարբերաբար տեղեկություններ էր հաղորդում Բաթումի, արևմտյան և ռուսական մերձծովյան չուկաներում տիրող վիճակի մասին: Տնտեսական ներկայացուցչության մյուս կարևոր խնդիրը դաղթականների հարցն էր: Բաթումում գտնվող գաղթականների վիճակը ծայրահեղ ծանր էր և տնտեսական ներկայացուցչությունն ակտիվ գործունեություն էր ծավալում գաղթականներին օգնելու համար[18]:

Պետք է նշել, որ չնայած դժվարություններին, Հայաստանի իշխանություններն ամեն ջանք գործադրում էին Վրաստանի հետ տնտեսական հարաբերություններ բարելավելու ուղղությամբ և օգտագործում էին ցանկացած հնարավորություն՝ Հայաստանն անհրաժեշտ ապրանքներով ապահովելու համար:

Առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելու որոշակի փորձեր կատարվեցին նաև Ուկրաինայի հետ: 1921 թ.

[17] Նույն տեղում, գ. 42, թ. 107:
[18] Նույն տեղում, գ. 258, թ. 3–5:

Հուլիսի 21-ին ՀՍԽՀ արտգործժողկոմատը երկկողմ ապրանքափոխանակություն հաստատելու առաջարկով դիմեց Ուկրաինայի իշխանություններին, որոնք տվեցին իրենց համաձայնությունը: Այդ մասին տեղեկանում ենք 1921 թ. հոկտեմբերին ՀՍԽՀ արտգործժողկոմատին ուղղված Ուկրաինայում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Կարախանյանի հեռագրից: Կարախանյանը հեռագրում հետաքրքրվում էր «Հայաստանն ի՞նչ քանակությամբ, թնդանոթյամբ կոնյակ և երիտասարդ գինի կարող էր առաքել և ի՞նչ ժամկետներում: Ուկրաինայում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը նշում է նաև, որ այնտեղ կարելի է ձեռք բերել ռուսական արտադրության մինչև մեկ միլիոն արշին կտորեղեն և գյուղատնտեսական գործիքներ: Ապրանքափոխանակության դեպքում հաշվի են առնվելու մինչև պատերազմը գործած գները»[19],– նշված է հեռագրի վերջում:

Կարախանյանի հեռագրի պատասխանը Հայաստանի իշխանություններն անհայտ պատճառներով ձգձգում են: Այս փաստը զարմանալի է, քանի որ ուկրաինացիները համաձայնվել էին Հայաստանի հետ առևտուր իրականացնել հենց այն պայմաններով, որով ցանկացած երկրի հետ առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելու ժամանակ ձգտում էին Հայաստանի իշխանությունները, այսինքն՝ ապրանքափոխանակության միջոցով: Հոկտեմբերի 29-ին Կարախանյանը կրկին հեռագրում է Հայաստան՝ կրկնելով Ուկրաինայի հետ ապրանքափոխանակության հաստատման անհրաժեշտության մասին[20]: Վերջապես, նոյեմբերին ՀՍԽՀ Ժողտնտեսության բարձրագույն խորհրդի քարտուղար Տեր-Հովհաննիսյանը Կարախանյանին գրում էր, որ շուտով Հայաստանի Ժողտնտխորհի ներկայացուցչի հետ Ուկրաինա է ուղարկվելու կոնյակ և գինի[21]: Այդ մասին տեղեկանում ենք 1922 թ. հունվարի 23-ին ՀՍԽՀ Ժողտնտխորհի նախագահ Լուկաչինին ուղարկված Կարախանյանի նամակից: Կարախանյանը գրում էր, որ Ուկրաինան կարող է բազմազան ապրանքատեսակները ուղարկել Հայաստան, բայց դրա դիմաց պետք է առանա այնպիսի ապրանք, որը չկա տեղում: Նա դիմում է բազմաթիվ հիմնարկություններին՝ առաջարկելով գնել հայկական կոնյակը, բայց մերժում է առանում: Լիազոր ներկայացուցչի խոսքերով հնարավոր չէ կոնյակը վաճառել նաև մասնավոր անձանց, քանի որ Ուկրաինայում բացակայում է կոնյակի ազատ վաճառքի մասին դեկրետը: Իսկ ինչ վերաբերվում է գինուն, ապա, դեկուցողի խոսքերով, այն ավելի դյուրին է վաճառել: Բացի այդ, Ուկրաինայի Արտաքը (արտաքին առևտրի մարմինը) հրաժարվում է գյուղգործիքները և մանուֆակտուրան փոխանակել հայկական կոնյակի և գինու հետ՝ իր քայլը պատճառաբանելով նրանով, որ ստացված գինին և կոնյակն անհնար է վաճառել արտաասհմանում:

1921 թ. նոյեմբերի 29-ին Կարախանյանը հերթական հեռագիրն է ուղարկում Հայաստան: Հեռագրում նշվում էր, որ Խարկով քաղաքում բնակվող լուցկու գործարանատեր Յագիլյան եղբայրները դիմել են ներկայացուցչությունև խնդրել աջակցել իրենց՝ այդ գործարանը Հայաստան տեղափոխելու հարցում: Յագիլյանները ցանկություն էին հայտնել, բացի լուցկու արտադրությունից, Հայաստանում զբաղվել նաև մատիտի, կարմիր ֆոսֆորի և օճառի արտադրությամբ: Գործարանի արդյունավետության բարձրացման նպատակով նրանք պարտավորվում էին Հայաստան տեղափոխել տարբեր հաստոցներ՝ հետևյալ պայմաններով՝ գործարանը համարվում էր ՀՍԽՀ սեփականությունը և եղբայրները ստանալու էին աշխատավարձ, ինչպես նաև շահույթից որոշակի տոկոս, կամ էլ եղբայրները համարվելու էին սեփականատերեր, սուբսիդավորվելու էին պետության կողմից և սուբսիդիան վերադարձնելու էին պատրաստի արտադրանքի

[19] Նույն տեղում, ֆ. 115, ց. 1, գ. 36, թ. 77:
[20] Նույն տեղում, գ. 82, թ. 33:
[21] Նույն տեղում, թ. 32:

տեսքով[22]: Վերջում Կարախանյանը ՀՍԽՀ իշխանություններից խնդրում էր պատասխանն ուղարկել Բաքվում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Դովլաթովի միջոցով:

Ուկրաինայի հետ տնտեսական առնչություններում Խորհրդային Հայաստանի իշխանությունները որևէ էական հաջողությունների չհասան և երկու երկրների միջև այդպես էլ ապրանքափոխանակության վերաբերյալ պայմանագիր չստորագրվեց:

Այսպիսով խորհրդային հանրապետությունների հետ առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելու հարցում ՀՍԽՀ իշխանությունները հասան որոշակի հաջողությունների՝ չնայած այն հանգամանքին, որ ոչ բոլոր խորհրդային հանրապետությունների հետ առևտրական պայմանագրեր ստորագրվեցին: Դրա գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ Հայաստանի կողմից առաջարկվող ապրանքների ցանկը չափազանց համեստ էր և ոչ միշտ կարող էր հետաքրքրություն առաջացնել այլ երկրներում: Խորհրդային որոշ հանրապետությունների հետ առևտրային պայմանագրերի բացակայությունը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ այդ երկրները հրաժարվում էին առևտրի հիմքում դնել ապրանքափոխանակությունը և գերադասում էին առևտուր իրականացնել կանխիկ դրամով: Սա, իհարկե, ձեռնտու չէր ՀՍԽՀ-ին, որը, ունենալով դրամական սուղ միջոցներ, ձգտում էր առևտուր իրականացնել ապրանքափոխանակության միջոցով:

[22] Նույն տեղում, գ. 87, թ. 12:

ГРИГОР БАЛАСАНЯН
ЕГУ

ИЗ ИСТОРИИ ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ СССРА С СОВЕТСКИМИ ГОСУДАРСТВАМИ (1920-1922 ГГ.)

РЕЗЮМЕ

Статья посвящена торгово-экономическим отношениям Армянской ССР с советскими государствами начала 20-ых годов 20-го столетия.

Благодаря установлению торгово-экономических отношений с советскими республиками, правительству Армении удалось смягчить продовольственный кризис в стране и предпринять шаги к восстановлению промышленности Армении. Надо подчеркнуть, что в первую очередь были созданы прочные экономические отношения и связи с Россией. Некоторые экономические связи были установленый также с Азербайджаном, Грузией и Украиной.

Так, с отдельными предприятиями Азербайджана власти Армении заключили торгово-экономические соглашения, что способствовало активизации некоторых отраслей промышленности.

До установления советской власти, правительство Грузии всячески препядствовало транзиту грузов, предназначенных для Армении (даже гуманитарных) по своей территории, которые шли со стороны России. С Грузией экономические связи активизировались только после установленя в стране советской власти.

Власти Армении пытались установить экономические связи и с Украиной. Армянское правительство в основу торговых отношений пыталось вложить принцип товарообмена, т.е. таким образом стремилось компенсировать отсутствие в стране наличной валюты. Но власти Украины отказались от такого принципа торговых отношений, поэтому между двумя государствами не было подписано торгового соглашения.

ՎԱՀՐԱՄ ՂԱՐԱԽԱՆՑԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԹՈՒՐՔԱՀՊԱՏԱԿ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ՀՐԵԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ 1923–1926 ԹԹ.

Առաջին համաշխարհային պատերազմում (1914–1918 թթ.) պարտված ցեղասպան Օսմանյան կայսրությունը փլուզվեց՝ իր տեղը զիջելով հանրապետական Թուրքիային: «Նոր» Թուրքիան, որի հիմնադիրն էր Մուստաֆա Քեմալը (Աթաթուրք), հայ և օտարազգի բազմաթիվ հետազոտողների կողմից արդարացիորեն գնահատվել է միայն իբրև արտաքնապես կերպարանափոխված, ժողովրդավարական և արմատական բարեփոխումների կեղծ դրոշակակիր դարձած երկիր, որը չէր փոխվել ներքուստ՝ պահպանելով ռազմաֆեոդալական կայսրություններին հատուկ բազմաթիվ գծեր[1]: Չէր փոխվել նաև Մ. Քեմալի ու նրա ռազմաքաղաքական խմբավորման դիրքորոշումը նախկին Օսմանյան կայսրության սահմաններում բնակվող ոչ թուրք ժողովուրդների հանդեպ[2]:

[1] Արամ Անանյանը հենվելով քաղաքագետ Սվետլանա Լուրյեի այն կարծիքի վրա, թե արտաքնապես արևմտականացած քեմալիզմն իր մեջ պարունակում է թուրքական ավանդական գիտակցության հենասյուների մոդիֆիկացիաները, եզրակացնում է, որ «...չեն փոխվել թուրքական ազգային ընկարագրի հիմքերը, որ «նոր» Թուրքիան և վերջինիս գաղափարախոսությունը ամենևին էլ նոր չի, այլ հանդիսանում է սուլթանականի շարունակությունը՝ նույնքան կայսերապաշտական է» (տե՛ս **Անանյան Ա.**, Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում (1991–2004 թթ.), Ե., 2006, էջ 15: Հմմտ. **Лурье С.**, Метаморфозы традиционного сознания, СПб., 1994, с. 99–121):

[2] Չնայած Մ. Քեմալը բազմիցս դատապարտել է հայերի տեղահանությունն ու կոտորածները, պահանջել պատժել դրանց իրականացնողներին, սակայն իրականում տեղահանության և ջարդերի ոչ քիչ թվով կազմակերպիչներ են բարձր պաշտոններ զբաղեցրել Թուրքիայի Հանրապետության օրենսդիր ու գործադիր իշխանության մարմիններում. մասնավորապես, Բիթլիսի և Հալեպի նահանգապետի պաշտոնները վարած Մուստաֆա Աբդուլհալիք Ռենդան՝ Ազգային մեծ ժողովի նախագահն էր, Դիարբեքիրի ջարդերի կազմակերպիչներից Ազիֆ Ֆևզին՝ տարածքային կառավարման նախարարը, իսկ վարչապետ, հետագայում

Նորաստեղծ Թուրքիայի Հանրապետությունը Լոզանի խորհրդաժողովում (1922 թ. նոյեմբերի 20 – 1923 թ. հուլիսի 24) չճանաչեց մեծ տերությունների հետ իր նախորդի՝ Օսմանյան կայսրության կնքած պայմանագրերը՝ ի մասնավորի Սևրի (1920 թ. օգոստոսի 10): Ավելին, Լոզանի պայմանագրում չկար ո՛չ Հայաստան, ո՛չ էլ հայ անունը[3], որոնց փոխարինել էր կրոնական փոքրամասնության սահմանումը: Պետք է նշել, որ այդ բնորոշումը, իր հերթին, բազմազգ և աշխարհիկ դարձած Թուրքիայում բավական վերացական ու հակասություններով լի ձևակերպում էր[4]: Թուրքիան իր տարածքում վերոնշյալ պայմանագրից հետո պաշտոնապես կրոնական փոքրամասնություններ ճանաչեց հայերին, հույներին և հրեաներին, որոնք հիմնականում կենտրոնացած էին Կ. Պոլսում[5]: Հետաքրքրական է, որ Լոզանի պայմանագրի կնքումից դեռ տարիներ առաջ՝ 1919 թ., Թուրքիայի «Արևելյան նահանգների իրավունքների պաշտպանության միության» կողմից կազմակերպված և հուլիսի 23-ից օգոստոսի 6-ը Էրզրումում անցկացված համագումարի ընդու-

Թուրքիայի նախագահ՝ ազգայնամոլական գաղափարներ կրող Իսմեթ Ինոնյուն, Թալեաթի քրոջ ամուսինն էր: Հենց վերջինիս օրոք ու ջանքերով է 1943 թ. Թալեաթի աճյունը Գերմանիայից տեղափոխվել Թուրքիա (ավելի մանրամասն տե՛ս **Անանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 72, նաև՝ «Ազգ», 2001, 2 օգոստոսի, **Խանլարի (Խանլարյան) Կ.**, Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում.1923–2005 թթ., Ե., 2005, էջ 29):

[3] Christian Minorities of Turkey, Report produced by the Churches Committee on Migrant Workers in Europe, Brussels, September, 1979, p. 12.

[4] Լոզանի պայմանագրով Թուրքիայում որպես կրոնական փոքրամասնություններ ճանաչվեցին միայն հայերը, հույներն ու հրեաները. լուսանցքից դուրս մնացին նեստորականները, սիրիացի ուղղափառները, կաթոլիկները, բողոքականները, արաբ ուղղափառները և ուրիշներ: Չնայած նշված փոքրամասնությունները ևս կապված են Թուրքիայի նորագույն շրջանի և այդ երկրի հայության ճակատագրի ու պատմության հետ, սակայն այստեղ նպատակահարմար չէ շոշափել նրանց վերաբերող հարցերը, քանի որ դրանք բավական տարողունակ են և կարիք ունեն մանրակրկիտ ու համակողմանի ուսումնասիրության (խնդրի մասին ավելի մանրամասն տե՛ս Christian Minorities of Turkey, p. 42): Թուրքերը որպես ազգային փոքրամասնություն՝ թուրքերը չճանաչեցին նաև քրդերին:

[5] «Մարմարա» օրաթերթ, Կ. Պոլիս, թիւ 6, 5 Նոյեմբեր, **1924**, http://en.wikipedia.org/wiki/ Demographics of Turkey# note-tuik pop [այցելությունը կայքէջ կատարվել է 15.01.2008 թ.]:

նած որոշումներում ընդգծված է հետևյալը՝ «... փոքրամասնություններին չի կարող արվել որևէ զիջում, որը նրանց համար հավասարազոր կլիներ քաղաքական գերակայության ձեռքբերմանը»[6]: Համագումարի գլխավոր մասնակիցներն էին Մ. Քեմալը, Թուրքական բանակի՝ Էրզրումի կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը և միլլի (ժողովրդական) շարժման այլ ներկայացուցիչներ:

Լոզանի խորհրդաժողովից կարճ ժամանակ անց «արևմտյան ուղղությամբ զարգացող» և աշխարհիկ պետություն դարձած Թուրքիան, ի դեմս իր նոր իշխանությունների, պարզորեն հասկացրեց ազգային փոքրամասնություններին (նախ և առաջ հայերին ու հույներին), որ մտադիր չէ կյանքի կոչել պայմանագրով ստանձնած անգամ այն նվազագույն պարտավորությունները, որոնցով երաշխավորվում էին ոչ մահմեդական փոքրամասնությունների ներկայացուցիչների կյանքի, խոսքի, դավանանքի ազատությունները, սեփական լեզուն գործածելու, ազգային հաստատություններ հիմնելու, կրթություն ստանալու և մյուս իրավունքները: Եթե վերոնշյալ պայմանագրի երրորդ՝ «Փոքրամասնությունների պաշտպանություն» բաժնի 39-րդ հոդվածում կարդում ենք հետևյալ տողերը. «Ոչ մահմեդական փոքրամասնությանը պատկանող Թուրքիայի քաղաքացիները պետք է օգտվեն այն նույն քաղաքացիական և քաղաքական իրավունքներից, ինչպես մահմեդականները»[7], ապա «փոքրամասնություն» բառն անգամ հիշատակված չէ Թուրքիայի Հանրապետության առաջին՝ 1924 թ. ապրիլի 20-ին ընդունված սահմանադրության մեջ[8]: Հետաքրքրական է հատկա-

[6] Turkey 1987, The General Directorate of Press and Information of the Republic of Turkey. Published by the General Directorate of Press and Information of the Prime Ministry of the Republic of Turkey. Translated and edited in English by: Teoman FEHIM, Ankara, 1987, p. 39–40.

[7] Christian Minorities of Turkey, p. 85.

[8] Պետք է նշել, որ Թուրքիայում 1961 թ. ընդունված սահմանադրության շատ կետեր և դրույթներ ևս չէին գործում ազգային փոքրամասնությունների պարա-

պես սահմանադրության 88-րդ հոդվածը, որի համաձայն՝ «Թուրք անունը պետք է ընկալվի որպես ազգային տերմին՝ նեբառելով Թուրքական Հանրապետության բոլոր քաղաքացիներին՝ անկախ կամ առանց ազգային ու կրոնական պատկանելության նախապատվության: Յուրաքանչյուր երեխա, ով ծնվել է Թուրքիայում կամ այլ երկրում՝ ում հայրը թուրք է, այն անձը, ում հայրը Թուրքիայում հաստատված օտարերկրացի է, այն անձը, ով բնակվում է Թուրքիայում կամ ով նախընտրում է մինչև քսան տարին լրանալը դառնալ թուրքահպատակ, այն անձը, ով օրենքով սահմանված կարգով Թուրքիայի քաղաքացիություն է ձեռք բերում հպատակագրման միջոցով՝ հանդիսանում է թուրք»[9]: Փաստորեն, սահմանադրությամբ երաշխավորվեց ու վավերացվեց Թուրքական Հանրապետության բոլոր քաղաքացիների թրքացման պետական քաղաքականությունը[10]:

Ինչ վերաբերում է Կ. Պոլսի հայ համայնքին, ապա պետք է շեշտել, որ նրա ճակատագիրը թե՛ Լոզանի պայմանագրից, թե՛ քեմալական սահմանադրությունից հետո մնում էր մշուշոտ և անորոշ իրավիճակում: Գաղափար կազմելու համար, թե ինչպի-

գայում՝ ի մասնավորի այն հոդվածների, որոնցում նշված էր, որ Թուրքիայի Հանրապետությունում յուրաքանչյուր ոք ունի հավասար իրավունքներ և պարտականություններ. արգելված էր լեզվի, կրոնի, հավատի, ազգային պատկանելության, գույնի, սեռի, քաղաքական կողմնորոշումների, կարծիքի կամ նմանատիպ այլ պատճառներով մարդկանց միջև խտրականություն դնելը (սահմանադրության ամբողջական տեքստը տե՛ս http://www.turkishembassy. org/index.php?option=com_content&task=view&id=188&Item id=165[այցելությունը կայքէջ կատարվել է 20. 01. 2008 թ.]):

[9] http://links.jstor.org/sici?sici=00323195%28192503%2940%3A1%3C73%3ATNCOT%3E2.0.CO%3B2-6&size=LARGE&origin=JSTOR-enlargePage [այցելությունը կայքէջ կատարվել է 11. 10. 2008 թ.]:

[10] 1982 թ. նոյեմբերի 7-ի հանրաքվեով վավերացված Թուրքիայի նոր սահմանադրությունը նույնպես լի է թրքացման պետական քաղաքականությունն ամրագրող պարբերություններով: Օրինակ, նշված սահմանադրության 66-րդ հոդվածում գրված է, որ «Յուրաքանչյուր ոք, ով թուրքական պետության հետ կապված է քաղաքացիության կապերով, թուրք է» (տե՛ս http://www.cecl.gr/RigasNetwork/databank/Constitutions/Turkey.htm [այցելությունը կայքէջ կատարվել է 20. 01. 2008 թ.], նաև՝ Академия Наук СССР, Институт востоковедения. "Турция: история и современность", сборник статей, М., 1988, с. 92–93):

սի մթնոլորտ էր տիրում պոլսահայության շրջանում թուրքական հանրապետության ծննդին հաջորդող երեք տարվա ընթացքում, հարկ է ծանոթանալ տեղի մամուլի հրապարակումներին: Կ. Պոլսում լույս տեսնող «Մարմարա» օրաթերթը 1925 թ. հունվարի 4-ի իր համարում գրում էր. «Օրինապէս տէր՝ իր բնական իրաւունքներուն, Պոլսոյ հայ հասարակութիւնը կ'անցընէ փորձութեան շրջան մը... Հալածանք չկայ, բայց օդակները կը պրկուին անսասան հետեւողականութեամբ: Ճիշդ է որ միեւնոյն քաղաքականութիւնը կը տիրէ բոլոր ոչ իսլամ հասարակութեանց հանդէպ, մասնաւորապէս կրթական գործի մասին, բայց եթէ բացառութիւններ պատահին, Հայերը կրկնապէս կը պրկուին»[11]: Այնուհետև թերթը տեղեկացնում էր հայերի հանդեպ կիրառվող խտրականությունների, մահափորձերի և վախի մթնոլորտ ստեղծելու՝ թուրք պաշտոնյաների վարած քաղաքականության մասին: Թուրքական մամուլն, ըստ «Մարմարայի», հանիրավի քննադատություններ թիրախ էր դարձնում պոլսահայությանը: «Ուշադիր հետեւող մը պիտի եզրակացնէր,– գրում էր թերթը,– թէ թուրք մամուլը ուրիշ հոգ չունի, կամ թուրքիոյ մէջ ուրիշ գործ չէ մնացած, եթէ ոչ հետապնդել, վախցնել, փախցնել մնացորդ ափ մը հայութիւնը»[12]: Թուրքիայում բնակվող հայերի նկատմամբ այդ երկրի իշխանությունների դրսևորած վերաբերմունքն ավելի պարզորեն ի ցույց հանելու և գնահատելու համար նպատակահարմար է նախ համառոտակի քննարկել հույներին ու հրեաներին առնչվող որոշ իրադարձություններ:

Լոզանի պայմանագրով Թուրքիայի և Հունաստանի միջև ձեռք էր բերվել ու հատուկ կետով ամրագրվել հունահպատակ թուրքերի և թուրքահպատակ հույների փոխանակման համա-

[11] «Մարմարա» , թիւ 61, 4 Յունուար, 1925:
[12] Նույն տեղում:

ձայնություն[13]: Մինչև 1925 թ. վերջերը Թուրքիայից Հունաստան անցավ շուրջ 100 հազար հույն, իսկ հակառակ ուղղությամբ՝ ավելի քան 400 հազար թուրք[14]: Գաղթել չցանկացող հունահպատակ թուրքերի իրավունքների պաշտպանությունը երաշխավորված էր Լոզանի պայմանագրով. «Այս բաժնի (Փոքրամասնությունների պաշտպանության – Վ. Ղ.) կետերով Թուրքիայի ոչ մահմեդական փոքրամասնություններին չնորհված իրավունքները պետք է նմանապես չնորհվեն Հունաստանի մահմեդական փոքրամասնությանը»[15]: Նշված համաձայնության կայացումից բառացիորեն ժամեր անց քեմալական կառավարությունը տենդագին կերպով լծվեց գործի: Մինչև 1925 թ. հունվար ամիսը Թուրքիայից, հիմնականում Կ. Պոլսից, Հունաստան էր գաղթել արդեն 75 հազար հույն[16]: Թուրքերի աչքից չվրիպեց անգամ Կ. Պոլսի հունաց պատրիարքը: 1925 թ. հունվարի 21-ին հույն և թուրք ազգաբնակչության «Փոխանակության խառը հանձնաժողովի» թուրք պաշտոնյաները տեղեկացրին իրենց հույն գործընկերներին, որ պատրաստվում են պատրիարքին «ուղարկել» Հունաստան և անկախ վերջիններիս պատասխանից, իրենց որոշումն ի կատար են ածելու 15 օր անց[17]: Այդ հայտարարությունից, սակայն, 15 օր էլ չանցավ. հունվարի 31-ի վաղ առավոտյան թուրք ոստիկանները հայտնվեցին պատրիարքարանում, փակեցին շենքի բոլոր ելքերը՝ մեկ ժամ տրամադրելով Կոստանդին պատրիարքին ճամպրուկները հավաքելու համար: Անակնկալի եկած և կիսարթուն հոգևորականը չհասցրեց նույնիսկ ճանապարհածախսի համար անհրաժեշտ գումար վերցնել: Երկաթուղային կայարանում նա պարտքով դրամ է

[13] http://links.jstor.org/sici?sici=0032-3195%28192503%2940%3A1%3C73%3ATNCOT%E2.0.CO%3B2-6&size=LARGE&origin=JSTOR-enlargePage, p. 12 [այցելությունը կայքէջ կատարվել է 11. 10. 2008 թ.], Christian Minorities of Turkey, p. 8.
[14] Նույն տեղում, նաև Earle E. M, "The trek of Near Eastern Minorities", in Asia, January, 1925, p. 49–70.
[15] Christian Minorities of Turkey, p. 86.
[16] «Սարմարա», թիւ 74, 21 Յունուար, 1925:
[17] Նույն տեղում:

խնդրում իրեն ուղեկցող թուրք ոստիկանից, որը մերժում է՝ չուներնալու պատճառաբանությամբ[18]:

Թուրքիայից Հունաց պատրիարքի արտաքսումը հասարակական մեծ հուզում առաջացրեց Հունաստանում: Հույն - թուրքական հարաբերությունները ծայր աստիճան սրվեցին և կողմերի համար ստեղծվեց նոր պատերազմի իրական վտանգ: Հունական քաղաքական շրջաններում քննարկվում էր Թուրքիայից Հունաստանի դեսպանի հետկանչման հարցը: Թուրքերը պնդում էին, որ պատրիարքին Հունաստան «ուղարկելու» որոշումը կայացրել էր «Փոխանակության խառը հանձնաժողովի» թուրքական պատվիրակությունը, իսկ պաշտոնական Անկարան այդ ուղղությամբ ոչ մի հրահանգ չէր տվել: Նշված պատվիրակության անդամ Համդի բեյը հայտարարեց՝ «Լոզանի մէջ կնքուած պայմանագրութիւնը, դասակարգերու բաժնած չէ փոխանակելի անձերը: Այսինքն, հարուստ, աղքատ, անհատ, միւֆթիի կամ քահանայ,— ամէն մարդ նոյն պարտաւորութեան ենթարկուած է: Հետեւաբար, պատրիարքին փոխանակութեան մէջ ուրիշ ազդակ փնտռելու չէ»[19]: Իր հայտարարություններում ավելի հեռուն գնաց Կ. Պոլսի կուսակալ Սամի բեյը՝ ընդգծելով, որ հանրապետության բարձրագույն ղեկավարությունը պատրիարքի վտարման հրաման չի տվել, իսկ պատրիարքին հետևելու են հույն եպիսկոպոսները[20]: Պատրիարքի արտաքսումը ծանր հարված էր Կ. Պոլսի հունական համայնքին, որը զրկվեց համախմբող և ղեկավար ուժից:

Հունաստանը, սակայն, Թուրքիայի հետ չխզեց իր դիվանագիտական հարաբերությունները, քանի որ շատ ժամանակ չէր անցել հույն-թուրքական վերջին պատերազմից (1919 – 1922 թթ.), որտեղ հույները պարտություն էին կրել: Ի հավելումն դրա՝ պետք է նշել, որ երկիրը կքած էր ներքին և արտաքին

[18] Նույն տեղում, թիւ 83, 31 Յունուար, 1925:
[19] Նույն տեղում, թիւ 84, 1 Փետրուար, 1925:
[20] Նույն տեղում:

բազմաթիվ հոգսերի ծանրության տակ: Նոր պատերազմը կբեռներ միայն նոր ավեր՝ էլ ավելի ծանրացնելով Հունաստանի սոցիալ-տնտեսական վիճակն ու միջազգային դրությունը[21]: Այդ ամենը նկատի ունենալով՝ Հունաստանի իշխանությունները հայտարարեցին, որ «... Պ. Փոլիթիսի (Թուրքիայում Հունաստանի դեսպանը – Վ. Ղ.) ետ կանչուիլը պարզապէս բողոքի ցոյց մը կը նկատուի»[22]: Մինչդեռ քեմալականները ջանասիրաբար շարունակում էին անտանելի դարձնել թուրքահպատակ հույների կենսապայմանները ու սահմանափակել նրանց իրավունքները: Ահա թե ինչ էր գրում «Մարմարան». «... Պոլսոյ յոյները դաղթել կ'ուզեն... Պոլսոյ Յոյները ներկայիս կը փափաքին դանդուածային կերպով Յունաստան կամ արտասահման գաղթել»[23]: Այս պարագայում պաշտոնական Անկարայի համար, ի դեմս Մ. Քեմալի, բնավ էլ հոգ չէր, որ «եթէ Յոյները գաղթեն, Պոլիս չուտով տնտեսական մեծ անկում մը պիտի կրէ»[24]: Առաջնային պլան էր մղված Թուրքիայի թրքացումը, իսկ Կ. Պոլիսը, իբրև առևտրական կենտրոն, երբեք թուրքական չի եղել: Քաղաքի առևտուրը գտնվում էր գերազանցապես հույների, հայերի և հրեաների ձեռքում: Իրերի նման վիճակը դժվար թե չանհանգստացներ և ակտիվ քայլերի չմղեր թուրքական հանրապետությունը թուրքերի համար կառուցող քեմալական գաղափարախոսներին:

Մ. Քեմալի կառավարության թրքացման քաղաքականությունն ավելի դյուրին էր իրականանում հրեաների շրջանում: Թուրքիայում բնակվող հրեաները ոչ միայն չհակադրվեցին փոքրամասնությունների ձուլման թուրքական քաղաքականությանը, այլև պատրաստակամություն հայտնեցին կամավոր

[21] Հիշյալ տարիներին հունական կառավարությունը լրջորեն մտահոգված էր նաև երկրում պատսպարված բազմահազար հայ գաղթականների խնդիրներով և ուղիներ էր փնտրում այդ հարցի շուտափույթ լուծման համար:
[22] «Մարմարա», թիւ 84, 1 Փետրուար, 1925:
[23] Նույն տեղում, թիւ 90, 8 Փետրուար, 1925:
[24] Նույն տեղում:

և շատ արագ փոխել իրենց ազգությունը՝ դառնալով թուրք: Անշուշտ, Կ. Պոլսի հրեաների այդպիսի կտրուկ շրջադարձը դեպի թրքություն պարարտ հող էր և ուժեղ խթան դարձավ Թուրքիայի Հանրապետությունն ամբողջությամբ թրքացնելու ծրագրի իրագործման համար: Սակայն հարկ է վերապահումներով մոտենալ հրեաների՝ թրքանալու վերաբերյալ արած հայտարարություններին, քանի որ դրանց մեջ պարզորեն նշմարվում էր ֆիզիկական ոչնչացման վտանգի տարբեր դրսևորումները հրեական համայնքից և նրա անդամներից հեռացնելու միտումը: Իսկ ի՞նչ էր կատարվում Կ. Պոլսի հրեական համայնքում 1920-ական թթ.: Քաղաքը գրեթե դատարկելով հույներից՝ թուրքական իշխանություններն իրենց ուշադրության կենտրոնից ոչ մի րոպե չհեռացրին հայերին ու հրեաներին: Թրքացման պետական քարոզչամեքենան գործում էր ամեն վայրկյան և մանրակրկիտ ուշադրությամբ՝ անընդհատ բարձրաձայնելով չթրքացած տարրերի գոյության մասին: Սակայն հարկ է նշել, որ թե՛ հայկական, թե՛ օտար մամուլում հայ և հույն փոքրամասնությունների համեմատությամբ ավելի քիչ թվով հոդվածներ կան Թուրքիայի հրեաների նկատմամբ կիրառվող ազգային ու կրոնական ճնշումների վերաբերյալ[25], որն ինքնաբերաբար առաջացնում է երկու հարց՝ ա) արդյո՞ք մամուլը հիմնականում շրջանցում էր հրեաների հանդեպ ցուցաբերված խտրականության դրսևորումները, բ) արդյո՞ք հրեաների նկատմամբ թուրքերը պակաս խտրական վերաբերմունք ունեին, որի պատճառով

[25] Կահիրեում հրատարակվող «Արեւ» օրաթերթի՝ 1974 թ. ապրիլի 4–7-ի 16.787–16.790 համարներում, օրինակ, S. Կյուլուզյանի հեղինակությամբ տպագրվել է արժեքավոր հոդվածաշար, որը կրում է «Սուստաֆա Քեմալի հիմնած թրքական հանրապետութեան յիսուն տարիները» խորագիրը: Այդտեղ հեղինակը համառոտակի ներկայացրել է նաև Թուրքիայի ազգային փոքրամասնությունների դրությունը 1923–1933 թթ., որտեղ ոչ մի խոսք չկա հրեաների մասին. «1923–33-ի տեւողութեան, – նշում է հոդվածագիրը, – թուրք ժողովուրդը, բայց մանաւանդ երկրի փոքրամասնութիւնները – հայերը, յոյները, քիւրտերը – ապրեցան ահաւոր ճնշումի, բռնութեան եւ սարսափի մթնոլորտի մը տակ» (մանրամասն տե՛ս «Արեւ», թիւ 16.787, 4 Ապրիլ, 1974):

արձանագրված դեպքերը քիչ էին: Ստորև ներկայացվող դեպքերը վկայում են, որ իրականությանն ավելի մոտ է վերջին տարբերակը:

1925 թ. մայիսի 29-ի համարում «Մարմարան», հղում կատարելով թուրքական «Ագշամ» թերթին, տպագրել էր մի հոդված, որը վերաբերում էր թուրք պաշտոնյաների կողմից հրեաների հանդեպ ցուցաբերված խտրական վերաբերմունքին: «Մարմարան» գրում էր, որ մի խումբ հրեաներ մասնակցել են օտար լեզուների մասնագետների պաշտոններ զբաղեցնելու համար Կ. Պոլսում կազմակերպված մրցույթին և ստացել անբավարար գնահատականներ: Ըստ թերթի՝ հրեաներն այդ անհաջողությունը վերագրել են իրենց ազգային պատկանելության, այլ ոչ թե լեզուների անբավարար իմացության, որի պատճառով էլ որոշել են դավանափոխվել և դառնալ թուրքեր՝ չցանկանալով հրաժարվել «... թարգմանի պաշտօնէն, որ հասութաբեր գործ մըն է»[26]: Ավելի հետաքրքրական էին 1926 թ. տեղի ունեցած դեպքերը: Թուրք կառավարող շրջանները հիշյալ տարում հանրության մեջ տարածեցին կեղծ լուրեր, թե իբր 300 հրեա թուրքերի քաղաքական ու ազգային ճնշումներից խուսափելու և իսպանիա հիմնական բնակության տեղափոխվելու նպատակով դրավոր դիմել է իսպանական իշխանություններին: Այդքանը բավական էր, որպեսզի Կ. Պոլսում բարձրանար հակահրեական հիստերիա՝ լուրջ վտանգ ստեղծելով հրեական համայնքի համար: Սակայն, ի մեծ զարմանս պաշտոնական Անկարայի, Կ. Պոլսի հրեաների հոգևոր առաջնորդն արեց ժամանակի համար սենսացիոն հայտարարություն՝ «Հակահրեայ տարաձայնութիւններուն առաջքը առնելու համար բոլորովին պիտի թրքանանք (ընդգծումը – Վ. Ղ.)»[27]: Այդ հայտարարությունն այնպես զարմացրեց թուրք պաշտոնյաներին, որ վերջիններս չկարողացան արագ կողմնորոշվել և ծրագրել իրենց հաջորդ անելիքը:

[26] «Մարմարա», թիւ 187, 3 Յունիս, 1925:
[27] Նույն տեղում, թիւ 411, 21 Փետրուար, 1926:

Մինչդեռ հրեաներին հաջողվեց նմանատիպ հայտարարություններով ժամանակ շահել և իրենց ապահովագրել թուրքական մոլեռանդ զանգվածների հարձակումներից ու անխուսափելի բախումներից: Այդպիսի վտանգի մասին ահազանգում էր հրեական «էլ տեմպո» թերթը, որից ուշագրավ մեջբերում էր կատարել «Մարմարան»: «Թուրքիոյ Հրեաները երբեք այս օրուան չափ յուզումի մատնուած չէին, – գրում էր «էլ տեմպոն», – Հրեայ համայնքին դէմ թուրք մամուլին կողմէ միեւնոյն օրուան մէջ այսքան բուռն կերպով յարձակում գործուիլը՝ չափազանց մտահոգիչ իմաստ մը կրնայ պարունակել»[28]: Առավել ուշագրավը, որը բացահայտում էր թուրքական կառավարության՝ ազգային փոքրամասնությունների հանդեպ ունեցած անհանդուրժողականությունը, նշված թերթում տպագրված հետևյալ միտքն էր. «Ուշադրութեան արժանի է որ այս թերթերուն (թուրքական – Վ. Ղ.) մեծագոյն մասը, առանց գնահատելու թէ այս հրաապարակութիւնները (300 հրեայի Իսպանիա տեղափոխվելու մասին – Վ. Ղ.) կրնան հանրութիւնը զրգռել եւ ծանրակշիռ հետեւանքներ ունենալ, տակաւին կը շարունակէ զանոնք, կարծես թէ երկար առեն է վեր կուտակուած առելութենէ մը մղուած ըլլար»[29]:

Հատկանշական է, որ «պարի բռնվելով սատանայի հետ» հրեաներն ունակ դտնվեցին «լսելու նրա երաժշտությունը»: Նրանք նախ հայտարարեցին, որ տեղյակ չեն իրենց ազգակիցների կողմից Իսպանիայի իշխանություններին ուղարկված նամակի ու նրա բովանդակության մասին, ապա թուրքական կառավարությանը ներկայացրին բողոք-դիմում՝ պահանջելով անհապաղ բացահայտել նամակի հեղինակներին և խստագույնս պատժել նրանց, եթե իսկապես այդ մարդիկ գոյություն ունեին: Նշված բողոք-դիմումն ստորագրել էին հրեական համայնքից ընտրված ազդեցիկ յոթ վաճառականներ, որոնք իրենց պահանջն

[28] Նույն տեղում, թիւ 414, 25 Փետրուար, 1926:
[29] Նույն տեղում:

ավարտում էին հետևյալ տողերով. «Այդ 300 ապերախտները թող գիտեան թէ, մենք իրենց պէս ապերախտ չենք եւ հաւատարիմ ծառաներն ենք կառավարութեան: Մենք թուրք ենք, թուրք պիտի ապրինք, եւ թուրք պիտի մեռնինք»[30]: Նշվում էր նաև, որ այդ միջադեպը Կ. Պոլսի հրեաների դեմ կազմակերպված դավադրություն էր: «Միւս կողմէ,– կարդում ենք «Ագշամից» «Մարմարայում» արտատպված հոդվածում,– խախամապետ Պէճարանօ էֆէնտին կարգ մը չահեկան յայտարարութիւններ ըրած է, Հրեաները թրքացնելու խնդրին չուրջ»[31]: Ընդ որում, Կ. Պոլսի հրեաների թվաքանակի վերաբերյալ հետաքրքիր տվյալներ էր հաղորդում հրեա բարձրաստիճան հոգևորականը և առաջարկում նրանց թրքացման իր տարբերակը: Ըստ նրա՝ Թուրքիայում 1926 թ. բնակվում էր 72 հազար հրեա, որոնց մեծ մասն զբաղված էր առևտրով և «այս երկրին (Թուրքիայի – Վ. Ղ.) մէջ չկայ եւ ոչ իսկ մէկ հատ խելացի հրեայ, որ քաղաքականութեամբ զբաղի»[32]: Թուրք դեկավարության համար, իհարկե, դժվար չէր կռահել հրեաների հոգևոր առաջնորդի բառերի բուն իմաստը, որը կարելի է մեկնաբանել հետևյալ ձևով՝ Թուրքիայում չկա թեկուզ մեկ խենթ հրեա, որը կփորձի հակադրվել թուրքական գործող պետական քարոզչամեքենային: Ավելին, հրեաները կազմել և հրապարակել էին իրենց թրքացման սեփական նախագիծը. այն է՝ ա) երկու ձեռքով կողմ քվեարկել թուրքական կառավարության բոլոր որոշումներին, որոնց համաձայն՝ հրեական նախակրթարաններում և դպրոցներում դասավանդումը ֆրանսերենի փոխարեն պետք է ամբողջապես կատարվեր թուրքերենով, բ) հրեաների թրքացման համար թուրքները պետք է օգտվեին Ռումինիայի փորձից, այսինքն՝ պետք է դինվեին համբերությամբ և ընդունեին, որ այդ գործընթացը դանդաղ՝ 15 տարուց ոչ շուտ իրականանալի «երազանք է»: Հա-

[30] Նույն տեղում, թիւ 411, 21 Փետրուար, 1926:
[31] Նույն տեղում:
[32] Նույն տեղում:

տուկ չեչավում էր՝ այդպիսի մեթոդների չնորհիվ էր, որ «... Ռումանիոյ մէջ ռումաներէն չգիտցող հրեայ չմնաց: Ավելի ճիշդը, 15 տարուան մէջ, այնտեղի Հրեաները ռումանականացան»[33]: Սակայն մեկ բան էր որևէ ազգի լեզվին ու մշակույթին տիրապետելը, ինտեգրվելը, լրիվ ուրիշ՝ նրան ձուլվելը, որը, մեր կարծիքով, սկզբնական շրջանում անհնարին դալու պատճառով հստակորեն չգիտակցեցին Թուրք պաշտոնյաները[34]: Հրեաներն ուղղակի կարողացան շատ արագ կողմնորոշվել ստեղծված նոր քաղաքական իրավիճակում, հասկացան դեպքերի զարգացման Թուրքական տրամաբանությունը և Թուրքերին միամտացնելով՝ իրենցից հեռացրին հաշվեհարդարի անմիջական վտանգը: Նրանք շարունակեցին նույնպիսի քաղաքականություն վարել նաև հետագայում: Անհնար էր, որ հրեաները տեղեկացված չլինեին կամ նրանց վրա ծանր տպավորություն գործած չլիներ հույների (ներառյալ պատրիարքի) արտաքսումը Թուրքիայից և Թուրքերի կողմից վերջիններիս գույքի ու հարստության բռնագրավումը[35]: Կ. Պոլսում հրեաներն ունեին անտեսական մեծ շահեր և նյութական ահռելի կարողություններ, սակայն չունեին պետություն՝ պատրաստ նրանց ընդունելու փորձության ժամերին: Հետագայում՝ Իսրայել պետության ծննդից կարճ ժամանակ անց, Թուրքահպատակ հրեաների բազմահազարանոց զանգվածներ տեղափոխվեցին իրենց նորաստեղծ երկիրը,

[33] Նույն տեղում:

[34] Այդ դեպքերից նույնիսկ տասնամյակներ անց թրքացած հրեաների թիվը թուրքական հանրապետության ղեկավարության համար, մեղմ ասած, գոհացուցիչ չէր: Ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ այսօր Կ. Պոլսի հրեաների թիվը չի գերազանցում 25 հազարը, որոնցից շատերը չեն խոսում մայրենի լեզվով և իրենց համարում են թուրք:

[35] Կ. Պոլսի հույների գույքի՝ թուրքերի կողմից բռնագրավման և դրա դրդապատճառների մասին մանրամասն տես «Մարմարա» օրաթերթի 1926 թ. մարտի 4-ի 420 համարը, ինչպես նաև Հունաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջը՝ http://www.mfa.gr/www.mfa.gr/en-US/Policy /Geographic+Regions/South-Eastern+Europe/Turkey/International+Obligations +for+Turkey/Greek+Minority/ [այցելությունը կայքէջ կատարվել է 11.10.2008 թ.]:

որը սատար էր կանգնել նաև Թուրքիայում մնացած հրեաների շահերի պաշտպանությանը:

Հրեաների՝ Թրքացմանը պատրաստ լինելու լուրը անակընկալի բերելուց զատ, մեծ ուրախություն պատճառեց Թուրքական կառավարող շրջաններին: Անկարան պատրաստվում էր գրկաբաց ընդունելու հրեական պատվիրակությանը, որն ստանձնելու էր համայնքի՝ Թուրք ազգին ձուլելու քայլերի հաջորդականությունն ու կրելու էր դրանց անմիջական պատասխանատվությունը: Հրեա պատվիրակներն էլ նվազագույն առիթն անգամ բաց չէին թողնում հայտարարելու, թե իրենք Թուրքերի բարեկամը չեն, այլ Թուրք[36]: Նշված իրազարձություններից հետո արդեն անցանկալի դարձած միջէթնիկ բախումներից խուսափելու նպատակով Թուրքական կառավարությունն ստիպված էր հայտարարել, թե տեղի է ունեցել Թյուրիմացություն կամ, ավելի ճիշտ, որոշ պաշտոնյաներ ամեն ինչ չափազանցրել են 300 հրեայի՝ Իսպանիա գաղթելու վերաբերյալ: Իրականում, ինչ-որ մի առիթով, Իսպանիայի իշխանությունները հայտարարել էին, որ հրեաները ցանկացած ժամանակ կարող են մուտք գործել Իսպանիա[37]:

Ի մի բերելով ասվածը՝ պետք է ընդգծել, որ հրեաներն, ի դեմս իրենց հոգևոր առաջնորդի և երևելիների, կարողացան կանխել իրենց դլխին կախված ֆիզիկական ոչնչացման ու Թուրքիայից արտաքսման վտանգը՝ հայտարարելով, թե պատրաստ են անխտիր ընդունել կառավարության բոլոր որոշումները և Թրքանալ: Սակայն 1920–1926 թթ. Կ. Պոլսի հրեա ազգաբնակչության թվի (որն իրականից զգալիորեն քիչ էր ցույց տվել հրեաների ռաբբին՝ նշելով 72 հազար)՝ 1950–1955 թթ. գրեթե կիսով չափ նվազումը կատարվել էր ոչ թե ձուլման, այլ Իսրայել գաղթելու պատճառով. այն է՝ 1920 թ. 110 հազարի փոխարեն 1955 թ. Կ. Պոլսում մնացել էր 55 հազարից ոչ ավելի

[36] «Մարմարա», թիւ 413, 24 Փետրուար, թիւ 419, 3 մարտի 1926:

[37] Նույն տեղում, թիւ 419, 3 Մարտ, 1926:

հրեա: Այդ թիվը չարունակեց նվազել նաև հետագայում՝ 1965-ին կազմելով չուրջ 30 հազար, 1974-ին՝ 15 հազար, 1982-ին՝ 9.5 հազար, 1992-ին՝ 9 հազար, 2002-ին՝ 7.5 հազար, որը գերազանցապես Թուրքիայից դեպի Իսրայել և այլ երկրներ (հիմնականում Եվրոպա և ԱՄՆ) արտագաղթելու հետևանք էր[38]:

Հույների և հրեաների «խնդիրներով զբաղվելու» հետ մեկտեղ քեմալականներն իրենց տեսադաշտից չէին հեռացնում հայերին: Սկզբում կառավարությունը լուրեր տարածեց, թե իբր Կովկասի մահմեդականները քրիստոնյաների կողմից ենթարկվում են բռնաճնշումների և գտնվում են դժնդակ պայմաններում: Այնուհետև «Փոխանակության խառը հանձնաժողովի» Թուրք անդամ Թևֆիկ Ռուշտի բիյը բանակցություններ վարեց Ազգերի լիգայի պատվիրակների և հայերի հարցերով պատասխանատու պաշտոնյաների հետ՝ վերոհիշյալ մահմեդականներին Թուրքիայում, իսկ թուրքահպատակ հայերին՝ Կովկասում վերարտնակեցնելու համար: Այդ «սցենարում», ի դեպ, ծանրակշիռ, եթե ոչ գլխավոր, դերը վերապահված էր Ռուսաստանին՝ առանց նրա իսկ գիտության: Փողհարելով, թե հիշյալ երկրի կառավարությունը հունական կողմին առաջարկել էր Սուխումի 40 հազար հույներին փոխանակել Հունաստանում ապաստանած հայ գաղթականների հետ՝ թուրքական իշխանությունները նպատակահարմար էին գտնում Թուրքիայում մնացած հայերին ևս ուղարկել Հունաստան: Թուրքական լրատվամիջոցները նույնիսկ հաղորդում էին, որ «... ռուսական առաջարկը հեյլէն կառավարության կողմէ նպաստաւոր կերպով ընդունուած ըլլալով, տեղւոյն վրայ բանակցութիւններ կատարելու համար վերջերս Յունաստան մեկնած է Անդրկովկասեան հանրապետութեանց Պոլսոյ ներկայացուցիչ Պ. Շահվէրտեան: Աթէնքի մէջ Պ. Շահվէրտեանի, Ազգերու Դաշնակցութեան ներկայացուցիչ Պ. Զայլտոի, Աթէնքի ռուս ներկայացուցիչ Պ. Սթոեանիֆի և հեյլէն

[38] http://www.geocities.com/omogeneiaen/minorities-jews.html [այցելությունը կայքէջ կատարվել է 11.01.2008 թ.]:

կառավարության միջև այս նպատակով տեղի ունեցող բանակցությունները սկզբունքային համաձայնության մը յանգած են»[39]: Թեպետ այդ օրերին թուրքական կառավարությունը չէր շտապում ո՛չ հերքել, ո՛չ հաստատել թուրքական և հայկական մամուլում հայերի հնարավոր փոխանակության մասին չրջանառվող լուրերը, սակայն որոշակի կարգադրություններ էր արել իր ներքին ու արտաքին գործերի նախարարություններին՝ նախապատրաստվելու իրականացնել հայերին երկրից տեղահանելու ծրագիրը: Անձը հաստատող փաստաթուղթ կամ դրան փոխարինող տեղեկանքներ չէին տրվում այն հայերին, ովքեր կորցրել էին իրենց անձնագրերը, համապատասխան պետական մարմիններին արգելվել էր հայերին Թուրքիայից ելքի թույլտվություն տրամադրել և այլն. «... հրամայուած է թուրքիաբնակ Հայերու արտասահման մեկնումը չի թուլլատրել և փոխանակութեան ենթակայ Հոյներու նման, արտասահմանի համար անցագիր չի տալ անոնց: ... երկար աւտենէ ի վեր արդէն անձնագիր չի տրուիր Հայերուն», – գրում էր «Մարմարա»-ն[40]:

Հունաստանը հավանություն չտվեց թուրքերի ծրագրին: Վերջիններիս մտահղացմանը դեմ էր նաև ԱՄՆ-ը: Պետք է ընդգծել, որ թուրքահպատակ հայերի փոխանակության ծրագիրը հակասում էր Լոզանի պայմանագրի այն կետերին, որոնցով Թուրքիան պարտավորություններ էր ստանձնել կրոնական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի հանդեպ: Մ. Քեմալի կառավարությունն ստիպված էր հերքելու հայերի հնարավոր տեղահանման լուրերը: «Մարմարայի» հաղորդման համաձայն, երբ Կ. Պոլսում ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչ ծովակալ Պրիսթոլը տեղեկացել է թուրքահպատակ հայերի հավանական փոխանակության մասին, կապվել է Թուրքիայի կառավարության համապատասխան մարմինների հետ՝ փորձելով ճշտել չրջանառվող լուրերի հավաստիությունը: Թուրքական իշ-

[39] «Մարմարա», թիւ 6, 5 Նոյեմբեր, 1924:
[40] Նույն տեղում:

խանություններն անհիմն են համարել և հերքել դրանք՝ մեղքը բարդելով լրագրողների վրա[41]: Սակայն 1924 թ. Կ. Պոլսում տեղի էր ունեցել ուշագրավ մի դեպք, որը վկայում է հայերի՝ Թուրքիայից գաղթեցման կառավարության ծրագրի գոյության մասին: Հիշյալ տարում պոլսահայ գրեթե բոլոր վաճառականները միանգամից ու համախմբված ձևով դադարեցրին հարկերի վճարումը՝ համարելով, որ շուտով մեկնելու են երկրից և հետևապես կարիք չկար անտեղի գումարներ վատնելու[42]: Հայերի հնարավոր արտագաղթի մասին իր էջերում ուշագրավ նյութ էր զետեղել նաև Աթենքում հրատարակվող «Նոր օր» թերթը: «Հելլէն քաղաքական շրջանակներու մօտ մեր կատարած դիմումները,– գրում էր պարբերականը,– այն համոզումը գոյացնել կու տան թէ՝ Թրքական դեկավար շրջանակները Թուրքիոյ Հայերուն Կովկասի Իսլամներու հետ փոխանակութեան հաւանականութիւնը միշտ աչքի առաջ ունին»[43]: Ի լրումն այդ ամենի՝ թերթը հայտնում էր, որ «Տեղիս (Աթենքի – Վ. Ղ.) գերմանական հաւաստի աղբիւրներուն ստացած տեղեկութիւնները եւս կը հաստատեն այս լուրը եւ կ՛աւելցնեն նոյնիսկ որ այդ լուրին Թրքական պետական շրջանակներուն կողմէ հերքուելուն պատճառը, տակաւին խնդրին ուսումնասիրութեան վերջ չգտնելուն մէջ կը կայանայ»[44]:

Վկայակոչելով Կ. Պոլսի հրեական համայնքի օրինակը՝ կարելի է հաստատապես պնդել, որ քեմալական կառավարությունը Թուրք և միջազգային հանրությանը նախ ներկայացնում էր իրեն ձեռնտու հորինվածքներ, շրջանառության մեջ դնում կեղծ լուրեր և ունկնդրում դրանց հետևանքով առաջացող հասարակական արձագանքները, ինչպես նաև գնահատում օտարերկրյա պետությունների վերաբերմունքը: Այդ արձագանքների ուժգնության ու պետությունների վերաբերմունքին համապատաս-

[41] «Մարմարա», թիւ 6, 5 Նոյեմբեր, 1924:
[42] Նույն տեղում:
[43] Նույն տեղում:
[44] Նույն տեղում:

խան՝ Թուրքական իշխանությունները կայացնում էին իրենց վերջնական որոշումները և նոր միայն այդ մասին հայտնում հանրությանը: Կ. Պոլսի հայ համայնքի պարագայում Մ. Քեմալի կառավարությունն այս անգամ չկարողացավ անցնել բացահայտ ոտնձգությունների և Թուրքիայի Հանրապետությունից հեռացնել հայության վերջին բեկորներին, որին դեմ էին նաև Հունաստանն ու ԱՄՆ-ը: Հայերի՝ որպես ազգային-կրոնական փոքրամասնության տեղահանումը Թուրքիայից, ինչպես արդեն նշվեց, կոպտորեն հակասում էր Լոզանի պայմանագրում ամրագրված կետերին: Այս հարցում Թուրքերի հաջողությունն անպատվաբեր ապտակ կլիներ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի երեսին, որոնք նշված պայմանագրի երրորդ գլխի (Փոքրամասնությունների պաշտպանություն) 44-րդ կետի համաձայն՝ հանդիսանում էին Թուրքիայի ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքների իրացման երաշխավորը և նշված տարիներին արգելք դարձան քեմալականների՝ Թուրքիան հայերից դատարկելու ծրագրին[45]:

Թուրքական իշխանություններն ստիպված էին անցնելու այլ մարտավարության, որի առանցքում էր ազգային-կրոնական հաստատությունների գործունեության համար ավելորդ բարդությունների ստեղծումը, էթնիկ բախումների հրահրումը, հայերի նկատմամբ դատարանների և օրինապահ մարմինների ընդգծված խտրական վերաբերմունքը, զավառահայերի՝ Կ. Պոլիս մուտքի և այդտեղից դեպի գավառներ հայ հոգևորականների ու այլ նշանավոր անձանց ուղևորությունների խոչընդոտումը և այլն:

Թուրքիայի Հանրապետության գոյության առաջին իսկ տարիներից Թրքացման քաղաքականությունը լուրջ վտանգի տակ էր դրել նաև հայկական դպրոցների գոյությունն ու հայ մանուկների հայեցի կրթությունը: «Մարմարան» հաղորդում է, որ 1925 թ. ավելացվել են ոչ թուրքական դպրոցներում դասավանդվող թուրքերենի դասաժամերը՝ շաբաթական չորս ժամից հասնելով վեցի: Թուրքական կառավարությունը ազգային փոք-

[45] Christian minorities of Turkey, p. 86.

բամասնություններին պատկանող դպրոցներում դասավանդող թուրք ուսուցիչներին բառացիորեն հորդորում էր հետևյալը. «Ձեր պարտականությունն է թրքությունը ներշնչել տղոց (ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաներին – Վ. Ղ.), եւ թուրքերենը սիրցնել»[46]: Ավելի ճնշող էր Թուրքիայի կառավարության հաջորդ որոշումը, որի համաձայն՝ թուրքական և ազգային փոքրամասնություններին պատկանող դպրոցներում սովորող երեխաները չէին փոխադրվելու հաջորդ դասարան, եթե թուրքերեն լեզվից ստանային անբավարար գնահատականներ[47]: Հարկ է նշել, որ Լոզանի պայմանագրի 40 և 41-րդ կետերով երաշխավորվել էր Թուրքիայի ոչ մահմեդական փոքրամասնությունների՝ սեփական դպրոցներ ունենալու և իրենց երեխաներին նախընտրելի լեզվով կրթության տալու իրավունքը[48]:

Թուրքիայի Հանրապետության հիմնադրման տարիներին տուժեց նաև հայոց պատրիարքարանը: Այն 1922–1927 թթ. դտնվում էր տեղապահության շրջանում: Թեպետ ազգային այդ մարմինը զրկվեց նախկինում Կ. Պոլսի հայ համայնքի վրա ունեցած աշխարհիկ իշխանությունից, սակայն ջանք չէր խնայում Մեծ եղեռնը վերապրած հայերի ազգային-հոգևոր կյանքը վերակենդանացնելու, վերակազմակերպելու ուղղությամբ:

Ամփոփելով ասվածը՝ առավել քան կարևոր է նշել, որ Թուրքիայի Հանրապետության իշխանությունները կոպտորեն խախտել են Լոզանի պայմանագրի այն կետերը, որոնցով երաշխավորվում էին Թուրքահպատակ ոչ մահմեդական փոքրամասնությունների՝ հայերի, հույների և հրեաների իրավունքները: Ավելին, Թուրքիայի Հանրապետության հիմնադիրներն ազգությամբ ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ չարունակել են վարել իրենց նախորդների ազգայնամոլական քաղաքականությունը՝ Թուրքիան թուրքերի համար է: Ջհամակերպվողներն ստիպված էին արտագաղթել երկրից:

[46] «Մարմարա», թիւ 198, 16 Յունիս, 1925:
[47] Նույն տեղում, թիւ 210, 30 Յունիս, 1925:
[48] Christian minorities of Turkey, p. 85.

ВАГРАМ КАРАХАНЯН
ИИ НАН РА

ПОЗИЦИЯ ВЛАСТЕЙ ТУРЕЦКОЙ РЕСПУБЛИКИ ПО ОТНОШЕНИЮ ТУРЕЦКОПОДДАННЫХ АРМЯН, ГРЕКОВ И ЕВРЕЕВ В 1923-1926 ГГ.

РЕЗЮМЕ

После геноцида армянского народа незначительная часть западных армян, проживающих в Турции, на Лозаннской конференции (20 ноября 1922 – 24 июля 1923 гг.) была оформлена как религиозное меньшинство. Согласно статьям Лозанского договора в Турции религиозными меньшинствами считались также греки и евреи. Учитывая тот факт, что по пунктам третьего параграфа вышеупомянутого договора были определены обязанности турецкоподданных армян, греков и евреев, а так же защищены их права как граждан и религиозных меньшинств Турции, особо важным вопросом является осведомленность о ситуации национальных меньшинств в новом турецком государстве и о позиции властей по отношению к ним. С помощью изучения разных источников и прессы становится ясно, что правительство основателя новой Турции М. Кемаля буквально после заключения Лозаннского договора начало осуществлять политику туркофикации нетурецких народов страны. Тот, кто не хотел изменить свою национальность был вынужден покинуть Турецкую республику. По причине, главным образом, национальной дискриминации с 1923 г. из Турции (в основном из Стамбула) вновь начались массовые эмиграции армян, греков и евреев.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՊՅԱՏԻԳՈՐՍԿԻ, ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 1920–1930-ԱԿԱՆ ԹԹ.

1920-ական թթ. Խորհրդային Ռուսաստանում հայ գրական-գեղարվեստական կյանքի ոլորտում լուրջ դերակատարություն են ունեցել նախ Պյատիգորսկի, ապա նաև Մոսկվայի գրական խմբակցությունները:

Պյատիգորսկի Հայ Գրական-գեղարվեստական խմբակցությունն ու նրա «Ալիք» գրական ժողովածուն ծնունդ են առել Ռուսաստանի, և մասնավորաբար, Հյուսիսային Կովկասի համար դժվարին հասարակական-քաղաքական ժամանակաշրջանում: Դա քաղաքացիական պատերազմի ամենաթեժ շրջանն էր՝ 1919 թվականին. «Տեղումս, այս տարւայ գարնան սկզբներում, հիմնուեց Պեատիգորսկի Հայ Գրական-Գեղարուեստական Խմբակցութիւնը, որն իրեն նպատակ է դրել՝ համախմբել իր շուրջը գեղարուեստի զանազան ճիւղերում գործող գաղութիս փոքրաթիւ երիտասարդներին, որոնք իրենց համեստ ոյժերով պիտի սպասաւորեն հայրենի գեղարուեստին»[1]: Այս նպատակով էլ Գրական-գեղարվեստական խմբակցությունը գործնական քայլեր է իրականացրել թատերական և երաժշտական ասպարեզներում՝ հիմնելով համապատասխան սեկցիաներ, իսկ ավելի ուշ հրատարակել գրական սեկցիայի «Ալիք» ժողովածուն: Ծնունդ առնելով բարդ ժամանակաշրջանում և հայրենիքից դուրս՝ «Ալիք» գրական ժողովածուի հրատարակումը լուրջ ծախսերի հետ էր կապված: Այն տպագրվում էր Պյատիգորսկի տպարանատեր Գևորգ Սուքիասյանցի տպարանում, ով մեծապես աջակցում էր այդ գործին: Այս առթիվ ժողովածուի մեջ ընդգծվում է. «գրական որևէ հանդէսի հրատարակութիւնը հայրենի երկրից դուրս՝ գաղութներում

[1] «Ալիք», գիրք 1, Պյատիգորսկ, 1919, էջ 3:

կրկնակի դժվարությունների հետ է կապված: Ամենից առաջ նիւթերի կողմից. Հանքային Ջրերի հայ գաղութում պրոֆեսիոնալ գրողներ չկան, որպէսզի կարողանայինք աւելի ճոխացնել մեր ժողովածուի էջերը արժէքաւոր գրուածքներով»[2]:

Խմբակցությունն իր խոսքում, որը տպագրվել է որպես ժողովածուի նախաբան, ընդգծում էր. «ժամանակակից թանգութիւնը մեզ երբէք յուսահատութեան դռան չէ կանգնեցրել. մեզ մտավախութիւն պատճառողը եղել է գաղութի վերաբերմունքը դէպի մեր՝ մեծ ծախսեր կլանող գործը... Ի հարկէ, մենք այնքան էլ լաւատես հաւակնութիւն չունինք մեր այս ժողովածուի վերաբերմամբ, բայց, յամենայն դէպս, մեզ թւում է, որ նա որոշ հետաքրքրութիւն ներկայացնում է իրանից»[3]:

Ինչպես պարզորոշ երևում է վերոհիշյալ տողերից, խմբագրությունն իրատեսորեն էր գնահատում «Ալիք»-ի հնարավորությունները, սակայն լի էր վճռականությամբ սկսված գործի հաջողության նկատմամբ «մանաւանդ քաղաքացիական այս պատերազմի ընթացքում, և երբ որ այդ դժւար ուղին հարթւած է, ինքնին դա ոգևորութեան մի աղբիւր է մեր ապագայ աւելի արգասաւոր գործունէութեան»[4]:

«Ալիք»-ի խմբագրությունն իր կողմից նախապես աշխատակիցներին մատնանշել էր իրենց գործունեության մեջ կատարյալ ազատ և որևէ սահմանափակության մեջ չդնելու մասին՝ սկսած ուղղագրությունից մինչև ոճը, դարձվածքները և այլն: Նպատակը, գուցեև, արդարացված էր, քանի որ նորամուծությունների վերաբերյալ դգույշ մոտեցում էր ցուցաբերվում:

«Ալիք» ժողովածուն բաղկացած էր երկու բաժիններից՝ գրական և բանասիրական, ուր իրենց գրվածքներով հանդես էին գալիս բանաստեղծներ Վահրամ Ջիթունին, Լևոն Բզնունին, Ք. Բաշինջաղյանը, Գ. Երկունին, Ար. Հովհաննիսյանը, արձա-

[2] «Ալիք», գիրք 1, Պյատիգորսկ, 1919, էջ 3:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

կագիրներ Մխիթար Հարությունյանը, Ե. Տեր-Մարտիրոսյանը, Ն. Տիրոսենցը և այլք: Գրական այս ուժերի մասնակցությամբ էլ «Ալիք» ժողովածուն որոշակիորեն իր չուրջը համախմբեց Հյուսիսային Կովկասի (Եկատերինոդար, Արմավիր, Եսենտուկի, Ռոմանովսկի և այլն) հայ գրական ուժերը:

Ակտիվ գործունեություն է ծավալել գրական խմբակցության թատերական սեկցիան: Գրական-գեղարվեստական խմբակցությունը 1919 թ. դեկտեմբերի 21-ին կազմակերպել է ներկայացում. «Թատերական սեկցիան այդ օրը խաղաց «Նաւթի ֆանտան» վոդևիլը...»[5]:

1920 թ. հունվարի 12-ին տեղի է ունենում խմբակցության գրական չորրորդ հավաքը՝ նվիրված «Ալիք» ժողովածուի առաջին գրքույկին: Այս հավաքույթի ժամանակ ունկնդրության են արժանանում Ե. Տեր-Մարտիրոսյանի «Մենություն» գրվածքը, որը ներկայացնում էր գյուղական տառապող ուսուցչի հոգեկան ապրումները և Վ. Զիթունու «Խաչված երազներ» ու «Որպես երկու մանուկներ» աշխատանքները:

1920 թ. հուվարի 26-ի Գրական-գեղարվեստական խմբակցության ընդհանուր ժողովը, լսելով գործունեության հաշվետվությունը, որոշում է կայացնում «Ալիք» ժողովածուի երկրորդ գրքույկի հրատարակման մասին:

Պետք է նկատել, որ Պյատիգորսկի Գրական-գեղարվեստական խմբակցությունը նշել է նաև հայ անվանի գրական և ազգային գործիչների հոբելյանները: Այսպես՝ «Ալիք»-ի առաջին գրքույկում անդրադարձ-հոդված է գրվել Հ. Թումանյանի 50-ամյակի առթիվ, իսկ 1920 թ. ապրիլի 4-ին Խրիմյան Հայրիկի ծննդյան 100-ամյակի առթիվ ծրագրվել էր հրատարակել միօրյա թերթ՝ ամբողջովին նվիրված հոբելյարին[6]: Գրական-գեղարվեստական խմբակցության կազմակերպած միջոցառումները նպատակ են հետապնդել նաև ապահովել նյութական բազա, նվիրատվություններ, որոնց մասին տվյալները զետեղված են ժողովածուներում: Արդեն 1920 թ. սկզբին Հյուսիսային Կովկասը դառնում է քաղաքացիական պատերազմի հիմնական թատերաբեմ: Արգելակվում է նաև Պյատիգորսկի խմբակցության գործունեությանը. «Փետրուարի 15-ին և 22-ին նշանակած հերթական հավաքոյթները չկայացան քաղաքական իրադարձությունների պատճառով»[7]:

Պյատիգորսկի Գրական-գեղարվեստական խմբակցության հետագա գործունեության և «Ալիք» ժողովածուի հրատարակության վերաբերյալ տվյալները բացակայում են: Քաղաքացիական պատերազմի այս վճռական փուլում փակվեցին մեծ թվով հայ պարբերականներ և համայնքային-հասարակական կառույցներ: Այս ճակատագրին արժանացավ նաև գրական այս խմբակը:

Ջնայած իր կարճատև գործունեությանը՝ Պյատիգորսկի Հայ Գրական-գեղարվեստական խմբակցությանը որոշ չափով հաջողվեց համախմբել Հյուսիսային Կովկասի հայ գրական ուժերը, անհայտությունից հանել նրանց, կազմակերպել հրատարակություն և հրամցնել հասարակությանը:

Խորհրդային տարիներին նշանակալի դերակատարություն ունեցավ Մոսկվայում հիմնված հայ գրական-գեղարվեստական «Մուրճ և մանգաղ» խմբակցությունը, որը 1920-ական թվականներին դարձավ Ռուսաստանում հայ գրական-գեղարվեստական մտքի կենտրոնը. «1922 թ. գարնանը մի խումբ հայ երիտասարդ գրականագէտների մէջ միտք յղացաւ համախմբել գրականութեան ու արուեստին նուիրուած նոր ու ակնառու ուժերին»[8]: Խմբակի հիմնադիր և նոր անդամների 1922 թ. մայիսի 13-ի ընդհանուր ժողովում ընտրվում է ժամանակավոր վարչություն, իսկ օգոստոսի 4-ին կայացած ընդհանուր ժողովում ժամանակավոր վարչության փոխարեն հաստատվում է նոր վարչություն և

[5] «Ալիք», գիրք 2, Պյատիգորսկ, 1920, էջ 61:
[6] Նույն տեղում, էջ 62:

[7] Նույն տեղում:
[8] «Քուրա», Մոսկվա, 1923, N 1, էջ 13:

խմբագրական կոլեգիա: Վերջինիս գործունեությունն ամփոփվել է ներքին հավաքույթների, հրապարակային դասախոսությունների և երեկույթների հրատարակչական գործունեության մեջ:

Գրական խմբակի աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերել Գուրգեն Հայկունին, Ա. Արշարունին, Ե. Տեր-Մարտիրոսյանը, Շամունցը, Աբովը և ուրիշներ: Հասարակական երեկույթների մասնակիցներն են դարձել տեղի հայ երաժշտական խմբակի անդամները, դրամատիկական ստուդիայի ուսանողները, ռուս պրոլետգրողների «Դարբնոց» ("Кузница") խմբակցությունը և այլք: Դասախոսություններով հանդես են եկել՝ Գ. Հայկունին («Երեքի» դեկլարացիան և Զարենցի ստեղծագործությունները»), Հ. Գյուլի-Քևխյանը («Պրոլետարական պոեզիան») և այլն: 1922 թ. դեկտեմբերի 30-ին ի պատիվ համառուսական 10-րդ համագումարի հայ պատգամավորների կազմակերպված երեկույթին մասնակցել են Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը և Կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանը:

Գրական խմբակցության հրատարակչական գործը, հակառակ հոռետես տրամադրություններին, գլուխ բերվեց մի փոքր ավելի ուշ. «Նիլթական միջոցների բացակայությիւնը, տպագրական, տէխնիկական ոչ բաւարար պայմանները, և այլն, այս ամենը, սակայն, չկասեցրին սկսւած գեղեցիկ գործը»[9]:

Խորհրդային իշխանության առաջին իսկ տարիներից խորհրդահայ տարբեր համայնքներում սկսվեցին հրատարակվել պարբերականներ, այդ թվում՝ գրական հանդեսներ, ուր ամփոփվում էին հայ գրողների և ստեղծագործ ուժերի գրվածքները: Այդպիսի հրատարակություններից էր գրական-գեղարվեստական և ստիրական օրգան «Քուրա»-ն, որը հրատարակվում էր

[9] «Քուրա», Մոսկվա, 1923, N 1, էջ 15:

Մոսկվայում և հանդիսանում «Մուրճ և մանգաղ» գրական խմբակի հանդեսը:

«Քուրա» հանդեսը կոչված էր համախմբելու պրոլետարական ստեղծագործական մտքի փոքրաթիվ ուժերը, ապահովելու պրոլետարական մտավորականության և մշակութային կյանքի զարգացումը. «Պրօլէտարական խաւերի ծնունդ-մտաւոր ուժերի բեղմնաւորումն և զարգացումը երաշխիք են, անշուշտ, որ վաղը բանւոր դասակարգի առաջ պիտի բացւին ու ծաղկին գիտութեան և գեղարւեստի նորանոր հորիզոններ...»[10]: «Քուրա» հանդեսը, որի առաջին համարը տպագրվել է 1923 թ. մարտին, խմբագրում էր Գ. Հայկունին: Հանդեսի առաջին համարի առաջաբանում Գ. Հայկունին ներկայացնում էր հայ պրոլետգրողների առջև ծառացած խնդիրը, այն է՝ հանդես գալ պրոլետարական կուլտուրայի առաջապահ դիրքերում, դառնալ հայ բանվորության գինակիցը:

«Մուրճ և մանգաղ» խմբակցության համանուն հրատարակչությունը, բացի մի շարք գրքերի լույսընծայումից, զբաղվել է նաև թարգմանություններով՝ հայ ընթերցողին ծանոթացնելով ռուսական և համաշխարհային նորագույն, հեղափոխական գրականության հետ: Այս հրատարակչությունում տպագրվել է Գորկու «Մայրը», Պլեխանովի «Գեղարվեստը» և այլ աշխատություններ: Հրատարակչությունն իր նպատակներից մեկն էլ տեսնում էր տաղանդավոր, երիտասարդ սկսնակներին խրախուսալու, չնորհալի գրական ուժերին անհայտությունից հրապարակ հանելու մեջ, ովքեր որոշակի անցում էին կատարել դեպի պրոլետարական գրականություն:

Գրական-գեղարվեստական խմբակցությունը, ոչ առանց հպարտության, ընդգծում էր՝ բարենպաստ պայմանների դեպքում կարելի էր անել կրկնակին. «Մօսկվայի Գրակ.-գեղ. խմբակցութեան «Մուրճ և մանգաղ» հրատարակչութիւնը իր

[10] Նույն տեղում, էջ 1:

բովանդակալից ու սիրուն գրքերով արդէն բռնել է իր հանրօգուտ ու պատուաւոր տեղը հայ հրատարակչութեան պատմութեան մէջ: Եւ ոչ մի անաչառ պատմագիր այլևս անզօր է լուռ թեամբ անցնելու հայ գրականութեան մէջ այդ փայլուն շինարարական ու ստեղծագործական գործի վրայից: Ամբողջ Ռուսաստանի ու Կովկասի հայ իրականութեան մէջ, չհաշուած պետական հրատարակչութիւնը, նա այսօր առաջինն ու միակն է»[11]: Այնուամենայնիվ, խմբակցությունն իրավացիորեն գտնում էր, որ ամեն ինչ կատարյալ չէ, ուստի կուսակցական, հասարակական և գրական համապատասխան շրջանակներին կոչ էր անում զորավիգ հանդիսանալ այդ կարևոր ձեռնարկին:

Շարունակելով իր գրական գործունեությունը՝ Մոսկվայի Հայ Գրական-գեղարվեստական խմբակցությունը «Քուրա»-ի 2-րդ համարը լույս է ընծայում 1923 թ. հոկտեմբեր ամսին: Վերոհիշյալ համարում, բացի գեղարվեստական բաժնից, տպագրված նյութերն ունեին տեսական և քննադատական բնույթ, որն առավել էր արժևորում հանդեսը: Այս համարում Հայ Գրական-գեղարվեստական խմբակցությանն ուղղված ողջույնի խոսքով հանդես է եկել ռուս պրոլետգրողների «Դարբնոց» խումբը՝ հայ գրողների «Մուրճ և մանգաղ» խմբակցությանը համարելով ազգային փոքրամասնությունների միջև գործող փայլուն ու գործունյա գրական խմբերից մեկը[12]: «Քուրա»-ի հոկտեմբերի համարը ներկայացված էր գեղարվեստական, տեսական և քննադատական բաժիններով, ուր հանդես են եկել նոր գրական ուժեր (Մ. Դարբինյան, Բ. Սահակյան, Հ. Խաչանյան և այլոք), արծարծվել են տեսական այնպիսի թեմաներ ու հոդվածներ, ինչպիսիք են՝ «Պրոլետարական գրականություն» (Ի. Ֆիլիպչենկո՝ «Դարնոց» խմբ. նախագահ), «Գեղարվեստի մասին» (Վ. Վանդեկ), «Արդի գեղարվեստական գրականությունը Հայաստանում» (Դր. Տեր-Սիմոնյան) և այլն:

[11] Նույն տեղում, էջ 15:
[12] Նույն տեղում, 1923, N 2, էջ 51:

Հետաքրքրական է, որ արդեն 1928 թ. հոկտեմբերին հրատարակված «Քուրա»-ն ներկայանում էր որպես հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական, գիտական և քննադատական ալմանախ և ներկայացնում Մոսկվայի՝ Խորհրդային Հայաստանի կուլտուրայի տան հրատարակչությունը:

1928 թ. հոկտեմբերին «Քուրա»-ի հրատարակության վերակման առթիվ խմբագրությունը կրկին արժևորում է այն նպատակները, ինչը դրված էր դեռևս 1923 թ. «Քուրան վորոշ չափով պիտի կարողանա իր վրա առնել Р.С.Ф.С.Р.-ում ապրող հարյուր հազարավոր հայ բանվորա-գյուղացիական մասսաների կուլտուրական պահանջները բավարարելու մի մասը: Քուրան՝ պիտի իրագործե չրջանիս կուլտուրական անհատ ուժերի կամ խմբավորումների ավելի լայն ու կուռ համախմբումը պրակտիկ, ստեղծագործական հողի վրա»[13]:

Փոքր-ինչ վերակառուցված «Քուրա»-ն իր առաքելությունն էր դիտում պարբերական ալմանախներով հրապարակ հանել նոր ու մնայուն երկեր, բարոյապես և նյութապես խրախուսել վաստակավոր հայ գրականագետներին. «Քուրան՝ քաղաքական-հասարակական, գիտական, գրական-գեղարվեստական և քննադատական ալմանախներով պիտի բավարարե չրջանիս հայ մասսաների կուլտուրական լայն պահանջների նվազագույնը»[14]: «Քուրա»-ն վերահաստատում էր իր գործունեությունը՝ համաշխարհային հեղափոխական գրականության նմուշների թարգմանության ուղղությամբ ձեռնարկումները և դրանք դարձնելու լայն խավերի սեփականություն: Այս ալմանախում տեղ էր գտել նաև Մոսկվայի Հայ ուսանող Ս. Ալիխանյանի «Հայ ուսանողության անելիքները» հոդվածը, ուր բացահայտվում էր նոր իրողության պայմաններում հայ ուսանողությանն առաջադրվող խնդիրները: Ընդգծելով, որ Մոսկվան և Պետերբուրգը հայ մտավորականության և հեղափոխական գործիչների

[13] Նույն տեղում, 1928, N 3, էջ 10:
[14] Նույն տեղում:

համար եղել են կրթական դարբնոց, հոդվածում առանձնացվում էին ժամանակի պահանջներից բխող հետևյալ խնդիրները. «Հայ ուսանողը, լինի այն կուսակցական, բանվոր թե ինտելլիգենտ, մոռացության չպիտի տա այն հանգամանքը, վոր յեթե ինքը չորս հազար վերստ տարածություն կտրելով՝ ուղարկվել է այստեղ սովորելու, նա պիտի սովորի միայն այն յերկրի համար, վորը նրան ուղարկել է: Դեպքեր են լինում, յերբ Հայաստանից թոշակ ստացող ուսանողը բարձրագույն դպրոց ավարտելով՝ հետ չի գնում աշխատելու»[15]:

Այսպիսով, Մոսկվայի Հայ Գրական-գեղարվեստական խմբակցությունն ու նրա «Հուրա» հանդեսը լուրջ աշխուժություն մտցրեցին ոչ միայն Մոսկվայի Հայ մտավոր կյանքում, այլև դարձան այն օղակը, որի շուրջը համախմբվեցին գրական-գիտական նշանակալի ուժեր: Այս դրական կողմերով հանդերձ՝ «Հուրա»-ն ներկայացնում և քարոզում էր հայ պրոլետարական գրականությունը՝ գտնվելով ժամանակի գաղափարական-քաղաքական հայացքների ներքո, ուր, սակայն, բացակայում էին գրական, հասարակական, գաղափարական ազատությունն ու բազմակարծությունը: Այնուհանդերձ, այդ հանգամանքը չի նսեմացնում «Հուրա»-ի արժեքն ու կարևորությունը, որը 1920-ական թթ. կարողացավ ուղղություն տալ Մոսկվայի Հայկական գրական կյանքին:

ՌԱՊՀ Հայ գրական-հասարակական կյանքում 1930-ական թթ. առանձնահատուկ կարևորություն և հետաքրքրություն է ներկայացնում Դոնի խորհրդային գրողների միության հայկական սեկցիան:

Դեռևս 1932 թ. ապրիլի 13-ին Համկ(բ)Կ ԿԿ որոշումով վերացվեց ՌԱՊՊ-ը (Ռուսաստանի պրոլետգրողների կազմակերպություն), որն ուղղակիորեն ցույց տվեց խորհրդային իշխանության բացասական վերաբերմունքը գրական ասպարեզում

[15] Նույն տեղում, էջ 161:

առկա փոքր-ինչ ազատ ստեղծագործական աշխատանքի նկատմամբ. «գրական այդ կազմակերպությունն ու շատ ուրիշ գրական կազմակերպություններ ոչ մի առնչություն չունեն խորհրդային գրականության հետ և արգելակում են նրա լիարյուն զարգացումը: Կուսակցական կենտկոմի նույն որոշմամբ 1932 թվին կազմակերպվեց խորհրդային գրողների միությունը, որը և հանդիսացավ այն միակ կազմակերպությունը, որտեղ հավաքվեցին խորհրդային գրականության լավագույն ուժերը»[16]: Դոնի հայ գրական ուժերը նույնպես անհիմն կերպով ենթարկվեցին հետապնդումների և «մերկացումների», որը 1930-ական թթ. տեղ գտավ խորհրդային գրական շրջանակներում: Առավել մեծ չափերով այդ հետապնդումները շարունակվեցին սուր բռնաճնշումների փուլում՝ 1937 թ., որին լայնորեն անդրադարձել է ժամանակի հայկական կուսակցական մամուլը: Այսպես՝ «Բոլշևիկ»-ը 1937 թ. հունիսի 6-ի համարում «Բոլշևիկյան անխնա քննադատությամբ մերկացնել թշնամուն» հոդվածում լուսաբանում է Դոնի Ռոստովի խորհրդային գրողների եռօրյա ժողովի արդյունքները. «3 օր անընդհատ գրողների և ընթերցողների ակտիվը քննարկում եր տրոցկիստական-ֆաշիստական գործակալության լրտեսական, դիվերսիոն, վնասարարական գործողությունը խորհրդային գրականության մեջ: Գրողների ժողովը պարզորոշ կերպով յերևան հանեց խորհրդային ժողովրդի այդ թշնամիների գործունեության ամբողջ էությունը առանձնապես մեր յերկրամասում»[17]:

Դոնի երկրամասի խորհրդային գրողների տեղական կառույցի հակախորհրդային գործելակերպի և գրաքննադատության բացակայության մեղավորությունը ժողովի մասնակիցները ղրեցին տեղի ղեկավար կազմի վրա, որոնք մեծապես չեղել և սխալ ճանապարհի վրա էին դրել երիտասարդ ուժերին: Դոնի երկրամասում հակախորհրդային գործունեություն ծավալելու

[16] «Բոլշևիկ», Դոնի Ռոստով, 1937, N 54, էջ 3:
[17] Նույն տեղում:

մեղադրանքով ժողովը մերկացրել էր հայագիտի մի շարք ստեղծագործողների. «Զակրուտկինը (մանկավարժական ինստիտուտ) ժողովականների առաջ պարզեց Լենինի (քննադատ) կապերը ժողովրդի թշնամի Թաթուլովի հետ, թե ինչպես նա հրատարակված պուշկինյան ժողովածվում քողարկված կերպով տեղավորել էր լրտես Թաթուլովի վնասարար հոդվածը: Թաթուլովի հակախորհրդային գործունեության փաստերի շարանում հիշատակվեց և այն, թե ինչպես իր մերկացման նախորյակում, պրոլետարական մեծագույն բանաստեղծ Մայակովսկու մասին արած զեկուցման մեջ նա աշխատել և կեղտոտել Մայակովսկու անունը, նսեմացնել նրա պրոլետարական պոեզիայի առաջնակարգ դերը: Ժողովում պարզվեց ժողովրդի թշնամիներ Վարդանյանի, Գոգոբերիձեյի և ուրիշների քողարկված վնասարարական աշխատանքը, յերբ նրանք ամեն կերպ աշխատում էին իրենց ազդեցության տակ առնել մեր յերիտասարդ, անգամ և լավ գրողներին»[18]:

Հետաքրքրական է, որ վերոհիշյալ ժողովում քննադատության են արժանացել ազգային փոքրամասնությունների շրջանում գրական կադրերի պատրաստման աշխատանքները, քննադատության և ինքնաքննադատության պակասը, որը հնարավորություն կբացեր վեր հանել թերացումները և չշեղվել ուղուց՝ «անաղարտորեն» իրականացնելու համար կուսակցության գլխավոր գիծը խորհրդային գրականության մեջ:

«Բոլշևիկ»-ը հետագա համարներում ևս անդրադառնում է խորհրդային գրական այս կառույցի շրջանակներում տարվող «զտումներին», որին զոհ էին դառնում անգամ իրենք՝ «մերկացնողները»: Այսպես՝ 1937 թ. հոկտեմբերի 18-ին «Բոլշևիկ»-ն արտատպում է երկրամասի կենտրոնական մամուլում՝ «Մոլոտ»-ում, հոկտեմբերի 15-ին Հ. Ղուկասյանի տպագրած ««Գրականագետների» դիմակի տակ» հոդվածը, ուր «բացահայտված» էր երկրամասի հակախորհրդային հայ գրական խմբակն ու նրա

[18] «Բոլշևիկ», Դոնի Ռոստով, 1937, N 54, էջ 3:

թշնամական գործունեությունը, որի համար իրրև թե տանիք էր ծառայել նաև հայալեզու կուսակցական օրգան «Բոլշևիկ»-ը: Վերոնշյալ հոդվածը սկսվում էր հետևյալ տողերով. «Ժողովրդի թշնամիները, բուրժուական նացիոնալիստները, քիչ վնաս չհասցրին յերկրամասի հայկական կուլտուրային և գրականությանը: Այժմ մերկացված լրտես և դիվերսանտ Ավագովը, որը յերկար ժամանակ գործում էր յերկրային (այժմ մարզային) «Բոլշևիկ» թերթում, անց էր կացնում բացահայտ վնասարարական հակահեղափոխական գիծ: Մաքսանենգությամբ քաշ տալով հակահեղափոխական-տրոցկիստական և ազգայնական «գաղափարներ», Ավագովն ամեն բան անում էր, վորպեսզի վիժեցներ յերկրամասի բազմահազար հայ բնակչության կոմունիստական լուսավորությունը և դաստիարակությունը: ... Ավագովը մերկացված և անվնաս է դարձված, բայց նրա արմատները դեռ մինչև վերջ արմատախիլ չեն արված»[19]:

«Մոլոտ»-ում հանդես եկող Հ. Ղուկասյանը նույն պիտակավորմամբ մեղադրական է ներկայացնում «Բոլշևիկ»-ի մեկ այլ պատասխանատու աշխատակցի՝ Արսեն Հովհաննիսյանին, որին անվանում է անսկզբունք և բարոյազուրկ, իբրեն «պռեստ» հորջորջող անճնավորություն: Ա. Հովհաննիսյանի ծանոթությունը Դոնի հայ գրական և քննադատական այն շրջանակի հետ, որոնց թվում էին Թաթուլովն ու Վարդանյանը, նրան դասում էր հակաժողովրդական-թշնամական գրական ճամբարի շարքը. «Հայտնի չե, որինակ, վոր տրոցկիստական դիվերսանտ Վարդանյանը, վորը գործում եր Տագանրոգում, շատ հետաքրքրվում եր Հովհաննիսյանի անճնավորությամբ: Ժողովրդի թշնամի Թաթուլովի հետ միասին Տագանրոգում նա կազմակերպեց այդ խորամանկի «ստեղծագործական» յերեկույթները... Իրականում Հովհաննիսյանի ամբողջ ստեղծագործությունը— դա բացահայտ հակահեղափոխական-տրոցկիստական մաքսանենգություն է:

[19] Նույն տեղում, N 100, էջ 2:

Նա ունի մի քանի «գրական աշխատություններ»: Այդ գրքերում քաշ և տրվում զզվելի ֆաշիստական զրպարտություն խորհրդային ժողովրդի և մեր յերկրի դեմ»[20]: Այնուհետև հոդվածում մեջտեղ էր բերվում Ա. Հովհաննիսյանի ստեղծագործությունները ու անդրադարձ կատարվում դրանցում թույլ տրված «չեղումներին»:

Հակահեղափոխական գրական գործունեության մեղադրական էր ներկայացվում «Բոլշևիկ»-ի մեկ այլ աշխատակից և Դոնի Ռոստովի մանկավարժական ինստիտուտի դասախոս Եգոր Բարսեղյանին. ««Բոլշևիկի» խմբագրության մոտ չահատակում և մի ուրիշ «գրականագետ», ոմն Յեգոր Բարսեղյան, իր սեփական խոստովանությամբ, Հովհաննիսյանի «անսխալելի բարեկամը»: Այս «պրոֆեսորը» զրպարտիչ յելույթներում կուսակցության, խորհրդային պետության և կոլխոզնիկների դեմ ոչ միայն հետ չի մնում, այլ նույն իսկ գերազանցում է իր գլխավորից Հովհաննիսյանին: 1934 թվին նա լույս է ընծայում «Ունեվոր կյանքի ուղին» բրոշյուրը»[21]: Ե. Բարսեղյանի վերոնշյալ աշխատությունը դիտվում էր որպես բացահայտ սադրանք՝ ուղղված լենինիզմի և կոլտնտեսային կարգերի դեմ. «Բրոշյուրում անամոթաբար և դիտավորյալ կերպով խեղաթյուրված են ընկեր Ստալինի աշխատություններից բերված մեջբերումները: Մի տեղում թույլ է տրված բառերի ուղղակի թշնամական տեղադրություն: Ուրիշ տեղում Բարսեղյանը ցինիկաբար պնդում է, վոր իբր թե «սերմային ֆոնդի զոհման հետևանքով մեր դաշտերը ծածկվեցին մոլախոտով» (էջ 24) և այլն, և այլն»[22]: Ե. Բարսեղյանի երկրորդ աշխատությունը՝ «Աշխատանքի սոցիալիստական ձևերը», որն Ավադովի խմբագրությամբ լույս էր տեսել 1933 թ., դիտվում էր հակաստալինյան և լի նրա քաղաքական-գաղափարական հակառակորդ Տրոցկու ընդգծված ցիտատներով. «Նա

[20] Նույն տեղում:
[21] Նույն տեղում:
[22] Նույն տեղում:

(նկատի է առնվում աշխատությունը – Հ. Ա.) նույնպես լի է տրոցկիստական զրպարտիչ հարձակումներով ընդդեմ կոմունիստական կուսակցության, ընդդեմ պրոլետարական դիկտատուրայի: ... Այդպես են Հովհաննիսյանի և Բարսեղյանի իսկական դեմքերը, վորոնք խորհրդային գրականագետների դիմակի տակ թագնվել են հայկական «Բոլշևիկ» թերթում: Այստեղ նրանք անպատիժ կերպով անում են իրենց գարշելի, հակահեղափոխական գործը»[23]:

«Մոլոտ»-ի էջերում տպագրված «բացահայտումներն» առիթ դարձան, որպեսզի «Բոլշևիկ»-ի խմբագրական կազմին՝ Մ. Գիգոյանի գլխավորությամբ, թերթի կուսկազմակերպության 1937 թ. հոկտեմբերի 16–17-ի ժողովում մեղադրանք ներկայացվի հակահեղափոխական մտքեր և քաղաքական սխալներ թույլ տալու համար. «Համարել հաստատված, որ մի շարք հակահեղափոխական գրքեր հրատարակված են «Ազով-Սևծովյան հրատարակչության» հայկական բաժանմունքի նախկին խմբագիր Հ. Պոտենցի կողմից, վորի մասին հաղորդել ՀԿ(բ)Կ Յերևանի քաղկոմին վորտեղ ներկա ժամանակ նա գտնվում է»[24]:

Բացահայտ հակահեղափոխական գործունեության մեղադրանքով Արսեն Հովհաննիսյանին կուսժողովը հեռացրեց թերթի խմբագրակազմից և Խորհրդային գրողների միության մարզային բաժանմունքի առջև հարց բարձրացրեց նրան անդամությունից հեռացնելու վերաբերյալ, իսկ Եգոր Բարսեղյանի վերաբերյալ բոլոր նյութերը որոշվեց հանձնել այն կուսկազմակերպությանը, ուր նա գտնվում էր:

«Մոլոտ» թերթի էջերում «բացահայտված» և «հակահեղափոխական», «ժողովրդի թշնամի» որակումները ստացած գրականագետները, որոնք իբրև թե բույն էին դրել «Բոլշևիկ»-ի խմբագրությունում, ինչպես պարզվեց 1938 թ., զրպարտության զոհ էին: Այսպես՝ «Բոլշևիկ»-ի 1938 թ. փետրվարի 11-ի համա-

[23] Նույն տեղում:
[24] Նույն տեղում:

րում տպագրված «Զրպարտողը մերկացնողի դիմակի տակ» հոդվածում բացահայտվում է ոչ միայն «Բոլշևիկ»-ի, այլ նաև «Մոլոտ»-ի արդեն նախկին աշխատակից Հ. Ղուկասյանի զրպարտիչ գործունեությունը: Հոդվածում սուր քննադատության է արժանանում մամուլի միջոցների անհարկի շտապողականությունը, ինքնաապահովագրման տրամաբանությունը՝ թերթի էջերում նմանօրինակ հոդված զետեղելու համար: Միևնույն ժամանակ իրավացիորեն նշվում էր, որ հապշտապ և հախուռն «որոշման» հեղինակները, խորամուխ չլինելով գործի էությանը, իրենք են ինքնաքննադատության և զգաստության ոչ պատշաճ դրսևորում հանդես բերել. «Նույն հանցագործ վերաբերմունքն և ցույց տվել Արսեն Հովհաննիսյանի նկատմամբ նայեվ Խորհրդային Գրողների Միության Ռոստովի բաժանմունքը: Վերջինիս համար բավական է յեղել «Մոլոտի» հոդվածը և «Բոլշեվիկի» կուսակցական ու կոմյերիտական կազմակերպության վորոշումը, վորպեսզի կենդանական ահով բռնվեր, առանց ծանոթանալու Հովհաննիսյանի գրվածքների ու սխալների հետ և նրա բացակայությամբ վորոշում հաներ գրողների Միության թեկնածուությունից հեռացնել Արսեն Հովհաննիսյանին»[25]: Շարունակելով իրականության փակ կողմերի բացահայտումը՝ քննադատվում են Ա. Հովհաննիսյանին ներկայացված մեղադրանքները. «Այն, վոր 1935 թվին Տագանրոգի կուսքաղաքային կոմիտեն, վորի քարտուղարն եր այդ ժամանակ ժողովրդի թշնամի Ս. Վարդանյանը, կազմակերպում և այդ ժամանակ Ռոստովում գումարված գրողներին կոնֆերանսին մասնակցող 17 գրողներից գրական յերեկո, վորտեղ մասնակցում և նաև Արսեն Հովհաննիսյանը: Զրպարտչի համար բավական և միայն, վոր յեղել և գրական յերեկույթի, վորտեղ մասնակցել և Արսեն Հովհաննիսյանը... վորպեսզի նրան թշնամիների շարքը դասի»[26]:

[25] Նույն տեղում, 1938, N 14, էջ 3:

[26] Նույն տեղում:

Զրպարտության զոհ դարձած Արսեն Հովհաննիսյանի ազնիվ անունը վերականգնվեց միայն ամիսներ անց. «Պետք է անցներ յերեք ամիս, վորպեսզի կոմյերիտմիության քաղաքային կոմիտեն քններ այդ հարցը և ստոր զրպարտության զոհ դարձած Արսեն Հովհաննիսյանին վերականգներ կոմյերիտմիության շարքերում»[27]:

Այսպիսով, 1920-ական թթ., հանձին Պյատիգորսկի և Մոսկվայի Հայ գրական-գեղարվեստական խմբակցությունների և նրանց «Ալիք», «Քուրա» հրատարակությունների, ռուսահայ գրական կյանքում երևան եկավ նկատելի աշխուժություն:

Պյատիգորսկի հայ գրական խմբակցությունը հիմնադրվեց և գործեց հասարակական-քաղաքական բարդ պայմաններում, սակայն կարողացավ իր շուրջը համախմբել Հյուսիսային Կովկասի հայ գրական փոքրաթիվ ուժերին, կազմակերպել հրատարակչություն, անհայտությունից փրկել և ուղղորդել հայ գրական կյանքի թեկուզև փոքրիկ ուժերը:

Մոսկվայի Հայ Գրական-գեղարվեստական խմբակցությունն ու նրա «Քուրա» հանդեսը լուրջ աշխուժություն մտցրեցին ոչ միայն Մոսկվայի հայ մտավոր կյանքում, այլև դարձան այն օղակը, որի շուրջ համախմբվեցին գրական-գիտական նշանակալի ուժեր: Այս դրական կողմերով հանդերձ՝ «Քուրա»-ն ներկայացնում և քարոզում էր հայ պրոլետարական գրականությունը և ժամանակի գաղափարական-քաղաքական հայացքները, ուր բացակայում էին գրական, հասարակական, գաղափարական ապատեղյունն ու բազմակարծությունը: Այնուամենայնիվ, այդ հանդամանքը չի նսեմացնում «Քուրա»-ի արժեքն ու կարևորությունը, որը 1920-ական թթ. կարողացավ ուղղություն տալ Մոսկվայի հայ գրական կյանքին:

1930-ական թթ. Դոնի հայ գրական կյանքում հետաքրքրական իրողություններ էին տեղ գտել, որոնք ցավալիորեն դուրս են մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Այստեղ կան հայ գրական կյանքին անհայտ բազմաթիվ անուններ,

[27] Նույն տեղում:

որոնք 1930-ական թթ. խորհրդային ամբողջատիրական մեքենայի և «գաղափարախոսության» զոհը դարձան: 1930-ական թթ. ամբողջ Միությունում տեղ գտած բռնաճնշումներն ու «մերկացումներն» իրենց չրջապտույտի մեջ առան նոր-նոր կազմավորվող Դոնի հայ գրական ուժերին, որոնց գործունեությունը որակվեց հակապետական, հակաժողովրդական, հակահեղափոխական և այլ պիտակներով:

1930-ականներին լայն կիրառություն գտած «թշնամիների որսը» իրականացվում էր զրպարտությունների և սադրանքների անմաքուր եղանակով:

Դեռևս բազում անհայտ էջեր կան խորհրդահայ գրական կյանքի ամբողջական և իրական պատկերը վեր հանելու համար, այնուհանդերձ ակնհայտ է, որ այս ասպարեզում ևս խորհրդահայ համայնքներում նկատելի էին տեղաշարժերը:

ОГАНЕС АЛЕКСАНЯН
ИИ НАН РА

ЛИТЕРАТУРНАЯ ЖИЗНЬ АРМЯН ПЯТИГОРСКА, МОСКВЫ И ДОНА В 1920-1930-х ГГ.

РЕЗЮМЕ

В 1920-1930 гг., после установления и упрочения Советской власти, в армянских общинах издавались новые печатные органы, которые играли огромную роль в консолидации армянского населения.

Литературную жизнь армян РСФСР в 1920-1930-е годы развивали кружки Пятигорска, Москвы и Ростова-на-Дону. Репрессии 1930-ых годов не обошли стороной и литературные кружки армян. Издавались литературные журналы "Алик" (Пятигорск) и "Горн"(Москва).

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՀԻԹԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՍՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայրենական մեծ պատերազմի ավարտական փուլում, երբ կասկած չէր հարուցում պատերազմում Խորհրդային Միության վերջնական հաղթանակը, խորհրդային ղեկավարությունը քայլեր ձեռնարկեց երկրի արտաքին կապերն աշխուժացնելու, խորհրդային ազդեցությունն այլ երկրներում տարածելու ուղղությամբ: ԽՍՀՄ Սահմանադրության մեջ 1944 թ. կատարած փոփոխության համաձայն՝ խորհրդային հանրապետությունները (այդ թվում՝ Խորհրդային Հայաստանը) ստանում էին արտաքին գործերի նախարարություն հիմնելու սահմանադրական իրավունք: Վերջինիս գործառույթները թեև խիստ սահմանափակ էին լինելու, այնուհանդերձ դա առաջադիմական երևույթ էր, իսկ Խորհրդային Հայաստանի պարագայում՝ նպաստելու էր նաև Հայրենիք-Սփյուռք կապերի զարգացմանն ու ամրապընդմանը:

Կազմավորման առաջին իսկ օրերից Խորհրդային Հայաստանի Արտաքին գործերի նախարարության առջև դրված էին քաղաքական մի շարք խնդիրներ: Դրանք առաջին հերթին առնչվում էին հայկական սփյուռքի գոյության, ինչպես նաև երկրի արտաքին կապերի ընդլայնման հետ: Նախարարությունն իր առջև խնդիր էր դրել ամենից առաջ ուսումնասիրել հայկական գաղութների դրությունը[1]: Ինչպես հայտնի է, 40-ից ավելի երկրներում գոյություն ունեին հայկական գաղթօջախներ, որտեղ բնակվում էին 1 մլն-ից ավելի հայեր:

[1] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 326, ց. 3, գ. 4, թ. 4:

ՀԽՍՀ Արտաքին գործերի նախարարության գոյության առաջին շրջանում (1944–1947 թթ.) բավականին նյութեր հավաքվեցին հայկական գաղութների վերաբերյալ: Դա մի ժամանակաշրջան էր, երբ արտասահմանի հայերի մեջ նկատվում էր հայրենասիրական տրամադրությունների աճ, որն ամենից առաջ կապված էր Հայրենական մեծ պատերազմում ԽՍՀՄ-ի տարած հաղթանակի հետ:

Ընդառաջ գնալով հայության ցանկությանը՝ խորհրդային կառավարությունը 1945 թ. դեկտեմբերի 2-ին որոշում կայացրեց, որով արտասահմանի հայերին թույլատրվում էր տեղափոխվել Խորհրդային Հայաստան[2]: ԽՍՀՄ կառավարության որոշումը մեծ ոգևորություն առաջ բերեց սփյուռքահայերի շրջանում. այն բնորոշվեց որպես մարդասիրության մեծագույն դրսևորում: Արտասահմանյան շատ երկրներում տեղի էին ունենում հայկական մեծաթիվ հավաքներ, որոնց ժամանակ ստեղծվում էին ներգաղթի կազմակերպման տեղական կոմիտեներ (սկսվեց ներգաղթողների տեղափոխման համար անհրաժեշտ միջոցների հավաքումը):

Զանգվածային ներգաղթ կազմակերպելու և գաղութների վիճակին ծանոթանալու նպատակով հայ դիվանագետները դուրս էին ուղարկվում արտասահմանում գործող ԽՍՀՄ դիվանագիտական ներկայացուցչություններ: 1946–1947 թթ. ԽՍՀՄ դեսպանատներ որպես խորհրդականներ գործուղվեցին Ն. Կ. Գասպարովը՝ Իրան, Ս. Տ. Գասպարյանը՝ Թուրքիա, Գ. Ա. Գրիգորյանը՝ ԱՄՆ, գործողություններ եղան նաև Սիրիայի և Լիբանանի ներկայացուցչություններ: Նույն տարիներին Ռումինիա, Բուլղարիա, Հունաստան, Սիրիա, Լիբանան, Իրան և Ֆրանսիա գործուղվեցին երկուական ներկայացուցիչներ՝ հայրենադարձություն կազմակերպելու նպատակով[3]:

[2] Նույն տեղում, թ. 11:
[3] Նույն տեղում, ց. 2, գ.161, թ. 3:

Միջազգային դրության սրվելու հետևանքով (կապված Սառը պատերազմի քաղաքականության հետ) փոխվեց դրությունը նաև հայկակական գաղութներում: Հայկական գաղութներում դադարեց կամ կրճատվեց դեմոկրատական և հայրենասիրական հայկական կազմակերպությունների գործունեությունը: Այնուհանդերձ, չնայած Հ. Յ. Դաշնակցության հակախորհրդային քարոզչությանը, արտասահմանյան հայկական գաղութներում հայրենասիրաբար էին տրամադրված ԽՍՀՄ-ի և Խորհրդային Հայաստանի նկատմամբ, վերջինս դիտում էին որպես իրենց հայրենիք:

Հայկական գաղութներին օգնություն ցուցաբերելու համար դիվանագիտական ներկայացուցչություններն առաջարկում էին ամենից առաջ տեղեկություններ և նյութեր ուղարկել խորհրդային երկրի ձեռքբերումների վերաբերյալ՝ ժողովրդական տնտեսության զարգացման, մշակույթի, արվեստի, գիտության և կրթության բնագավառում, ինչպես նաև հայկական կինոֆիլմեր, հայերեն դասագրքեր, գեղարվեստական գրականություն, հայկական թերթեր և ամսագրեր: Առաջարկվում էր գաղութներ ուղարկել Խորհրդային Հայաստանի մշակույթի, գիտության և արվեստի բնագավառի ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀԽՍՀ ԲՈՒՀ-երում ուսումնառության վերցնել սփյուռքահայ երիտասարդների:

Հայկական գաղութներին օգնություն ցուցաբերելու և արտասահմանյան հայերի շրջանում Խորհրդային Հայաստանի ազդեցությունն ամրապնդելու գործում վճռական նշանակություն ունեցավ ԽՄԿԿ Կենտկոմի 1957 թ. հոկտեմբերին ընդունած որոշումը՝ արտասահմանյան հայերի շրջանում Հայաստանի ազդեցության ամրապնդման միջոցառումների վերաբերյալ[4]: Այս որոշումն իրականացնելու համար ՀԿԿ Կենտկոմը մշակեց սփյուռքահայերին օգնություն ցուցաբերելու մանրամասն ծրագիր:

[4] Նույն տեղում, ց. 1, գ. 327, թ. 4–5:

Հայկական համապատասխան կազմակերպությունները (Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտե (ԱՕԿՍ), Մշակույթի, Լուսավորության նախարարությունները, ռադիոկոմիտեն և այլն) ակտիվացրեցին իրենց գործունեությունն արտասահմանում գտնվող հայերին օգնելու նպատակով: Բավական մեծ չափով նյութեր և տեղեկություններ ուղարկվեցին Խորհրդային Հայաստանի և ԽՍՀՄ-ի ձեռքբերումների մասին:

Մշակույթի և գիտության բնագավառի հայ ներկայացուցիչներ ուղարկվեցին Կիպրոս, Հունաստան, Եգիպտոս, Լիբանան, Իրաք, Սիրիա: Դեսպանություններից Հայաստանի Արտաքին գործերի նախարարություն եկած տեղեկությունների համաձայն՝ դա տվել է դրական արդյունք և նպաստել արտասահմանում բնակվող հայերի շրջանում խորհրդային ազդեցության ամրապնդմանը: Սիրուքահայերի շրջանում մեծ ոգևորություն առաջացրեց առաջադեմ երիտասարդությունից տարեկան 20 հոգու Խորհրդային Հայաստանի ԲՈՒՀ-եր ընդունելու վերաբերյալ որոշումը[5]:

Սկսած 1948 թվականից՝ ՀԽՍՀ Արտաքին գործերի նախարարությունը մեծ ուշադրություն էր դարձնում նաև հյուպատոսական հարցերին (ներգաղթողների մուտքի փաստաթղթերն օրինականացնելուն, աշխատանքային ստաժի, կրթության, ամուսնական կարգավիճակի, ունեցվածքի, ժառանգության և այլնի վերաբերյալ): Հյուպատոսական հարցերի վերաբերյալ Խորհրդային Հայաստանի Արտաքին գործերի նախարարությունն ակտիվ գործունեություն է ծավալել Խորհրդային Միության ԱԳՆ-ի համապատասխան բաժինների, արտասահմանում խորհրդային դեսպանատների, ներկայացուցչությունների, գլխավոր հյուպատոսությունների, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի սոցիալական ապահովության մարմինների հետ:

[5] Նույն տեղում, թ. 5–6:

Այդ հարցերով զբաղվելիս նախարարությունը հանդիպում էր նաև շատ դժվարությունների և խոչընդոտների: Մի շարք երկրներ պարբերաբար ուշացնում էին նման փաստաթղթերը ժամանակին տրամադրելը, կամ էլ հրաժարվում էին տրամադրել դրանք, ինչն էլ մեծ դժվարություն էր առաջացնում ներգաղթողների գործերի օրինականացման հարցում: Այդ խնդրում օգտակար էր ԽՍՀՄ ԱԳՆ-ի իրավասության շրջանակի ընդլայնման վերաբերյալ որոշումը: 1961 թ. Խորհրդային Հայաստանի արտգործնախարարությունն իրավունք ստացավ հյուպատոսական հարցերով անմիջական կապ հաստատել արտասահմանում խորհրդային դեսպանների և ներկայացուցչությունների հետ՝ առանց ԽՍՀՄ ԱԳՆ-ի միջամտության: Այս որոշումը բավականին արագացրեց արտասահմանից նշված փաստաթղթերի ստացման գործընթացը:

Հայկական գաղութների իրավիճակի ուսումնասիրման, ինչպես նաև հայկական գաղութներում խորհրդային կառավարության ազդեցության ամրապնդման նպատակով Արտաքին գործերի նախարարությունը դեռևս 1959 թ. ԽՍՀՄ ԱԳՆ-ի ղեկավարության միջոցով հասավ նրան, որ կապիտալիստական երկրներում հավատարմագրված խորհրդային դեսպանությունները և ներկայացուցչությունները կարգադրություն ստացան Խորհրդային Հայաստանի Արտաքին գործերի նախարարություն տեղեկություններ ուղարկել հայկական գաղութների վերաբերյալ: 1960–1961 թթ. ընթացքում Նախարարություն ուղարկվեցին բազմաթիվ տեղեկություններ հայկական գաղութների վերաբերյալ: Համապատասխան մարմինների միջոցով նախարարությունը կարողացավ օգնություն ցուցաբերել արտասահմանում գտնվող հայերին և հայկական կազմակերպություններին:

1953–1961 թթ. ընթացքում տարբեր երկրներից հայրենիք վերադարձան մոտ 4 հազար հայեր: Անհատական հայրենադարձության հարցերը լուծելու համար Խորհրդային Հայաստանի Մինիստրների խորհրդին կից ստեղծվեց հայերի հայրենադար-

ձութ յան կոմիտե: Վերջինս միայն 1961 թ. դումարել է 9 նիստ, որտեղ քննարկվել է 202 հայ ընտանիքների դիմումները՝ հայրենիք վերադառնալու վերաբերյալ: Կոմիտեն թույլատրել է մուտք գործել Խորհրդային Հայաստան 151 ընտանիքների (514 հոգի), այդ թվում՝ 81 ընտանիք Իրանից, 6՝ Իրաքից, 17՝ Եգիպտոսից, 20՝ Լիբանանից, 2՝ Բուլղարիայից, 5՝ Հունաստանից, 2՝ Ռումինիայից, 11՝ Արգենտինայից, 2՝ ԱՄՆ-ից, 1՝ Եթովպիայից, 1՝ Ֆրանսիայից: Կոմիտեն տարբեր պատճառներով մերժել է 51 ընտանիքների (255 հոգի) հայրենիք տեղափոխվելու վերաբերյալ դիմումները: Այդ ընտանիքներին հայրենիք վերադառնալու արգելման հիմնական պատճառը կայանում էր նրանում, որ նրանց հարազատները չունեին բավարար բնակմակերես ներգաղթողներին տրամադրելու համար, համապատասխան կազմակերպությունները նույնպես նման հնարավորություն չունեին[6]:

Հայկական դաղութների ներկայացուցիչները 1961 թ. ԽՄԿԿ դլխավոր քարտուղար Ն. Ս. Խրուշչովի հետ հանդիպման ժամանակ հարց բարձրացրեցին հայրենադարձությունը չարունակելու վերաբերյալ: Ընդառաջ գնալով այդ խնդրանքներին՝ երկրի իշխանությունները թույլատրեցին 1961 թվականից կազմակերպել զանգվածային նոր հայրենադարձություն Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից, Ամերիկա աշխարհամասից:

1961–1965 թթ. ընթացքում նախատեսվում էր կազմակերպել 40 հազար հայերի հայրենադարձություն՝ Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Իրանից, Թուրքիայից, Իրաքից, Ուրուգվայից և Արգենտինայից: Հանրապետությունում նախապատրաստական ակտիվ աշխատանքներ էին ընթանում արտասահմանից վերադարձող հայերի առաջին խմբերին ընդունելու և տեղավորելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ ստեղծվել էր նաև կառավարական հանձնաժողով: Հանձնաժողովը, արտասահմանի հայերին ընդունելու հարցերով զբաղվող կոմիտեն, ինչպես նաև

[6] Նույն տեղում, թ. 6–7:

ՀԽՍՀ արտգործնախարարությունը սերտ կապեր էին պահպանում խորհրդային արտգործնախարարության հետ՝ հայրենադարձության և արտասահմանյան երկրներ ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի ներկայացուցիչներ ուղարկելու հարցերի չուրջ: Նման ներկայացուցիչների հիմնական նպատակն էր տեղում իրավիճակի ուսումնասիրումը և հայրենադարձության կազմակերպումը[7]:

ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի կողմից երկուական ներկայացուցիչներ էին ուղարկվելու հայերի զանգվածային ներգաղթը կազմակերպելու նպատակով: 1962–1966 թթ. նման ներկայացուցիչներ ուղարկվեցին Իրան (Գ. Տ. Գևորգյան), Արաբական Միացյալ Էմիրություններ (Գ. Մ. Մարտիրոսյան, Ա. Կ. Իսկանդարյան), Հունաստան (Հ. Հ. Մելքոնյան, Մ. Խ. Ջամչյան), Կիպրոս (Ե. Կ. Հովհաննիսյան, Հ. Ս. Շահինյան)[8] և Սիրիայի Արաբական Հանրապետություն (Գ. Ա. Փահլևանյան, Ա. Կ. Նանագուլյան)[9]:

Հայ դիվանագետները և ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի ներկայացուցիչները մեծ աշխատանք կատարեցին արտասահմանյան հայկական դաղութների հետ կապ հաստատելու գործում: Համաձայն ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1961 թ. նոյեմբերի 29-ի թիվ 560 որոշման՝ «ժամանելով տվյալ երկիր՝ Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչներն անցնում էին իրենց պարտականություններին ԽՍՀՄ դեսպանություններում կամ հյուպատոսություններում: Ներկայացուցիչների առջև դրված խնդիրները հետևյալն էին, պարզել՝

ա) հայերի թիվը երկրում, նրանց տեղաբաշխումը քաղաքներում և մարզերում, սոցիալական կազմը

բ) հայերի տնտեսական վիճակը, զբաղվածության տեսակը, կյանքի մակարդակը (տալ քաղաքում բնակվող ժողովրդի և ազգային փոքրամասնությունների հետ համեմատական պատկերը)

[7] Նույն տեղում, թ. 7:
[8] Նույն տեղում, գ. 335, թ. 1–2:
[9] Նույն տեղում, գ. 370, թ. 1:

զ) հայերի քաղաքական և իրավական վիճակը, ինչ քաղաքական և սոցիալական իրավունքներից են օգտվում և ինչ սահմանափակումների են ենթարկվում, կառավարական մարմինների վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ինչպիսին է հայկական գաղութի վիճակը և ստատուսը տվյալ քաղաքում

է) քաղաքական կուսակցությունները, խմբավորումները և հոսանքները հայկական գաղութում (նրանց մասսայականությունը, ազդեցությունը, հեղինակությունը), այդ կուսակցությունների և խմբավորումների ծրագրերը, նրանց վերաբերմունքը ԽՍՀՄ-ին և ՀԽՍՀ-ին: Այդ կուսակցությունների, նրանց առաջնորդների և խմբերի միջև եղած հարաբերությունները: Այդ կուսակցությունների և խմբավորումների կապերը կառավարության հետ և դրանց մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին

ե) հայկական մամուլը, տպագրվող թերթերի և ամսագրերի անունները և քանակը, դրանց քաղաքական և կուսակցական ուղղվածությունը

ը) հայկական եկեղեցու դերը և գործունեությունը, նրա ազդեցությունը, կապը տեղական իշխանության հետ: Եկեղեցու հարաբերությունները ԽՍՀՄ-ի, Հայաստանի և Էջմիածնի հետ

ը) հասարակական, մշակութային, բարեգործական և այլ հայկական կազմակերպությունների գոյության մասին, նրանց անվանումը, գտնվելու վայրը և բնութագիրը, հարաբերությունները Խորհրդային Հայաստանի հետ, գրադարանի, տպագրության և այլ մշակութային օբյեկտների առկայությունը, ազգային գրականության և արվեստի վիճակը (նշանավոր գրողներ, դերասաններ և այլն), նրանց կապը Հայաստանի հետ

ը) դպրոցների վիճակը, դասավանդման լեզուն, հայերենի դասավանդումը

թ) հայկական խմբերի հարաբերությունները ԽՍՀՄ-ի և Խորհրդային Հայաստանի հետ

ժ) ազգային ունեցվածքի մասին (անշարժ և շարժական), կտակները, տարբեր ֆոնդերը, որ կազմակերպություններում են պահվում այդ միջոցները: Ֆոնդերի և կտակների գումարի չափը և հնարավորությունը դրանք Խորհրդային Հայաստանի և հայերի ներգաղթի օգտին օգտագործելու համար

ի) հասարակության տարբեր խավերի վերաբերմունքը հայերի՝ Խորհրդային Հայաստան տեղափոխվելու նկատմամբ

լ) հայ հասարակական կազմակերպությունների և ներգաղթողների ֆիանսական ներդրումը ներգաղթի կազմակերպման գործում»[10]:

Վերը նշված հարցերով զբաղվող ներկայացուցիչները սերտ հարաբերություններ էին հաստատում ԽՍՀՄ դեսպանությունների և հյուպատոսությունների հետ: Այս հարցերի ուսումնասիրության աղբյուր էին հանդիսանում տվյալ քաղաքում Խորհրդային Միության դեսպանության և հյուպատոսության տեղեկությունները հայկական գաղութի մասին, հայկական առաջադիմական կազմակերպությունների և հայկական մամուլի նյութերը, անձնական հանդիպումները «հակախորհրդային և առաջադիմական» հայ գործիչների հետ:

Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների հիմնական խնդիրը պետք է լիներ տվյալ երկրում բնակվող հայերին ծանոթացնել խորհրդային երկրի արդյունաբերության, գյուղատնտեսության, առողջապահության, արվեստի, գիտության և գրականության ոլորտների ձեռքբերումների և Խորհրդային Հայաստանի տնտեսության զարգացման յոթամյա ծրագրի հետ: Համաձայն ԽՍՀՄ դեսպանությունների և հյուպատոսությունների հետ նախապես ձեռք բերված համաձայնության՝ Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչները կարող էին ելույթ ունենալ հայկական կազմակերպությունների, գաղութների, ԽՍՀՄ դես-

[10] Նույն տեղում, գ. 299, թ. 1–2:

պանությունների և հյուպատոսությունների կողմից կազմակերպվող ընդունելությունների ժամանակ:

Ժամանելով տվյալ երկիր՝ ՀԽՍՀ ներկայացուցիչները կազմում էին ներգաղթող հայերի ցուցակը՝ նշելով նրանց ազգանունը, անունը, հայրանունը, տեղը, մասնագիտությունը և այլն: Այդ ցուցակում առաջնահերթ ընդգրկվում էին այն մարդիկ, ովքեր ունեին Խորհրդային Հայաստանի տնտեսության համար օգտակար արտադրողական մասնագիտություն: ՀԽՍՀ ներկայացուցիչներն ընդունում էին ներգաղթել ցանկացող հայերից ԽՍՀՄ տարածք մուտք գործելու գրավոր դիմումներ՝ ստորագրված ընտանիքի 16 տարեկանը լրացած բոլոր անդամների կողմից՝ նշելով քաղաքը և մարզը, ուր պետք է ժամաներ ներգաղթող ընտանիքը: Ներկայացուցիչները ԽՍՀՄ դեսպանատների և հյուպատոսությունների օգնությամբ պետք է օգնեին վերադարձող հայերին օրինականացնել բոլոր իրենց փաստաթղթերը (աշխատանքային ստաժի, ծննդյան, կրթության, ամուսնության և այլն): Ներկայացուցիչներն աշխատանքներ էին տանում ներգաղթող հայերի շրջանում, որպեսզի նրանք իրենց ունեցվածքն անձամբ տեղափոխեն (խորհրդային կառավարության որոշումով ներգաղթողներից մաքսային հարկեր չէին գանձվելու): Ներգաղթող հայերին տրվելու էին խմբային վիզաներ (40–50 հոգու համար), ներգաղթողների շարքերից ընտրվում էր մեկ հոգի, որը պետք է պատասխանատու լիներ խմբի կարգապահության և կարիքների համար Բաթումի նավահանգիստ հասնելու ճանապարհին: Քարավանների և խմբերի ղեկավարները նշանակվում էին արտասահմանում գործող ՀԽՍՀ ներկայացուցիչների կողմից:

Ներգաղթելու իրավունք չէին ստանում այն ընտանիքները, որոնք կազմված էին տարեց մարդկանցից, անաշխատունակ ամուսիններից: Այն ամուսիններին, որոնցից մեկը հայ չէր, չէր թույլատրվում նաև ընտանիքների մասնակի տեղափոխում, արգելված էր մուտքը նաև դաշնակցականների համար:

Խորհրդային դեսպանությունների, հյուպատոսությունների և տեղական կառավարման մարմինների համաձայնությամբ ներկայացուցիչները ստեղծում էին կենտրոնական և տեղական կոմիտեներ՝ ներգաղթող հայերին աջակցություն ցուցաբերելու համար: Այդ կոմիտեների շարքերում ընդգրկվում էին ափյուռքահայ նշանավոր գործիչներ[11]:

1962 թ. Հայաստանի արտգործնախարարությունը շարունակում էր ուսումնասիրել և նյութեր հավաքել հայկական գաղութների վերաբերյալ: Կապված արտասահմանից հայերի մասսայական հայրենադարձության կազմակերպման հետ՝ ավելի էին ակտիվացել հայկական առաջադիմական և ժողովրդական կազմակերպությունների չփումները Խորհրդային Հայաստանի հետ: 1962 թ. հայկական բազմաթիվ գաղութներից հայրենիք էին այցելել հայտնի հայ գրողներ, ուսուցիչներ, դերասաններ և հասարակական գործիչներ: Որոշ երկրներում, որտեղից նախատեսվում էր զանգվածային հայրենադարձություն կազմակերպել, Խորհրդային Հայաստանի կառավարության պաշտոնական ներկայացուցիչների հայտնվելն ավելի ուժեղացրեց հայերի հայրենասիրական տրամադրությունները[12]: 1962 թ. ԱՕԿՍ-ը, ինչպես նաև հայկական այլ կազմակերպություններն ավելացրել էին գաղութներին ցուցաբերվող օգնությունը: Հայաստանի և Խորհրդային Միության ձեռքբերումների վերաբերյալ բազմաթիվ նյութեր ու տեղեկություններ ուղարկվեց հայկական գաղութներ: 1962 թ. հայկական գաղութներից ժամանեցին 15 ուսանողներ Խորհրդային Հայաստանի ԲՈՒՀ-երում սովորելու համար: Որոշում ընդունվեց 1963 թվականից ավելացնել հայկական գաղութներից ուսանողների ընդունելությունը ՀԽՍՀ բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ մինչև 70 հոգի: Ընդհանուր առմամբ, 1961–1965 թթ. ՀԽՍՀ ԲՈՒՀ-երում սովորում էին մոտ 100 հայ ուսանողներ

[11] Նույն տեղում, թ. 4–6:
[12] Նույն տեղում, թ. 7–8:

Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Իրաքից, Արգենտինայից, Ուրուգվայից, Բուլղարիայից[13]:

Հայկական գաղութներում մեծ հետաքրքրություն առաջացրեց Սիրիայից, Լիբանանից, Եթովպիայից, Կիպրոսից, Ֆրանսիայից և ԱՄՆ-ից հայ ուսուցիչների գործուղումը Հայաստան՝ վերապատրաստման կուրսերի մասնակցելու նպատակով, որը նույնպես խթան էր հանդիսանում Սիլուքի հետ կապերն ամրապնդելու և ակտիվացնելու համար: Միևնույն ժամանակ ուսուցիչների վերապատրաստումն ակնհայտորեն նպաստում էր հայկական գաղութներում կրթական մակարդակի բարձրացմանը, որը նույնպես դրական երևույթ էր: Այդ պատճառով ՀԽՍՀ ԱԳՆ-ն նպատակահարմար է գտնում հաջորդ տարիներին ավելի լայն կիրառել հայկական գաղութներից ուսուցիչների հրավիրումը՝ վերապատրաստման կուրսերին մասնակցելու և նրանց մանկավարժական չափանիշները բարձրացնելու համար:

Այսպիսով, Խորհրդային Հայաստանի արտգործնախարարությունը հետպատերազմյան տարիներին մեծ աշխատանք կատարեց ինչպես զանգվածային, այնպես էլ անհատական հայրենադարձության կազմակերպման գործում: Հսկայական աշխատանք կատարվեց ներգաղթողներին օգնություն ցուցաբերելու և նրանց փաստաթղթերն օրինականացնելու համար: Հիմնական ուշադրությունն ուղղված էր արտասահմանում ապրող հայերի մեջ խորհրդային պաղեցության տարածմանը: Հարկ է նշել նաև, որ Խորհրդային Հայաստանի ԱԳՆ-ն, հիմնականում զբաղվելով արտասահմանում ապրող հայերի հետ կապեր հաստատելու խնդիրներով, արտասահմանում գործող խորհրդային դեսպանություններին և ներկայացուցչություններին ապահովում էր նաև ինֆորմացիոն-քարոզչական նյութերով:

[13] Նույն տեղում, ֆ. 1, ց. 46, գ. 327, թ. 1:

АЛЕКСАНДР МХИТАРЯН
ИИ НАН РА

ДЕЯТЕЛЬНОСТЬ МИНИСТЕРСТВА ИНОСТРАННЫХ ДЕЛ АРМ ССР В ДЕЛЕ ОРГАНИЗАЦИИ РЕПАТРИАЦИИ В ПОСЛЕВОЕННЫЕ ГОДЫ

РЕЗЮМЕ

Статья отображает деятельность Министерства иностранных дел Армянской ССР в период после Великой Отечественной войны. Министерство в своей деятельности стремилось сблизить армянские колонии с Советским Союзом и Советской Арменией, усилить советское влияние на зарубежных армян, содействовать укреплению патриотических чувств среди них. В своей деятельности МИД Армянской ССР уделяло большое внимание вопросам получения советского гражданства для репатриантов, а также вопросам въезда в СССР на постоянное место жительство. Велась обширная дипломатическая переписка с советскими посольствами и генконсульствами за границей. В этих вопросах министерство сотрудничало с Комитетом по приему и устройству возвращающихся из-за границы армян при Совете Министров Армянской ССР, а также с другими компетентными органами республики. Для установления более тесных контактов с зарубежными армянами, оказания армянским колониям необходимой помощи, а также установления дружественных отношений с другими странами было создано Армянское общество дружбы и культурной связи с зарубежными странами (АОКС).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հին և միջին դարերի պատմություն

1. **Դումիկյան Ալիս**
Հին Հայաստանի մասին հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունների վկայությունները XIX դ. ֆրանսիացի արևելագետների լուսաբանմամբ 3

2. **Վարդանյան Արգիշտի**
Պոմպեոսի արշավանքն Աղվանք 14

3. **Մելիքյան Կարինե**
Քրիստոնեական եկեղեցին միավորելու փորձերը (V դարի II կես – VIII դարի սկիզբ) 24

4. **Նազարյան Լիանա**
Վարդ Սկլերոսի և Վարդ Փոկասի ապստամբություններն ու Դավիթ Կուրապաղատը 34

5. **Թորոսյան Վահե**
Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովների թվագրման շուրջ 50

6. **Գևորգյան Ջոհրաբ**
Կիլիկիայի հայկական պետության և Արևմտյան Եվրոպայի տնտեսական կենտրոնների միջև առևտրական առնչությունների պատմությունից 60

7. **Թինոյան Դավիթ**
Կիլիկիայի հայկական թագավորությունը 1365 – 1373 թթ. 77

8. **Մաղալյան Արտակ**
Արցախի մելիքությունները և Ղարաբաղի խանության ծագումը 87

Նոր և նորագույն պատմություն

9. **Ամիրջանյան Հասմիկ**
Լոռու գավառի էթնիկ պատկերը XVIII դ. վերջին և XIX դ. առաջին երեսնամյակին 113

10. **Շախկյան Գայանե**
Հերման Աբիխը և Հայաստանը 124

11. **Հայրապետյան Արմեն**
Ժողովրդագրական գործընթացները Գյումրի–Ալեքսանդրապոլում (XIX դար) 145

12. **Գինոսյան Նաիրա**
Հայերն Օսմանյան կայսրության վարչա-կառավարման համակարգում (XIX դարի II կես – XX դարի սկիզբ) 157

13. **Սահակյան Արման**
Սեբաստիա քաղաքի կրթական կյանքը XIX դարի վերջին և XX դարի սկզբին 170

14. **Հակոբյան Կարեն**
Հ. Յ. Դաշնակցությունը և սոցիալիստական ինտերնացիոնալը 1905 – 1907 թթ. 186

15. **Բաբլումյան Արփինե**
Հայոց ցեղասպանության ընթացքը և հետևանքները Խարբերդի նահանգում 201

16. **Մարուքյան Արմեն**
Ղարաքիլիսայի հերոսամարտը և Անդրանիկը 218

17. **Սուքիասյան Համո**
Հայաստանի Հանրապետության իշխանության կենտրոնական մարմինների՝ Երևան տեղափոխվելու հարցի շուրջ (1918 թ. մայիս-հուլիս) 228

18. **Մինասյան Սմբատ**
Հայության գաղթը Հյուսիսային Կովկաս 1918 թ. 237

19. **Բալասանյան Գրիգոր**
Խորհրդային հանրապետությունների հետ ՀՍԽՀ առևտրատնտեսական առնչությունների պատմությունից (1921 – 1922 թթ.) 245

20. **Ղարախանյան Վահրամ**
Թուրքիայի Հանրապետության իշխանությունների դիրքորոշումը թուրքահպատակ հայերի, հույների և հրեաների հանդեպ 1923 – 1926 թթ. 258

21. **Ալեքսանյան Հովհաննես**
Պյատիգորսկի, Մոսկվայի և Դոնի հայ գրական կյանքը 1920–1930-ական թթ..... 278

22. **Մխիթարյան Ալեքսանդր**
ՀԽՍՀ արտգործնախարարության գործունեությունը հայրենադարձության կազմակերպման գործում հետպատերազմյան տարիներին 295

Բովանդակություն 308

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
A COLLECTION OF SCENTIFIC ARTICLES

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

Տեխնիկական խմբագիր՝ Գայանե Բոբոխյան
Էջադրումը՝ Հայկանուշ Ավագյանի
Տպագրիչ՝ Լևոն Սուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

0019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24գ